763
phong 184

2004

2034

# ՎԱՂԱՌՄԱՆՆ
# ՅՈՎԱՍԵՓԱՅ

## ԵՐԳՔ ՔԱՌԵԱԿ

891.99-1

# ՎԱՃԱՌՈՒՄՆ
## ՅՈՎՍԷՓԱՅ

ՏԱՂԱՉԱՓԵԱԼ ՎԱՌՆԱՑԻ ՄԱՐՈՒԳԷ ԴՊ
ՐԻ ՄԱՀՏԵՍԻ ՊՕՂՈՍԵԱՆ՝ ՅԱՌԱԿԵՐՏՈՒ
ԹԵՆՆ ՊԱՏՈՒԵԼԻ ԳՐԻԳՈՐ ԴՊՐԻ
ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆ

*Հրամանաւ ամենապատիւ և վեհափառ Պատրիարգին կոստանդնուպօլսի՝ Տ̃ն Ստեփաննոսի Արքեպին։*

ԽՆԴՐՈՎ ԵՒ ԱՐԴԵԱՄԲՔ ՌՈՒՍԱՑ ՎԱ
ՃԱՌԱԿԱՆԻ ՎԱՌՆԱՑԻ ՄԱՀՏԵՍԻ ԳՐԻ
ԳՈՐ ԱՂԱՅԻ ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ

—

1838 ՏՊԵԱԼ ՌՄՁԷ

ՅՕՐԹԱԳԻՒՂ

Printed in Turkey

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ընձկայրեաց տարփանօք սրտի՝ հետայոյզ դեգերիլ ՚ի շահաւէտ խնդիր բարւոյ վայելչականին բանական բնութեան , ո՛չ է ամենեցուն տուեալ ։

Նա զի ոմն ցանկայ անխոնջ երկասիրութեամբ մթերել զճոխութիւն մեծագանձ , և այլ ոմն ջանայ ՚ի ձեռս բերել զանուն փառս պատուոյ և մեծարանաց ։

Իսկ Դու ո՛վ ազնուազգի իշխանդ՝ ո՛չ զհետ դիւրափախուստ և յեղյեղուկ մեծութեանց և պատուոյ նկրտիս ինչ երբէք , այլ գեղեցիկ մոլութեամբ զարտիդ խնդրես հանգուցանել զտապ ՚ի ծառախիտ անտառս բանաստեղծական հագներգութեց՝ որ զուարճացուցիչ է մտաց և ոգւոյ , անմռունչ ձայնիւ մռուելոց զկենդանիս հրահանգելով ։

Այլ որպէս այս ձիր հեռայայղ բնաւորութեանց՝ ոչ է ամենեցուն պարգևեալ, նոյնպէս և աշխոյժ բանաստեղծական՝ սակաւուց ոմանց է առատաձեռնեալ. զի բնութիւնն չէր ամենեցուն միօրինակ զմի և զնոյն զօրութիւն տանելոյ։

Սոխակին ես քաղցրաձայն դեղգեղել նուագ յստախիտ մուրչս վարդենւոյն, և ոչ սադի ՚ի ճայրոտ գառագեղս հաւանոցաց։

Սիրամարգի՝ գեղեցկափետուր զարդարիլ երփներանգ գունով, և ոչ գձձատեսակ ագռաւու։

Շերամոյ՝ ՚ի գալարաւէտ տերևոց թթենւոյն գործել զմետաքս, և ոչ ճպռանն անարդիւն։

Մեղուի՝ ՚ի պատուական հիւթոց բարեբոյս ծաղկանցն կազմել զմեղր, և ոչ վնասակարն մարախոյ։

Այսպէս ումեմն առատաձեռնեաց շնորհն՝ զիմաստ դիտութեց

գերադունից տրամաբանել զա-
ստացուածոց, այլում՝ բնախօսել
զզգալեաց, կամ ճառել զևս բարձ-
րագունից՝ զա̃ծայնոց և զիմանալ-
եաց։ Եւ այլում երևակայել զան-
ցելոց՝ և զնոսա իբրև զներկայս ա-
ռաջի առնել գեղեցիկ հագներգու-
թեամբ, 'ի քնքշել զսէրս առ 'ի
զարթուցումն կրից ընդարմացելոց։

Այլ ես՝ ո՛ մեծանուն Իշխան տ̃ր
իմ բարերար, ո՛չ գտանեմ յիս զձիր
շնորհացս՝ երգել Քեզ զարկածս
ողջախոհին Յովսեփայ։ Բայց և մի՛
զգեղեցիկ խնդրովք Քո սրտի ան-
տես արարից՝ զի մի՛ անլսուրդ կամս
կորեցայց Պայազատութե̃ Ձերում։

Վ̃յ առանձին խոնարհամիտ սիրով
վերերգեալ զնա ըստ իմում ակար-
կարի՝ ձօնեմ Վեհանձնութեան
Ձերում 'ի նուէր յարգական։

Նուաստ ծառայ
Յարու-թէ, Ի, Պ։

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Ստորագրութիւն տօնի ծննդեան փարաւոնի՝ հանդերձ վայելչութեամբն Եգիպտոսի։

Բանտարկիլ Յովսեփայ՝ ՚ի զրպարտութենէ տիկնոջ իւրոյ։

Ընկերանալ նորա՝ ընդ մատռուակապետին և ընդ տակառապետին ՚ի բանտին։

Երազատեսութիւն փարաւոնի, և վարանք նորա. տկարանան Քաղդեայք ՚ի մեկնել։

Մատչի տակառապետն առ փարաւոն, և պատմէ նմա զտեսանել իւր՝ և մատռուակապետին զերազ ՚ի բանտի, և զմեկնել Յովսեփայ՝ և կատարումն իրացն ըստ մեկնութեան։

Ածեալ լինի Յովսէփ ՚ի բանտէ, և մեկնէ զերազ արքայի։

Կարգի յերկրորդական գահ արքունի տնօրինել զհնարս, զառաջս առնուլ զսովոյն։

Երկուցեալ տիկնոջն Յովսեփայ գայ խնդրել զներումն յանցանաց իւրոց՝ որ առ նա։

Հանդէս հարսանեացն Յովսեփայ ընդ դստեր Պետափրեայ քրմին Եգիպտացւոց։

Ծնունդ Մանասէի՝ և տօն ծննդեան նորա ընդ բոլոր Եգիպտոս։

Printed in Turkey

# ՎԱՃԱՌՈՒՄՆ

## ՅՈՎՍԷՓԱՅ

### ԵՐԳ · Ա

—

Երգեա՛ ինձ Մուսա՝ զդղրդումներ
կիրս Եգիպտոսի ,
և զՅովսէփայն դառնաղէտ զարկածս
անըմբերելի ․
զոր յիւրոց եղբարց , և զոր 'ի կնոջէն
իւր աւագունի ,
կրեաց նա ընդ վայր 'ի ծառայութե՛ ,
ւ'ի զընդան բանտի ։
Բայց յի՞նչ վըշտըմներ 'ի կիրըս ծըփէն՝
էր Եգիպտոսի ,
կրել յանխընայ եօթնամեան սովըն սը-
րոյ երկսայրի ․
որք անդ 'ի վայրիս բացակայ տեղեաց
սորին սահմանի
աղէկէզ վըշտօք զայն կրեցին յընթացս
ամաց եօթնեկի ։

Օ խո՟րդ Եգիպտոս մաղապուր պըրծա-
յալեացըս վտանգի ,
ո՞ էր գուշակօղն , և զխո՟րդ եղև գու-
շակն ընտրելի ։
որով Նա զխո՟րդ Նախագահ եղև յա-
թոռըն ոսկի ,
և ո՞րպէս արդեօք՝ ինչ գուշակօղն ազ-
նիւ պատանի ։
Յովսէ՛փ է գիտեմ , որ զառաջս էառ
ըղտոլցն մեծի ,
կանխագէտ մըտօք գուշակեաւ զերազ
վեհին արքայի ։
որով Նախագահ գերապանծ 'ի գահ
Նըստաւ արքունի ,
ամբարեաց ցորեան 'ի շըտեմարանս ամըս
եօթնեկի ։
Օ պայծառիկ երգեա՛ Մուսայդ գաղտնա-
կան ինձ յայս մատենի ,
քո շընորհածիր Նուագօք իմ հարցման
տուր պատասխանի ։
այլ դու ինձ աստէն երգեա՛ ըներկրա-
լըր ըղտօն արքայի ,
և զեգիպտոսի ըղկայելցութի համուրց
տարփալի ։
Յափրիկէ է սա՝ ընդ կըլիմայիւք ըռա-
ըեխառն երկնի ,
ձերամբք շուրջ պատեալ 'ի լայնածա-
ւալ՝ է 'ի մի դաշտի ։

ունի գըլխաւոր մեծամեծ նահանգս
ամրաբերդ կարի ,
գերապանծ բանիւ նոքա երգեցին՝ 'ի
ծայր իմ լեզուի .
Բուբաստ և Մագդոլ , փերետ և
Տափնաս , և Հերուպօլիս ,
Մենդես և Պուտոս , Սայիս և Կա-
բաստ , Լէօնտօպօլիս ·
որքս մեծ քաղաքք մարդաշատ կարի և
ամրապատուար ,
'ի սոսա պանծան բըրգունք մեծապանծ
գեղեցիկ տաճար .
Ր. յԴիք որթատունկք՝ ուռնդաստանք
պերճիկ յոսա մշտադալար ,
արօտք յատոք ցորեան , և դաշտք սիզա-
ւէտ , 'ի ծառս երկնածայր ·
և 'ի մէջ լերանց վըտակք և առուք
ջըրոց խոխոջայր ,
ունէին աւանս , և շատ գերդաստանս ,
և գիւղըս պայծառ .
Ր. յԼ արքայանիստ գահըն Եգիպտոս
աթոռ ոսկեփայլ՝
յորում փարաւոն նըստէր և իշխէր ար-
քայն դահակալ ,
գերադոյն քան զայլ՝ հզօրական իւր
տամբք մեծապէս պանծայր ,
իւրև արեգակն 'ի յերկինս 'ի վեր շողէր
հրաշափայլ.

Էր սա լայնանիստ 'ի դաշտ ինչ եր-
կայն՝ ընդ ամուր պատուար ,
շուրջ պատեալ էին 'ի չորից կողմանց
լերինք մեծասար ·
պատ էր հաստաբեստ ուղղագիծ վիմօք
բրգաձև ակաւ ,
հրաշակերտ կամուրջք և հրաշակառոյցք
յաւէտ սքանչափայլ ·
Ցորս հորխուրաչեայ խնդրուածքըն էին
գեղեցկակամար ,
և յաչաց նոցին դետըն բաղմասահ նե-
ղոս կարկաջայր ·
էին յայս քաղաք խոր ընդերկրեայ
ջրմուղս հազար ,
և յանկիւնս աղբիւրք նորին յորդահոս
խիտ առ խիտ լցեալ ·
Աւանորանկ էին և ականակիտ , որք ան-
դըր սուրայր ,
քանզի 'ի բարձանց ժայռիցըն լերանց
գայր յորդածաւալ ·
ամենայն իրօք էր քաղաքս որպէս ըղ-
դըրախտ ծաղկեալ ,
'ի ներքոյ երկնից էր քան զամենայն՝
չքնաղ և պայծառ ,
Իսկ արդ՝ փարաւոն տայր ահեղասաստ
հրաման արքունի ,
բղխօն կատարել զաւուր ծընընդեան
իւրոյ աշխարհի ·

ոչ միայն՝ որոց յիւր աթոռանիստ իցեն
քաղաքի ,
ընդ շրջափիւռ ծագ բոլոր սահմա-
նաց՝ հրամանըս թռուչի ,
Թէպէտ և յամէն հեռաւոր աւանս՝ ոչ
պատուէր լինի ,
սակայն յամենայն սահման՝ գտանին
պատրաստք 'ի տօնի .
որք տեարք քաղաքաց , և գիւղօրէից
էին 'ի յերկրի ,
յամենայն ծագաց գան՝ աշտանակեալ
յոսկեվարս 'ի ձի .
Նոյնպէս ապա գային , խռնէին պա-
լատ յարքայի
անթիւ բազմութիւն վեհափառ արանց
նահանգաց մեծի .
որպէս 'ի սուլել զեփիւռըն գեղջկական ըղ-
սըրինգ՝ հովուի ,
սիրտ երամակին տրոփայ ընդ ձայնին
ուժգին դըղըրդի ։
Կամ հուպ առ հովիւ՝ դասադաս գըն-
դով՝ կան 'ի տագնապի ,
և 'ի մերձենալն իւրեանց 'ի փարախ ցըն-
ծան անդ կարի .
ապա յառաջեալ մըտանեն 'ի ներս՝ վաղ
մի քան զմի ,
գըրոհ և տալով խուռըն բազմութեամբ
սատի և անտի ,

Ամանք առ դըրան մայէն քաղցրաձայն ,
կէսք յարաճեալ ,
և այնպէս խըմբին , անդ հովւին 'ի ցուպ
յեցեալ խուր՝ հայի ·
և կամ ծաղկազարդ մեղուացըն հանգոյն
'ի յամարայնի
ընդ ծաղկաւէտ դաշտ կուտին գըն-
դանան համախումբ 'ի մի ·
Եթէ բոյլք խաշանց՝ 'ի փարախ մըտարց ,
և թէ բոյլք մեղուաց
'ի ծաղկաւէտ դաշտս այն ինչ գընդա-
նան , լինին ցընծալցեաց ·
հընչէն անդ վայրէքն 'ի մայից գառանցն՝
և 'ի բըզզաց մեղուաց ,
ձայնեն արձագանք ըստ ձգման նուագս
'ի մութ տըխրալցեաց ։
Նայպէս և պալատս՝ յոր են ժողովեալ
արանց գերապանծ ,
հնչէր 'ի ձայնէ քաղցրերգակ երգոց նո-
ցին ցընծալցեաց ·
որք ուրոյն յաթոռ ուրոյն նըստէին յոս-
կէհուռ կերպաս ,
և արքայն 'ի մէջ նոցա փողփողէր նըման
աստեղաց ։
Մինչ 'ի հացալից սեղանըս բազմին հա-
մադամ խորտկաց ,
հընչէն երգեցիկ քաղցրերգակ քնարք՝
Յուէրժահարանց ·

որք էին Մուսայք անզուգ գեղցեղիկք
անոյշ կիթառաց ,
և մատռուակօղք զ՚նեկտարին անոյշ ան-
մահ բաժակաց .
Ո՞ր արդեօք կարէ պատմել արժանի
շըրթունք մահացուաց
զոր յաւուր տօնի եղէն ծընընդեան մե-
հին քաջ արանց .
ոչ միայն 'ի նոյն արքային պալատ քաղաք
Մեմփիսեանց ,
և էր ցընծութիւնս ընդ համայն նա-
հանգս խուրոց քաղաքաց ,
Վ՚անզի Ատլանտեան երջանիկ կըղզոյն
յաւէտ էր յարմար ,
իւր համայնատփիւռ նահանգօք քաղաք
ըս երջանկավայր .
յորըս չէր բընաւ անապատ անշէն տա-
տասկաբեր վայր ,
այլ յամէն վայրիս անդէք և աւանք նո-
րաշէն պանծայր .
Որոց ոսկեզօծ որմունք ըզճաճանչ տայր
արփիափայլ ,
նոյնպէս տեսանել էր զ՚նգիպատունս
մարգարտափայլ .
սապէս ըղէկրինս , ծաղկազարդ զգ ,
ծառախիտ զանտառ ,
և ըզշրջապատ քաղաքս 'ի պարտէզս գ ,
ղեցկադալար .

Ո՜հ փորտունատեան ըղտեղեայն ածէր
նմանատիպ վայր ,
յորում անդաստանք թէպէտ անարօր
բխուրապատիկ տայր ·
այնպէս Եգիպտոս՝ և իւր շրջափիւռ
քաղաքըք պայծառ
արգաւանդահող ծաղկազգեաց լերամբք
համակ լայնատարր ·
Ո՜հ էր ըղվայրիս տեսանել ամէն երկիր
բարեբեր ,
ուր ծաղկանցըն տունկք գեղեցիկ պըճ-
նեալ էր մարգըրտայեա ·
յորում շաղ հեղիկ 'ի ծագել լուսոյն՝
գեղաշուք փայլէր ,
միշտ Զեփիւռն անոյշ ընդ ոլորտս նորա
քաղցրասիւգ շընչէր ·
Պերճափայլ սաղարթք ծառոց երկնու-
ղէշ մեղմիկ անդ շարժէր ,
և ջուրցըն վըտակք 'ի բարձուէ լերանց
հոսեալ խոխոջէր ·
յորում սոխակին քաղցրաձայն նուագք
ընդ լերինս հընչէր ,
և թռչնոց ամէն բըբիւն ոգեշարժ յա-
մէն կոյս լսէր ·
Ի՛ղխաշանց ըղըպը 'ի ջրարբի տեղիս
հովիւըն տածէր ,
և ըզգեղջկական ըզսըրինգըն իւր սու-
լէր և երգէր ·

այն ինչ գեղմնաթաւարձ հօրանըք խաշանց
անդըր մակաղէր ,
Նորածին գառանց ըզխայտալն ըզմարգըն՝
անդ էր տեսանել .
Իւղ կընդըրկահոտ տային ձիթենեաց
ծառքըն մըրգաբեր ,
պըտղաւէտ էին , թէ և անպատուաստ ,
և յոյժ ծաղկաբեր .
Նոյնպէս ամենայն տունկըք յոդնուղէշ
սաղարթատերև
անդարման ձօնեն յանհերկ 'ի վայրխա-
ըն տատասկաբեր .
Տոհմական որդիւնս անդիք լիաձեան
ընծայէր ձօնէր ,
զայգիս անյօտոց յողկոյզ կարմրաշորթ
անդ էր տեսանել .
Լերանց ընդ խորոշս 'ի կաղնեաց ըզմեղր
որպէս ջուր ծորել ,
և ըզյորդաբուղխ 'ի բարձուէ ժայռից
քաղցր ջուրց ցայտել .
Ամպայոյզ գիճինք զարտորայս ոչինչ
հեղեղաւ զեղծեն ,
և ըզսերմանիս գօսացեալ երաշտ տօ-
թոյն ոչ կիզեն .
քաջանդամ ապրին կենդանիք համայն ,
կեանքըն երկարեն ,
զի օդըն յայերս քաղցրագոյն է արդ՝
և ոչ ըզգայուէն ,

Ո՛ւր չէր անդ ձըմեռն՝ երբեք ցըրտա-
շունչ ձիւնայոյղ յամպէն ,
զի ոչ ըլքաբեր ամպքըն միգամած զեր-
կին գըրաւեն .
ոչ և ձիւն զեղուն անդ ցըրտասառուցն
'ի յերկնից բարձունէն ,
անհետ չերևէին վայելք վայելուչք երկ-
րիս ծաղկօրէն ։
Այս և՛ յամառան՝ և՛ 'ի ձըմեռան՝ մի ե-
ղանակ են ,
քաղցրագոյն յաւէտ և յոյժ ցանկալիք
և հրաշալիք են .
զի ընութիւնն ամէն կըրկնաւոր խայ-
տայ , զուարձ կայքաւէն ,
և արծուէք յայերս միշտ սըրաթըռիչ
աստ և անդ ճախրեն .
Այլ յաւէտ տօնի յաւուր ծընընդեան
փառահեղ վէհի ,
էր խնդապատար և քան զառաջինն պան-
ծալ 'ի սրտի .
զի քաղցրերգակ շարժէր ըղերինս քը-
նար տասնաղի ,
յամենայն քաղաքս էր թէատրոնք խա-
ղուց բազմազգի ։
Ամանք յոսկեվարս ահիպարանոց հեծե-
լով 'ի ձի ,
քաջարշաւ ճախրեն ընդ երկայնութիւն
ծաղկասփիւռ դաշտի .

անդ և համերամ՝ գեղագխակաց տըր-
փէն մանկըտի ,
յաւկէհուա կերպաս ըղձեստաւորեալ
հարսն ընդ փեսայի .
Նու այսպէս ըղձիւն ողջոյն խաղային
հընչմամբ քընարին ,
ոչ միայն պալատ յարքայի վեհին , այլ
յամէն վայրին .
արփւոյն մըտանէր մինչդեռ գեղափայլ
լուսն յերեկոյին ·
կանթեղաց բոլորք ջահօրէն վառմամբ
ամբառնայր յերկին .
Ընդ շաւուրս եօթն ըղտօն կատարէն
վեհին գերափառ ,
բաղձեալ ընդ արքայ յողջոյն սիրա-
տենչ խընդլին ծափահար ·
ոչ այն խառնամբոխ գըռեհիկ արանց
վայրապար գումար
հըձուլին ընդ արքայ 'ի խընձոյս մեծի և
բերկրապատար .
Այլ իշխանք քաջաց ըղտիւ ըղձիջէր 'ի
դէմըս պայծառ ,
յարքունի պալատ սըրտիւ անտըխուր
բերկըրին հըրձուացեալ ·
մինչ առքս այսպէս , և Եգիպտացւոց
իշխանք գերափառ ,
յարքունի պալատն զտօն կատարէն վե-
հին ինքնակալ .

Ընդ աւագուհի ուրումն իշխանաց
կին պատուամեծար՝
որ անժոյժ 'ի յիղձ, մոլեգին 'ի բարս
և կարի վատթար.
ժամանակ պատեհ 'ի ձեռըս ածեալ,
լուր, նա՛ զինչ արար,
զխորդ և զանմեղ պատանին Յովսէփ
ըզմանուկ կայտառ,
Որ էր 'ի տան իւր որդեգիր ծառայ
դրամիւք գնեալ,
'ի դառնակըտիտ եարկ չարակրանս Թո-
պիլ վըշտահար.
որ գեղեցկադէմ և գեղածիծաղ կացի
էր կայտառ,
չև էր տակաւին բուսեալ 'ի ծնօտն հերք
սևամորթեալ,
'Ի յօնըս Թաւուտ, և'ի հասակ իւր լայն
քաջոստ ամբարձեալ,
սըմա տիկնուհին յիւրում 'ի սըրտի էր
յոյժ սիրահար.
փըղըձկէր տըռփայր ընդ շատ ժամանակ
նա՛ այսպէս ընդ վայր,
և զիւր կատարել ըզձաղձանս սրտին չէր
նըմա հընար.
Մ՛ինչ զի քուն յաչաց ըզտիւ ըզգիշեր
էր իւրոց հատեալ,
'ի խորըս սըրտին տագնապէր եռայր որ-
պէս գայլ սովեալ.

լռիկ և մընջիկ ճեմ առեալ շըրջէր
յառանձինըն վայր ,
գըտանել ըզգառն անհովիւ կամ զայն
ընդ քընով եղեալ ։
Ո՜չ անդրանկածախ ժանեօքըն ըզնա
յարեան գետ ծաւալ
յօշ յօշ պատառեալ՝ խածոտել զիւր ան-
յագ որովայն յանտառ ։
մինչ եգիտ միայն , և կամ գըտանէ ըզ-
գառն ասըափայլ ,
ըզհովիւն ՚ի քուն , յարձակի անահ առ-
նել պատառեալ ։
Այսպէս և այն սա՛՝ վշտօք տըրուփանաց
տագնապէր եռայր ,
զի հովիւն արթուն հըսկէր իւր ցըպովն՝
անքուն անդադար ։
այլ մինչ մեկնեցաւ անտի այն հովիւն
իշխան գերափառ ,
ոխկինըն վավաշ գայլըն սովատանջ դի-
պուկ ժամ գտաւ ։
՚Ի յառանձնութեան՝ պատանին Յովսէփ
՚ի միում սենեակ
այն ինչ մըտածէր՝ զըրըլս արարին ան-
ձին իւր եղբարք ։
զայրացեալ նոցա՝ վասըն երազոյն ՚ի նոյն
ժամանակ
վաճառեն անդ զինքն , առեալ ըզըզ-
գեստն իւր ալիւնորակ ։

Զոր յարեան թաթաւ տարին՝ հօր խու-
րում գուժել այսգունակ ,
գազան իմն անզուսպ եկեր զեղբայր մեր
յանտառուտ ձաղագ .
ըզւոցին նմանն ածեալ ըզմտաւ զԱստ-
ուած աղաչէր ,
և առ նա ըզգայուն սրտեռանդն սիրով
յերկինս ուղերձէր .
Յանկարծ մըտանէ 'ի սենեակ նորին տի-
կինն ոսկեհէր ,
որոյ այտք դիմաց՝ որպէս զկեղև նըռան
կարմիր էր .
և հասակն երկայն՝ անձամբ գեղեցիկ՝
յօնքըն մըրահէր ,
ըսպիտակ անձամբ ըղձախարակեայ բա-
զուկըս ունէր .
Ժըպիտ իւր մեղմիկ ժըպիտ անուշակ
յերեսս իւր այտէր ,
չըքնաղ տիկին ոք և յոյժ գեղեցիկ իբր
աննըման էր .
Իւրում գանգրագեղ գիսակք հոպոպ-
եաց յուս իւր ծածանէր ,
աղուական աչօք և իւր հայեցուածն
զինքն ցուցանէր .
* Գեղայտ և ազնիւ պատանին Յովսէփ
յոտըս ելանէր ,
այն ինչ 'ի սենեակն եկեալ սիգաձեմ նա
իւր մըտանէր .

և աճան կացեալ յուժ զուարթադէմ
Նորա տընկեր ,
այսպէս և այնպէս ընդ վէհ Յովսեփայն
գեղեցիկ խօսեր ։
'Ի դաշտագլուխ և տայա անցեալ մեծա-
շուք Նըստեր ,
բազմիլ տընկեր իւր և ըղՅովսեփ
հրամայեր կոչեր ։
ըղսերունդ և ձեռ իւր հօր և ըղմօր
Նըման անդ պատմէր ,
փափկասուն ծնունդ և ըղպատկերն ընդ-
այր իւր Գեմներ ։
Ըստ ինչ անդ այսպէս բան առաջար-
կեալ ճառեր և խօսեր ,
և ըղՅովսեփայն ըղսերունդ և ձեռ մի
մի հարցաներ ։
սակաւուք բանիւք շնորհագեղ մանուկն
'ի վէպ արկաներ ,
ըղսերունդ և ձեռ և զարկած իւր դտան
ըղդըժոխըմբեր ։
Խոստանայ Նըմա լըկտի տիկնուհին դան-
ձաչատ մըթեր ,
և զինքն գերափառ քան զամէն լիշխանս
մեծացուցանել ,
գեղայտ պատանին ողջախոհ՝ Նըմա զը-
րըս բարբառեր ,
լուիկ և մընջիկ ակընկոր կացեալ ան-
տայր և լըսեր ։

Ա՛ր քեզ ինչ, ասէ, մի՛ այսուհետեւ
ասել և ասել,
ա՛հ, ես խնդացից արդեօք 'ի ժըպիտ
խայտալ և տոփել ․
քեզ այսուհետեւ խնծղանք իշխեսցեն,
մի՛ կիրք տրտմաբեր,
դու 'ի քոյին սիրտ երգեսցես քընքուշ
քաղցրաձայն երգեր ։
Զօր ա՛մ քեզ խնձոյք 'ի տան քում
ծառայք 'ի սպասել,
դու բարձրագլուխ իշխան պանծասցիս
յաշխարհ հռչակել ․
աղէ՞ մի՛ այդպէս տըրտում երեսօք ա-
կընկոր հայեր,
խնդա՛ պատանիդ, հասեալ են առ քեզ
բաստք երջանկաբեր ։
Անուն իմ յաշխարհ հռչակ թող հարցի
'ի շուք մեծափառ,
այն ինչ զծառայդ արարից ինձէն տէր
գերամեծար ․
քոյին օրհներգակ շըրթանց ինձ մըր-
մունջ աղօթք անդադար,
բա՛ւ է և հաճոյ քան ըղձանձ և քան
ձեր մեծապայծառ ։
Զիմ խոստմունս ահա՛ ես կատարեցից,
մանուկըդ կայտառ,
միայն ես 'ի քէն խնդրեմ փոխարէն սէր
կամայօժար ․

տարադէպ կարի քեզ աստ մըտանել
հառաչել ասել ,
ուա՜ղ շնորհագեղ պատանւոյդ գողա-
րիկ մանկանդ ոսկեհեր .
Ո՛վ երբեք ըղձոյդ վատաբաղդ ըղձոյդ
ըզմտաւ ածեր ,
հընչեսցեն անոյշ քեզ կիթառ և փուն
մուզայք ոսկեհեր .
Թէ զասացելովքս ունկըս տրասցես ,
արժան քեզ բերկրել ,
զի սօն արքային վե՛հ փառաւորին ,
խնծղանաց օրեր .
Ո՜ն արի արբցուք գինի անապակ և
մեք զուարճասցուք ,
գըթա՛ քեզ գըթա՛ ո՞ հրեշտակատիպ
հրաշագեղ մանուկ .
աղէ՞ և 'ի սիրտ արբեալ ըղձութեան քը-
նար հնչեսցուք ,
արտալած 'ի քէն զթախիծ տրտմութեն
վանեսցէ թըմբուկ .
Լսաց , ողջախոհ մանուկն խմացեալ ըղ
կամս արիկնուհւոյն ,
հատեալ զբանից թիզ անդ բարբառէր
շըտապաւ իսկոյն .
* ո՞վ յարգամեծար տիկին , զոր ասես
ինձ առնել համբուն ,
այն ամենայն ոչ լիցի ինձ և ոչ կամիմ
մեծութիւն .

Քանզի մեծութի՛ և փառք քան զըստա-
ուեր գընան փարատեն ,
մինչև ըղձաշակըն աւետալ քըմոցն յոչ
ինչ համարեն .
փառք և մեծութիւն չէք յաշխարհի քան
զառաքինութիւն ,
և արմատ նորա և զանձառեղէն ողջա-
խոհութիւն :
Խորշուառէ կարի մեծատունըն այն վա-
ւաշ մոլեգին ,
և Թշուառագոյն զամենայն աւուր սիրտ
իւր տխրագին .
որում պատասխան հակիրճ՝ անամօչ ա-
նէր տիկնուհին ,
մինչ զոր 'ի մըտի երըն իմացաւ այն գե-
ղեցկագին :
* Յովսէփ քեզ բարի լեցի և լեցի երդ-
նում 'ի յերկին ,
մի՛ այդպէս 'ի միտս զմտաւ ածեր զխոր-
հուրդ նըրբին .
բազմոց և բազմոց տեսեալ մեր խոր-
հուրդ այդպէս խոր վարին ,
գիտեմք դիւրագայթ գտանիլ նոցա 'ի
վատ կոյս ուղին :
Քանիք և քանիք 'ի բարի համբաւ մե-
ծափառ ալանց ,
սխալեալ գըտան սըխալումըն մեծ 'ի
զիղջ յանցանաց .

մինչ մանրամասնութեանս խոկացին մտօք զխո-
րոց գործելեաց ·
Թէպէտ քան զգործս զվախճանն յա-
ւէտ է խոհեմ արանց ,
Խոկալ խորախոր ընտրել կամ ժխտել
ըստ իւրոց դատմանց ·
սակայն և երբեմն գործողք՝ ըզվախճանն
առանց ընտրանաց ,
գըտան բարեբաստ քան ըզվախճանին
զելս մըտածողաց ·
և բաղումք այնք են՝ որք խորշին 'ի դէպն
անվընաս մեղաց ,
Ո՜ որ թէ էր գործեալ, Նոյան ձեռնար
կէր այլ բաղում բարեաց ,
երթան ընկըղմին 'ի գուբըս մըթին խոր
խաւարամած ։
մի՛ քեզ պաղատիմ , մի՛ զքեզ ընկըղմեր
'ի գուբըս մեղաց ,
խորշեալ փախըստեամբ 'ի չար այս գոր-
ծոյ ըստ քոյին կարծեաց ։
Ո՜ որ ինձ առնիցես , գիտեմ զի չար է
ըստ քոյին դատմանց ,
և նման վախճանն չարագոյն քան զայն՝
'ի վիշտ դառնութեանց ·
այլ ո՛չ է սկիզըն՝ և ո՛չ է վախճանն՝ չար
ինչ քո կենաց ,
սկիզըն և վախճան լիցի՛ անըսպառ քեզ
մեծաշահ գանձ ։

Օ՜հ թէ կամարալ դու այժմ ինձ գլա-
ցիս իմոց զըրուցաց ,
քեզ փառք հանդերձին յակինթ եւ զըմ-
րուխտ ոսկեհուռ կերպաս ։ ||
զայս արտասուաթոր այն ինչ անդ խօս-
եաց տխրինն գեղերես ,
ողջախոհ մանուկն կրկնեաց պատաս-
խան՝ խօսեցաւ այսպէս ։
*Ո՛չէ՞, մի՛ այդպէս լինիր փղձկեալ,
զայդ ոչ կարեմ ես ,
մի՛ ընդ վայր ըզքեզ ըզփափուկ անեալդ
՚ի սիրտ մաշեսցես .
կրկին երեքկին զայս կրկնեալ ասեմ ես
քեզ աստ այդպէս ,
աղէխարշ մորմոք մի՛ ՚ի քեզ գլոյցէ տե-
ղի մեծապէս ։
Երկնչիմ զայդ քեզ առնել զայդ ոճիր՝
զոր դու միշտ սիրես ,
զի զերրկամուանս ըզմարդկան դիտեն
Աչք ամենատես
բաղձեալ ՚ի յերկինս յաստղազարդ կա-
մարս հրաշափառապէս ,
ընտրէ միշտ զամբիծ զվարս եւ մաքուր ,
զոր յանձինդ տես ,
Նըմա անհաճ եմ՝ թէ քեզ հաճեցայց՝
բարւոք իսկ գիտես ,
առ ո՞ հնազանդիլ արժան է յաւէտ՝
ասա՛ թէ ընտրես .

Ծառայն՝ տղախնոյն, և կամ տիկնուհ-
ւոյն՝ վայել մեծապէս,
գիտես դու անշուշտ՝ հնազանդիլ փո-
քու, ոչինչ կարեմ ես.
Ո՜ր ինչ հրամայէ տէրն իմ 'ի յերկինս՝
առնեմ փութապէս,
մի՛ ինչ ընդունայն խոստանար առ իս
ըղձանձուց ոչէս ուէս.
զի եթէ իցեմ հաճեալ ընդ այդ բան,
պաղատիմ ես քեզ,
յորժամ ըղձմրմինդ չքնաղիկ տեսի
զայտ քո գեղերես
Յիս բորբոքէին կիրք իբր 'ի ծովու ալիք
փրփրադեզ,
այլ արդ՝ անամբոխ և անայլայլելի, ոչ
հաճիմ ես քեզ.
և զայդ՝ զոր ասես, ոչ կարեմ առնել,
անշուշտ գիտասցես,
զի ընդ դէմ երկնի եղջիւր ամբառնալ,
են մեղք մեծապէս. ||
Նըմա անդ բամբիշն կրկնեաց վերստին
դարձեալ զայս բարբառ.
* այլ շա՛տ պաղատիմ ես քեզ ըղձանօք՝
պատանիդ կայտառ.
զի գուցէ կիրք քո բորբոքին սովա-
'ի հուր բոցավառ,
իմոյս հայեցեալ չքնաղ երեսաց՝ և մարմ-
նոյս պայծառ,

Կաթոգին սէր ինչ 'ի քեզ զայս արծարծ·
լուցցէ հրափառ ,
որում ես ցանկամ 'ի բոլոր սրտէ և ո-
րում յօժար ·
'ի մահահրաւէր վտանգաց զանձն իմ
փրկես դու Նովաւ ,
գտթամ պատանիդ՝ 'ի քեզ և առ իս խը-
նամ քո կալեալ ։ ||

Ասաց · ձեռնարկեաց իւր շուշանագեղ
բազկաւըն ձեռին
յողջախոհ մանուկ գեղայտ պատանին
'ի մէջ սենեկին ·
յայնժամ պատանեաց սիրտըն ամբոխ-
եալ իսկ յիւրում անձին ,
դիւագին սարսուռ 'ի սրտմտութեան
զիւր կիրս յուզէին ։
Հանգոյն ալէկոծ բարձրաձայն ծփման
ծովու Պոնտոսին
Նաւու բազմաբեռն յանանքոյթ վայրի
'ի ծուփս նորին ·
խառնեալ ընդ Նոտոս մինչ շըղթայա-
զերծք հողմունք Եւրոսին
շընչեն ամպայոյզ և ահեղասաստ , 'ի կոխ-
մաշին ։

Ընդ յաղթ յաղթ ալիք բարձրանան
յերկինս , Նոյնք վայրասուզին ,
Յալեաց Նաւն ոստչի յալիսըն զաժան
լերանց օրհասին ·

որ 'ի փոթորկաց՝ ահեղ արձակէ սոսկա-
լի գոչիւն ,
ըզձայն ամբառնայ վայրի և գուժի ա-
ռանց ճարճատիւն ,
Ո՜չ ի մանչահրաւէր անդերձ վրանդին
արկածք հասանին ,
զխա՞րդ նա յայնժամ կայ 'ի տագնապի
հասեալ վրանդին .
դողայ և շարժի յօձան իւր կոչէ զԱստ-
ուած 'ի յերկին ,
այսպէս պատանիս 'ի սրտին պահու կայր
'ի տագնապին .
Ո՛չ գիտէր , զխա՞րդ 'ի գլխի կացցէ հա-
սեալ վրանդին ,
որդեօք կամարար լինել մեծուհւոյն ,
և կամ իւր անձին . . .
այսպէս 'ի վարանս կասկածէր , և ոչ
միտք իւր հաճէին ,
անդ արագաթև յերկնից հասանել մինչև
հրեշտակին .
Ո՜ր յղեաց անդ փոյթ 'ի գահէ լու-
րում Աստուած մարդասէր ,
զայն՝ որ ձիւնափայլ ըզգեստուք ազնիւ
գեղաշուք փայլէր .
սաղաւարտ գլխոյն որպէս զարեգակն
ըզլոյս ճաճանչէր ,
որ 'ի թիկանց կոյս եկեալ ընդ ունկան
նորին զայս հրծծէր .

* Ե՛ս եմ Ուրիէլ հրեշտակ վեցթեւեան
լուսափայլ յեթեր ,
վասըն քո այսօր իջի ես անտի՝ զայս ինչ
քեզ ասել .
զողջախոհութիւն , թէ մահու մեռցիս ,
մի՛ 'ի բաց ձգեր ,
որ թօթափեալ ըզքեզ 'ի ձեռաց տիկ-
նոջս ոսկեհեր ,
Խնայեա և դու քեզ 'ի բանդի կրել
վիշտ դըժոխըմբեր ,
սակայն Ճանապարհ բացցի քեզ անտի
փառաց հասանել .
քանզի 'ի սկզբան է ամենայն ինչ դըժ-
ուար անըմբեր ,
յետոյ քաղցրագոյն և դիւրին յաւէտ
երևի լինել .
Որպէս պարտիզպան նախ քրտանց բազ-
մաց հեղու վտակներ ,
խոնջեալ բազմաշխատ ոչ սակաւ կրէ
վիշտ դժոխըմբեր .
այլ յետոյ բազմեալ ընդ բազմասաղարթ
ծառովք պտղաբեր ,
ցընծայ ծափահար հանգչի անաշխատ
ըզտիւ և գիշեր .
Դու սոյն վտանգիս դիմագրաւ լեցիս
միայն վըշտամբեր ,
սարդենեաց ծաղկեալ բոլորեալ պըսակս
տացին քեզ նուէր .

որպէս քաջայաղթ զինուորին պսակս
տայրն վայելել ,
այն մինչ դառնային 'ի յաղթութէ ողջան-
դամ ապրել .
Այսպէս պատրաստին քեզ պսակք ծաղ-
կանց և մարգրտայեռ ,
յաղթեալ արդ կրից՝ 'ի բանտ մտանես-
ցիս վշտօք չարչարել . ||
տաց , և թուեալ 'ի թևս թեթևս 'ի
յերկինս 'ի վեր ,
և զհետ հետոց ճաճանչ լուսափիւռ
մինչ երթայր , ձգեր .
Պատանին Յովսէփ՝ որպէս 'ի քնոյ 'ի
խոր մահաբեր ,
կամ որպէս հզօր թափեալ զինքն յոդ-
ւոց գինւոյն քնաբեր .
ուժգին ինչ շարժմամբ կորովի որպէս
պատերազմասէր ,
եկաց առ ոտին նմա համարձակ սկսաւ
ասել .
Ողջախոհութեամբ լաւ ինձ մեռանիլ՝
քան կեալ խուժական ,
երբերգելի՛ է մահ յատկապատ՝ քան
կեանքըն դաժան .
այլ եթէ ասես տարփածուդ 'ի սիրոդ
անմռունչ 'ի բան ,
թէ՛ անակնկալ դառնաղէտ վշտաց զքեզ
բանդից տար .

Կրկնեմ և ասեմ, լաւ է ինձ մահուան
խայթ սրբաբերան,
քան զայդ ինձ առնել, և կեալ յերջա-
նիկ բարեբաստութեան . ||
ասաց, սկսաւ փախչել պատանին անտի
նոյն ժամայն ,
խորամանկ տիկինն զկնի հասեալ կալաւ
միւսանգամ ։
Բ.Ժլ անմիտ մանուկն՝ անդէն 'ի շուայր
անկեալ ընդ շրթման ,
շտապէր խուսել անտի փոյթ ընդ փոյթ՝
'ի տար գաղթական .
շատ նա տաժանեալ՝ զամզան իւր ապա
թողեալ 'ի նմայն ,
'ի փախուստ լինի՝ ձողոպրեալ այսպէս
'ի ձեռաց նորայն ։
Ո՜ր առեալ պահէ յորդոր իւր խա-
կոյն տիկին խարդաւան ,
զնէ 'ի բարբեռն իւր՝ յանդիման անցէ
զիւրն պատմուճան .
սկսաւ ապա ճչել, և ողբալ սրդայնոց
նման ,
ձայն լալեաց նորին շարժեաց զաղախ-
նեաց գումարս ամենայն ։
Գայլին շտապաւ, և հարցանէին զաւիթ
իւր կոծման ,
զնէ իւր արտասուքն էր յորդ ավտակ զէտ
ուղխ 'ի ծորան .

այնչափ խոժոռեալ էր նա 'ի ցասումն
մահաւիթ սոսկման ,
մինչև զանգանել և քան զօրինօք մտաց
շամշութեան ։
Զօրս մերձենայլն՝ այրէր և կիզէր բա-
նիւ խստութեան ,
որպէս հուր այրէ զխուխ բազում ան-
կեալ 'ի գեհեան ․
զխանդ բոցք նորա 'ի վեր 'ի բարձունս
դիզեալ ծառանան ,
այրէ և կիզու քուրում շրջապատ դըր-
եալըս՝ սահման ։
Նոյնպէս և սոյն սա՝ ցիր և ցան սփռէր
անդ զամենեսեան ,
զի որպէս առիւծ գոչէր մռընչէր կա-
տաղի գազան ․
աչքըն բարկացայտ հուր թօթափէլոյ
կիզանողական ,
զարհուրէր , ոչ ոք իշխէր մերձենալ առ
'ի պատասխան ։
Հասանէ այս լուր քուրումտեառն յա-
կանջս պալատ յարքունեան ,
շտապաւ ելեալ գայ և հասանէ քուր
տուն առժամայն ․
ընդ առաջ նմա լինի վավաշոտն 'ի դէմս
գաժան ․
և մեծաբարբառ աղաղակ բարձեալ այս-
պէս ընդ բերան ։

* Մա՛յր դու՝ էր փորձեալ քո զպատա-
նին՝ գիտել զչարմէ ,
և կամ զբարուց քոյ տեղեկանալ , և
կամ զդէնէ .
Է՞ր առանց փորձոյ որդեգիր զնա ետուր
ինձ՝ բա՛րբէ ,
զի՞նչ չարաճճի մանուկն ինձ արար ,
ո՞վ պատմել կարէ .
Մինչդեռ յառանձին էի 'ի սենեակ ,
գայ նա մօտնէ ,
այլ գիտեմ, եթէ և որպէս յերբեկն յե-
ռանդ սպասէ .
Իսկ չարաբարոյն զդրանդին աղխեալ
'ի յանձնէ իւրմէ ,
գայ և մօտենայ , և տայ ինձ համբոյր
յեռանդուն սրտէ .
Նա զայս ինչ ասէ , * ցորչափ տեսանեմ
զքեզ 'ի բացէ ,
իմ աղէկտուր գալարին աղիքս ինձ տագ-
նապ մեծ է .
ա՜հ , թո՛յլ ինձ փարիլ զքև գրկախառն ,
սէր քո յիս մեծ է , ||
դարձեալ զիս գրկեալ անձուոտ բաղ-
կուն անդէն համբուրէ .
Ետ այլ չասացից , ձեռն արկանէ
յիս յանէրկիւղ սրտէ ,
յայնժամ ես բուռնամ զաղաղակ , և նա
փախուստ խուճապէ .

ահա՛ իւր ամզան՝ զոր արկ մինչ փախ-
չէր, մերկացեալ յանձնէ,
քաջ զայն ճանաչես, զոր ագոյց Նմա քող-
պարգև յայգուէ. ||
Ո՛չ այս աստ, անկաւ յերկիր գետնա-
մած և դիաթաւալ,
կանգնեցին զնա աղախնեայք Նորին իւ-
րև չնչասպառ.
սրտմըտեալ կարի այրըն իւր ընդ այն՝
զոր Յովսէփին արար,
զայրանայր յոգին՝ և զնախատինս զմտաւ-
ածեալ.
Ո.չէքըն բարկացեալ ամբոխեալ 'ի կիրս
'ի հուր բոցավառ,
գայ առ յապարանս, և 'ի մէջ բազմե
արանց վեհափառ.
համադամ խորտիկք՝ Թուէին Նմա ոչ
սընընդաւոր,
և բաժակ գինւոյն՝ զոր ըմպէրն Նա 'ի
Թոյն փոխեալ.
Ո՛հ, երջանկութիւն՝ զի՞ զքեզ ծփէ
ալէօք բարձրացեալ,
մինչ Թշուառութեան խայթ դաժանա-
վէր զքև կատաղեալ.
զի՞ Թշուառութի՜ տեսանեմ զքեզ բոց
յամենայն վայր,
զի՞ դու ալէյոյղ մինչ զերջանկութին
ծփես անդադար.

Այսպէս կայր իշխանն 'ի մեծի կոչունս
տխուր խոժոռեալ,
ապա ընդ ունկան հծծէ արքային՝ հուպ
նմա մերձեալ.
և նա վաղվաղակ ծառայից իւրոց ան-
դըր բոլորեալ,
հրամայէ ածել զնա շղթայապատ բանդին
'ի մուայլ:
Եւ նոքա գնացին առեալ զայս պատ-
ուէր վէհին գերափառ ,
գտին զՑովսէփ, և ածին 'ի բանդ շըղ-
թայիւք կապեալ.
Ուր տակաւապետն վէհին արքայի և
մատակարար ,
իւիք յանցանօք զարքայն թագաւոր-
էին ցասուցեալ,
'Ի նոյն խրախճանի ցասուման զնոսա 'ի
բանդ էր արկեալ,
որք բանդարգելին ընդ նոսա և այժմ՝
զՑովսէփն արդար .
այլ սորա ոչինչ տրտմեալ վարանէր՝ 'ի
միտս իւր թախծեալ,
զի էր հրեշտակին աւետեացըն նա կարի
յուսացեալ:
Գիտէր զԱստուծոյն գութ նախախըն-
նամ կամաց բարերար ,
օրհնէր 'ի սրտի զնա քաղցր 'ի յերգ-
յանմռունչ բարբառ ,

Իսկ հեգ տառապեալքս յարգելանս
բանդից մթին և խաւար ,
միշտ հեկեկէին , լուեալ զձայնիցս անու-
շիկ քնար .
Ցօնաւս բերկրալից աւուրքըն անցին
հասին ՚ի կատար ,
անցնիւր առանձին գնացին ՚ի տեղիս
յիւրեանց բնիկ կոչար .
յայսըմ ժամանակ իշխեր պըղտղաձիր ա-
շուն թեւածեալ ,
կարմրախայտ պտղովք՝ ընդը զամենայն
զքուենջս և զվայր .
Այն ինչ զտուստ՝ և զայլ ինչ նըմանս ՚ի
յուշ ածէին ,
խոժոռեալ ՚ի դէմս աղեբեկ ձայնիւ-
զօրն անիծէին .
այսպէս ողջոյն տիւն և ողջոյն գիշեր ՚ի
սիրտ մաշէին ,
մինչ սոխ միայնակ և պրաս տաւաջի սո-
ցին դընէին ։
Տեսեալ զանտխուր պատանւոյս խնծիղ
դիմօք խնդադին ,
որ իբր ՚ի պալատ հրձուալից դիմօք նըա
տէր ՚ի նըմին .
շշնչեալ միմեանց լուիկ և մնջիկ զվասըն
նորին ,
միաբան նմա անդանօր այսպէս զայս
հարցանէին .

Զի՞ երբ 'ի պարտէզ նընջէս սխլա-
ւէտ ծառոց հովանին ,
յորում քաղցրասիգ զեփիւռն անու-
շիկ շնչէ զուարթագին ·
զի՞ երբ զհանդարտ զհովուաց երամն 'ի
ժամ տօթագին ,
հանդուցեալ զոչխարս առ ընթեր առ-
ուացն սառնորակ ըմպին ,
Ո՛ւր սաղարթախիտ ծառոց հովանիք
զհողմ զովագին ,
ունին յանոյշ նինջ խոնջ արտեւանաց
բազմաքիրտն հովուին ·
յորում նա զիա՞րդ խորդայ 'ի վերայ սի-
ղոց ծաղկածին ,
ապա յարուցեալ սուլէ զսրինգն 'ի դէմս
խնդագին ·
Ո՛հ , կեանքն անտրտում կենաց կեանք
ձօնեն երկարիլ նորին ,
և զպարզութք ցասման 'ի սիրտըս նորա
ոչինչ նըշմարին ·
ոչինչ և նուազ զքեզ տեսանեմք անտըր
տում յանձին ,
զըթօքդ զքուն զանուշիկ պատեալ նըշ-
մարեմք կըրկին ·
Ո՛չ արդեօք զքեզ տագնապեն խոր-
հուրդք ստուար և մթին ,
զի վիշտն այն զմեզ զտիւ զգիշեր ան-
քուն արարին ·

ա՛ղէ՞ մեզ պատմեա՛, զի՛նչ էին յանցանքդ
և մեղանք քոյին ,
զի՛ ընդ մեզ 'ի բանդս զպատիժ կրել
քեզ հրամայեցին ։
Զի՞մ դու ոչ հանես զթառանչ տխուր
'ի խորոց սրտին ,
և տրտմաթախիծ կիրք 'ի քեզ բնաւ ոչ
ինչ երևին ․
զիա՞րդ գունաթափ այտք դիմաց մերոց
օր քան զօր թօշնին ,
և քոյդ կարմրերանգ փողփողէն երեսք
միշտ զուարթագին ․ ||
Եւ յայնժամ Յովսէփ յոգւոց հառա-
չեալ՝ նոցա զայս ասաց ,
* ա՛րք վէհ դիւցազանց՝ լուարուք առ իմ
պատմութեանս անկած ․
այլ մի՛ , աղաչեմ , առ բասրէք զինէն
բանիւք զըրասաց ,
որպէս թէ իմ են յանցանք ապադով
անհամբոյր մեղաց ։
Ես ծառայ էի մեծատուն ուրուք սե-
պուհ բազմագանձ ,
գուցէ՞ ճանաչէք , Մինալ է անուն
տոհմիւք քաջազանց ․
ունէր փառազուն կին մի գեղեցիկ 'ի
տիս դեռահաս ,
ինձ խանդակաթեալ խաստացու ձօնել
պարգև մեծագանձ ։

ՈՒ մինչ ես նմա, և բանից նորա եղէ
դիմադարձ,
նորա 'ի զայրուց ջեռեալ 'ի սրտի մահա-
բեր ցասմանց.
բողոքէ առ այրն, և նա փարաւոնին առ
վէհ քաջ արանց,
ահա ես այսպէս՝ արկայ, իմ եղբարք,
յայս բանդ միգամած. ||
Ասաց, և նոքա նախատեն զնա, մինչդեռ
զայս լուան,
Իսկ 'ի գիշերի զնա տեսանեն յերազ
խօլական.
մանուկ շնորհագեղ, որպէս և էր իսկ
իւր բուն կերպարան,
մանուկ քաջիմաստ և դէմք իւր յայտ-
նէ զիմաստ գիտութեան:
Օ՜ թէ ըս քընոյն զսեւափետուրս բեկեալ
անագան,
այն խնչ ոսկերանգ էր ցայտեալ լուսոյն
յելս արեգական.
միմեանց պատմէին զերազըս իւրեանց
առքա երկոքեան,
պատուեն զՅովսէփ 'ի սեր եռանդնոտ
'ի սրտէ միայն.
Կրկին 'ի գիշերս զերազ տեսանեն առքա
միւսանգամ,
զայն պատմէն այգուն առ Յովսէփ գե-
ղայտ մանուկ շնորհաբեան.

Նա՝ զմեկնութիւնս անրջոց իւրեանց
տալով առ ժամայն ,
Հրեշտակ հոգեղէն՝ նոցա անդ թուէր
մարմնոյ կերպարան ։
Արդ որպէս մեկնեացն , այնպէս և եղև
լրումն հրամանաց ,
զմինըն կախել , և զմիւսն ածել յիւր
պաշտօն 'ի պանծ .
երազ ինչ ետես և ինքն փարաւոն յետ
ժամանակաց ,
'ի մէջ գիշերույն զարհուրեալ յառնէր
լինել խռոված ։
Երկին երեքկին 'ի մեկան քընոյն անու-
շիկ ծաղկած ,
Ձեռըն արկանէր , այլ ոչ զըրօքն գայր
նինջ թանձրամած .
Ելանէր խորոխա , դողան իւր ծառայքն
'ի խիթ արհաւրաց ,
և չէր ոք մեկնիչ անրջոց նորա կարի
տրտմագնեաց ։
Այլ մինչ գեղափայլ նշոյլ արեգին ընդ
երկիր ցայտեաց ,
տայ աճեղ հրաման կոչել քաջորեարս
զգիտնոց քաղդեայց .
մինչ տեսին նոքա զարքայն տըխրադէմ՝
և 'ի վարանմանս ,
խոնարհեալ ահիւ , պաղատին ձայնել
զերազն ըստ կարգաց ,

Ու ալքայն սկիզբն առնու անդ պատ-
մել առ գխտունս քաղդեայց ,
զերաղն՝ զոր ետես , մինչդեռ 'ի գիշեր
խորդայր միգամած .
*լուարուք առ իս , ասէ , որք քաղդեայք
գուշակք ապառնեաց ,
Ճառեցից զերազս՝ և դուք զիմ լուծէք
զխորանս մտաց ։
Ոչ է միտք և կիրք իմ ծփին 'ի յալիս
խորհրդոց յուզմանց ,
բարձէք արդ յինէն զիմ տրամաթախիծ
ոգեշարժ կասկած .
քանզի տեսանեմ 'ի մէջ գիշերիս մինչ
'ի քուն մտած ,
երկեղուտ երազ՝ ահռալի անգամ և
ձեզ լսողաց ։
Թուէր ինձ լինել յափն կոյս գետոց
հուպ յորդախաղաց ,
յաթոռ ոսկեկուռ բազմել նկատել
զդիրըս վայրաց .
Ջրոյն վէտ առ վէտ ծածանեն ալիքն 'ի
սիւկ քաղցրութեանց ,
և դդիւն նորին ամպքեր զիմ ունկն իբր
երգ նուագաց ։
Ու շուրջ զգետոյն ծառախիտ պան-
ծայր գեղեցիկ անտառ ,
յորում ծաղկապերճ տունկք նորաբոյս
յոտս մշտադալար ,

երփներանգ գունով՝ կէպըն հրաշալի
ծաղկամբք փողփողայր,
կէպքն ՚ի կողերս յանուշակ պատուղ դեռ
հասունանալեաց,
Նոյ դաշտըն նոյնպէս՝ գունագեղ ծաղ-
կամբք լցեալ լիացեալ,
ուր ցօղ անուշակ համասփիւռ ընդ այն
վայր էր ծաւալեալ.
՚ի ծագել լուսոյն՝ էր մարգարտայեռ վայ-
րէքն այն շղար,
և Նուրոսն ամպք անդ յուշիկ փչէր ՚ի
ծառս երկնածայր.
Հոտաւէտ բուրումն սաբէականին ընդ-
նմա խառնեալ,
անդ երգ սիրախումբ Թռչնոց նուա-
գաց ոգեշարժ հնչեալ.
որք ընդ ստասխիտ լսէին ծառոց անդ-
մշտադալար,
մայք գառանց մատաղ ընդ երգըս
Թռչնոց լսէր և խաղար.
Նա իմ զմայլմամբ՝ հրճուեալ ՚ի հոգի,
երգեմ ծափահար,
և ՚ի մէջ ջրոյն խայտայլին ձկանց գե-
ղեցիկ գունմար.
կայտռէին ՚ի վեր, և էր տեսարանս ցան-
կալի անտառ,
անչիմ հիասքանչ ընդ այս ամենայն եա
յապուշ կրԹեալ։

Կալաւ որհաւիլք զիս նորատեսիլ և
յոյժ հրաշափառ ,
մինչ ընդ տեսարանն ընդ այն մնայի
ափշեալ հիացեալ ·
անդ եօթն երինջք ըն եղջիւրաւորք
սպիտակափառ ,
գեղեցիկ յաւէտ և քնքշամորթ պարարտ
և կայտառ :
Ելեալ 'ի գետոյն սէգ մանկաղէլին ծաղ-
կապերձս 'ի վայր ,
'ի կայտիռ գայլն մեղմաձայն բառաչ
անդըր արձակեալ ·
Ճարակէն , շրջին , սիգաքայլ 'ի դաշտն
այն լայնածաւալ,
խնդան 'ի խնծիղ արտօրայքն անդէն և
ամենայն վայր :
Մ՝ինչ նոցին յաւեալ ընդ գեղեցկութ̅
դիտեմ մտատար ,
լուայ աղաղակ անդ 'ի մէջ ջրոյն գա-
լանաց բարբառ ·
ահեղ էր բոմբիւն՝ մինչև տատանիլ լե-
րանց երկնածայր ,
վիմաց տապալիլ և սեպացելոց ժայռից
ամբարձեալ :
Զայս իմ դարձուցի 'ի ջուրն երկիւ-
ղիւ հայիմ քաջքնեալ ,
տեսանեմ, ծփէր , և ջուրն այն յուզէր
ալէօք փրփրացեալ ·

և անդ արևուն շող ահնախառիղ յեր-
կինս լուսավառ ,
բալաձիգ քօղով ամպոց թանձրամած
դառնայր ՚ի խաւար ·
Օ՛ գեղեցկութիւն դաշտացըն դիտեմ
ծաղկազարդ պճնեալ ,
ուր ծածանէին ՚ի հեղիկ հողմոց մե-
խակք ոսկեփառ ·
արդ տրտմաթախիծ ՚ի սուգ համակեալ
լայ նա խամրացեալ ,
Իւր գեղեցկութիւն և համայնաջինջ
եղծեալ և ղեղծեալ ·
Պարձեալ ծփեցան ջուրք ամբողջ գե-
տոյն անդ լայնածաւալ ,
և այլ եօթն երինջն ելին ՚ի գետոյն ,
գան ՚ի դաշտավայր ·
կայր երկիր համակ ՚ի սարսափ ահի յե-
րեր տատանեալ ,
հողմըն ոչ փչէր , յայերս ծփէր փո-
թորիկք մրրկեալ ·
Կերպարան նոցին այլանդակ հրէշ ճի-
ւաղ քանասար ,
՚ի տգեղ դիմացն , և ՚ի լայն ռընգաց շըն-
չէն տապախառն ·
սևամորթ կարի թաւամազ զազիր Հար-
պեայք մոլեգնեալ ,
Սփինք գարշելի տգեղ ՚ի մարմնի Հիդ-
րայք վատափառ ·

Զսոսա՛ տեսեալ եօթըն երընջոցըն երա-
մակք կայտառ ,
խոյս տան 'ի լերինս , և 'ի փապ ղօղըն 'ի
մութ 'ի մացայլ .
իսկ նոքա զհետ սոցին արշաւեն շուտա-
փոյթ պնդեալ ,
զորովայն նոցին պատառեն խուրեանց եղ-
ջերըք սըրածայր ։
Գնան , և իջանեն 'ի լեռնէ անտի 'ի նոյն
դաշտավայր ,
Թռչնափիսխ շըթունք նոցին տան ծաղ-
կանց թառամիլ իսպառ .
խոյս տան յոստախիտ ծառոց և սոխակք
անմռունչ լռեալ ,
մատաղ երամակք գողտրական գառանց
խոյս տան և ցրուեալ ։
Ո՛չ երևէին կայտիռ անդ ձկանց ոչ
մըղուաց ըղղալ ,
ոչ սաւառնէին 'ի բարձունս երկնի ար-
ծիւք սըրավար .
բնութիւնն ամէն քօղազգեաց ողբայր
յարտասուս հարեալ ,
քանզի վիթխարի ձայն սոյն գաղանացս
շարժէր զամէն վայր ։
Նա՛ իմ զարհուրեալ՝ մինչ խոյս տալ
անտի կամէի իսկոյն ,
զարթեայ արհաւրօք՝ մինչև ցառաւօտ
մնամ ես արթուն .

Մտօքն իմ՝ տագնապին , որդ պատառե-
ցէք զ.բոց մնչացուն ,
բարձէք զիմ յինէն արտմութի՛ւն մըրրոց՝
տալով մեկնութիւն ։
Երդնում 'ի յերկինս , թէ որ մեկնեսցէ
զիմ անուրջս քնոյն ,
Ընծնիշխան զնա առեր՝ իմ քաղաքացս ա-
րարից համբուն ․
Նա և զաթոռն իմ տաց զերկրորդական
իշխել քաջամոյն ,
և զիմ մատանի 'ի ձեռս նորա 'ի նշան
ախոյն ։ ||
'Նոքա այր ցընկեր հայլին ակնարկէշ ա-
սել նախագոյն ,
ոչ որ խիզախէր ասել զերազոյն ինչ
ինչ մեկնութիւն ․
մի ոմն 'ի նոցունց ապա յորուցեալ 'ի
մէջ ժողովոյն ,
որ էր ծերունի , և անցեալ զաւուրբք՝
քան զամենն գիտուն ։
Խոնարհեալ յերկիր յերկրպագութիւն
ոսկեփայլ գահուն ,
բանայ զբերանն , արձակէ բարբառ 'ի
մէջ ոբերոյն ․
անդ լռութիւն ինչ վաղ թագաւորեաց
իբր զգիշերոյն ,
այն ինչ մթագնի , ոչ լսին թռչնոց
ձայն և ոչ բբիւն ։

Այսպէս լռութիւն էր աստ խորխորին
ոչ մի ինչ հնչիւն ,
մինչ զայս օրինակ խօսէր յատենին այրն
իմաստնագոյն ․
* մրքայ վեհափառ՝ օրինակ է սա կե-
նաց բազմորդիւն ,
քանզի կայսերփեան պտուղք ցուցա-
նեն շողշողքըն փայլուն ․
Զմիջահասակ դեռահաս զոխս զմեր
զուարթուն ,
յորում ծափաձայն հրճուի սիրտ մարդ-
կան յաշխոյժ մանկութիւն ․
սպիտակափառք երինջքըն ցուցին զյա-
ջողութիւն ,
բերկրիլ անխառուր սահմանին շրջանս
կենաց կէտ 'ի նոյն ․
Երինջք սևորակ ցուցանեն առ մեզ
զոր 'ի ժամ մահուն ,
պաղին մեր երակք արեան շրջանին 'ի
կէտ մահացուն ․
վայրագ գիշախանձ նման երնջոց եօթ-
նեքին ողջոյն ,
զկեանս սպառեն , զմարմինս յօշ յօշ
պատառեալ համբուն ։ ||
Մ՝եկնութեանս այսմիկ հաճեալ խուռ-
ներամ գումարքըն գիտնոց ,
քաջագէտ հմուտք՝ որք էին խըմբեալք
անդ քաղդէացւոց ․

այլ սիրտ արքային՛ և միտքըն նորին 'ի
ծուփս խորհրդոց ,
տագնապէր զնա որպէս հրայրեաց փայ-
տակեայ հնոց .
Ասաց եւ ածել զայլ քաղդէացիս
զհմուտս գրոց ,
գային 'ի ծագաց , գային խռնէին մեկ-
նել զերազոյն .
և 'ի նոցանէ յարեաւ յատենին որք հմուտ
խորոց ,
եկաց լուռ մնջիկ ատեանն բազմամբոխ
համբուն ժողովոց ,
Սա՛ ուղղեալ զբանն առ արքայն՝ յատ-
եանն , և զայս ինչ ասաց ,
* արքայ ինքնակալ և յաղթաբազուկ
արժանիդ փառաց ,
եցոյց քեզ վերնոց հայրագութ խնամ
վեհ աստուածութեանց ,
զոր յետ սակաւուց ունելով ունիս ազգ-
մահկանացուաց .
Կրեւանըմբեր վիշտ և դառնաղէտ յերկ-
նից եթերաց ,
զի աստեղալից զերկինս ցուցանեն վայ-
րէք ծաղկազգեաց .
և եօթըն երինջք՝ զեօթըն մոլորակս վե-
րին կամարաց ,
որով տիեզերք 'ի մէջս կըշռոց պահին
համաչափ ,

Այս կարգ գեղեցկին արդ փոփոխեցի
յետ ժամանակաց ,
և Թարշամեցին նորաբոյս ծաղկունք
մատաղ մեր կենաց .
փոխան քաղցր երգոց Թռչունք լռե-
ցին մերոյս խոծմանց ,
և քանզի տապաստ անկանին մարդիկ 'ի
նոյն տարերաց ։ ||

Ոչ ըղձալ ինչ քան զայս մեկնել զար-
քայի երազ կարացին ,
ըերկրութիւն ձօնել , կամ 'ի բաց վա-
նել զվարսամն նորին .
և այսպէս առեանն արանց քաջազէա
յամօթ լինէին ,
իւրաքանչիւր ոք երկրայինս յիւրեանց
տունըս դառնային ։
Եւ անդ միայնակ աղբայն 'ի սենեակ
իւրում առանձին ,
զերազըն յիշէր և զմեկնութիւնս , կիրք
իւր յուզէին .
ամբոխէր որպէս ծովըն ալէտատ 'ի
հողմ սաստկագին ,
ոչ դուլ և դադար գտանէր երբէք 'ի
սիրտ Թախծագին ։
Շատ ինչ ձեմ առեալ միայն ընդ մի-
այն յիւրում սենեկին ,
եղանէր 'ի լայն սրահ պալատոյն յոգի
զայրագին .

գնայր սաստ և անդ , ձեմ առնայր ցամա-
մանքէ ՚ի մշկուան այգւոյն ,
և այս ՚ի տուէ և ՚ի գիշերի սուգ կըս-
կըծագին ։
Աշտանք իւր մնացին զնա բոլորքեն ՚ի
հուր հընոցին ,
և այսպէս ցասուամբ իւրում մահհաւութ
զինքըն լըլկէին ․
որք ՚ի ծառայիցն՝ և կամ յաղախնեաց
հողին չիշխէին ,
և այնպէս ողջըն ոլոքունիք տրտում ամ-
բոխեալ էին ։
Խոկան խորախոհ՝ դ իւր ցուոցըն տալ
վեհի արքային ,
յանըստեղ ուժոյ հնարեալ նոցա յոգի
տրտմէին ․
զՑոլսեփ և զիւր եղաղ յուշ ածեալ
տակաուասպետին ,
գնայ , մերձենայ անկեալ գետնամած ՚ի
դուռն Նորին ։
Աւչ անկաւ ՚ի սիրտ սորա արհաւրաց
խիթ երկիւղագին ,
անվեհեր գնայ որպէս սէգ առիւծ ա-
նահ բնաւին ․
լինել դիմագրաւ , զի յանձնապաստան
էր քիւրում սրտին ,
զայս պաղատախառն արձակէ բարբառ-
ոյսպէս խնդագին ։

* Ներեա՛ ինձ՝ տէ՛ր իմ, դու հզօր Թա-
գաւոր յոլորտըս երկրի ,
Ներեա՛ ինձ խօսել սակաւիկ զայս ինչ
վեհիդ առաջի .
Ներեա՛՝ աղաչեմ, իմ՝ յանդգնութեան
քոյդ ծառայի ,
զի փրկաւէտ ինչ ունիմ քեզ ասել, Թէ
հրաման լիցի ։
Այն զի տրտմութիւնդ է սուր մահա-
բեր հանուր աշխարհի ,
Նա՛ ամենեքեան տխուր 'ի յանձնիւր 'ի
սուգ համակի .
չիք քուն անուշիկ 'ի տունըս մեծաց , և
փոքունց մեծի ,
չիք ձայն խնդալից մանկտւոյ մատաղ
արդ ծափ ըղ ծափի ։
Ո՞ւր են ձայնք երգոց երգեցիկ կանանց
'ի խնճոյս մեծի ,
սուգ ողորմագին յամենայն տեղիս ա-
ճեալ երևի .
Է՞ր 'ի տուունջեանս աղջամուղջ խաւար
իբր 'ի գիշերի ,
և 'ի բալաձիգ տխրերանգ գիշեր մութ
շօշափելի .
Օ ի՞նչ էր այն ճաճանչ լոյս փայլակնա-
ցայտ զանգեալ յայերի ,
հի՞մ 'ի մթանալ նորին՝ տիեզերք ահի-
պարանք .

զի որովհետեւ արեգակնափայլ դու լոյս
աշխարհի ,
և նշուլագեղ ճաճանչ լուսապանծ 'ի
վերայ երկրի ,
Ու լուսին բոլոր ծագեալ 'ի խաւար
բոցով լապտերի ,
լուսով քո փայլուն բոյլք ժողովրդոց
աստեղք լուսարփի ·
այն ինչ ամպապատ Արեգ , կամ Լուսին
յայերլս լինի ,
համբուն տխեղերք 'ի մութ սգաղգեաց
ընդ քօղով ծածկի ·
Կամ որպէս գլուխ ամբողջացուցիչ ես
դու 'ի մարմնի ,
ժողովուրդք քոյին մարմին բաղկացեալ
քև կենդանասցի ·
յորժամ է գլուխն առողջ և կայտառ
անկրսկծելի ,
մարմին քաջողջին կայտառ է 'ի գործս ,
գնայ և շարժի ·
Եւ յորժամ իցէ տկար և հիւանդ՝ մար-
մինն անկանի ,
զմահիճ խնդրէ գնել զիւր գլուխ 'ի
վերայ բարձի ·
այսպէս Թագաւորդ մինչ բերկրապա-
տար խնդաս 'ի հոգի ,
և մարմին քոյին բոյլք ժողովրդոց 'ի
սիրտս բերկրի ,

Իսկ մինչդեռ կրես վիշտ ինչ աղերսել
'ի քումըդ սրտի ,
զնոյն տեսանել յաւէտ առաւել 'ի ժո-
ղովս ազգի ·
ահա՛ տրտմութիւն զքեզ պատեալ է 'ի
խորըս սրտի ,
ծփելով ծփիս 'ի յոյզ խորհրդոց 'ի
տագնապ մեծի ։
Գիտեմք՝ զի վիշտ մեծ վեհափառու-
թեանդ է զմին իրի ,
զի ոչ ոք մեկնել կարացին զերազդ 'ի
վերայ երկրի ·
Թէ ներես ասել, և պատմել զերազս վե-
հիդ առաջի ,
զոր ես՝ մինչ 'ի բանդ ընդ խոհարարին
էի , անդ տեսի ։
Ո՛ր մատռուակարարին՝ ետես , և այն քեզ
հակիրճ պատմեսցի ,
Նաև մեկնութիւնն երազոց մերոց լի՛ և
անթերի ·
Թէ ներես ասել սկիզբըն առից պատ-
մել ըստ կարգի ,
զի վե՛հ տէրութեանդ բանք քում ծա-
ռայի գուցէ հաճեսցի ։ ||
Մինչ լուաւ արքայ փարաւոն զայս
լուր յոյժ աւետաբեր ,
ցնծացաւ կարի 'ի սիրտ իւր անուր ,
հրամայեաց պատմել ·

անդ անկասկածելին յաշխոյժ սրտէ-
ուանդ յորդի խնդաբեր ,
կրկին երեքկին խոնարհեալ յերկինս
սկսաւ ասել ,
« Արքայ մեծազօր և ամենայնալթ դու
ինքնիշխան տէր ,
մինչ յանցեալս , զմեզ 'ի բանտըն նե-
քին եսուր արկանել ։
անդ երազ տեսի 'ի մի սևաթոյր ամպրե-
րանդ գիշեր ,
որպէս թէ իցեմ 'ի ծաղկեալ պարտէզ
և յոյժ մրգաբեր ։
Ո՛ւր շնչէր Զեփիւռն մեղմիկ և հան-
դարտ անուշիկ հովեր ,
և անդ ջուրց վտակք խոխոջայր քաղց-
րիկ ւանոյշ կարկաչեր ։
յոյժ հանդուննախիվ ՚նայադին գետոյն
սառնորակ հոսեր ,
և վճիտ վտակս վտակըս յըստակս խա-
ղացուցանէր ։
Իմ ծառաստանջ պայքեալ փեղկ շըր-
թանց 'ի նոցունց ըմպէր ,
կշտապլինդ ընա արբեալ , ղաչըս իմ
յաւեմ տեսանել ։
ղշօղոյն տարափ՝ որ էր լուսափառ յա-
րևուն ծագել ,
որով գունազեղ պըճնէին ծաղկունք
անդ մորգրտայեւ ,

Եւ սաղարթք ծառոյն խորև ըղձալիկս
գեղեցիկ վայլէր ,
զվայրըս համբուն պըճնեալ պըտղալից
էր անդ տեսանել ·
Նարօտ և Նարօտ վարդենեացըն ծառք
ծաղկանց իւր բուրէր ,
ինձ զանմահութիւն բուրումըն նոցին
ձօնէր պարգևէր ։
Եւ թռչնոց 'ի նոյն նուագ քաղցրաւուչ
երամք գեղգեղէր ,
յառաջ ընթացեալ տեսի անդաստան
իմըն բարեբեր ·
յորում որթատունկք խիտ առ խիտ լը-
ցեալ ողկուզաւէտ էր ,
և պարարտ կարի և աճխնաճիւղ և
յոյժ մրգաբեր ,
Խաղողք 'ի նոսա մշկահոտ յողկոյզ գոյն
զգոյն փայլէր ,
և սաղարթք նոցին պատեալ զնոքօք կա-
նաչագեղ էր ·
անդ 'ի մէջ այդւոյս ծառ ինչ երկնու-
ղէշ յամպս ծածանէր ,
առ արմին նորա լուայ ոտնաձայն' մար-
դոյ ծիծաղել ,
Մատեայ հուպ ծառոյն , այլ ես սրտա-
բեկ դողամ 'ի յերեր ,
տեսի , զի աթոռ ինչ էր արկեալ անդ ,
ումն 'ի նա նըստէր ,

կարի մօտ նմա՝ ես քաջալերեալ երկեայ
հուպ մատչել ,
զի ընդ աթոռովն շար 'ի շար կային ծա-
ռայքն սպասել •
Յօգնութիւն կարդամ զԱստուած 'ի
վերուստ գալ ինձ թեւարկել ,
և այնպէս երթամ մատչիմ յամրաքայլ
զնա ողջունել •
Ծանեայ , զի էիր տէր իմ փառաւորն
արքայդ մարդասէր ,
համբոյր ես անդէն ոտից քոց մատչիմ
տարփանօք ձօնել •
Կար 'ի քում ձեռին բաժակ ոսկեզօծ
և մարգարտայեռ ,
զոր դու ինձ ետուր ընուլ զայն քաղցու-
քեղ մատուցանել •
անձկանօք սիրոյս առեալ իմ զնա ո՛վ
մեծափառ տէր ,
սրբեմ բեհեզեայ շնչոցաւ իւիք՝ որ 'ի
ծոցն իմ էր •
Ընդ լայնատարած շրջիմ սահմանին այդ-
ւոյն մրգաբեր ,
արդեօք իցեն ինչ գեղեցիկ ողկոյզ ինձ
արժան քաղել •
զաչս իմ ամբարձեալ տեսի զորթ մի մեծ-
կարի երկնաբերձ ,
երրեակ ըստեղամբք գեղեցկափթիթ ոս-
տոց երկայնէր •

Ո՛րքա էր լցեալ իւր քաղցրիկ հառաչն
վայրին խնկաբեր,
յերիս սատեղուն ողկոյզք քաղցրահամ
՚ի հողմոց շարժէր.
ափշիմ ընդ երանգս գունազեղ նոցին
յարևուն փայլել,
զի զարեգական ճաճանչ ՚ի ցոլմունս
կրկին տեսանել:
Սաստիմ և քաղեմ, և զարիւն նոցա ջա-
նամ ես ծծել,
լցեալ զըմպանն՝ գամ, մատուցանեմ
արքայիդ ըմպել.
զոր արբեալ վեհիդ՝ զքո հալածես կըր-
սըդ տրտմութեր,
և ինձ խոստանաս զիմ պաշտօն անդրէն
ինձ մատուցանել.
Դ՝ ծոցոյ քումմէ նշան ինչ հանեալ
զդոհարավառ,
յիմ կախես ՚ի կուրծս աստ և անդ շըր
ջել ինձ նախամեծար.
վաղ ըստ հրամանիդ ելեալ ընդ փողոցս
ճեմեմ սիգաքայլ,
խուռն ամբոխ լինի ինձ երկրպագու-
յերկիր խոնարհեալ.
Ո՛չ ի սա մեծագին գոհար ինչ ազնիւ
էր ՚ի քէն ձօնեալ,
որ ՚ի գիշերի ճաճանչէր ՚ի դեղ արե-
գակնափայլ.

մինչափ անխռովս՝ սիրան իմ տրտմալից
լրջամիտ խնդայր ,
ոչ կարէ պատմել , 'ի խուռն անհնարին
խայտամ ծափահար ։
Ո՞րինչ այս և մինչ այն՝ զարթեալ 'ի
քնոյս , տեսանեմ կատար ,
պատեալ պաշարեալ զինև յարձանիս
'ի բանդին մռայլ ․
անդ տրտմութեան հալած զիս վտարանք
ծփիլ վշտահար ,
մինչև գեղջուք ծագելոյ լուսոյն անդ
ծիրանածայր ։
Ո՞րան զիս և տխուր տեսի զիմ ընկերն
զմատակարար ,
'ի վերանս մտաց ծփէր ալէտանջ քան
զիս ամբոխեալ ․
սա այն է , ո՛րքայ , զոր ընդ իս 'ի բանդ
արկեր բարկացեալ ,
ո՛րոց զգլուխն հատեր , զիս 'ի փառս
հանեալ մեծափառ ։
Զպատանի գիտուն մի գեղադիմակ և
յոգնահանճար ,
'ի զրպարտութեանց իշխանին տիկնոջ
էր անդ բանտարգեալ ․
ցոյց է 'ի բանդի , 'ի շղթայս կրկին
կապեալ կաշկանդեալ ,
չէք նորա յանցանք , շատ ես ընդ նմա
ն՛մ եմ խոստացեալ ։

Այն սա՛ մինչ այսպէս տեսանէ զմեզ
մեծասուգ ձմրեալ,
հարցանէ զառիթն՝ և մատակարարն տայ
նմա բարբառ .
* մինչ 'ի քուն էի երազ ահաւոր տեսի
գիշերայն ,
որպէս թէ իցեմ ես քաջ խոհարար 'ի
մի խորտկարան ;
Ծանեայ զկաթսայսն , զի էին մէհին
ազնիւ խոհարան ,
ըղձանօք մատչիմ եփել զանազան խոր-
տիկ համադամ .
դիզեմ և բարդեմ շեղջակոյտ հերձիկ
փայտաշերտս 'ի վառ ,
բոցըն փայտակոյտ հրոյս 'ի բարձունս
ելեալ ծառանայր :
Յորում շարեցի զեռամեծ կաթսայսն
և արծաթափայլ ,
անդ մանրակոտոր յօշ յօշ ես ջարդեմ
զգառն տարափայլ .
զանազան զկեր պատրաստեմ վաղվաղ
աղիւ համեմեալ ,
զնոսա ապա տանիմ թակաղաւ յափ-
սեայս ոսկեփայլ :
Ուղղեմ զիմ գնացս 'ի տանն արքայի մե-
ծի ինքնակալ ,
տեսանեմ ինձ հուպ զպալատն անդէն
'ի գոյն ոսկեփառ ,

և զարքայն զսէգ յիւրում սենեկի փա-
ռաշէղ բազմեալ,
ընդ ամ և խայտամ 'ի կոչքաւ ոսկից 'ի
սիրտ լրջացեալ.
Ո՜ւր բաժէ, Յովսէփ, գայլն խորանէին
փառս և փառս,
գիշախանձ արծուեաց, և այլ գիշակե-
րաց մարդատուր գումար ·
և պարեալ զինև 'ի բարձանց երկնի մի-
ագունդ խմբեալ,
կուտին 'ի Թակայն, և յուսն իմ Նոքա
խմբիւ անհամար.
Իւրեանց սուր մագլըքն 'ի բաց արկանեն
զափսեայս ոսկեփայլ,
զիւրեանց խձողեն զորովայնն անյագ,
լամ ես մանկաբար ·
անդ իմ խնդութիւնն 'ի կայտառ սրտի
և բերկրապատար,
յանկարծ փոխեցաւ 'ի սուգ տխրագին՝
և յողբոց աշխար.
Սթափեալ ապա լինիմ քարաձիգ 'ի Նո-
ցին գումար,
միագունդ խմբեալ եկին 'ի գլուխ իմ
անձին ակար ·
խարատեն զիմ աչս, 'ի բաց հատանեն
մագլըք սրածայր,
և արեան հոսէր 'ի յաչաց իմոց վտակ,
և սուրայր։

Մինչ այսպէս սուգս զիս գիշատէին
անխնայաբար ,
աղաղակ բառնայր , ոչ որ լինէր եհաս յօ-
ժան և սատար .
գոչիւն իմ ձայնիս զարթոյց զիս յեր-
կնուղ՝ յարեայ զարհուրեալ ,
մինչև ցարդ վարանք մնայց տագնապեն
զանձըն իմ չուառ ։

Արդ զինչ լիցէ այս , չգիտեմ ընաւ
ընկեր չնորհափայլ ,
թէ կարօղ լիցես , աղաչեմ զքեզ , մեկ-
նեա պարզաբար .
գիտեմ՝ զի կարօղ ես զայս ինձ մեկնել
դու իմաստնափայլ ,
քանզի ցուցանեն 'ի քեզ չնորհաց ձիրք
հրաշապայծառ ։ ||

Եւ անդ Յակոբեան Յովսէփ զայս նմա
գեղայտ պատանին ,
արձակէ բարբառ այսպէս չնորհալից 'ի
ծայր իւր լեզուին .
* չէ՛ քեզ այս երազ անուրջ խօլական
իբր այլ գիշերին ,
յայտնութիւն է սա՛ վերին տեսչութե
համայնից ստեղծչին ։

Որ ամենիմաստ և ամենագէտ է յամե-
նեսին ,
չե՛ք նմա թագուն՝ ոչ յերկիր խոնարհ ,
և ոչ յերկինս վերին .

ապագայք գործոց չև՛ ևս եղելոց գաղտ-
նիք մարդկային ,
Նմա ակներև որպէս զներկայս անշուշտ
տեսանին ։
Ո՛ւ չէր և ոչինչ , նա՛ ՚ի գոյ եած յոչն-
չէ զերկին ,
և զերկիր ընդ նմա , և զամենայն գոյս՝
որք քեզ երևին .
անվրէպ նա գիտէ զոր ինչ լինելոց , և
զոր ինչ լինին ,
զի է՛ ՚ի նոսա , և նոքա ՚ի նա՝ ըստ տեսա-
կանին ։
Թէպէտ և չիցէ նմա ներգործութեամբ
հուպ յամենեսին ,
սակայն զօրութեամբ մերձաւոր գոր-
ծօղ ըստ էականին .
որպէս ժամաձոյն՝ թէպէտ և իցէ տրոհ-
եալ առանձին ,
սակայն անանջատ է՛ յիւրում ՚ի գործս
ըստ իւր հանճարին ։
Որպէս և Աստուած արարիչ իւրոց
ամէն գոյակին ,
է՛ յամենեսին , յորմէ ամենայն ըզկա-
խումն ունին .
յամենայն աղինս սեռի մարդկութեան
ճաճանչէն նորին
այս լոյս անստուեր՝ գեղեցիկ վարսամ՝
անաղօտ արփին ։

և

Սակայն դիւցամուք՝ երկընչիմ ասել,
զեմըդ ժըպըրհին,
Եթէ Աստուած պաշտել զիւրեանց ձե-
ռագործս զձուլեալս բովին.
քան զդիւցապաշտս՝ և ազգ խուժա-
դուժ նոքա համարին,
զամենայն՝ որ ինչ դիպեսցի մարդոյս,
տան ճակատագրին. ||
Զայս ասաց, և լուռ եկաց և մինչև
գեղայտ պատանեակն,
անդ մատակարարն զիւրն երազ մեկնել
ձօնէ պաղատանք.
շատ ինչ աղաչեաց, ապա պատանին բան
'ի մէջ էարկ,
և ես անդ լուիկ մնայի լսել նորին զհը-
մայք.
Դընչէն իւր աչկունք արտօսըր աղի
կայլակ ընդ կայլակ,
և անդ շիթ առ շիթ սաղափի աւիշկ ար-
տասուաց թորեալք.
որպէս խարտոցաւ հատեալ որթատունկ
արտասուէն ընդ բարկ,
Նոյնպէս պատանիս 'ի սուգ արտմաբեր՝
ասէ այս գունակ.
* Հասեալ են առ քեզ արդ կանխաժա
մին վատաբաղդ արկածք,
ըստ քում անրջոց՝ ո՞ մատակարար է քեզ
մեծ վտանգ.

արդ զքեզ յիշէ յետ երից աւուրց ար-
քայն վեհափառ ,
զայրանայ 'ի քեզ իւր սրամտութեամբն
'ի հուր բոցավառ ։
Հրամանն արձակէ կախել զփայտէ զքեզ
գլխիվայր ,
սուր անագորոյն զքև շողշողայ դահ-
ճին հրափայլ ։
և անդ երկնային գիշագէշ արծուեաց
բազմաբոյլ գումար
իջեալ 'ի բարձանց՝ զաչըս քո խարեն
ժանեօք սրածայր ։ ||
Մ՝ինչդեռ 'ի բերան իւր բանքըն են՝
անդ մատակարարին ,
հայհոյէ զնա , եկաց պատանին լռա-
մնջիկ խոնարհ ։
Իմ զպատանւոյն բանըս հանճարեղ ան-
դանոր լուեալ ,
ուղերձեմ առ նա խոնարհեալ 'ի դէմս
զայս պաղատանս ։
* Ո՛ շընորհաշուք պատանի՛ և զիմ առ
քեզ հայց ընկա՛լ ,
և զմեկնութիւնս իմոյս երազոց տո՛ւր
ինձ պարզաբար ։ ||
Նորա խնդալից և գեղածիծաղ ան-
խոժոռ բերկրեալ ,
զիմ երազըն այսպէս սկսաւ մեկնել անդ-
յայտնաբարբառ ։

* Որթն այն մատաղ և սաղարթապերճ
յոստս երիս փայլի ,
յորս և ողկոյզք երիս կարմրախայտ
գունով ծածանի .
Են նոքա երից աւուրց նշանակ աւե-
տաւորի ,
յորում առաջին ունիս հասանել քո-
ում վճռակի .
Արքայից արքայն՝ վեհըն փառաւոր
քաջ իշխան երկրի ,
կացուսցէ զքեզ 'ի վերայ այլոց պաշ-
տամանց յարգի .
և քան զառաջին պատուեսցէ զքեզ
յիւրում պալատի ,
զի աչաց նորին դու երևեցիս կարի
տարփալի .
Այս է քո երազ՝ անշուշտ գիտասցես ,
ամէն գիշերի ,
քաջ իսկ ես գիտեմ՝ յետ երից աւուրց
ելցես դու աստի .
արդ յորժամ ելցես 'ի բանդէս , յիշեա՛
զիս փարաւոնի ,
զի և զիս անպարտս նա՛ արձակեսցէ 'ի
բանտէ աստի . ||
Ասաց , և մեք անդ թուեաք զաւուրս
և զվայրկեանս ,
և յերրորդ աւուրն եկեալ դահճապետն
առ քո առաջի .

աչք քո բոցավառ անհագնահայեաց ա՛հ
արկ մեր սրտի ,
խոնարհեալ ահիւ երկրպագանեմք զը
թութեանդ վեհի ։
Որք զքեւ էին ակումբ բոլորեալ արանց
մեծ յարգի ,
յողոք մաղթէին խընայել գըթալ մատա
կարարի .
իսկ դու ամրապինդ զդրունս փակեալ
զքում լսելի ,
տաս հրաման կախել զփայտէ զնա անդ-
վաղվաղակի ։
Նու ինձ հրամայես երթալ վերստին յիմ
գործս նախկի ,
չքադիր քընքուշ լինիս որ քան զօր՝
քում վառ ծառայի .
յիշեմ ես յայնժամ՝ զոր ասացն առ իս
ուշիմ պատանի ,
և զկատարումն ըստ իւր մեկնութեանն
իմոյ երազի ։ ‖
Այն ինչ փարաւոնի լուաւ զայս մեծ-
ճառ տակառապետին ,
կարի խնդամիտ բերկրեցաւ ՚ի սիրտ
խայտալ ՚ի հոգին .
հրամայէ շըտապ բերել առաջի զնա ա-
տենին ,
ոսկեփայլ համդերձս ագուցեալ նմա
նորոգ գլխովին ։

*Սորա պճնադերձս տուեալ գեղեցիկ և
զմեծագին ,
գնայ , վաղվաղէ , ընկոտնի ձեպէ 'ի
բանդըն ներքին .
փող աւագափող հնչէ իւր բերանն եր-
գօք բերկրագին ,
ցնծալից դիմօք բարբառ արձակէ առ
իւր մտերիմ.
*Յովսէփ՝ լուր , Յովսէփ՝ երջանիկ
վայրկեանք արդ քեզ ծնանին ,
մոռանալ զաղէտս քո ժանտահամբոյր
և դժոխային .
պատրաստ են պսակք քեզ պըճնապա-
ճոյճ ոստովք սարդենւոյն ,
Թագ 'ի գլուխ հրճուիլ փոխան նեղու-
թեան քոյդ տաժաջին ,
Ո՛ն արի՛ հապճեպ , երթիցո՛ւք յարքայն
մեք 'ի միասին ,
երազ է տեսեալ՝ նորա արդ խորհուրդք
ծփեալ մրրկին .
յիշեցի նմա՝ զոր ինձ մեկնեցեր մտաց
զերազն իմ ,
նորա զայս լուեալ , մեծապէս հարաւ
'ի սէր քո անձին ,
Արդ զքեզ կոչէ մեկնել զիւր երազ
նմա պարզ մեկին ,
զի միտք և խորհուրդք նորա մշտատանջ՝
արդ հանդարտեսցին .

ոչ ոք 'ի քաղդէացւոց կարացին զնա մեկ-
նել բնաւին ,
գիտեմ հաւաստի , կարող ես մեկնել
զնա՝ դու սէր իմ։
Նա այսպէս արքայն խոստացեալ է որդ-
երդմամբ 'ի յերկին ,
մեկնողաց զգահն իւր երկրորդական
տալ , և զիւր մատանին ․
զա՛մ ժառանգել եհաս ժամանակ քեզ՝
ո՛ մերիմ ,
և եգիպտացւոց իշխան քաջալանջ լինել
յաշխարհին ։ ||
Ասաց , և կալաւ զաջոյ ձեռանէ , և ար-
տաքս եհան ,
և անդ ագանել ետ ոսկեճամուկ նմա
պատմուճան ․
և այսպէս եբեր զնա 'ի պալատ արքային
ըն տան ,
կացոյց առաջի դիւցազն արքայի՝ զնա
յանդիման ։
Ա՛ի ըստ միոջէ պատմէ զիւր երազն՝ նմա
անդ արքայն ,
և Յովսէփ մեկնել սկսաւ նմա հանճա-
րեղ 'ի բան ․
խրախ 'ի զուարճ դէմս՝ նա՛ խաղայր
բազմամբոխ ատեան ,
լուիկ ամենայն ունկըն դընէին նորա
մեկնութեան ։

* Խրախացի՛ր , ասէ , խրախացի՛ր ա՛րքայ
խնդիւ ծափաձայն ,
մի՛ ինչ տրտմաբեր զքեզ պատեսցեն
կիրք ինչ թախծական .
զի Նոյն Աստուած Թագաւորն երկնից
յաստղազարդ խորան ,
զաջ իւր կորովի պարզէ քեզ ահա՛ ամ-
րապատ պաշտպան .
Այս է՛ նշանակ սիրելոյ զքեզ վերին
տեսչութեան ,
զի քեզ աւանիկ երազովք յայտնէ , և
յոյս փրկութեան .
եթէ երազիդ յոյզ չէր ամբոխեալ
զքեզ տրտմական .
անզգաստ էիր , անգէտ լինէիր սովա-
դալատեան .
Որոյ զիւր սրեալ ժանիս երկսայրի
կրճտէ ընդ բերան ,
քաղաքս և զաւառս , և զոր 'ի նոսա ար-
կանէ կործան .
ընդ աշխարհ համայն կոծ կըսկըծելի և՛
ողբ և՛ կական ,
զի սոյն հարուածք՝ ոչ անխայեսցէ ,
և ազգի մարդկան .
Յայս ահեղական դառնացեալ վշտաց
ըկանաց մահուան ,
Երազովք մնացդ անբիջոց քոյին փրկին
ազգք մարդկան .

և նա աւանիկ յալեաց ճողոպրէ զաշ-
խարհըս համայն ,
որ ունել ունէր ծփիլ որպէս ծով 'ի
սովոյն դաժան ,
Իսկ արդ՝ տրտմաբեր կրիւք վարակիլ
իցէ՞ քեզ արժան ,
Լո՛ւր զմեկնութիւն երազոց քոյին ,
խնդամ բերկրական .
որ արշալուսոյր սուրայր զառ 'ի վայր
գետ յորդնածորան ,
վէտ առ վէտ ծօծեալ ալեօք փրփրադեզ
ջրոց քաղցրութեան ,
Զանընդհատ հոսումն ցուցանեն նորա
ամաց հոլովման ,
որք երագընթաց սլացեալ թռչին բար
ձունս եթերեան .
և յեզր գետոյն՝ յորում աթոռով ար-
քայդ դիւցազեան
նըստէիր , և շուրջ զքև ծառաստունք
էին բազմաստեան .
Ի՛ լինել վեհիդ 'ի կենաց շրջանս և յա-
մենեսեան ,
որոց խնամով իշխես , և տիրես սիրով
անխափան .
'ի գետոյն երինջք եօթն ամենագէր կա-
րի պատուական ,
աղխատակափառ և քնքշամորթք 'ի դու-
րըս ելան ,

Ի՛ ամաց եօթնից՝ սա երջանկաւէտ բա-
րեշուք նշան ,
յորում անդաստանք յասկեփունջ լցցին
ցորեան բազմազան .
Ծաղկեսցին վայրիք անբեր ամայիք , և
լերինք անգամ ,
ցօղ իջցէ՛ յերկնից , և մարգագետինք
ծափեսցին համայն .
Ո՛րչափ լիասցին անդ շտեմարանք ցորե-
նիւ յայնժամ ,
կարմրախայտ պտղովք և անոյշ ողկու-
զովք մառան և հնձան .
այսպէս յորդ լցցին զամբս եօթնեսին
ձիրք առատութեան ,
որպէս յերազիդ տեսեր ծաղկազգեաց
զվայրըս համայն .
Նաւ դարձեալ տեսիլդ զայլ և եօթն ե-
րինջս սևաթոյր մթին ,
որք անդ այսպատեղ գազանաբարոյք ժա-
նիս սրէին .
ցուցանէ զամաց զայլոց և եօթնից գնաց
շրջանին ,
յորում սով սաստիկ իշխեսցէ անզուսպ
բոլոր քաղաքին .
Այլ է մահաբեր , յորմէ ամենայն ան-
դանօր սարսին ,
հանգոյն ստուերաց երնջոցըն տան մութ
խաւար երկրին .

ողբան բազմագոչ յարտասուս հարեալ
և ազգ. մարդկային ,
որպէս սպիտակ երինջքըն լացին , 'ի կոծ
ողբացին .
Օ՜ խո՜րդ թառամեալ ծաղկընկեց եղեն
ամէն ծառք լերին ,
յորժամ այն գազանք յոյժ զազրատե-
սիլք ակներև յայտնեին .
որոց բուլք զազիր և անգառագեղ վայ-
րագ բնաւլին ,
սուաջնոյն ներհակ , որք սպիտակ յոյժ
և փափկամարմին .
Գ.արըր համանեն 'ի նոյն վայր եկեալ
'ի գոչ զայրագին ,
յորում գետըն էր այն յորդավըտակ`
որ սուրայր ուժգին .
և զերինջըս եօթն սպիտակափառս անդ
'ի կուլ տային ,
վեր 'ի վայր ծփէր անդ խաղաղութիւնն
ամենայն երկրին .
Այսպէս մեզ` ո՛րքայ , խորխատայ 'ի զայ-
րուց սովըն սաստկագին ,
և 'ի սպառ սպուռ զվայելչութիւն բա-
նայ զաշխարհին .
անդ գեղադիմակ չքնաղ դստերաց
այտք դեղնեալ թօշնին ,
և ողբք բարձրագոչ յամենայն երկրի
լսելի լինին .

Որպէս սայրասուր սլաք մինչ մխի 'ի
սիրտ եղջերուին ,
զխա՛րդ ընդ երկիր անկեալ թաւալգլոր՝
մռնչէ ահագին .
արձակեն բոմբիւն և անտառք հեռուստ,
և լերեր շարժին ,
և անդ եղջերուի աչք կողկողագին 'ի
բարձունս հային.
Սլաք է և սով՝ այլ դեղահամբոյր նաև
մահածին ,
'ի մխիլ սակաւ, մահուն սպառնայ դա-
հիճ ոխերիմ.
Ծփի մրրկի յայնժամ ընդհանուր ազ-
գըք մարդկային ,
դանդաչէ մրմունջ անդ աւաղաձայն և
ողորմագին.
Ո՛րդ զայս դառնաղէտ յայտնեաց քեզ
Աստուած զարկածըս չարին ,
զի մի' ժողովուրդք ընդ թևօք խնամոցդ-
սովամահ լիցին .
այս երազ քոյին ահա փրկաւէտ յայտ-
նի երևին ,
վէհիդ, և որոց՝ 'ի տար աշխարհի խուռ-
ներամ բնակին,
Յընթացս եօթնեկի ամաց յորդութեան
քեզ գթած տէ՛ր իմ,
ամբարել ցորեան 'ի համբարս անթիւ,
ոչ սակաւ հարկին .

ուստի զանհամար պարտ կառուցանել
զամբար ցորենին ,
'ի մի լայնատարր և 'ի հարթարդակ վայ-
րըս քաղաքին ։ ||
Ընդ միտ արքային հաճեաւ ընդ բա-
նիս , և ոյք անդ կային ,
որպէս խոստացաւ , արար ըզՅովսէփ
իշխան քաղաքին ·
Յիւր երկրորդական գահ նըստոյց զնա
Օգոստի մեծին ,
զի զսովըն ժանտ անձութ զգալանն
խոցել գաւառացին ։
Եւ յաղթօղ լինել հընարիւք սորա
անդ եօթնագլխին ,
որ եղջիւր բառնալ ունէր նա՛ ունէր
մինչև 'ի յերկին ·
ոսկեսանձ ձիով ելանէ զընթնել գեղայտ
պատանին ,
եթէ ինչ իցե՛ն արժանի վայրէք շտե-
մարանին ։
Եւ առագանույն որեար ընդ նմա էր 'ի
մէտասին ,
Ճանապարհ հորդեն ծառայքըն անբաւ՝
որպէս արքային ·
անդ փող և կիթառ քաղցրաղի քընար
անուշ հընչէին ,
'ի փառաց պարծանս նորոգ մեծափառ
եղեալ իշխանին ։

Մ՚րմունջք օրհնաւաք զձայն քնարացս
անդ խափանէին ,
որք յառաջ ՚ի սա անքթիթ աչօք ան-
դըր հայէին .
զի էր պատանի սա գեղածիծաղ ան-
նման յերկրին ,
աչքըն սևորակ՝ յօնք սևադխակ՝ այտ-
քըն փայլէին .
Հասակըն ոչինչ խոնարհ քան զսօս ամ-
բառնայր յերկին ,
և անձամբ քընքուշ ադխատակ որպէս
զլոյս արեգին .
իջանէ ՚ի վայր , և խումբք խուժադուժ
անդ զկայ առին ,
և աւագորեար իշխանք ընդ նմա ՚ի նոյն
վայր իջին ,
Դ՚իտէ պատանիս խորախոհ մտօք ըզ-
վայր ամային ,
Ճարտարապետացն առնէ հրաման չա-
փել զայն տեղին .
ցուցանէ ապա զնուրն շրջապատ սահմա-
նաց նորին ,
պատուարօք որոց զշուրջըն ծածկել
դրամբք եօթնեքին ,
Դ՚րամք ոսկեզօծ և երկաթակուռ պըն-
դել զնոսին ,
և որմունք նոցա բարձրաբերձ լինել
մինչ ՚ի յերկին .

'ի լայնատարածման տեղի յօրինել ամբար
բիւր կրկին ,
պատուհանք նոցա միակողմանի և ամե-
նեքին ։
Նու որպէս ասացն՝ առ ճարտարապետսն ,
անդէն տարրին ,
չափեալ շրջապատ զերկայն և զլայն
զտեղի նորին ։
շինեն զպատուարսն երկնաբերձ որմովք
'ի քարանց վիմին ,
դրունս ոսկեզօծ եդեալ 'ի նոսա եօ-
թըն առանձին ։
Լուեալ 'ի զննին՝ գային դասադաս ազգք
ամէն երկրին ,
ոչք խուռեանց յաւեալ 'ի չքնաղ շին-
ուածս՝ զինքըն գովէին ։
և ճարտարապետքն՝ ըստ բանին սորա
համբաւն շինէին ,
սա՛ շքեղ փառօք կացեալ 'ի վերայ՝ վար-
ժէր զնոսին ,
Լուեալ և տիկնոջն՝ որ ետն արկանել
զինքըն 'ի բանտին ,
գայ աճապարէ խնդրել զներումն յան-
ցանաց անձին ,
որում բարձրագահ իշխէ յԵգիպտոս
'ի գահ արքենին ,
նմա զետնամած ընդ երկիր անկեալ ա-
ռեր լալովին ։

* Կեանց դու երջանիկ 'ի յաթոռ քոյին
յամէս յամերամ ,
մի՛ երբէք չարին ձեռըն ձգեսցի 'ի քեզ
յաւիտեան .
և յաչս արքային սիրելի՛ լիցիս արդ-
քան զամենայն ,
մի՛ երբէք խեթիւ հայեսցի 'ի քեզ ակն
արեգական .
Խնդրեմ 'ի քէն արդ ներել աղախնոյդ
յանցանաց դաժան ,
վասն իմ ըկեցար այսչափ ժամանակ 'ի
բանտի մահուան .
արդ գիտեմ եթէ՝ ո՛ չնաշխարհիկ մա-
նուկ գեղաչեայն ,
աններելի են յանցանք աղախնոյդ՝ և
պատժոց արժան .
Այլ հայցեմ յարտօսր ես բաղկատա-
րած , և յողբոց կական ,
ներել աղախնոյդ՝ ներել գթութեամբ
իմոցըս զըղջման .
որչափ և կեցից 'ի վերայ երկրի դժբաղդ-
անուան ,
շրթունքն իմ տացեն յիշատակ 'ի յուշ
անմոռացութեան ,
Զոր ինչ արասցես 'ի չարեաց մասանց
առ իս պարտապան ,
արժանի է ինձ վայել արդարև իրա-
ւունք քեզ այն .

բայց ներողամիտ քոյին դթութեան
յուսամ ես յուսամ,
զի գիտես քաջիկ, կիրքըն ինձ ետուն
առնել վեհիդ զայն.
Թէ՛ իմ ընտրութեամբ առնէի զայդ-
քեզ՝ ո՞ մեծըդ իշխան,
յանցանաց բազմաց՝ խոստովանէի զիս
դող պարտապան.
այլ որովհետև կրիւք զայն առ քեզ նիւ-
թեցի դաժան,
յանցանաց փոքունց՝ զանձն իմ համա-
րիմ պատկան և արժան.
Ո՛չ 'ի Թիւ դասեն զկրիւք գործօղն՝
իմաստնոց երամ,
այլ ընդ երկրաւորս պաճարս զնոսա հա-
մարեն անբան.
և զիս 'ի հաշիւ մի՛ ինչ գրեսցես բանա-
կան մարդկան,
քանզի զայն կրիւք՝ ոչ դատմամբ մտաց
գործեցի յայնժամ.
Կիրքըն միշտ գործեն չիտաս մահաբեր
'ի յանկարգութեան,
տե՛ս, ո՞րչափ վեհիդ իմ կիրք բարկացայտ
արարին զզեան.
Իմ վրէժխնդիր լինել յանցանաց 'ի քէն
ոչ յուսամ,
քանզի ոչ ներէ զայս վեհիդ գործել՝
իմաստք գիտութեան. ‖

Բայց , և նորուն ոտից խոնարհեցաւ ան-
կաւ տիրուհի ,
և Յովսէփ նման՝ եհան զայս բարբառ
յաւէտ շնորհալի .
* մի՛ աւագուհիդ՝ երկնչիր յինէն 'ի
քումդ սրտի ,
չե՛մ ես վրիժառու , մի՛ ինչ ամբոխեր՝
լե՛ր զուարթ յոգի ։
Խնդալեա կրեցի յարգելանս բանտից
վիշտ անբերելի ,
սակայն զնոսա ես լինձ մոռանալ այն
դաւ արքունի .
գո՛հ եմ ես՝ տիկին , զի քաջ լոկ գի-
տեմ հաստատ 'ի մտի ,
Թէ յետ ամպայոյզ փոթորկաց՝ երկինք
գեղեցիկ պարզի ։
Նու իբր 'ի բազում այս առաքինւոյն
կենաց պատահի ,
անդր 'ի սկզբան ընկիլ տվառանջ 'ի
մէջ աշխարհի .
որպէս ծայր 'ի ծով յալեաց դուպար-
եալ է անվանելի ,
որչափ և աղէտք զնա ըլկեացեն , կայ ան-
հերքելի ։
Սակայն Թոպի նա մահաբեր պատժովք
'ի մետաղս բանտի ,
ուր ընդ դէմս մոլին բերկրի և խայտայ
տաւղօք քաղցրալի .

շատ նա՛ չարչարի , այլ և ոչ իմիք յար-
տասուս հարի ,
զի են յայս նորա՝ իբրև զայր կնատ ոչ-
ինչ լքանի .
Յողդողդ է մտքն , և դիւրակործան 'ի
սուղ վտանգի ,
որպէս նաւ 'ի ծով՝ են կամքըն նորա՝ 'ի
այն աշխարհի .
որպէս , նաւ՝ այն ինչ ալիք և զալիս մղեն
ուժգնակի ,
հողմըն ահագին գոռայ և յուզէ , և
ծովըն ծփի ,
Ո՛չ դէմ կարացեալ դնել նա՛ հողմոց՝
յօշ յօշ բեկանի ,
քայքայեալ համբուն իւր տախտակա-
մած կպրածօծ փայտի .
այլ ժայռն 'ի ծովու՝ թէ և փոթորիկք
ահեղ մրրկի ,
ոչ շարժի , և ոչ կրէ ինչ տագնապ ,
կամ մասն ինչ փշրի .
Օ՛ այս խրատ տամ քեզ՝ բամբիշդ ողջա-
միտ յոգնաշուք զարմին ,
ջանա՛ քում յաղթել կրից 'ի մարմնի ,
այն ինչ զայրացին .
մարտ արիւնռուշտ մղել թշնամւոյն՝ չէ՛
ինչ դժուարին ,
զայն մեծ յաղթութիւն համարիմ՝ ու-
մեք յաղթել իւր անձին .

Ո՛չ արիութեան պատերազմ թուի, մինչ
'ի վէգ մատչին
Հըսկայ քաջայաղթ կորովիք արանց բաղ-
կաւ զօրագին.
և կամ բազմամբոխ գումարք մրցանաց
կողմանց երկուսին՝
յորժամ ընդ խրեալս դէմ ընդ դէմ
մարտել կռուին զայրագին.
Այս է պատերազմ՝ յորժամ կիրք միմ-
եանց ընդ դէմ ներհակին,
զընութիւնս ամէն խառնեն ամբոխեն
յալէծուփ մրրկին.
Հողեղէնք դառնան միմեանց թշնամիք
զօրութիւնք անձին,
սայրասուր սլաքք 'ի ղէն և յապար
ուժգին հարկանին.
Երկհըրեշ գազանք գլուխ ամբառնան՝
ցասմուն զայրագին,
անզուսպ յարձակեալ 'ի վերայ միմեանց՝
'ի պայքար մատչին.
գաղթական ամէն զիւրեանց թագա-
ւոր՝ պերճափայլ հոգին,
արկանեն կործան զոսկեփայլ աթոռ
պողպատ նորին.
Որպէս խառնաղանձ սինլքորք՝ յորժամ
մրրկեալ ամբոխին,
խուռնընթաց դիմեն տապալել ըզվէհ
գահըս արքային.

Թէպէտ մանչաբեր կրեն զպտուղ՝ մինչ
'ի ձեռս մամնին ,
կամ յաղգաց օտար բազմագունդ գեր-
եալ 'ի սուսեր մաշին .
Սնմիտք զմտաւ ոչ ածեն երբէք՝ զոր
ինչ պատրաստին ,
երթան կատարել յաղգաց կործանումն՝
կամ լուրեանց անձին .
այսպէս կիրքն 'ի մեզ խառնամուռ ամ-
բոխ մինչդեռ զայրասցին ,
դիմեն խուռնընթաց զմիտըս շրջել զա-
թոռ արքային ։
Թէպէտ մարմնազգեաց քաղաքըն մնայ
վշտակիր ծփին ,
սակայն խուռներամ կիրքըն 'ի նմա զայ-
րանան ուժգին .
աստէն քաջայաղթ արի նահատակք 'ի
գոռ այս մարտին ,
պանծասցին անդուլ՝ այն ինչ քաջաբար
յաղթօղ գտանին .
Նոցա մրցանակք՝ գլխաշուք պըսակք՝
ծաղկամբք բոլորին ,
զի մեծ քաջութիւն է մարդոյս յաղ-
թել կրից իւր անձին .
կիրքն էին , գիտեմ՝ որք զքեզ այնպէս
անդ ամբոխեցին ,
և ետուն տանել քեզ անմտութեամբ՝
զայն գործ բարելին .

Արդ ներեմ ես քեզ՝ զի զչափ առեր
կրից մարդկային ,
Թէ քանի՞ դժուար է մարդոյս՝ 'ի վեր
մտանել նմին ·
սակայն դժուարինքն են պսակելիք վար-
ձու արժանին ,
Ճանապարհն անձուկ՝ դուռն անդոր-
րութեան դալար պարտիզին · ||
Ասաց, և անդ կինն խոնարհեալ յերկիր
խնդիւ բերկրական ,
գնայ 'ի տունն իւր՝ օրհնաւք շրթունք
գեղգեղէն նորայն ·
այսպէս և Յովսէփ զաչս 'ի վեր յերկինս
առեալ առժամայն ,
օրհնէ զԱրարիչն, խնկաւոր էին աղօթք
իւր անձայն ·
Եւ անտի իւրում փրկաւէտ գործոյ
Ճեպէ փութաջան ,
և ժիր մշակաց շտեմարանել հրամայէ
ցորեան ·
մինչ նա ասա այսպէս, խորհէր փարա-
ւոն վեհապանծ արքայն ,
հաստել առ նմա քրմին Պետարփեայ
դուստր գեղաչեայն ·
Եւ զոմն առաքէ առ քուրմ Պետար-
փէ՝ հարսնախօսութեան ,
գրեալ զքարտէն այսպէս անդ առ նա՝
դնել զնըշան ·

ո՞ դու քրմապետ երջանկակրօն երամ
տաներան ,
որ աստուածային յայտնիչ խորհրդոց
ես , և մեզ թարգման ,
Պատմեա՛ , զի մեկնել ոչ որ 'ի քաղդեայց
զիմ կարող եղան
զերազ՝ զոր տեսի , յառաջ քան զաւուրս
ամաց մետասան .
Յովսէփ իմաստուն մեկնեաց , և եղև
քաջալանջ իշխան ,
այսպէս խոստացեալ էի մեկնողաց յա-
նուն Աստուածեան ,
Ո՛նա աւագիկ՝ զոր ես պատուեցի 'ի
գահ արքունեան ,
արարի յորդի , և ինձ փոխանորդ ո՛
քուրմ սրբազան .
կամ է ինձ աչա՛ զնա յորդեծին լուծ
ծառայութեան
արկանել , եթէ աստուածք իմ հաճին
կամաց գիտութեան ,
Նուզքո տեսաք զգեղադիմակ զդուստրդ
արժան ,
խորհեցաք այսպէս զնա տալ նմա արդէն
կնութեան .
եթէ հաճեսցիս և դու խորհրդոց մե-
րոց սրբազան ,
քնարք հնչեսցին 'ի նշան մեծի փեսայա
ծութեան ։ ||

Ընթերցեալ քրմին՝ բերկրալիր դրէ
այսպէս պատասխան ,
* ա՛րքայդ արքայից տիեզերական և
բարեխնամ .
տացէ քեզ Աստուած՝ որում ծառայեմ
ես յօժարակամ
կեանս երկարաձիգ , և բարերջանիկ յա-
ւերժ անսասան ։
Եւ որպէս առ քեզ հաճոյ թուեսցի
իշխանաց իշխան ,
լիցի ըստ բանիդ՝ կամ մնամ առ քեզ
ես պատրաստական .
արդ յորդք մաղթեմ զայս պաղատա-
խառն՝ քոյին տէրութեան ,
յաղթանդամ ցլուք յղել ընծայնն 'ի
տաճար փեբեան .
Որում մատուցից յողջակէզ՝ զխոյսն ,
ապօթկեր 'ի բան ,
զի խաղաղութեամբ վարեսցեն ըզկեանս
իւրեանց անսասան .
անդուլ արկածից մի՛ ինչ սրեսցին բարկ
ժանիք տաժան ,
Թագաղուն որդւովք պանծասցին յաշ-
խարհս լուսոյ արփական ։ ||
Մինչ զայս ընթերցաւ վեհըն քաջ ա-
րանց մեծափառ արքայն ,
ընտրէ գեղեցիկ և պարարտ ըզցուլս
անդ նուիրական .

որով առաքէ և զոսկեճամուկ հանդերձ
փափկութեան ,
ընդ մարգարտափայլ ընդ չքնաղ ծրարս
հարսին 'ի նշան ։
Բրմապեան արհի առեալ զոսա՝ եր-
գէ քաղցրաձայն ,
և զոշխարսն 'ի սուր մաշեալ՝ յողջակէզ
հանէ 'ի սեղան ։
յորում Ապղոնի փեբեան էր եդեալ
արձան սրբազան ,
և յանուն նորա էր ոսկիազօծ կառու-
ցեալ մեհեան ։
Ընդ աւագանի քաջորեար խմբին ,
բերկրին և խայտան ,
ձենձերին ոչխարք , հրճուին և աստ-
ուածք բարձուն Ողիմպեան ։
երգէ պեատաւլէ նուագ 'ի խնծիղ խօ-
սելոյ նշան ,
գան և 'ի պալատն յերգ բերանալիր օրհ-
նել և զարքայն ։
Մինչ սոքա այսպէս՝ և Յովսէփ յայն-
ժամ որպէս քաջ հսկայն
եմուտ 'ի սենեակն՝ անգէտ էր սակայն
հարսնախօսութեան ։
և արքայն նմա զէկոյց խնդամիտ անդ-
զայս ամենայն ,
նորա խոնարհեալ երկիրպագանէ երի-
ցըս անգամ ։

Զայս հեղահամբոյր հրամայէ խնկոյն
զօրացն ամենայն ,
՚ի ծաղկափթթեալ դաշտս դրօշակ և սպառ-
զէն խմբից խռնեալ ։
և խորանահար նոքա տարածին ընդ դաշ-
տըս համայն ,
էր անդ տեսանել դաշտորայն ամէն լի
անթիւ մարդկան ,
Եւ ՚ընդ ողջոյն ծագաց քարոզ լսելին
շրջափոխեալ սահման ,
* հարսանեաց կոչումս հրաւիրէ զձեզ
մեծափառ արքայն ․ ||
դայլին խընդնէին ՚ի ծագաց ծագաց ՚ի
հարընտարան ,
կանայք և աղջկունք , պատանեակք ա-
ւոյգ , ծերք ութսունամեան ,
Եւ եղև սկիզբն այնիւ հարսանեաց
չքնաղիկ մանկան ,
սեղանք հացալիցք յամենայն տեղիս
դնին առ ժամայն ․
յողջոյն հրապարակս գործիք պատրաս-
տին խաղուց զանազան ,
անընդման Մուզայք գան երգել տաւիղ
աւագափողեան ։
Յարքունի պալատ խմբին դիւցազին՝
սերունդք պատուական ,
հրձուալից սրտիւ ըմպեն օշարակս հա-
տուէտ նուան ․

և այս յամենայն տեղիս տեսանի խնձոյք
բերկրական ,
յամենայն տեղիս հնչէն քաղցրաղի կի-
Թառ նըբաձայն ։
Մինչդեռ քօղընծայ զհարսըն առնուլ
երթան միաբան ,
խուռն ամբոխ ձեպէր ընթանայր խըն-
դիւ յերգոյ լայնական .
երգէին տատանաղէ զքնարս իւրեանց ժո-
ղովք քաջաղնեայն ,
ձեպեն 'ի զննին անմահք 'ի բարձանց ,
և Թռչնոց երամ
Ի՛ր անդ տեսանել ոսկեղօծ կառօք ար-
շաւել յանժամ ,
երիվարք նոցա համբուն զարդարեալ 'ի
ծոփս ոսկեմանս .
ոմանք 'ի նժոյգ անհիպարանց Թռչին ,
խոյանան ,
ոմանք մերկոտինք արշաւահանդէսք ձախ
ըլին և գնան ։
Սապէս 'ի դառնալն 'ի պալատ դարձեալ
այն արքունական ,
բերկրալից նուագ գեղգեղեն շըրթունք
ամենից մարդկան .
այն ինչ գեղեցիկ հարսըն մըտանէ հըբ-
նաղ պալատան ,
տիկնունիք բազում զկնի նորա միա-
գունդ խաղան ։

Դարձեալ հնչէին անդ կիթառք և փողք երգովք քաղցրաձայն ,
սեղանք հացալիցք դնէին նորանոր խորտիկօք համադամ .
ընդէն զնեկտար նռնենւոյն քաղցրիկ և անուշահամ ,
առոփին մանկաւոյ և ոսկեգիսակ գեղեցիկ երամ.
Նուագք անուշակ երգովք քնքըշէն զունկըս ամենայն ,
քրմապետն արհի զփեսայն օրհնէ աղօթկեր 'ի բան .
օրհնաւոր բորբաւք յամենից շըրթանց յերկինս ամբառնան ,
մինչ ածեալ նորա՝ զհարսն , զփեսայն պսակէ յատեան .
Դարձեալ վերստին գումարեալ ժողովք բերկրին և խնդան ,
կատարեալ զտօն մեծի հարսանեացս 'ի տեղիս դառնան .
յաւագաստ սիրոյ մուծանեն ապա ըզհարսն ընդ փեսայն ,
մինչև լուսանալ յողջոյն արքայի երթան միաբան :
Պատանիս յաւեալ ընդ գեղեցկութի հարսին անման ,
զինչ քաջագէտ ընդ երկեան աչօք նայմըն գեղըշէայն .

որ էր օրիորդ նա դիւցազնազարմ 'ի
գեղ աննման ,
որպէս նռնենւոյն փայլէին նորա երեսք
կարմրերփեան ։
Յօնք կամարաձև նորաբոյս հերաց իբ-
րև զմելան ,
'ի վերայ աչաց նորին ոլորեալ շողշող
փողփողան .
իւր ականողք գեղեցիկ բեօք վառէր
արփական ,
բոլորակ 'ի դէմս՝ իբրև 'ի յերկինս լու-
սին լուսերփեան ։
Եւ շրթանց փեղկունք շիկնէր նռնաձև
'ի շուրթ կարմրերփեան ,
ատամունքըն իւր էր մարգարտաշար
յերկթերթի բերան .
և ականակապ հիւսեալ 'ի գլուխն՝ ոս-
կեփայլ վարսամ
երկայնէր մինչև 'ի կոճ իւր ճապուկ՝
յուսոյ գեղազան ։
Եւ դաստակ ձեռացն իւր շուշանագեղ
սպիտակ ըստ ձեան ,
ստինքըն նորա բոլորշի խնձոր բոսորա-
ծորան .
բոլոր իւր անձամբ սպիտակափառ ա-
ւոյգ ըստ մանկան ,
հասակաւ մարմնոյն վայելչադիտակ և
միջատահման ։

Տեսեալ և հարսին՝ զգեղեցկութիւնն,
որ 'ի պատանին ,
հիասքանչ մնայ և նա ընդ չքնաղ դիրք
մարմնոյ նորին .
ապա մերձենայ խանդարհեալ 'ի դէմս առ-
ընթեր նորին ,
համբոյր անդ միմեանց նուիրեն ըղձի-
ւ սիրոյ սերտարփին .
Եւ ողջագուրեալ՝ յանուշիկ 'ի քուն
դան հուպ յանկողին ,
փարեալ զմիմեանս՝ Յովսէփ յիւր ննջէ
'ի ջերմ ծոց հարսին .
և քրտանց սոյին աւիշներն թորեալ
յեպեակ գողտրական ,
զկասիայի և զանուշ քրքման ըղձոտ
բուրէին։
Ո՛չ այնչափ կոկոն դեռաբացիկ վարդուցն
առաւօտային՝
ծաւալէ բուրումն անոյշ ծաղկաղարդ
'ի մէջ պարտիզին .
ոչ այնչափ մեխակն 'ի ծաղկոց բուրէ
հոտանոյշ մշկին ,
և կամ ծաղկասփիւռ դաշտորայս բու-
րէ սրխակ հովածին։
Յամպս ոսկեճաճանչ բարձուն Ողիմպոյ
մինչ լոյս ծագէին ,
երթան միաբան զարքայն ողջունել 'ի
համբոյր ոտին .

Եւ այսպէս ալքայն՝ սիրէր զնոսա խնկ
յիւրում սրտին ,
Ցովլէփ վէհ իշխան կատարեալ զչքնան
նոյր զնոսին ։
Մ՚ինչդեռ յորդառատ ըռւլին , նոքա
փակէր անհափակ ,
Եւ զբանալիան նոցին տայր ցարքայ խո-
հեմ պատտանեակ .
Յղացեալ իւր կինն ծնանի յայնժամ
վարսագեղ զաւակ ,
Փարաւոնն արքայ հրամանն արձակէ յիւր
բոլոր քաղաք ։
Զ՚որդարել պաճոյճ զվաճառականոցն՝ եւ
զհրապարակ ,
զանդրանիկ մանկան ըղտօն կատարել
զգեղադիմակ .
Եւ ըստ հրամանին զարդարեն քաղաքք
պճնեալ բովանդակ ,
ոսկեզօծ փայլէն գունադեղ նոցա դաս-
տակերտ պըրշակ ։
Փալացայտ նշոյլ 'ի սփռել յերկիր ընդ-
արեւածագ ,
շողշողէն վայրից գեղեցիկ նոցին գու-
նակ եւ գունակ .
Նմանպէս ընդ գիշերն ողջոյն տեսանել
էր կարմրակայլակ ,
զի յամէն տեղիս կանթեղք իւղալիցք
վառէր լուսերանգ ։

Իբր աստեղք յերկինս 'ի մուտս արեւ-
ուն մթին ստուերարկ ,
շողշողէր նոցին յամենայն անկիւնս գոյն
բազմատեսակ .
և անդ լսէին որպէս սոխակին երգ
քաղցրանուագ ,
այն ինչ հնչէին ջութակ քաղցրալուր ,
և անոյշ քնարք .
Քան զայս յարքունի պալատ լսէին եր-
գեցիկ թռչունք ,
ուրանօր խմբեալ էին 'ի խնձոյս քաջա-
լանջ իշխանք .
ուր եղեալ էին բազմադամ՝ խորտկօք
հացալից սեղանք ,
զի գեղադիմակ տօն էր նոր մանկան ,
ոչ տօն հասարակ .
Իսկ անդ պետարփէ , և այլ քուրմք
ընդ նա 'ի ձայն օրհնաւաք ,
Մանաւէ անուն ընծայեն մանկան՝ իբր
արժանայարգ .
ուտեն և ըմպեն երգովք քաղցրաձայն
ամէն այր աւագ ,
և ուտեն ըմպեն խնդիւ անտրտում
համբուն իւր քաղաքք .
Թէպէտ բերկրալից ցնծայր Եգիպտոս ,
և նորին նահանգք ,
ոսկեղէնն 'ի նա էր խաղաղութեանն եր-
ջանիկ օթանք .

այլ դժոխըմբեր պատրաստին նմա՝ ար-
կածք դժնդակ ,
բարբէ , ծայր գլխի իմ մեկենաթայր
մոլմքի ողբարկ .
Մ՝րրկայցը ամպոց՝ մինչ ձեռնաթա-
թաղ բքաբեր դեղուած
ընդ մարգագետինս ծաւալի , գործէ և
ոչինչ վնաս .
տապար սայրասուր՝ թէպէտ հատանէ
ըղձաւոր ոստաքանց ,
սակայն ուռձանայ և քան զառաջինն
նա՛ սաղարթազգեաց .
Ն.ժլ քեզ՝ Ե՛գիպտոս , հատանէ անբոյժ
մահաբեր հարուած ,
աւա՜ղ , զինչ իցէ անըմբերելի քեզ այն
այս արկած .
ընդ արիւնորդ մնայ քեզ ձեմել՝ կիսա-
սրունգ կոչկաց ,
և յաղէկտուր հեծունչ հանդարտել՝
ողբոց անձկայրեաց .

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հարուած սաստիկ սովոյ ընդ Եգիպտոս, և ընդ Քանան աղէխարշ նկարագրութեամբ.

Երամ երամ գալուստ զանազան ազգաց յօտար քաղաքաց ՚ի գնել ցորեան յԵգիպտոսէ.

Գալ և երից որդւոցն Յակոբայ յԵգիպտոս ՚ի խնդիր ցորենոյ.

Արկանէ զնոսա Յովսէփ ՚ի բանդ իբրև զլրտեսս քաղաքի. և ՚ի հարցափորձ առնել նոցա զգերդաստանէ նոցա, նոքա խոստովանին ունել զհայր՝ և զայլ եղբայրս.

Բանտարգել դարձեալ զմին, և արձակէ զերկուս, երթալ բերել զկրտսեր եղբայրն իւրեանց.

Կոծ Յակոբայ՝ ՚ի լսելն զխնդիր Բենիամենի.

՚Ի սաստկանալ սովոյն վերստին յղել ստիպի հանդերձ Բենիամենաւ.

# ՎԱՃԱՌՈՒՄՆ

# ՅՈՎՍԷՓԱՅ

## ԵՐԳ · Բ

—

Ապ 'այնուհետև ամբըն դուշակեալ 'ի
լըռուեմն ածի ,
յորում բազմայեղձ ցորեան ոչ սակաւ
'ի հասկ ծածանի .
անդ յոգնաբեղուն էր առատութիւն
պտղոց լինելի ,
և երջանիկ կեանս էր անդ վայելել ող-
ջոյն աշխարհի ․
Յորում մարդկայինս ազգ ցընծայր 'ի
լուրջ խնդութեան սրտի ,
կերք ինչ արտմաբեր ոչ զոք էր պատեալ
'ի մարմին յոգի .
Այլ այս անց որպէս զծաղիկ հովտաց
'ի յամառնայնի ,
որ ընդ արշալուսն գեղեցիկ շողայ նա 'ի
մէջ դաշտի ․

Այն ինչ արեւուն ջերմանան նշոյլք ՚ի
վերայ երկրի ,
զեւր գողորիկ տերեւսն ընդ երկիր ծե-
քէ , և ինքըն թօշնի .
որպէս յայգեստան անդեղնիկ բուսեալ
ածի տարածի ,
մինչդեռ ամպապատ թխանան երկինք
յանձրեւ թաւալձի .
Այլ այն ինչ պարզի կապոյտ կապու-
տակ եթեր սաստղալի ,
և ճաճանչադեղ ցայտէ բոցափիւռ ա-
րեւ լուսարփի .
խամրացեալ շուտով՝ և մանրախշուր գա-
նայ ՚ի փոշի ,
խարխարեալ հողմոց՝ զնա ճապաղին աս-
տի և անտի .
Զայս եօթըն երինջք անդ գուշակե-
ցին յերազս արքայի ,
մինչդեռ գաղթական խոյս ետուն ՚ի
սոր յերկեղ պակչելի .
և նոցին՝ անզուսպ գազանք վիթխարիք
հասին զկնի ,
գիշադէշ ակկին զգողորիկ փափուկսն
ժանեօք երկայրի .
Ահա՛ ամք նոյնպէս ապառում և վէս՝
հասեալ երեւի ,
մարդածախ ժանիս սրեալ սայրասուր՝
առ մեզ դեգերի .

յանխնայ ջարդել զազգըս մարդկային
'ի վերայ երկրի ,
զխաղաղութիւն ամբոխել 'ի ծուփ սաստիկ մրրկի ·
Ալեհ մարտացու զանձամբ իւր արկեալ
զտոլ , դառնացի ,
սովտառանջ լինել , և մեր աղաղակ 'ի վեր
բարձրացի ·
վարսադեղ մանկունք՝ անդ աղէկտուր
լացեն սգալի ,
որք կոչքաւէին նորա կշտապինտ 'ի խըն-
ձոյս մեծի ։
Եղիցին աստէն կարօտ և նիհար կա-
րանաց հացի ,
եղիցին նոցա այս վիշտ դառնաղէտ որ-
պէս օրհասի ·
զձանձանչալառ լոյս արեգական 'ի բար-
ձունս երկնի ,
խաւար միգամած աչաց դրաւէ իբր 'ի
գիշերի ։
Փոխան քաղցրասիգ հողմոյն անուշակ
փչել հիւսիսի ,
նօտօսիւ խառնեալ շնչէ տապախառն
հողմունք խորշակի ·
աչաց տեսարան քեզ ողորմագին և աղէ-
տալի ,
հանդոյն նաւորդաց ընդ ալէկոծիլ ծո-
վու Պոնտոսի ։

Րայն ինչ քաղցրանիգ ապահոլ փչմունք
հողմոց տեսանին ,
զուարթատեսն անդէն բացեալ՝ նաւար-
կեն նաւաստք գլխովին .
հողմուռույց անշուշտ սպիտակաւոր ա-
ռագաստք պարզին ,
և նաւուց կաձառք համգոյն աղաւնեաց
՚ի թռիչ նշմարին .
Սնեմաձաձանչ ծագէ աննման ՚ի յեր-
կինս արփին ,
՚ի քուն անուշիկ կապուտակ ալիք նիր-
հեն խորխորին .
և ծոյն ղըբօք ամենից անկեալ ՚ի նինջ
ընկողմնին ,
՚ի մուտս արևուն անդ աղօտաւոյլ նշո-
ղէ լուսին .
Օպչս ՚ի վեր առեալ զմէջ գիշերայն
ոդէարք նաւաղին ,
տեսանեն շիկնիլ ՚ի հեռուստ օդոյն՝ ՚ի
բոց հնոցին .
ւ աստեղց գահավէժ ընդ երկիր յերկ-
նից անկանելն ուժգին ,
և փայլակնացայտ ծիր ինչ լուսեղէն՝
զկնի նոցին .
Աշան պարզութեան , և նշան հողմոց
նոցա համարին
անպատրաստ ՚ի քուն լինել թանձրա-
մած անդրէն վերատին .

այլ մինչ առաւօտ լոյս ցայտէ յաշ-
խարհ ՝ բայց աղօտագին ,
ամպք զամպըս մղէն արագ և արագ ՚ի
բարձունս վերին ։
Յայնս բարձրաբերձ ուռուցեալ այտ-
նու ծովըն վշտագին ,
՚ի ցամաք կղզեաց երբեմն և երբեմն բոմ-
բիւնք արձակին .
և յայերս աճան յարդ.ք մանրախշուր , և
սաղարթ.ք ոսին ,
և փափկլիկ փետուրք թռեալ անդ առ-
եալ դարձեալ պտոյտքին ,
Եւ յանթաց տաւղն ձեպէն փութա-
պէս թռչունք ծովային ,
աղկիոնք ՚ի բաց լքեալ ամբաւոնայ յամ-
պըս՝ զձախին .
և անդ հողամաղն աղաղակ բառնայ ,
ձեպէ ծովափին ,
և ՚ի պղտորեալ կոհակաց վերայ՝ շերտք
փայտից շրջին ։
Աստ շանթաձիգ ձայթին յորոտմունս
երկինք զայրագին ,
և ահեղասաստ փոթորիկք ՚ի ծուփս
յուզեալ մրրկին .
կոհակք երկնաբերձ զնաւսն ամենայն
բաղխեն սաստկագին ,
՚ի չորից կողմանց ահեղ խոխոջմանց շա-
ռաչիւնք լսին ։

Սօսաւուտ վտանգն՝ ամենից ղլյա
անակնունելին
ձօնէ պարգևէ 'ի լաց բարձրագանչ ,
և նորա կոծին .
քանզի մրրկայոյզ ծուփք առաւելուն
'ի հողմըն ուժգին ,
և գամ քան զգամ երկինք 'ի վերուստ
յաղմուկ շփոթին ։
Ընդ խաղաղութիւն վեր 'ի վայր ծփեալ
և ալեօք յուզի ,
փոխան աւանիկ քաղցրաձայն երգոց՝
ողբք աղէտալի .
ոմըն՝ ամբարլինդ զկայմըն նաւին կալ-
եալ սարսափի ,
ոմըն՝ ահաւանօք զօղեալ 'ի մի խորշ՝ մնայ
օրհասի ։
Իսկ ոմըն ողբայ 'ի գետ արտասուաց 'ի
լաց կականի ,
այլ ոմն իւր յօձան կարդայ հասանել
զԱստուածըն երկնի .
տեսանես աչա՝ անթաղ յերեսս ջուրց
'ի նոյն վտանգի ,
կործան խորտակեալ նաւու ջարդելոյ
տախտակ բազմազգի ։
Բ.ան զայս և սովուն անըմբեր արկածք
վիշտք տաժանելի ,
հասեալ երևէր 'ի բոլոր սահմանս պերճ
Եգիպտոսի .

զիա՞րդ դառնաղէտ վիշտ եղև նոցա՝ ո՞չ
մտածեցի ,
զիա՞րդ հոգեսպառ և դառնակոծիս կոծ-
կսկծելի ․
Ո՞վ դու Եգիպտոս՝ սուգ առեալ ողբա՛
դու աղէտալի ,
զինչ 'ի քո սահմանս լսեմ զթառանչ
աղեխարշ սրտի ․
ո՞չ նոյն Եգիպտոս իցես ինձ ասա՛ 'ի վե՞ր
երկրի ,
'ի քէն ամենայն աշխարհ կշտացեալ ըղ-
ձաց կերակրի ․
Ո՞ւր քո մեծատանց ոսկեփայլ համ-
դերձք , և գանձ լիուլի ,
տեսանեմ ահա քրձազգեաց 'ի լաց , և
կարօտ հացի ․
ո՞ւր որդիք նոցին պճնեալ 'ի զգեստ՝
հեծելով 'ի ձի ,
յարուարձանս ամէն ճախրեն և ոչինչ
իբրև ընակելի ․
Որդ մեծատունք ոչ խնդան և բերկ-
րին 'ի կոչունս հացի ,
'ի տունըս նոցա ողբ աղէկտուր լսելի լի-
նի ․
յամենայն գանձուց իւրեանց կողոպ-
տեալ՝ նըստին հողանի ,
և ոչ մի ծառայ առ նովաւ իցէ 'ի պաշ-
տօն հարկի ․

Ընդ լոյս հասանէ՝ ողբք իւր ամբառնան
իբր զծուխ փայտի ,
յուշ իւր առաջին անկանին զանձուց
շեղջակոյտ ոսկի .
և գունակ գունակ համադամ խորտիկք
՚ի խնձոյս մեծի ,
և զոր ըմպէին զքաղցըր նըռան օշարակ
գինի .
Օ՜ այս հարց իմ լուեալ , զինև ծաղր
առնես , գիտեմ քաջ կարի ,
՚ի քեզ խնդութեանն զարդիս քո յառ-
եալ ՚ի լուրջ բերկրալի .
եօթն ամքըն ահա ածան ՚ի լրումն՝ որ
էր յոյժ բերրի ,
եկին , և հասին միւս եօթնեքին ամք մա-
հաբեր կծծի .
Ահա ամիս վեց անցին , և բազումք ՚ի
մահ մեռանին ,
բայց ՚ի քեզ ոչ ոք հասու ինչ ամին տա-
կաւին լինի .
տեսցես սատուգիւ՝ զհամբր դառնագին
աշխարհ լքեսցի ,
և քեզ կայ , մնայ յետ այս ձմեռանս՝
աղէտ սգալի .
Այն եօթնագլուխ որջացեալ է արդ-
գազան մարդախանձ ,
և զկորիւնս իւր դիէ ստանիկ ՚ի ժանտ
իւր սանեանց .

սպառէ նոցա, զի նոքօք եղցէ համբաւն
քաղաքաց,
և 'ի սուր մաշել 'ի սայր նիզակի իւրոց
ըն ժանեաց.
Դեռ նորափետուր մարմնով վիթխարի
'ի չափ են հասած,
դալարոյն նոցա տառունք ըստ օձի, և ոտք
փոյթընթաց,
աչք նոցին վառեին փայլակնանշոյլ և քան
զաստեղաց,
սուր լեզու նոցա երկճիղ ըստ քարբի
թունափխախ շրթանց։
Որովայնն անյագ, կոր հուր ջերաջերմ
բորբոքի արծարծ,
այրէ բոցավառ զաղդի մարդկային մար-
մին գեղապանծ.
ուր դեռ տակաւին ննջեն աչալուրջ
յանկողին մահճեաց,
և դեռ հացալից սեղանքըն կահին հա-
մադամ խորտկաց։
Ու չէն ինչ զարմանք, թէ ո՛չ ոք դիտէ
զայս դաժան արկած,
դեռ ձայն քաղցրերգակ հնչէ քընարըն
'ի կայթ ցնծութեանց.
քանզի ձմեռան էր ցրտասառոյց ձիւ-
նայոյզ զեղուած,
յորում արտքն ամէն տխրագին ողբան
իբրև սգազգեաց։

Թէպէտ ձմեռան չէ՛ք աստ ցրտաշունչ
ձիւնաբեր զեղուած ,
անձրև են նորա , միայնակ և սաստ հող-
մոց խստութեանց .
այլ մի՛ զմտաւ ածցես հիւսիսի հողմոց
զանձրևաց ,
զի մի՛ սառեսցին իմ կանխամունէր բանք
յառաջասաց ։
Քանզի ոչ յուղէ Այծեղջիւրն զձիւն
յերկնից եթերաց ,
և ոչ զանձրևոյն փոխէ շիթս 'ի ձիւն՝
հողմով սաստկութեանց .
այլ որպէս և ոչ՝ 'ի յամառայնի կէտ
անձրևաթաց ,
բամբիւնք արձակին 'ի յերկինս 'ի վեր
ահեղ որոտմանց ։
Եւ ոչ հրաբոց թօթափին յերկնի շան-
թիք կայծականց ,
և ոչ արևուն ծագեն անսատուեր ձա-
ձանչ գեղապանծ .
ոչ սաղարթապերձ ծառոցն՝ 'ի պարտէզ
լինել ծաղկազգեաց ,
ոչ բուսոց կանաչ՝ ընձիւղ արձակել
զուարճ յարտորայս ։
Լերինք և բլուրք , դաշտորայք ամէն
այգիք մեծապանծ ,
կողոպտեալ յայնժամ երևին չքնաղ
յիւրեանց պերճութեանց .

յամպապատ մառայլ գագաթունք նոցա
ծածկին հանապազ ,
քանզի թափառին ամպք մառախլապատ
'ի սուգ տխրազգեաց •
Ընդ հո՛ղմ և անձրև անխոնջ փոփոխեն
զտեղի միմեանց ,
կակղանայ հողոյն յայնժամ կարծրու-
թիւն՝ հանգոյն գողակաց •
սերմանել զսերմ զանազան բուսոց դիւ-
րին մշակաց ,
անդ նոքա անխոնջ արկանեն զսերմ յեր
կիր պաղաղգած •
Երկին և ահա՛ , անքուն ձեռք ոքնին
անխոնջ մշակաց ,
ուստի և ոչ ոք կարէ արկածիս լինել
խեղահաս •
ահա՛ այս գիտեմ , խնծղանք բերկրա-
ութ և զուարճաբեր ,
և այս յոյս մոլի՝ զմիտըս նոցին բազմա-
նենգ դժրեր •
Ուր աստէն զկիրսն զտրտամթախիծ-
նոցին վշտամբեր ,
այն ինչ սփռեցան ամպքըն ցիր և ցան
'ի վերինն եթեր •
ծաղկանց և բուսոց՝ ակն ունէին պտկիլ
և աճել ,
քըքմահոտ բուրումն յամենայն տեղիս
անոյշ ծաւալէր •

Եւ ընդ արտորայն ոսկեփունջ հասկոց՝ քաղցրիկ ծածանել,
դաշտաց՝ համասփիւռ ծաղկազգեստ խոտոյ գեղեցիկ փայլել.
զխաշանց պարուակ բուլից գեղմնաբարձ անդըր արածել,
՚ի մարգագետինս՝ եւ ՚ի յորդեստանս կայտառել եւ արտոփել:
Ո՜Հ աւա՜ղ, նոյն եհաս վշտագին կրկին վարակել,
եւ սովոյն անգութ դեմք դժոխերես սկսաւ ծիծաղել.
Թէպէտ տակաւին յամենայն տեղիս ցորեան գտանէր,
սակայն գարնանոյն տխուր կերպարան վիշտ մեծ ընծայէր.
Ո՜ր անդ սաստախիտ մրջոց գեղուղէշ ծառոց ընձիւղել,
Նաեւ ոչ զարթչել սաղարթափթիթ ՚ի կանաչ տերեւ.
ոչ յանդիս տառք ցորենին շարժել ոսկեթոյր հասկեր,
ոչ թռչնոց այդուն ՚ի մէջ վարդենւոյն՝ երգըս գեղգեղել.
Ո՛չ ջուրց կարկաչմամբ ՚ի բարձանց լեռանց դահավէժ սորել,
ոչ հողմ քաղցրասիգ Զեփիւռին անոյշ ընդ այերս փչել.

ընութիւնն ամէն որպէս թէ 'ի քուն
համօրէր թուէր ,
ստերջ ձմեռան և ոչ համատիպ յաւէտ
գտանէր ։
Ընդ հող 'ի գլուխ տխրադէմ մշակք 'ի
սուգ ողբային ,
գիւղօրէք համբուն , և քաղաքք ամէն
ընդ նոսա լային ․
այլ դեռ յոյս իւրեանց ոչ անմխիթար
զնոսա թողուին ,
և ոչ այնչափ ողբ յամենայն տեղիս լսէր
սաստկագին ։
Ոչ հաց 'ի պարէն գտանէր յամէն տե-
ղիս տակաւին ,
դեռ և ոչ այնչափ անըմբեր յանձինս
տագնապ կրէին ․
այլ յամէն տեղիս անմխիթար լացք
թագաւորէին ,
իւրաքանչիւր ոք քրտնաթոր վաստակս
յանձին բերէին ։
Միշտ աղէկտուր այս որոճք 'ի միտս
շրջէին նոցին ,
լռութիւնն յամէն քաղաքս , և 'ի գիւղս
էին խորխորին ․
զի այս սգալի համբաւ ընդ ամէն երկիր
թռչէին ,
և դժոխըմբեր կրիւք՝ ամենայն այր վա-
րակէին ։

Սա՛ և յԵգիպտոս իշխէր դառնաղէտ
արկածք վշտագին ,
՚ի սա և շշունկ լսէր մերթ ընդ մերթ ՚ի
մեծ քրթմնջիւն .
մատչի Եգիպտոս և ՚ի զննին իւր կրկին
և կրկին ,
տեսանէ ահա՛ մերձ համանման և զինքն
վշտագին ։

Ո՛չ զքաղցրերգակ լսէ ՚ի տունս իւր
զձայն քնարին ,
ո՛չ զմանկտւոյ համերամ պարել ՚ի դէմս
խնդագին .
զնժակն ՚ի սուգ , և զամենեսեան տըր-
տում ՚ի յանձին ,
տեսեալ՝ հիանայ և ընդ արտասուաց հե-
ղեղս թախծագին ։

Զիւր կործանեալ յառեալ զաչսն ՚ի
վեր մերձակայ լերին ,
որ կից առ իւրև բարձրաբերձ ՚ի ժայռս
սեպանայր յերկին .
տեսանէ ահա՛ զիւր Մուղայն չքնաղ
զօղեալ ՚ի նմին ,
աչք իւր բոցաւորք վառեալ ծրագի շող
շող փայլէին ։

Իսկ տխուր ՚ի դէմս զարտասուաց ըղ-
գետս՝ աչք իւր հոսէին ,
կարկամեալ նորա՝ ո՛չ ևս փայլէին դէմք
նշուլագին .

աղօտ ընդ աղօտ լոյս վառէր նովաւ 'ի
խորշըս լերին ,
հարցանէ զնա այսպէս 'ի հեռուստ ձայ-
նիւ թախծագին .
Ո՛վ հարցումն նորա էր պաղատական
ուղերձեալ նմին ,
տխուր քնարաւ , զոր հնչէ մարմանջ 'ի
խորոց սրտին .
* է՞ր գեղանուագ ոգեշարժ կիթառ
քոյին լուեցին ,
զմէ՞ տխրադէմ 'ի սուգ դու ողբաս ,
Մուզայդ երկնային .
Ո՜ւ ինչ յանտառին քաւաթև չորար
ղօղիլ 'ի խորշին ,
մահաբե՞ր արդեօք արկածք հասեալ քոյ
իցէ սահմանին .
կամ մեռեալ իցէ՞ քո Յաւերժահարսն
որդիդ սիրային ,
զի այնչափ վշտօք , և յորդ արտասուօք
լաս կսկծագին .
Ո՛վ ինչ վշտամբեր քեզ արկածք հաս-
եալ աստէն տեսանին ,
և կամ քաջառողջ մարմինըդ չքնաղ է
հիւանդագին .
զի՞ դու , զի՞ այդպէս սգաղգեաց ող-
բաս՝ քրնար անմահին ,
և զիս քոյդ շարժես կականաւ 'ի կոծ
տխուր լալագին .

Ո՛չ ահ 'աւանիկ քեւ է ցնծութիւն՝ 'ի
քէն բնաւին ,
քեզ տրտմահաղորդ սգան դառնապէս ,
որք յիս բնակին .
ո՜ւր են տասնաղի անոյշ կիթառաց ձայն
քնարերգութին ,
'ի սուգ օր քան զօր 'ի վարանս մտաց՝
մարդիկ համակին :
Ո՛չ որք ծափահար խայտայ եւ բերկրի 'ի
սիրտ խնդագին ,
Իւրաքանչիւր որք զձեռն 'ի ծնօտ՝ լայ
կսկծագին .
ո՜չ զերգըս լսեմ անոյշ սրընգաց հով-
ուաց երամին ,
ո՜չ զմայս գառանց՝ ցիր եւ ցան սփռեալ
'ի մարգագետին :
Եւ ո՜չ զհօրանս ուլուց տեսանեմ զայ-
ծից մատղածին ,
յիւր սովորական մարգըս մակաղել խո-
տաւէտ երկրին .
այլ մշտաթափառ 'ի փշոտ խոռոչս պա-
րեխաց շրջին ,
ո՜ւր ո՜չ գտանեն ծաղկեալ կենխոտայն ,
դառնահամ ուռին .
Ընդ գայլք գիշախանձ վտառ եւ վտառ
վէր 'ի վայր շրջին ,
լերինք ամենայն ահեղ գազանօք յուզ-
եալ մըրկին .

գողտրիկ բոյլք գտուանց 'ի նոցին ժա-
նիս անդ 'ի կեր մտանեն ,
յամենայն տեղիս տեսարան թշուառ-
ուչաց երևին։
Բազրաձայն թռչնոց ո՞ւր նուագք
քնքուշ 'ի շքեղ կաղնին ,
և ոչ տեսանեմ յերկինս գունդագունդ-
ղթուիչ նոցին ․
այլ սևափետուր հեծեծէ կասկածն 'ի
մէջ փշոց մթին ,
ընդարձակատարր սահման են նորա ,
ւանդ-էք գլխովին։
Բրոնաջան մշակք ո՞ւր արդեօք թա-
գեան , և ոչ երևին ,
անդաստանք ընդէ՞ր են տատասկալից ,
կորդացեալ ուխծին ․
փունջ առ փունջ ծաղկանց քրքմանոյշ
բուրմունք ո՞ւր ոչ երևին ,
դեռաբոյս ծառոց տերևուտ ընծխուղք
հի՞մ ոչ նշմարին։
Այլ նաև տարերք ոչ համակշիռ , ղեղ-
ծեալ տեսանին ,
ամպք անձրևայոյղ 'ի յերկինս 'ի վեր
ոչինչ թափառին ․
աղբիւրք յորդահոս ոչ սուրան աշա́ ,
ո՞չ վիշտ դառնագին ,
գետք վտակահոս և դալնանաղայր ոչ
ևս երևին։

Ր. ժլ լերդակոտուր են ողբք մըշակաց և
սուգ դառնագին ,
և աղխողորմ արտասուք հովուաց դետօ-
րէն հեղուլին .
քրձազգեաց եղեալ համայն քաղաքաց
կոծեն թախծագին ,
են մեռելատիպ , և մահաշշուկ բոց 'ի
սիրտ նոցին .

Եւ գխաձապաղ կուսանք գեղերես վէր
'ի վայր շրջին ,
առոյգ պատանեակք և քան զծաղիկ
թառամեալ թօշնին .
առ ինչ այսքան վիշտ 'ի քաղաքս ամէն
սաստիկ ձարակին ,
պատմեա՛ ինձ կարդաւ քեզ աղերսար-
կու սաստէն պաղատիմ .

Ի՞ ումմեկնեցար խոյս քո ձեռ տուեալ
'ի խորշս անտառին ,
կորկամեալ անդէն ընդ աղօտ նշոյլ ձա-
ձանչէ քոյին .
սա՛ թէ գոյ 'ի քեն ես չնորհ , Մըռ-
ղայդ երկնային ,
առ ինչ է փախուստդ՝ և մերժեալ թա-
խիծ քո և համայնին . ||

Որ 'ի փշահեղձ մացառըս ղօղեալ հող
'ի գլուխ կայր ,
թառանչ 'ի խորոց 'ի սրտէ իւրում ե-
հան , և ա բարբառ .

* ո՜վ դու Եգիպտոս դիւցազանց մեծի
հոյակապ գաւառ ,
այլ արտասուք խնդալոյ աչաց ոչ տան ինձ
դադար ·
Եւ ոչ զայս տեսել , կամ պահել 'ի քէն
է ինձ անհնար ,
և դարձեալ լռել ոչինչ ես կարեմ , լո՛ւր
սգոյս պատճառ ·
հասեալ են առ քեզ վիշտ անտանելի ա-
ղէտ չարաչար ,
զայս ոչ միայն քեզ՝ քոյին քաղաքացդ-
նաւթձեմ ես խապառ :
Սուրն այն անգութ՝ երկսայրի ժանեօքն
իբրև քանասար
խողխողէ ահա զորս 'ի քոյդ լցեն շրջաս
փխուռ գաւառ ·
արդ ոչ անխնայէ , ոչ յառոյդ հասակ ,
և ոչ 'ի հանճար ,
անխնայ վարի ընդ ամենեսեան՝ անգութ
դահճաբար :
Խառնեալ ամբոխեալ զտարերսն ան-
գամ 'ի յերկնից կամար ,
զոօթ տայ տեղալ՝ և ոչ զանուշիկ ցօղ
քաղցրածաւալ ·
այլէ՞ տեսանես , զիա՞րդ հողմք ուժգին
շնչեն տապախառն ,
ամպըք անձրևլիք բոցակէզ հրով
շրջին վեր 'ի վայր ·

Ուրից ողբ ընդ քեզ՝ լացից դառնապէս
սրտիւ հրայրեաց ,
կափուցից զաչաց իմ ականողիս մըթով
քօղարկած .
զի՞ նա տեսանեմ փշահեղձ անտառ զքոյդ
ծաղկազգեաց ,
զանդեայս , զորտորայս միշտ խոպանա-
ցեալ անարօր անտած ։
Ուժգէք որթատունկք ոչ սաղարթա-
պերճ, և ոչ ծաղկազգեաց ,
ցորենին և հասկք ոչ 'ի քիստ գողորիկ
արդէն խակ ծնած .
Նոյնպէս ոչ պարտէզք մրգաբեր ծա-
ռովք խիտ առ խիտ լցուած ,
և խոտոց անդամ 'ի վերայ հողոյ՝ երկիրն
ագահեաց ։
Ու՞ր են ծաղկապերճ գեղեցիկ տեսիլ
քոյինըդ դաշտաց ,
յորում շաղ հեզիկ հանդարտ իջանէր
պճնէր լուսապանծ .
այն ինչ անդ ծագէր լոյս արեգական
յերկնից 'ի բարձանց ,
զիա՞րդ գեղեցիկ փայլէն դաշտօրայքն
'ի սէգ ծաղկազգեաց ։
Ո՜ զիա՞րդ շարժէին հասկըք ոսկեփունջ
'ի սիւկ քաղցրութեանց ,
և ամբառնային մարդաչափ յերկրէ 'ի
քիստ գեղապանծ ,

տարափ անձրևոյն մարգարիտ յեռեալ
ընդ գոհար ականց ,
'ի սաղարթ ծառոյն՝ 'ի կանաչ տերևս
ձաձանչէր աչաց ։
Մշակք և հովիւք խնդիւ երգէին ըղ-
փող սրնգաց ,
խայտային ոչխարք , մայէին քաղցրիկ և
հօրանք այծեաց ։
և միշտ քաղցրաւաչ թռչնիկք երգէին
'ի մէջ մրտենեաց ,
յա՟մ տեղիս երգըք յաճախէր զուարճ
բերկրանաց ։
Հացալից սեղանք կահէին յաւերժ բաղ-
մադամ խորտկաց ,
ուտէին և ըմպէին , խայտան կայթ 'ի կայթ
բոյլք երկրածնաց ։
քաղցրաղի հնչէր կիթառ և քնար ան-
մահ գուսանաց ,
յամենայն տեղիս և մրմունջ լսէր ձայ-
տար հագներգուաց ։
Այլ այժմ ահա՛ ձայն սգոց հնչէ
յունկն իմ լսելեաց ,
լա՛ն կողկողագին , հեծեծեն մարդիկ 'ի
սուգ տխրազգեաց ։
Ո՛ւր վայելչութիւն երկրիդ ծաղկա-
փիւռ դաշտաց և լերանց ,
զի՛նչ այդ դառնաղէտ և բերմունք առ-
ձեռ սոսկալի ամաց ։

Գաւառին աղէքս , ընդէ՞ր այս եղև , և
ես ո՞ւր թագեայց ,
ո՛չ են ինձ այս խորշ բաւական թագ-
չել՝ զմ՛ւառդ անձկայրեաց ·
քանզի միանգամ հայեա՛ց 'ի սահմանս
քոյին Նահանգաց ,
ո՞րչափ բխուրաւոր մարդիկ սովատանջ՝
անկանին տապաստ ։
Տեսանեմ զանդութ սուսերաց սոլյն
փայլացայտ շողալ ,
և 'ի ձեռըն իւր Նիզակ սայրասուր՝ և
տէգ բլթացեալ ·
Հսկայք ընդ իւրև՝ խառնամբոխ զէն-
ուորք և սոսկալիթխար ,
անդութ արձակին 'ի վերայ փափկիկ
մանկանցըն կայտառ ։
Որ քան զօր ցամնուն , և ժանիս սրեն
անխընայաբար ,
մատոյց զայս առ քեզ՝ վերինըն եթեր
աստղազարդ կամար ·
զխա՞րդ ժուժեցից կանացի բարուքս՝
ես աստուածարեալ ,
այդչափ ըլկանաց քոյին դառնավիշտ՝ որ
առ քեզ դիպաւ ։
Ո՛չ այլ ինչ կարեմ ասել և պատմել ,
զի եմ վշտագնեալ ,
աչք իմ հեղուն գետս աղի արտասուաց
'ի սրտի ճմլեալ ·

ոչ այնչափ սիրտն իմ շատ աղեկիզեր
վակճայժ մորմոքեալ,
զմահու բաժանկ՝ թէ էր դուստրն իմ
որբեալ և մեռեալ.
Տէր, որչափ յաղէտ քո եմ սգացեալ՝
կարի խռովեալ,
զի դու ինձ 'ի սէր քան զդուստրն իմ՝
ես խանդակաթեալ. ||
տաց, և էարկ զերեսօք իւրովք քօղ
ինչ բազմասեաւ,
և դարձեալ եմուտ 'ի խորշս այրին ընդ-
աշխել միայն.
Նու Եգիպտոսի 'ի սուգ թախծագին
անդ անմխիթար,
կափուցեալ աչօք յերկիր կորացեալ 'ի
լաց կայր միայն.
անդ հովուացն աչս՝ սրտաբեկ դուչիւն
յերկիրս ամբառնայր,
որք 'ի գագաթունս ամպամերձ լերանց՝
սգային կացեալ.
* Ո՛վ ամ մահաբեր և սովասատակ առ-
մեզ ժամանեալ,
զինչ այս քո դաժան սուր անագորուն
երկսայրի սրեալ.
յաւ էր, առ 'ի մէնջ բառնայիր զայս
կեանս ամենաթշուառ,
և զփոյթ գնացս կարճէիր յօրհաս մա-
հու ընթացեալ.

Օ՜քաղց յիշատակ 'ի յուշ լոկ ածել
է մեզ վիշտ վատթար ,
այս չէ՛ մեզ պարգև 'ի քէն մեծագին՝
և ոչ ձիր պայծառ .
միթէ՞ իցեն մեզ կեանք այս դառնա-
ղէտ կեանք հրաշապայծառ ,
քան թէ անխնայ սուր անագորուն՝ և
տէգ սրածայր .
Յայնժամ քոյին ձիր պարգև թանկա-
գին՝ այո՞ մեծափառ ,
ընթացք ռոպէից է հարիւրամեան եր-
կայնաձիգ դար .
յորժամ բարեբաստ 'ի վիճակ իցեմք
մեք երջանկաբար ,
և զուարթադէմ ժպտեցին այտք մեր
անտըխուր բնաւ .
Ր.ճլ աղէ՞ վայրիք ձայն բարձեալ լայ-
ցեն լերամբք մեծասար ,
զեւրեանց պճնազգեաց դիտելով տե-
սիլ տխուր և մուայլ .
և մեր սրինգք լայցեն զգերերջանիկն
երբեմն բարեփառ ,
զոր կորոյս՝ աւա՜ղ , ո՜ւր իցեն գառանցս
երամակք կայտառ .
Ր.ղէկեղ մորմոք պատեն զսրտիւ մեր
մարմնոյ չուառ ,
յորժամ տեսանեմք զգառինս մատաղ
նքթի և ծարաւ .

մայեն աղեբեկ , անկանելին ահա՛ յերկիր չնչասպառ ,
Ո՛ւր փափկիկ որթուց յամէն մարդս իցեն բաւաջք յաճախեալ .
Ո՞ւր և դաստակս գնդով ոչ շրջին ածիկք վեր ՚ի վայր ,
և ոչ ելանեն առ ՚ի գագաթունս ժայռից երկնածայր .
ցիր և ցան սփռեալ ՚ի վերայ երկրի յոգի չնչասպառ ,
գաղանք մարդածախ գիշագեշ արկին յահեղ մռմռալ .
Ո՜ ինչ այս աղեբեկ արկածք մեզ հասին՝ աստղազարդ երկին ,
ահա՛ և մարդիկ՝ քան զորոջ մատաղ ուլին չարչարին .
ողբք արտասուաթոր յաչըս ամենից ծրին չեալ երևին ,
ոչ որք գտանէ զհայ չորաբեկ , քաղաքնեար շարժին .
Նպաքէն պիտոյ չէն մեզ այսպիսի կեանքըն դառնագին ,
լա՛ւ է բաժակաց առ մեզ թունալից ումպ մի մահածին . ‖
ասացեալ հովուաց՝ անդ այսպէս ՚ի կոծ ՚ի թառանչ սրտին ,
զխուրեանց սուր քարշեալ չոքան զխուրովի , ՚ի գագաթ՝ լերին .

Այսպէս քրտնաջան բըղխք ժիր մշակաց
յարտորայն անծին ,
'ի կոր խոփ յեցեալ բարձր աղաղակաւ
այսպէս գոչէին .
* երկնի և երկնի միայն արարիչ Աստ-
ուած անքննին ,
բաւէ մեզ այսչափ , զի ոչ մեր ժուժեն
աչք արտասուագին ։
Բա՛բէ զի՞նչ իցէ , և զի՞նչ դառնագին
մեզ վայրկեան հասեալ ,
վարեմք , ոչ հնձեմք , սովամահ կորեաք
ահա՛ մեք խոպան .
զի՞նչ այս մեզ օր վատ և ապերջանիկ
վայրկեան երկթշուառ ,
զի սով մարդածախ խիղախէ զմեզ ա-
ռիւծ քանասար ։
Ո՞Վ դուք արտորայք՝ զմէ՞ կայք մնայք
'ի սուգ հառաչեալ ,
ու՞ր ձեր ցորենին հասկին ոսկեփունջ
շարժումն հողմավար .
ահա՛ անպիտան տատասկաց 'ի ձեզ տե-
սանին լցեալ ,
ընդ քիստ ոսկեթոյր ցորենին ոչինչ
հասկք են աճեցեալ ։
Ո՞Չ գութ մեզ ածէք արտորայքըն մեր
քրտամբք ակօսեալ ,
եմք ահաւադիկ յանսուաղութեան սո-
վատանջ ակեալ .

ա՜յ երկինք իցեն, և քոյդ մահաւիթ մեզ
զայրոյթ մրրկեալ,
զի սահմանահոս ոչինչ անձրևես ամպովք
շանթահար:
Խնայեա՛ մերում երկասիրութեան եր-
կինք աստղափայլ,
բուսա՛ գեղեցիկ զհասկ ցորենին 'ի գոյն
ոսկեվառ .
մի՛ լսես զգոչ բազմախումբ ազգաց վը-
տառ և վտառ ,
Խնայեա՛ ո՜ Աստուած, ահա՛ մեք նօթի
լինիմք շնչասպառ: ||
Եւ մշակք այսպէս թառանչ հանելով
'ի խորոց սրտին ,
'ի յողբ ողբերգած՝ սրտառուչ ձայնիւ
անդըր ողբային .
և աւազանի իշխանք քաղաքաց սուգ
առեալ լային ,
որք մինչ փափկասուն , անկարօտ իմք
սովորեալ էին .
Օ՜ նախանձոլիկս իւրեացըն ուտել հա-
ցիւ օսլային ,
և զբազմադամ խորտիկ համապաղ ճա-
շել բերկրագին .
մինչդեռ բազմէին յընթրիս հացաշատ
մեծի սեղանին ,
Նուաղ հնչէին անդ փող և կիթառ ա-
ռաջի նոցին :

Սոքա մոռացեալ զիւրեանց փափկութիւն
գոգցես տեսանին,
փոխան քաղցրաւաչ երգոց բարձրա-
գանչ աշխարանք լսին.
Ուր են համադամ խորտկօք հացկերոյթ
'ի տունս նոցին,
չորաբեկ հացի նաև ոչ փխրանք բնաւ
գտանին:
Հնչէն քաղցրաղի՝ կիթառ և քնար 'ի
սենեակ նոցին,
այլ ոչ բերկրաւոր գեղգեղմունք նոցա
անոյշ հնչէին.
և սոքա նըստեալ 'ի գորգ ոսկեհիւս գի-
մօք թախծագին,
երգէն քնարերգք, լան աղեկտուր ձայն
բարձեալ ուժգին:
Սա այն քնարոց երգըք են՝ հնչէ անդ-
կսկծագին,
զոր 'ի հանդիսի մահուան դիւցազանց
ոմանց երգէին.
Ճարտար են հագներգքս՝ և քան զՈրփեւս
'ի բարբառ նրբին,
պարծին բարձրագլուխ՝ քան զամէն
հագներգս 'ի մէջ աշխարհին:
Զի էին հմուտք անցելոց իրաց դիպ-
ուածոց նախկին,
և զանցեալսն՝ իբրև զներկայս երգէին
լեզուաւ քնարին.

հեշտիւ շարժելն և զժպտաւէրսն 'ի
լոյս տխրագին ,
սապէս և դիւրեաւ զսուգ 'ի ժպիտ
փոխել կարէին ։
Նորդ ներդաշնակեալ զքնարս լուրեանց
անդրէն վերստին ,
յերգ սփոփանաց՝ որքա միաբան անդըր
պատրաստին ․
յանտախուր խնծղանս շարժել զաղեկեղ
անդ զսիրտ նոցին
սկսան զսոյն այսպէս առ նոսա երգել
զառաջին ։
* Սակեփայլ նշոյլք՝ սոտ ճաճանչեսցեն
եթերին վերին ,
զոր սփռէ Արեգն 'ի ծագել լուսում
յամպըս տխրագին ․
զխմբոդ զուարճերես խնդան այսօք երկ-
նից յելս Արուսեկին ,
և բոսորաբուղխ ամպք շնկակարմիր
երփներանգ գունին ։
Մի նսեմափայլ աղօտ ընդ աղօտ ծա-
գեսցէ լուսին ,
կամք են մեզ աչս զաղջամուղջն 'ի լոյս
փոխել գերարփին ․
և ոչ ըստ ճպուաննն առ մեզ գեղգեղել
'ի մութ գիշերին ,
զի քնքուշ քնարն աչս մեր հնչէ , ոչ
սուգ լալագին ։

Ձեզ աւագանի իշխանացդ տանիք կրկին
և կրկին ,
աչք արտասուաթոր՝ 'ի ձեզ ուղխահոս
մի' երևեսցին ․
զոր ձեզ հնչեսցէ քաղցրալուր երգովք
քնար մեր նորին ,
խորագոյն 'ի սիրտ , և քան զերկթևեան
նետ' թափանցեսցին ․
Այն ինչ բազմացան մարդիկ 'ի յերկիր
յետ ջրհեղեղին ,
յետոյ ամբարտակ իմըն մեծաշէն հըս-
կայք կառուցին ․
որոյ երկնածայր բարձրութիւնն՝ մինչև
յամպըս հասանէին ,
սատեղք շողշողայր վառ 'ի վառ լուսով
'ի գագաթ' նորին ․
Այնչափ մեծանիստ էր նա կառուցեալ
յայն լայն 'ի դաշտին ,
մինչև երևիլ ընդ ոտիւք նորա՝ ամենայն
երկրին ․
սա ամէն էին գումարեալք 'ի մի հսկայք
քաջածին ,
իշխանք մարդաշատ , և զօրօքն անթիւ՝
արքայք ընդ նոսին ։
Սրտմտեալ անմահն՝ որ 'ի յՈղիմպոս
խորան երկնային ,
շանթահար արար զամբարտակն ահեղ
յամպրոպ կայծակին ․

անդ էր աճապեկ բոմբիւն և թնդիւն
’ի տատան երկրին ,
անդ ձայն սոսափման անկաւ ’ի վերայ
հըսկայից նոցին ։
Ըրանուն զմեղմի լոյս տան յայսկոյս
յայն՝ անձնիւր առանձին ,
ոմանք՝ յայս երկիր , ոմանք՝ յայն երկիր
ցիր և ցան սփռւին ·
իւրաքանչիւր ոք վարեն և հնձեն զպի-
տոյս անձին ,
ոչ ոք ’ի նոսա կրէր ինչ տագնապ վըշ-
տամբեր յանձին ։
Ր.ժլ մեզ էր արդեօք զոսկեղէն դարոյս
երգել զարժանին ,
զխարդ շինականքն անտուն և անարծաթ
կեանըս վարէին ·
այլ մեր զորոյն էն բանք առաջի ’ի սուգ-
դառնագին ,
զայն կարծ ’ի կարծոյ երգել ձեզ ատեն
մեք ոչ դանդաղիմք ։
Ի ծագաց ծագաց յայս հարուստ գա-
ւառ խռնելով գային՝
որք ’ի բացակայ սահմանս աշխարհիս
արք գտանէին ·
ահա Աբրահամ մատ աճապարէր , և
իւր ամուսին ,
մատ ջուր և ցորեան առատ գտանէր՝
քան յամէն երկրին ։

Թ

Ու սաղարթապերճ ծառքըն մրգաւէտ
հոծախիտ էին ,
հասկըք ոսկեփունջ յարատորայս ամէն
պերճ ծածանէին .
Իսկ յայլում երկրի ոչ ջուր գըտանէր ,
ոչ հասկ ցորենին ,
ոչ ծառք պտղաւէտ 'ի պարտէզ այսպէս
աճեալ պտկէին ,
Ուստի դասդաս յամենայն տեղեաց
գային խունէին ,
և ոչինչ տաղտապ սովատանջ նոքա այ-
սըր կրէին .
Իսկ արդ՝ զարմանամք , զիա՞րդ ձեր որը-
տուամ կիրքըն վարակին ,
և՛ ողբ և՛ կական յամենայն կողմունս
լսելի լինին .
Այն և Եգիպտոս է սա՛ , ձեզ ասեմք
կրկին երեքկին ,
զիա՞րդ վշտագնիլ արժան ձեզ աստէն ,
իշխանք քաղաքին .
Թէպէտ թագաւորուն որդիք սգացեաց
ձեր 'ի լաց շարժին ,
սակայն ձեզ արժան էր ժպտիլ յու-
սովս այսու բերկրագին .
Ահա՛ Աստուածոց թարգման վեհաղուն
Յովսէփ պատանին ,
զշտեմարանն ելից ցորենիւ զեղուն
յորդագին .

Թէպէտ և ծնօղք իւրեանց թառամեալք
կանանց գեղեցկին ,
ծիւրեալք և ծնգեալք ՚ւ աղջկունք մա-
տաղ իւրեանց ձերոյին ։
Սակայն ոչ որպէս դիակունք կուտա-
եալք ՚ի ճանապարհին ,
որպէս յայլ քաղաքս յարուարձանս ա-
մէն այսըր տեսանին ·
այսչափ և ոչ վիշտ զձեզ տագնապէր
յաղէտ լալագին ,
չգիտեմք , եթէ սրտմտեալ իցէ Տեսչու-
թիւն վերին ։
Որդ որպէս կնդրուկ նմա պաղատանք
յերկինս բուրեսցին ,
ձեզ քաղցրիկ ակամբ հայրագութ խը-
նամ տրդ ցուցցի նորին ·
մի՛ դուք յուսահատ լերուք վեհազունք՝
բանք մեր կրկնեսցին ,
Եգիպտոս է սա՝ ուրում աչք գթած
բարձրելոյն հային ։
Սմա զիւր աթոռ եդեալ է ահա այն
Աստուածուհին ,
ուրում երկնաաստ ոչ տացէ Աստուած
զիւր սրտմտութիւն ·
լուէ աղօթից նորա՝ որ յանտառ լայ
կսկծագին ,
պաղատի այսպէս անդ բաղկատարած
առ նա ՚ի յայրին ։

Իմ ամենագէտ և ամենատես Աստ-
ուած անքննելին ,
զի՞նչ այս ինձ աղէտ յանկարծուստ
հասեալ վիշտ անտանելին .
զիա՞րդ կարացից ժուժել աղեբեկ նո-
ցին ես ձայնին ,
զի՞նչ, զո՞ր ես լսեմ 'ի քաղաքս ամէն կա-
կան դառնագին .
Գթա՛ աղաչեմ, գթա՛ դու նոցա խնայ-
եալ վասըն իմ .
շա՛տ են այս նոցա , շա՛տ են՝ քանզի գի-
տես , բաղձեալ 'ի յերկին .
ոչ կարեն սոքա ժոյժ ունել առկաւ այդ-
պատուհասին ,
բարձ՛, բարձ՛, աղաչեմ, բարձ՛ զայն վիշտ
նոցա՝ Աստուած իմ՝ տէր իմ . ||
Գիտիցե՞ք արդեօք հայց Աստուածուհ-
ւոյս հաճոյ է նմին ,
և զոր ինչ հայցէ , 'ի կատար ածէ նա՛ 'ի
մէջ երկնին .
ապա զարտասուաց ձեր աչաց վտակս
ուղխահոսելին ,
արժան ձեզ տալէն սրբել և խայտալ
բերկրել խնդագին . ||
Երգեն քնարերգքս , այլ նոքա 'ի լոյց
օր քան զօր շարժին ,
զի ամպին դաժան սասանկանայ յամէն
լայնածիգ երկրին .

այնչափ իւր հարուածն էր մահահրա-
ւէր 'ի սուր ղայլադին ,
աղեխարշ մրմունջ լսօղաց անդամ 'ի խոր
բեւեռելին .
Բանակն Նքողէալք՝ որք 'ի գիւղօրէս շէ-
նականք էին ,
և որք 'ի գաւառս որք իշխանազունք
փափուկ սնանէին .
'ի խնդիր հացի սակաւ շրջաբէկ զհետ
այնդէին ,
էր անդ տեսանել երկրթշուառեան ա-
ղէտ վշտագին ,
Այն զի կաթնկեր մանկունքըն փափ-
կիկ դառնապէս լային ,
և սաստուս մարբ յոգւոց հանելով յոգէ
մաշէին .
բազումք 'ի նոցանց 'ի գիրկս իւրեանց
մարց՝ զոգի փչէին ,
գոչումն ողբաձայն յամենայն տեղիս
գրաւէր զերկին .
Այն ողբային , և քաղաքք ամէն 'ի
սուգ շարժէին ,
և ողբք բարձրագանչ յերկինս ամբառ-
նան , աղէք գալարին .
և ահա ամէնուխք 'ի փողոցամէջս մերկաց-
եալ ծփին ,
յերկինս ելանէն՝ յամպըս ծառանան
տաք փոշւոց նոցին .

Կանայք և տիկնայք բոկոտինք գնան 'ի
խնդիր հացին ,
աստ անդ դանդանչեալ սովատանջ նքթի
յորսայս անկանին .
քանի՞ք և քանի՞ք 'ի նոցունց 'ի մահ անդ-
սպառէին ,
զի՞նչ աղէկտուր էր անդ տեսարան , ո՞վ
վիշտ դառնագին .
Մարմին փափկասուն դիակուտելոց
չքնաղ դստերաց ,
որք 'ի հրապարակս անկեալ դնէին խու-
րոց քաղաքաց .
տեսեալ Եգիպտոս զինքն նմանավիշտ 'ի
ծուփ մրրկաց ,
լուեալ և զխուրյն աղաղակ՝ նոցին համ-
գոյն անձկայրեաց ,
Առ Աստուածուհին՝ աղէկեզ անդրէն
մատուցեալ 'ի հայց ,
այսպէս պաղատի՝ և իւր արտասուքն
թորթորեն յաչաց .
* ո՞ Աստուածուհիդ՝ գեղաշուք պսակ
իմոց պարծանաց ,
մաղթեմ սրտաբեկ բանիւ արդ զքեզ ,
ընկա՛լ դու զիմ հայց .
Զինչ ես արարից՝ ո՞ւր արդեօք եր-
թեալ թագեայց և թագեայց ,
զի ես ո՛չ այսքան ժուժել ինչ կարեմ
աղէկեզ վշտաց .

զոր յիմում նահանգս , և յիմ քունջս
ամէն լսեմ ողբ և լաց ,
լքեալ տուայտեալ կամ հնամ աչա՛ ես
տարակուսած ։
Սովորեալ է իմ՝ գիտես դու քաջիկ ,
քնքուշ փափկութեանց ,
միշտ բերկրապատար անտրտում խըն-
դալ կայթիւ երգասաց ․
զինչ այս ինձ՝ բամբէ , վէ՛հ Աստուածու-
հիդ՝ դառնագին դիպուած ,
կոծել անխնայ ընդ կական ողբոց ձայ-
նիւ սգազգեաց ։
Օ՜հ ո՛չ հաց 'ի կեր ուրեք գտանի , և
ո՛չ հասկ կանաչ ,
սովատանջ լքկին մարդիկ ոգեսպառ յա-
մէն քաղաքաց ․
ո՛չ միայն անանկք կարօտ են հացի փո-
քու փշրանաց ,
այլ և մեծատունք նքթի դանդաչեն
յելս ճանապարհաց ։
Արդ համայնաջինջ քաղաքք իմ կոր-
ծան անկցին 'ի հիմանց ,
և իմ փառաշէղ յերկրի մնասցի՞ ա-
նուն մեծապանծ ․
արի՛ , կա՛ց այսրէն վասն սիրելւոյդ յա-
ղօթս առ Աստուած ,
զի զսո՛ւր անգութ անզեղջ վանեսցէ՛ յի-
նէն արտալած ; ||

Ընդ ակնախտիղ նշոյլ ինչ ցայտէ լոյս
ճաճանչաւոր ,
յոր Աստուածուհին կայր 'ի փառս զօղ-
եալ ընդ ահեղ մռայլ·
և ահա բառնան 'ի խորոց այրին թըռ-
չայորդ խաւար ,
և Աստուածուհին յանկեփայլ հան-
դերձ՝ եւ զայս ինչ բարբառ ,
* Ո՜վ դու Եգիպտոս թաճաղանց վեհից
հոյակապ գաւառ ,
եհաս աւանիկ կայթ 'ի կայթ բերկրել
քեզ խնդապատար·
առ ինչ թախանձես զիս այդչափ յա-
ղօթս վասըն քո մընալ ,
իմ մշտամռունչ միթէ՞ հայցուածոց ա-
ւրին բանք դադար ։
Երկու ընդ յեսան մինչ անզիգջ սո-
վուն մանգաղ սրածայր ,
'ի քեզ և 'ի քոյդ սահման խոցոտել ար-
իւնաթաթաւ .
իմ յոյս միգամած խորոշ կորափիտ
մնեալ ընդ-գծեալ ,
ցորդ արտասուաթոր զԱստուած պա-
ղատիմ քեզ՝ և քոյդ գթալ ։
Եւ ո՞չ զիս տեսեր՝ յառաջ քան զա-
ւուրս յողբ անմխիթար ,
և զգագաթամբք ժայռիցըս պատեալ
մառախըլուտ խաւար .

այժըմ տեսանե՞նք՝ զինև ճաճանչէ լոյս
ինչ գերափառ,
դէմք ծիծաղերես 'ի ժպիտ քաղցրիկ,
չե՞մ յանձին բեկեալ։
Արբեա՛ց և զքաղց դու զլաց կական յա-
չաց քոց հեղեալ,
Ծափեա՛ց հրճուանօք՝ աւետիս առ քեզ
տամ ահա՛ խնկեալ.
ահա՛ պատրաստ Յովսէփ զուարթա-
դէմ պատանին կայտառ,
բանալ զդրունս շտեմարանաց յորդա-
ռատ լցեալ։ ||
Նայաց, և ահա՛ Յովսէփ զդրունս բանայ
համբարաց,
և գան գունդագունդ առք Եգիպտաց-
ւոց ցորենին 'ի հայց.
վաճառեալ նորա խուռնքանչիւրոց ըստ
բաւականաց,
ետես զԵգիպտոս 'ի ձայն օրհներգակ
ու 'ի ժպիտ դիմաց.
Զո՛յս լուեալ ազանց 'ի գաւառս գա-
ւառս յԵգիպտոս գային,
որպէս խորթք առ մեզ դասադաս գըն-
դով գան պարախմբին.
այն ինչ մրրկածուփ անցանէ ձմեռն,
և երկինք պարզին,
յայնժամ գան նոքա կուինչ հանելով
սաւառնեալ յերկին,

Իջանեն ապա 'ի դաշտ ծաղկաւէտ և
մարգագետին,
ընդ առօրեայն, և կուինչք նոցա 'ի հե-
ռաւոտ լերին.
և դարձեալ անտի ընդ օդըս ձախրեալ
միախումբ թռչին,
խնդութեան նոցա շարժէ զարձագանս
կուինչ բերկրագին.
Այսպէս խուռներամ 'ի ծագաց ծա-
գաց յԵգիպտոս գային,
մարդաշատ ծփէր իւր փողոցամէջք և
լերինք նորին.
յայնժամ ցնծալից եկեալ յիւր աթոռ
վէհ Աստուածուհին,
երգէ բերկրալիր նուագ քաղցրաւաչ
այսպէս խնդագին.
* Ո՜վ դու Եգիպտոս իմ գահ ոսկե-
փայլ անզոյգ յաշխարհին,
ծափս հար հրճուանօք՝ զի ահա՛ առ քեզ
գամ ես վերստին.
հաստատեմ զերգոյ գեղգեղմունս անոյշ
տաւղի և քնարին,
իմ անմահ շրթանց անդուլ պարգևեմ
երգ զուարթագին.
Եւ քոյդ աւադիկ հռչակ հարկանէ ան-
ուան պանծագին,
զի այսուհետև համբուն տիեզերք 'ի
քէն կերակրին.

փոխանակ այդքան տխուր սրգաղցեաց
վըշտացըդ քոյին ,
կայ և մնայ առ քեզ լինել 'ի բերկրանս
բախ և լըջագին ․ ||
Մինդէն Եգիպտոս ընդ առաջ ելեալ
յերկրպագութիւն ,
ըղձակաթ սիրով 'ի համբոյր միմեանց
խնծղանօք մատչին ․
անդ փող և կիթառ անմահից վերնոց
քաղցրիկ հնչէին ,
ողբք արտասուաթոր յաչաց ամենից
սրբեալ լուէին ։
Գոգցես իսկ յայնժամ քաղաքաց շար-
ժեալ 'ի ծագաց երկրին ,
բազմամբոխ ժողովք յԵգիպտոս հաս-
ձեալ գային խռնէին ․
ծը այնչափ մարախք անթիւ բազմութբ̃
յարտորայս խմբէին ,
որչափ 'ի սմա գնել ցորեան ազգք մարդ-
կան գային ․
Գանձ բազմահարուստ աճա՛ Ճոխանայր
վե՛հ փարաւոնին ,
քան զամէն արքայս քաջանուն պան-
ծայր ընդ ոլորտս երկրին ․
յայնժամ Յովսեփայ պարգև անդ ձօ-
նէ մատանի անգին ,
զոր 'ի հնումն անդ էր սովորութն̃ կրել
թագաղին ․

Նու յայնժամ Յովսէփ երկպատիկ վա-
ռաց լինէր անդ տօժան ,
Իւր արքայորդի սիրելի համեռան էր
ժողովրդեան .
Ահեղ շուք փառաց՝ ահ մեծ արկանէր
որանց ամենայն ,
Որոց միանգամ ցուցենին 'ի հայց դայլին
խունունէրամ ,
Բայց հարուած սովոյն սաստիկ էր յայն
ժամ յանուանին Քանան ,
Մինչ էր ոչ ումեք գտանել հնար հաց
իւր բաւական .
Եւ մահաշշուկ սովըն օր քան զօր զայրա-
նայր դաժան ,
զմաշտաղ մանկունս տապաստ արկանէր
յոգի տապաստան ,
Յուան , զի գնեն ցորեան յեգիպտոս ,
որդիք Յակոբեան ,
գան անձայարէն բարձեալ ընդ իւրեանս
արծաթ բաւական .
Ռուբէն , Շմաւոն , Յուդայ , երեքկին
եղբարք Յովսէփայն
Կացին՝ ուրանօր նստէր առ դրամբ մե-
ծըն տանիկան :
Զոր Յովսէփ սալար էր կարգեալ զնա
մշակաց համայն ,
զոր բազմահայց պաղատին գնել զորե-
պան ցորեան .

այլ ոչինչ կարէր սա տանել ինքնին ա-
ռանց ինչ հարցման ,
գնայր առ Յովսէփ՝ և այնպէս տանէր
ըստ նորուն հրաման .
Կայ ՚ի հարց և այժմ՝ որոյ էր բաղձեալ
նորոգ ՚ի սեղան ,
ազդ տանէ նմա՝ սպասէ տանուլ անդըր
պատասխան ·
իսկ նորա յետոյ տանելոյ զձայն իւրըն
համադամ ,
ելանէ ՚ի ձի , գայ յիւր ոսկեփայլ ա-
թոռ սեպհական .
Տեսանէ աչա՝ զի եղբարքըն իւր են
գնօղք ցորեան ,
մինչ եկըն եկաց , նորա ծունր կրկնեն
անդ խոնարհական ·
ցորենին ՚ի հայց մատչին աղերսարկ ան-
դէն միաբան ,
և Յովսէփ նոցա խեթիւ հայեցեալ տայ
զայս պատասխան .
* Ո՜ ինչ այս ձեր՝ բանբէ , տեսիլք ինձ
յայտնեն , զարհուրիմ դողամ ,
քանասար որջուց ոչ այնչափ ժանիքն
ինձ դժնեայ անգամ ·
արիւնաթաթախ ձեռք ձեր ՚ի սուսեր
թուին յարաժամ ,
հէնք մարդախոշոշ ՚ի ծերպըս լերանց
դուք ամենեքեան .

Ո՞ւր պրկեցէք զոսա տարեալ 'ի խա-
ւար զընդան,
քանզի թշնամիք երեւին սոքա ամենայն
մարդկան . ||
ասաց, եւ ծառայքն զնոսա կապեալ եդին
յարգելան,
եւ ըստ հրամանի իշխանին աչեղ կացին
առ դրան .
'Ի կրկին շղթայս պրկեալ ոտք նոցին
սաստիկ եւ դաժան,
այր բազմահառաչ հեծել յարտասուս
յողբ եւ 'ի կական .
այլ լոյսքըն նոցին յարտասուաց լճակս
ոչ միայն խաղան,
թուանչ հեծութեան 'ի սրտէ ելեալ
այր երգել զայս բան ։
* Ո՜ինչ այս մեզ՝ բաժէ, անըմբերելի
վիշտ մահահրաւէր,
երկնադոյն կոհակ վշտաց անբաւից
զմեօք ծածանել .
արդեօք զայս տագնապ յանտառ միցա
ուռս մեզ կանխաձայնէր,
այն չարագուշակ ձագուց ագռաւուց
կռինչ գուժաբեր .
Որ ընդ մութ խորշս թանձրախիտ կաղ-
նեաց լսելի լինէր,
այն ինչ 'ի գաւառս ոտք մեր քաջար-
շաւ ընթանայր ճեպէր .

եւ 'ի մօտակայ սահման քաղաքիս 'ի մեր
հասանել,
ծուր ախուր կնիւնք 'ի տղմաշաղախ ճա-
խին երերէր.
Ընդ աքաղաղին՝ զցցունազարդ զիւր
գլուխ ոսկեհեր
ընդ երկայն փետրօք թեւոցըն լուրոց
արդեօք ծածկեըն էր.
քանզի սիգաքայլ ընդ ձագըս հաւուց
մինչ խորոխտ ճեմէր,
այն ինչ զմեզ ետես, ծածկեալ զիւր
գլուխն՝ եմուտ 'ի տղմեր:
Դարձեալ 'ի հեռուստ մեղուի հանճա-
րեղ բզզիւն մեզ լսէր,
անդ նինջ քնաբեր զմեր թաւարծի
զբօք պատէր.
Նոյնպէս աղաւնիք և տատրակք անոյշ
ձայնիւ գեղգեղէր
անդ կերկերաձայն 'ի դիտակս շքեղ ոս-
կեփունջ վարդեր:
փոխեցան նուագք, այն ինչ կամէաք
անդըր հուպ մատչել,
լալագին ողբան թռչունք ամենայն ըս-
պիտակահեր.
անդ լճին խաղաղ ջուրք վճիտ և հարթ
սկսան ծփել,
աղէսաստ կոհակք յերկինս ամբառնան
'ի բարձունս 'ի վեր:

Մ՛չ շղթայազերծ հողմոց զոն հնչմանց
սաստկաշունչ փչել,
ոչ ամպրոպ խաւար ՚ի խիտ մառախուղ
զերկինս գրաւել,
ընդ ահեղ տեսիլ՝ թէպէտ յառեցան ա-
կանողք մեր,
սակայն մեզ անկար եղև վաղվաղակ ինչ
անդ նշմարել.
Ա՛յլ արդ՝ եթերին վերին տեսչութիւն
եա մեզ թոյլ ներել,
զբազմապատիկ կրելով յանձին վիշ-
տըս անըմբեր.
այս առ մեզ եհաս արժան պատուհաս,
երկկին վրէժ խնդրել,
զի տագնապ եղբօր սիրելւոյ մերոյ փո-
խարէնն ունէր:
Զո՛ր անմեղադրաբար սուր անագորուն
մեր անդ յօժարէր,
գիշադէշ առնել ՚ի փապարս լերանց,
գազանաց ՚ի կեր.
այժմիկ աւադիկ ՚ի զընդան բանդիս
մեզ վիշտ մահաբեր,
զուցէ զմահու և զխոս թուանալից առ
մեզ ջերմնել:
Ո՛ւր սով երկեւրան քոյդ սուսեր ՚ի շող
առ փայլատակել,
ուր ղխախախ կայծեանց տախածուդ-
ժանկը մահաբեր.

քանզի ո՛չ ժուժեն անձինք մեր տկար
դառնաղէտ վշտաց ,
զոր հասոյց առ մեզ ապագոյն ժամուս
անըմբերն արկած .
Գետ արտասուալեղց ընդ արեան ե-
րակս վակժոյժ մեր աչաց
ուղխօրէն սուրայ տհա՛ յայս մթին բանդ-
խաւարաման .
փափկասուն անձինք մեր հալին մաշին
յայսմ կտտանաց ,
Ճիչ մեր բարձրագանչ զերկինըս գըրա-
ւեն . զի՛նչ մեզ այս դիպուած .
Ամենագէտ և ամենակալ մարդասէր
Աստուած ,
Ներեա՛ սակաւիկ , ներեա՛ աղաչեմք մե-
լոց յանցանաց .
ախեղերասաստ զարթեան Աստուածոյդ-
ահեղ բիբք աչաց ,
զարթեան 'ի վրէժ անիրաւ գործոց մեր
եղբայրատեաց .
Որպիսի երբեմն՝ այն ինչ Կայենի ձեռք
արիւնաման
զանմեղ սիրելւոյդ գողորիկ զմարմին
եարկ 'ի տապաստ .
անդ զիա՞րդ կայծակք անիծից քոյին
ահեղ որոտմանց
զերկինս դղըրդեն յերեր և 'ի շարժ 'ի
համբուն հիմանց .

Ահա՝ խստասիրտ որ իւր հարազատ
եղբօր չխնայեաց ,
քոյդ ահեղասաստ անդ գետնաթաւալ
արկանէն հարուածք .
Նոյն առ մեզ և այժմ տեսանին վրէժք
վերին եթերաց ,
որոտք և ամպրոպք զայրանան առ մեզ
'ի բոց հրայրեաց .
Ո՞ւր մարդախոշոշ սուր դահճին ան-
գութ վէհ ինքնակալաց ,
բառնալ վաղվաղակ մեր վշտաչարչար
զառ 'ի մէնջ զկեանս .
'ի Թիկունս հասէք առ մեզ՝ եթերին կա-
ծառք հրեշտակաց ,
տեսէք , զոր կրեմք վիշտ դժոխըմբեր
յայս բանդ միգամած . ||
Այսպէս բարձրագանչ ձիչ բարձեալ
նոցա անդըր միաբան ,
արտասուաց հեղեղք ուղխօրէն յաչաց
անդ նոցին խաղան .
որք անդըր կային պահնակք ունկընդիր
որպէս զթարգման ,
աղէխարշ մրմունջ 'ի սիրտ և յոգի զննսա
կալան .
Գան արտասուաթոր պատմեն առ Յով-
սէփ վեհափառ իշխան ,
զոր աղէկտուր խօսելով միմեանց անձ-
կայրեաց ողբան .

մնալ Յովսեփայ 'ի ներքին սենեակն
խուրում սեփհական,
յաղիս գալարեալ յարտասուս ցնդի
միայն ընդ միայն։
Յանկարծ անդ տիկին դուստրըն գե-
ղաչեայ մեծի Պետափրեայն
մտանէ 'ի ներս՝ ուր Յովսէփն 'ի լաց ող-
բայր անկական.
որոյ արտասուաց խոխոջէր վտակ անդ-
յոգնածորան,
զլանջօքն անկեալ հարցանէ զնա 'ի գեղն
աննման.
Ըստ ինչ Թախանձեալ հաղիւ հազ
լսէ այսչափ պատասխան,
* եղբարքն իմ 'ի բանդ աղեբեկ հեծեն
բարձեալ զկական. ||
ափշեալ տիկնուհւոյն ընդ հակիրճ բա-
նիս՝ կայր 'ի լռութեան,
ապա բարբառել սկսաւ այսպէս քիւր
տէք սիրական։
* Ո՜ ինչ այս բանք իցեն հնչեալ յիմ
ականջս՝ ո՞վ տէր իմ իշխան,
ո՞վ իցէ զեղբարս գտող 'ի բանդի ընկել
բուական.
զի երբ ինքնակալ յահեղ հրամանէ
քոյդ աշխարհք դողան,
և միշտ հրամանիդ տիեզերք համբուն
սպասեալ մնան,

Ո՞Վ վէհ քան զքեզ՝ փառաւորին այժմ
քեզ հլու և հաւան ,
դու ակնախտիղ ճաճանչ ոսկեթոյր գա-
հուն եթերեան .
աղօտ ընդ աղօտ ո՛չ լոյս շողշողայ քոյին
մեռուղիկեան ,
զի ոսկեծղի արեգակն յերկրի ես դու
աննման :
Ըուխած բաշաւոր անյաղթ կորովն 'ի
մագիլ ճիրան ,
դու և սէգ արծիւ , ո՛չ որ համատիպ
քեզ յաշխարհ համայն .
տամ ինձ տէր իմ՝՝ զի՞նչ իցեն արդեօք
այդ անհնար բան ,
և 'ի զուր հեղուս ուղխօրէն վտակս ար-
տասուածորան : ||
Ընդ Յովսէփ նման՝ վերստին առեալ
զթելըս բանին ,
սկսաւ ասել զայս արտասուաթոր ոգոր-
եալ յանձին .
* քաջազուն սերունդք մեր գերահռ-
չակք ընդ ոլորտս երկրին ,
գեղալոյս փայլէ յեօթնարփեան նշոյլ
ընդ եթեր վերին .
Ո՛եք ցեղք Թարայի արքայի մեծի վէհ
ինքնակալին ,
որ յետ վաղափուլ տիրեր աշխարհի
այն ամբարտակին .

եղբայր երկոտասան որդիք Յակոբայ 'ի
Թուանց նորին՝
յերկիր Քանանու էաք խաշնարած
գեղմնաբարձ հօտին ։
Եղբարքն իմ ամէն ինձ յիւրեանց 'ի
սիրտս ոխըս պահէին ,
զիս յաւուր միում առեալ արկանէին 'ի
գուբ խաւարչտին ։
սուր շողշողափայլ մերկացեալ առ իս
անդ ցուցանէին ,
որչափ իմ արդեօք 'ի ճակատ սուրեալ
քրտունք պաղէին ։
Լսեմ գրաստուց զբոժոժաձայն զէջ-
սըն 'ի նմին ,
անդ շահավաճառ այրք Եգիպտացիք
խնդան բերկրագին ։
զփափուկ մանկիկս ածեալ վաճառէն
անգութ եղբարքն իմ ,
Նոքա յայս գաւառս վաճառէն միում
մեծաշուք զարմին ։
Որանի՞ ես քանի՞ վշտաց անբաւից
տարայ 'ի յանձին ,
ամս երիս ամբողջ լլկեցայ 'ի բանտան իմ
փարաւոնին ։
Թէպէտ ինձ Աստուած գթած ակնար-
կեաց 'ի մութ այն բանտին ,
ահա՛ յորպիսի բարձրագահ աթոռ բազ-
միմ ես բազմիմ ։

՚Ի յաջէ իմմէ փառաւորուն իշխանք համ-
բուն երկրնչին,
ով կարէ, ասիցեն, ընդ կոծղ յարգելանս
պրկել զոտս նոցին.
մինչդեռ յեգիպտոս իշխեմ ընդ խոխոտ
փոխան ալքային,
մինչդեռ Թագաւորանց մատանի գոհար
կրեմ յիմ մատին.
Ի՛մ է այս հրաման՝ ըստ գործոց իւր-
եանց նոցա տանջեսցին,
զայս ոչ ոք գիտէ՝ թէ են իմ եղբարք,
ոչ նոքա ինքնին.
աղէ՞ ասիցեն դու, զի՞նչ ես արարից ըստ
գործոց նոցին,
չիցէ՞ ինձ արժան ըստ գործոց իւրեանց
ակել զնոսին: ||
Ընդ կին իւր նմա զայս պատասխանաւն
տանէ պատասխան,
* տէ՛ր իմ՝ աղախնոյդ՝ թէ միտք քո հա-
ճին՝ լուեալ զպատգամ,
մաղթանք մշտահայց յինէն նուիրին քեզ
յամենայն ժամ,
կամ մնամ և քեզ զամենայն աւուրս կե-
նաց իմ պատկան:
Որչափ սիրատարփ կիրք քո յիս վառին
՚ի բոց Հեփեստեան,
նոյնչափ քոյդ եղբարց սէր բոցոյ ՚ի քեզ
զեղցի անխափան.

մի՛ այդպէս ՚ի բանդ ակեր զսոսա ՚ի ներ-
քին զընդան ,
Ներեմ յանցանաց՝ զոր քեզն արարին ՚ի
մեծըն Քանան ։
Հրաւիրեմ ՚ի ճաշ մեծ ՚ի հացկերոյթ
զնոսա միայն ,
սակաւ առ սակաւ բա՛րձ զքօղ դիմաց՝
ած զքեզ յերեւան ·
և իմ անդ յուշիկ մտեալ ՚ի սենեակն
ոսկեփայլըն տան ,
զողջունէ նոցին հարցից զնոսա սիրով
հեզութեան ։
Ապա վեհանձնոյդ անդանօր եղէց ես ա-
ղերսաբան ,
և դու սիրալիր խանդակաթ անկցիս
զլանջօք նոցայն ·
անդ ձեր սիրատարփ յերեւան ածցի ար-
տօսր և կական ,
այն ինչ ծանիցեն զքեզ՝ ո՞ տէր իմ վե-
հազուն իշխան ։
Ապա ճեպ ՚ի ճեպ փոյթ յանձին կալեալ
իսկ և իսկ յայնժամ ,
յղեսցես նոքօք յանուանին ՚ի գիւղ ՚ի
մեծըն Քանան ,
ահիպարանոց զնժոյգ ձիոցն ՚ի թամբ-
ոսկեման ,
և զքառաձի քաջարշաւ զկառսդ քո
արքունական ։

Աւետարանել ծերունի հօր քում զոր-
դին սիրական,
որ 'ի յԵգիպտոս իշխես քաջամբյն գահ
յաղթայական․
Հրամայել ածել զորդս անդ իցեն քո
ամենեքեան,
զի առ երջանիկ կեանըս վարեսցեն
խնդիւ ընդերկրական ։ ||
Սմա վեհազուն այր իւր Յովսէփոս կրկ-
նէ պատասխան,
* մշտահայց մաղթանք՝ զոր ինձ մատու-
ցեր՝ ունկին պատուարժան,
զիմ սիրտ շարժեցին 'ի գութ աւադիկ
փղձկիմ անձկամ,
և զգեղեցիկ զխնդիր սրտիդ կատարել
փութամ։
Սակայն իմ այսպէս առ այժմէն առ-
նել միտքըն հաճեցան,
ածել զքեզ՝ խաղիւ հարցանել ան-
գութ և դաժան ․
և թողում երթալ 'ի քաղաք իւրեանց
նոցա միաբան,
զհետ արձակեմ նոցա կրնամս՝ մինչ
երթան գնան ։
Այն ինչ վերստին դարձեալ առնէի
իմ կան յանդիման,
իմ ահեղաստատ հրամանաւ նոքա անկ-
ցին 'ի զընդան ,

հալէ հող հաճեալ հանեմ զնոսա ար-
ձակեմ զբանան,
զԲենիամին զիմ կրտսեր եղբայր ածել
պատուէր տամ,
Ակամայ կամօք ածցեն ինձ զնա, և ես
անդ յայնժամ,
յայտնեմ զանձն իմ արտօսր թորեալ
յաչաց և կական.
այլ այժմ յայտնել զիս խիղճն նոցա
չեմ ինչ բաւական,
զի մի՛ երկիցեն լուեալ զիմ անուն յայս
բարձր աստիճան.
Յայնժամ մահատուէր նօձիք զըրդք
նոցին շողշողան,
և դէմք երևաց 'ի տխուր երանգս նո-
ցին մահանան.
այսպէս հեծծելով մաշելով 'ի սիրտ ինձ
նշուլ կարդան,
փոխանակ չարի չար հատուցանել իցէ՞
ինձ արժան. ||
Նշանց, տխրադէմ կոչէ զծառայսն ա-
հեղաբարբառ,
ածել հրամայէ անդ զբանտարգելան
հապճեպ շտապաւ.
դողան 'ի սարսուռ խուր ծառայքն համ-
բուն ահիւ պարանեալ,
զան սրտատրոփ, հանեն զոսա 'ի բանդ-
ային մանկաւար.

'Նոքա իւր ոչխարս ոչ եւս գան նոցին 'ի
ապանդ վարել,
և կան առաջի վեհին Յովսեփայ ակնկոր
խոնարհ.
և նորա 'ի դէմս խոժոռահայեաց ճա-
կատն իւր ծնրեալ,
հարցանէ այսպէս բամբ արձակելով
ուժգնաբարբառ.
* Օ՜ ինչ այս ձեր յանդուգն անհաս
մուտ գաղտնի 'ի այն յայս գաւառ,
ո՞չ իմ ահարկու անուանս է հռչակ տա-
րածեալ յաշխարհ.
իւր երեքժանի գայլուց դուք գնդից
նման և յարմար,
յօշել գէշակեր զլուծըս գառանց եք
այսըր եկեալ.
Մ.յն ինչ գիշերային տիրէ աշխարհի՝
մութ խաւարամած,
գունդագունդ խաղան գայլք որջնա-
տեսակ՝ վայրագ մարդախանձ.
շողշողան աչքկունք նոցին հրափայլ 'ի
հեռուստ վայրաց,
մինչդեռ աստ և անդ արշաւեն նօթի 'ի
մէջ անտառաց.
Մ.յն ինչ քուն հովուին՝ զբօսք իւրովք
պատէ միգամած,
գան հայլին լուկ 'ի բոյլս հօտից գա-
ռանց գեղմնաբարձ.

ոչինչ և պակաս զձեզ տեսանեմ, գա՛յ-
լուք գիշախանձ,
լրտեսել աչա՛ այսըր ձեռեցայք յայլոց
քաղաքաց ։
'Ի քո՛ւն կարծեցի՛ք զհսկօղ հովիւս ,
լըռեալք թշնամեաց ,
մահ սպառնացին արշաւէ աչա՛ գժո-
խոց դրանց ·
տուսեր 'ի ձեռին երկսայրի սրեալ շո՛ղ-
շողէ յանկարծ՝
և լարեալ աղեղն զնետ երկթևեան ար-
ձակէ թափանց ։
Արթուն ես հսկեմ, ջախջախեմ գլուխս
ահեղ գազանաց ,
նոցին չէ հնար հպիլ 'ի հօտն իմ գողտ-
րիկ ոչխարաց · ||
ասաց , և սոքա յարտասուս հարեալ
ժխտեն միաբան ,
և աղերսարկու պաղատին զնա դարձեալ
միասնգամ ։
* ՍՊ, զխա՛րդ, ասէ, ձեզ հաւատացից,
յիս ալի՛ք ծփան ,
խորհուրդք ալէյայզ զմիտան իմ նեղեն
արդ փոթորկաձայն ·
զի էք դուք լռեալ՝ կամիմ զդահճին
առնուլ սուր դաժան ,
այլ ինձ ոչ հաճոյ տալ պատիժ մահու-
անանց ինչ հարցման ։

Քանզի իշխանին անկ է քաջախոհ քննել
ըստ երկայն,
տալ ձեռնամուխ ըստ արդար դատին
գործել զիւր արժան.
այս փառք իշխանին՝ փառաց արժանի
նա՛ յաշխարհ համայն,
յորժամ քաջադատ զիրաւունս գործէ
մանրախոյզ երկայն.
Չէ՛ նա քաջ իշխան՝ և ոչ արժանի փա-
ռաց և անգամ,
ձեռնամուխ 'ի գործ արձակի կրիւք ար-
ձակերասան.
արդ ես իմ կարծեաց՝ մի՛ ինչ երկե-
րուք, ոչ եմ ինչ հաւան,
և ձեզ՝ գիտացէք, ոչինչ ես 'իմասեմ ա-
ռանց քննութեան.
Ր.զէ՞ պատմեցէք՝ զի՞նչ ազգ իցէ ձեր
ազգաց խուռներամ,
յորմէ՞ քաղաքէ, կամ յորմէ՞ զարմէ էք
ամենեքեան.
զի՞նչ է ձեր ծնողաց մականուն, և իսկ
անուն յատկական,
և զի՞նչ ձեր անուն, և զի՞նչ վաճառ
ձեր, կամ գործ մարմնական.
Զ զարմ, զզաւակ, և զծեռ ազգի զձեր
նախնական,
մի ըստ միոջէ կարգաւ պատմեցէք ինձ
ամենեսեան.

մահաթոյն պատժովք ընկեմ ես զձեզ 'ի
խաւար զընտան ,
Թէ ստապատիր բանք երևեսցին խոկ 'ի
ձեր բերան ։
Օ՛ ստոյգն ասացէ՛ք , գնացէ՛ք քաղաք
ձեր հայրենական ,
պատուեալ մեծայարգ յինէն , և տու-
եալ զոգեպահ ցորեան ։ ||
ասաց , անդ Նոքա կրկնեն դողդողջմամբ
ոտից և ձեռաց ,
ընդ երկիր անկեալ առ ահէ Նորին անդ-
գետնատարած ։
* Ո՞ դու փառահեղ քաջալանջ իշխանդ-
արհին դիւցազանց ,
մի՛ Թուեսցին մեր բանք ստապատիր կեղ-
ծելոց մտաց ։
զոր ունիմք խօսել անկեղծ 'ի սրտէ առ
վեհդ քաջ արանց
համարեա՛ աչօք տեսանել անշուշտ բա-
նից մեր յընթացս ։
Ո՛չ 'ի սեթևեթս պաճուճեալ բանից ա-
սեմք մեք քեզ զայս ,
այլ պարզ զայն խօսիմք և զհանդամանս
ամենայն իրաց ։
զի ակն յանդիման քոյդ ազնուութեան
վեհիդ փառազանց՝
մեր անկեղծութիւն բանից և գործոց
յայտնեսցի մտաց ։

Արդ մեք շինականք ոչ գիտեմք խօսել
բանիւ ազնազգեաց,
աղաչեմք ներել ո՜ ներողամիտ տէր մեր
մեծապանծ.
այլ և մի՛ լիցի մեղք ձեզ ձանձրութին
մերոց զրուցաց,
թէ երկարաձիգ ճառեցին 'ի մէնջ անցք
այն պատմութեանց,
Արդ զմեզ լուեա գիտեմք ի՛ւ խուլք ա-
ւեր զկապած,
որպէս թէ 'ի քունջս, և 'ի հրապարակս,
հայիմք և 'ի շուկայս.
և կամք անհապիշ 'ի զննին բարձուն
չքնաղ ապարանս,
գեղեցիկ բիւրուց նորանոր գունեալ
նկարիցըն տանց:
Արդ վասն այսորիկ այնչափ անհապիշ
հայիմք մեք ափշած,
քանզի չէ և չէ՛ տեսեալ մեր զայնպէս
գաղափար աչաց.
ուստի անհապիշ յառեալ կոլովլի բբոք
յայն և յայս,
մնամք ընդ երկար 'ի զննին նոցա անդ-
բերանաբաց.
Քաջիկ իսկ գիտէք, այն ինչ տեսանէ
նոր ինչ շինակեաց,
զիա՞րդ զարմացեալ՝ ափշի հիաքանչ
ընդ նոր այն դիպուած.

որում սովորեալ աչք ոչինչ պըշնուն
քաղաքականաց ,
քանզի հանապազ գունակ տեսանեն
գունակ տաւարկայս ,
Իսկ թէ ասիցես , չէ՛ եր ձեր տեսեալ
քաղաք մեծապանծ ,
չունիք դուք քաղաքս այսպէս ապարանս
ոսկենկար տանց .
ունիմք մեք քաղաք , փոքրիկ է կարի իւր
ղշէն անկած ,
Քանան մակձայնի անունըն նորա 'ի լե-
զուս ազգաց .
Թէպէտ են նր տունք որպէս խրճիթ ,
ոչ ցեղունս ունին ,
և պերճ առաստաղ այսպէս ընդ խեց-
ւոյ , լուսանցոյց չունին .
միայն փայտակերտ և հողապատեան են
յարկըք նորին ,
չիք վերնադիտակ ծխել ընդ երկինս
բոցոյ խարուկին ,
Թէպէտ անդ պարտէզք և այգիք ան-
բաւ ծաղկալից էին ,
բուրմունք անուշից քաղցրալիր պըտղոց
յոյժ ծաւալէին .
վայրիք դոյն զդոյն 'ի մարգագետինս ան-
դըր փոխէին ,
և արտորէից հասկըք ոսկեփունջ միշտ
ծածանէին ։

Սակայն մարդաշատ ոչ է արդ որպէս
քաղաք Մեմփիսին ,
կամ Հալիւր , և կամ Լիննուսուն և Հնդ-
տունք անդ գտանին .
սակայն և նոքա խրձիթ են փոքրիկ մի
սենեակ ունին ,
անկողինք ըն մեր սեղ դալարուէտ ծաղ-
կալիր դաշտին :
Մ՛եք քան զամենայն մեծատոհմ հա-
րուստ էաք ՚ի նմին ,
Հայր մեր փառաւորուն պայազատ տոհ-
միկ ձեռ ընտիր ցեղին .
Հարուստ է և ճոխ մեծագանձ նա յոյժ
՚ի միջի երկրին ,
արծաթ և ոսկի , և մարգարտափայլ շատ
են ձորձք նորին :
Քանզի և իւր հայրն՝ և պապըն նոյն-
պէս էր հարուստ նորին ,
ունէր զգրաստ , և ոչխար անթիւ ,
ւ այծ , ւ էշ , և զձին .
Յակօբ է անունն , է ալեւորեալ ՚ի տիս
հասակին ,
անձամբ գեղեցիկ , ՚ի յօնըս Թաւուտ
նոյնպէս ՚ի մարմին .
Եւ անուն մօր մեր Լիայ անուանի սերմ
ընտիր ցեղին ,
որպէս զհայր մեր անցեալ իւր աւուրք
չնչէ տակաւին .

եղբարք հարազատք են երկոտասան
ծնունդքըլա սոցին,
անուանք մեր յայտնի քըլին տերութենդ-
աստէն ծանուցին.
Ռուբէն քաջաղեղն՝ առաջնոյն անուն,
սա՛ ամենապանծ,
տէր որդւոց չորից գեղեցկադիմակ ուս-
տերց և Թոռանց.
Ենոք և Փաղղուս, Սարսոն և Քարմի ան-
ուանքըն մանկանց,
հասակաւ մարմնոյն յոյժ հանդուղնա-
տիպ էին հօրն իւրեանց.
Օկլընի սորա Շմաւոնն անուն՝ որդւովք
գերապանծ,
և անուանք նոցա՝ Յամին և Ահովդ,
Յաքին Սահառանց.
երրորդն է Ղևի՝ և որդիք նորա յոյժ
գեղեցկապանծ,
անուանքըն նոցա, գեթսոն, և Կահաթ,
Մերարի քաջաց.
Չորրորդն է Յուդայ՝ այր բարետեսիլ
'ի տիս դեռահաս,
և որդիք նորա, Աւնան և Սելովմ, Փա-
րէս և Զարաս.
Հինգերորդըն է՝ Իսաքար անուն քաջից
զաւակաց,
Թովղա նաև Փուդ, Յասուբ և Զա-
մամ, երգօղք սընդաց.

ժա

Վեցերորդըն է՝ Զաբուղոն տեսլեամբ
՚ի գոյն մոխրագգեաց,
և որդիք նորա՝ Սերեդ և Աղղոն, հսկայք
ախտամնեանց.
Եօթներորդըն է՝ Գադ, ու որդիք նորա
ուղէշ սարդէնեաց,
Սափոն և Մեգիս, Սաւնիտ, Թաւսո-
բամ՝ Այադիս ազանց։
Ութերորդն է Դան՝ սա ոչ բաղմածին
համգոյն իւր եղբարց,
մի միայն որդի Ասոմըն անուն եղև իւր
ծնած.
Իններորդըն է՝ Ասեր մակձայնեալ ուրի
փառաղանց,
Յեմնա և Յեսուլ էին իւր որդիք, Սարա
Յեսուեանց։
Տասներորդըն է՝ Նեփթաղիմ անուն
ցանկալի բաղմաց,
Ասիէլ, Գունի, Ասար և Սիլիմ որդիք
իւր ծաղկած.
Մետասաներորդն՝ է մանուկն Յովսէփ
կայտառ գեղապանծ,
և երկոտասանն՝ է Բենիամին կրտսերըն
եղբարց։
Բայց այժըմ Յովսէփ՝ եղբայր մեր սի-
րոյ և սխրասարաս
ոչ է կենդանի, և Թիւք համարոյ է մեր
մետասանց.

այլ եթէ ցանկաս և զմեր վաճառ, զառ
և զտուր գիտել,
ծառայք քո ամէն երկրագործ մշակք՝
ո՜վ մեծափառ տէր։
Մ՚եզ երեքժամնի հարուած մանհաձիր
սովյն անըմբեր,
եւ ցաւ վշտատանջ լկկիւ յերաշխեպ
կրից դժոխըմբեր։
լուաք, յեգիպտոս ցորեան վաճառեն,
եկաք զայն գնել,
զի մի՛ զմահուն արբցուք մեք բաժակս
դժնեայ թունաբեր։
Նա՛հ գունդագունդ գան որպէս մե-
ղու ազգըք այլասեռ,
և ցորեան բարձեալ օրհնեն խնկաւոր
զմեծասաստ տէր։
և մեք արդ թափել ջանամք զսովյն ըղ-
մխշտ մեծաբեռն,
վշտաց անբաւից անձանց մեր դիպան
կարկառք մահաբեր։
Նա և մեզ վրէժխնդրին անողոքելի պա-
տիժ խոժոռել,
այս մեզ է երկնից քինախնդրութեան
վրէժ պահանջել։
և խաւարամած գիշերոյն 'ի մէջ 'ի գուբ-
անկանել
է այս մեզ արժան, և քան զայս՝ Տէ՛ր
մեր, պատիժ մահաբեր։

Յայժ հանդունատիպ դաւադրուժ ու-
մեք և անիրաւի,
անկելոյն 'ի գետ Նեղոս սրընթաց յան-
ցանել անտի.
կոհակք բարձրաբերձ սևաթոյր աւերաց
անդըր ոգորի,
Թնդան ահագին զժայռիւք հարեալ`
զափամբ Նեղոսի.
Ուժգին վայր սուղեաց` զոր անկան 'ի
նա, զայրըն կորովի,
անդ Թաւալ ջրոց ընա պտոյտքեն յան-
դունդըս երկրի.
զամենից եհատ զայս փրկաւէտ 'ի նը-
մին վայրի,
լան կողկողագին` հեծեծանք նոցա լի-
նին լսելի.
Իսկ անդ անօրէն` այր եղեռնագործ
յաղմուկ չփոթի.
զալխան աղտաղտին ըմպէ, հառաչէ, կայ
'ի տագնապի.
մինչ այս և մինչ այն` նա Թաւագըր
յալեաց ձողոպրի,
ընդ աւազակոյտ եղերոտըս անկեալ գե-
տոյն շրջանի.
Իսկ այս` որ եղև, տիրէր աղջամուղջ
տխուր գիշերի,
և յետ պահու ինչ Արշալոյս ցայտէ լոյս
վարդածղի.

անդ բարձրածիծաղ ժպիտ խնդագին
էր 'ի պատանի ,
խաղայ 'ի դոփիւն՝ նա 'ի ցուցս անկեալ
'ի նմին վայրի ։
Ռախուծ մի անզուսպ՝ յայնըմ խնդու-
թեան անդըր հասանի ,
յօշ յօշ պատառէ զնա՝ յիւր ժանիս
շրթանց երկթերթի .
բազումք խնդամիտ բերկրին անտխուր՝
'ի սիրտ և յոգի ,
այն ինչ ճողոպրիւ հասեալ յարկածից՝
նոցա դէպ լինի ։
Իսկ ոչինչ խոկան եղկելիքն՝ զնոյն վիշտ
դաժանելի ,
կայթեն բերկրագին , և երգեն անոյշ
քնար տասնաղի .
այլ՝ աւա՜ղ , յանկարծ այն խաղաղութիւն
վեր 'ի վայր ծփի ,
հասանէ դարձեալ քան զայն՝ մեծ տագ-
նապ անըմբերելի ։
Եկայք աւադիկ յԵգիպտոս գաւառ
բառնալ զցորեան ,
այլ բարձայք յանձին վիշտ դժոխըմբեր՝
պարենին փոխան .
խստասիրտ ոգի զքեզ ոգորեաց ընդ
մեծ խորխտ հրաման ,
և ետուր մաշել նա սրտից մերոց՝ հե-
ծել հեկեկան ։

Եւ մեք ծառայք քո՝ անպարտ կրե-
ցաք արդ զայս ամենայն,
խնայեա՛ զթալիր՝ մի՛ այսուհետև անկ-
ցուք 'ի զընտան.
զամենայն՝ զոր ինչ վեհիդ պատմեցաք
մեք աստ միաբան,
Թէ ոչ հաւատաս, քննեա՛ աղաչեմք,
ո՞վ դու վեհ իշխան: ||

Եսացին, և յորդ աղեխարշ նոքա անդ-
րէն շարժեցան,
և Յովսէփ խառիւ բարբառ արձակէ
այսպէս միւսանգամ:
* զիա՞րդ արձակեմ զձեզ 'ի քաղաք ձեր
հայրենական,
հաւատ ընծայեալ ձեր ստապաճոյճ բա-
նից պատմութեան:
Ո՞վ ինչ էր այդ բան ձեր՝ (Թէ եղբայր
էաք մեք երկոտասան,
այժմ մետասան եմք, զմինն եկեր մար-
դախանձ գազան).
Ա՞յդչափ դուք անգութք՝ անփոյթ 'ի
փրկել զեղբայր սիրական,
զի՞ որպէս եղինք Թեթև սլացեալ՝ ոչ
հասիք նոյնժամ:

Աշտարթուն հսկեն հովիւքն 'ի խնամ
խաշանց գողտրական,
'ի ժանեաց կորզեն զգառն աւարափոյլ՝
գայլոց վէսական.

Նաև սրարշաւ ձեպեն 'ի զայրոյթ՝ շունք
գժոխական,
մահուամբ չափ ձգնին, և կորզեն զգաւն
անդ գիշատ յարեան.
Ո՞յս ձեր ինձ պարծանք՝ անգութք ա-
նողորմք արք խռովարար,
այս ձեր վեհագունեայ մեծապանծ յերկ-
րի զարմ երջանկափառ.
ո՛չ կարեմ և ո՛չ, անշուշտ գիտացէք, ես
ձեզ հաւատալ,
պատմեցէ՛ք՝ զի՞արդ եկեր զեղբայր ձեր՝
գազան քանասար: ‖
Եւ անդ Շմաւոն պճնազարդ բանիւք
պատմել սկսաւ,
թէ զի՞արդ կորզել 'ի ժանեաց գայլոյն՝
զայն եղեն անկար.
այլ Յովսէփ և ո՛չ պատմութեանս այս-
միկ հաւանեալ յակքար,
վերստին նոցա արձակէ այսպէս՝ զայն
զայս բարբառ:
* Ահ զի՞նչ գործեցից, և զի՞նչ արա-
րից, տուք ձեզէն զիրաւ,
զի ես ո՛չ գիտեմ, կամ մնամ աչօ՛ յա-
պուշ շուարեալ.
Իցէ՞ ինձ արժան արձակել զձեզ յաշ-
խարհ ձեր երթալ,
կամ որպէս լուեալ՝ զձեզ անխնայ պատ-
ժել չարաչար:

Բայց մի՛ զիրաւունս թիւրեսցուք, ահա՛
ընտրեմ կամակար,
տուաքել զձեզ ատէն փութայես, 'ի
ձեր բնիկ աշխարհ·
Բարձէք 'ի գրաստ՝ որչափ և ցորեան
գնել էք եկեալ,
Ճեպեցէք շուտով 'ի ձեր հայրենիս այ-
սու պայմանաւ։
Վաղվաղակ ածել զԲենիամին՝ ձեր
կրտսեր եղբայր,
զի հաւատարիմ զձեզ ես ծանեայց վե-
հին ինքնակալ·
ահա՛ պատանդեմ զձեր հարազատ Շմա-
ւոնն եղբայր,
և տամ արկանել զնա 'ի պահեստ 'ի
բանդ միգապատը։
Մինչ երթայք ածէք զԲենիամին այսըր
շտապաւ,
ողջանդամ դարձջիք միաբան 'ի ձեր 'ի
բընիկ աշխարհ·
և այնուհետև անխնայ առ ձեզ ձօնե-
ցից ցորեան,
քանիցըս անգամ և դարձ արասջիք յայս
հարուստ գաւառ։
Իսկ եթէ ընդ դէմ հրամանիս անդարձ
փախչիք խոյս տուեալ,
կոչկոճի խըստիւ 'ի բանտիս եղբայր ձեր
վշտաչարչար·

և զայս գիտասջիք , ո՛չ անտես մնամ
յանկողին մահու ,
ընդ ամէն աշխարհ յղեմ կոնոմս ահեղ
հրամանաւ ։
Օ՜ քաղաքս , զգիւղս , զվերանց անդամ
զգաղտնի փապար ,
խնդրել քաջայոյզ՝ և զքունջս ամէն ընդ-
ամրս յամայր ·
մինչ գտանիցեն , և ածցեն զձեզ լուսա
նօք մեծաւ ,
որպիսի արդեօք՝ ո՛չ կարէ պատմել ,
կրեսջիք վիշտ անբաւ ։
Ո՛չ քաղեմ զոգիս ՚ի սպանդ վարեալ
կենցաղազրութ ,
և ո՛չ խնայեմ զձեզ մինչ ՚ի մահ զե-
ղարդնապատառ ·
գիտեմ ես քաջիկ , զի մահն ամենայն
վշտաց է դադար ,
և են փետրալից անկողինք շիրիմ սգայ-
նոց յաշխարհ ։
Այլ ՚ի բանդ ազգի ազգի տանջանօք
դժոխաչարչար ,
կեղեքեմ զձեր մարմին չքնաղիկ ամե-
նակայտառ ·
Նաև ո՛չ լսեմ ձեր աղիողորմ հայցուածոց
բարբառ ,
Նորանոր հնարս խոշտանգել զձեզ , մտա-
ծեմ ես յար ։

Ո՛վ ինձ ունկընդիր լինիք, և երթայք
'ի ձեր բնիկ գաւառ,
վերստին դառնայք յայս աթոռանիստ
գահըս ոսկեփայլ.
յայնժամ ես զձեզ յարգեցից յաւէտ
և պատուամեծար,
յորքունուստ առ ձեզ ցորեան ուղարկե-
ցից յամի քոռ հազար:
Ո՛չ է՞ միանգամ զմտաւ ածէք զիմ գութ
հայրաբար,
առ ձեր փրկութիւն փութամ և խօսիմ
զխա՛րդ վշտահար.
զի անագորուն սովըն աւանիկ օր քան
զօր յաշխարհս,
քան զփայտակեայ հնոց բորբոքի 'ի բոց
հրավառ: ||
Ոսաց, և նոքա զհամեստն 'ի յուս գը-
րաստուց բարձեալ,
պատրաստեալ 'ի չու, չգիտեմ որպէս
տխուր խոժոռեալ.
անդ արտասուաթոր աչօք Հմայումն գիրկ
ընդ խառն եղեալ,
լան կողկողագին, և մեկնին այնպէս
յարտասուս հարեալ:
Մ՛ինչ այս և մինչ այն՝ հասանեն սոքա
յիւրեանց բնաշխարհ,
վերստին թախիծ արտմաբեր կրից 'ի
նոսա անկաւ.

այն զի ատադիկ կայր 'ի քուրձս իւր-
եանց արծաթոց ծրար ,
որով գնեցան ցորեան ոսկերանգ 'ի հաց
սննդարար .
Մնացին հիասքանչ անդ երկիւղալից՝
և զահի հարեալ ,
նոցին անմռունչ թառանչ սրտառուչ
յերկինս ամբառնայր .
Իսկ Յակոբ վեհաղն՝ 'ի քուն թանձրա-
մած ննջէր և խորդայր ,
մինչ յԵգիպտոսէ իւր որդիքն եկին ,
որոց կայր մնայր .
Նուլաէ 'ի քունն 'ի խորշիթսըն իւր ձայն
խնդապատար ,
բերկրալիր խայտան իւր որդիքն ամէն
խնդիւ ծափահար .
այլ որովհետև քունըն անուշիկ զիւր
բուռք պատեալ ,
ոչ ներէր նմա տակաւին սթափ անդ-
զուարթանալ .
Այն զի մինչ սոքա եկին , մանկտեայք
համբուն երգեին ,
և իւրեանց կանայք , և դստերք յայն-
ժամ խնդիւ բերկրեին .
ցարդ նօթիս իւրեանց դէմքըն դալկա-
հար հալեալ մաշէին ,
սոցին գալստեան բերկրամիտ յուսով
ցարտ սպասէին .

Ուլէոս Յակոբայ՝ տեսանէ գրաստս ՚ի
սրահ սորին,
խնդայ ոչ սակաւ, և գայ ՚ի խրճիթն՝
ուր որդիքն էին.
այն ինչ մտանէ ՚ի խրճիթըն այն դիմօք
խնդագին,
դիրկ ընդ խառն լինել ընդ Նորեկ զա-
ւակսն՝ ՚ի համբոյր անձին.
Տեսանէ աՀա, չէր անդ Շմաւոնն իւր
սէր կաթոգին,
և աղէկտուր յարտասուս հարեալ՝ լան
կըսկըծագին.
անդ զխուր բերկրալի փոխեաց խնդու-
թիւնն ՚ի սուգ դառնագին,
* ուր է իմ, ասէ, Շմաւոնն որդեակ
սէր իմում սրտին. ‖
ՙՆոցա խեցբեկոր պապաջեն շրթունք՝ ՚ի
լաց դառնագին,
Թախանձէ խառնիւ վեհայրն զնոսա՝ պատ-
մել ըստ կարգին.
Նոցա ակնարկեալ միմեանց դեռահաս ա-
չօք ցաւագին,
սկսան պատմել զանցսն աղէտալի՝ այս-
պէս թախծագին.
* Ո՜ հայր ծերունի և չնաշխարհիկ յերկ-
րի անման,
զիա՞րդ պատմեսցուք զարկածսն՝ որ առ-
մեզ, յԵգիպտոս գնալն.

Թո՛յլ տուր արտասուել, Թո՛յլ տուր մեզ
ողբալ տատ մեծականկան ,
զի աղէտալի քան զարկած սովյն վիշտք
առ մեզ դիպան ։
Մ՝եր աղեկտուր աչք արտասուեցին ; և
յաւերժ ողբան ,
չիցեն այս հերիք , և քեզ զմնեաց՝ զի՞
արկցուք կական ։
Ներեա՛ մեզ հայրենիկ , Ներեա՛ զայս լռել ,
Թէ լցէ արժան ,
զի մի՛ և զքեզ արդ դառնացուսցուք ՚ի
քում ծերութեան ։ ||
Յ.ւր Յակօբ վեհազն շատ ինչ Թա-
խանձեաց զնոսա յայնժամ ,
սկսան նոքա այսպէս անդ խօսել դառ-
ձեալ միաբան ։
* հա՛յր՝ աչա՛ առ քեզ՝ որպէս և եղև ;
Ճառեմք պարզաբան ,
այլ կրից ՚ի քեզ մի՛ երևեսցի զայրուցըն
դաժան ,
Յ.յն ինչ մեք ասաէն յեգիպտոս դա-
ւառ չոքաք միաբան ,
տեսաք , դունդագունդ ՚ի համբուն ծա-
գաց աշխարհ ամենայն՝
գային խուռնէին , և իւրաքանչիւր առ-
նոյր զցորեան ,
և մեք ընդ նոսա հուպ մատչիմք ՚ի հայց
անդ աղերսաբան ։

Իսկ շուքովն անդ հայէր ակնապիշ
չքնաղ պալատան,
որոյ ոսկեզօծ փայլէր գունագեղ դի-
տակ լուսարփեան.
տիեզերասաստ անդ կայր 'ի յաթոռ
ահեղ ոմն իշխան,
շար 'ի շար կային զնովաւ պաշտօնք ձեռ-
նամած անգամ.
Բաջամոյն իշխէ նա փառաւորեալ ար-
քային փոխան,
յորմէ տիեզերք համբուն 'ի սարսուռ
դիւագին դողան.
որոց՝ միանգամ յԵգիպտոս գային ծա-
գաց յամենայն,
սա բաշխէր ցորեան, սմա գետնամած-
էն աղերսաբան:
Ծառայիցն իւրոց՝ արկանել զմեզ 'ի
ներքին զընդան,
լուայք, անդ հրաման տանէր նա ահեղ,
և նոքա երկեան.
և մեք անդ արկեալ 'ի բանտին, լայաք
յողը մեծակական,
յետ երից աւուրց տայ զմեզ բերել
իւրում յանդիման,
Որպէս շանթաձիգ ամպըս որոտաց նա
առ մեզ յայնժամ,
մինչև անկանել մեզ յերկիր յորսայս 'ի
սարսուռ դողման.

ոչ այնչափ կայծակք բոմբիւնս որձա-
կէն ուժգին դղրդման ,
այն ինչ 'ի յերկնից ընդ վայրասուզին
'ի մի ծառաստան ,
Ընդ մէջ հերձանէ զլեռնանմանն ըղ-
ծառն յաղթանդամ,
զբեկորս նորա աստ և անդ ցրուէ որ-
պէս զհրացան ·
ահագին թնդիւն սարսէ զանապատն ,
քարինք սարսռեան ,
և բարձունք լերանց շարժին , երերին
անդ հիմնատակեան :
Ա՛յ քան զօրինակս մեզ սպառնագին 'ի
զայրուց ցասման ,
արկեալ զերեսօք կնճիռն ահագին ետ
զայս պատասխան ·
* ո՞ւր էք օտարազգք , ազէ՞ ասացէք դուք
ինձ միաբան ,
ո՞յք ոմանք իցեն ծնօղք և սերունդք
ձեր միանգամայն ·
Ո՞չ ինչ անուն նոցա , և յո՞ր քաղաքի
ձեր բնակարան ,
և զի՞նչ ձեր վաճառ , բազմատո՞հմ իցէք ,
լերուք պատմաբան ·
զի լուեալ զձեզ կարծեմ ես լինել ո՛ արք
շինական ,
զել և մուտ գիտել եկեալք էք ահա՛
դաշտս Մեմփիսեան , ||

Մ՛եք զահի հարեալ սկսաք պատմել
Նմա անդ կարգաւ ,
զսերունդ ազգիս մեր , և զազգատոհմ,
զգործ և զարար ·
Իսկ նա անսասանեալ բանտարգել զմեզ
հրամայէ դարձեալ ,
քաջալերէր յերկնից առեալ անդ ասեմք
զայս քուշանալեար ,
* Ո՛վ տէր , մի՛ այդպէս կոչկոճեր զան-
մեղս ունայն և ընդ վայր ,
չեմք ծառայք քոյին լոտես դաւաբէր
և խռովարար ·
այդ ժամեմք հայցեմք զայս պաղատա-
խառն 'ի քէն՝ բարերար ,
քաջայոյզ քննեա , թէ լիցեմք լռեալ՝
և արք խռովարար ,
Նուաքեա՛ զմին 'ի քոց ծառայից՝ ծվլատէր
վեհափառ ,
զի զամենեսեան հայց փորձ արասցէ ,
զորս 'ի մեր աշխարհ ·
Թէ ինչ 'ի բանից մերոց ստեսցի պատիր
և մոլար ,
սուր քո աստղիկ , և մեր պարանոց ,
կամք աներդմնահար · ||
Օ՛նա՝ որ ջերեալ խիզախէր զմեզ 'ի
զայրուց ցասման ,
որպէս ամեհի կորիւն առիւծու հզօր
յաղթանդամ,

Ժա

հեղացոյց անդէն սոյն բան մեր սրտոտ
ապստամբերան ,
և արար որպէս զհեղահամբոյր գառըն
գողտրական ։
Ձեզ յայնժամ անդրէն նա զուար-
թադէմ կրկնեաց պատասխան ,
* զձեզ արձակեմ երթալ ՚ի քաղաք ձեր
հայրենական .
բայց որովհետև դուք ինքնին գիտէք՝
քաջալանջ իշխան
պարտի մշտարթուն հսկել յանքուն ակն
առ ազգին պաշտպան ,
Ապաքէն և ինձ յարթմնի մնալ չիցէ՞
ինչ արժան ,
որ ընդ Եգիպտոս իշխեմ քաջամբյն ար-
քային փոխան .
գուցէ ձեր ծպտեալ եկիք ՚ի քաղաքս
գնել զցորեան ,
զելս և մուտս ուսեալ դառնալ վերս-
տին գործել մեզ դարան ։
Ահա զՇմաւոնն ՚ի պատանդ առնում
պահեմ յարգելան ,
երթալ ՚ի քաղաք ձեր բնիկ աշխարհ տամ
ձեզ հրաման .
փութացէ՛ք , ածէ՛ք զձեր փոքր եղբայր
զկայժ սիրական ,
զի հաւատացից՝ թէ դուք արդարև որ-
դիք քաջազեան ։

Նու ձեզ յարքունուստ ցորեան բազմա-
ռատ առՃկեմ ես յայնժամ,
օգոստապատիւ յարգանօք թողում
դառնալ ողջանդամ.
և թէ ինչ կրէք տագնապ վշտատանջ
յերկիր ձեր Քանան,
փութացէք առ իս, առ ձեր փրկութի
անխոնջ ես ջանամ. ||
՚Նա զայս ինչ ասաց, և մեք ՚ի գրաստան
զբեռինս եդեալ,
ելանեմք ՚ի չու, և յերիս աւուրս հա-
սաք յայս գաւառ.
այլ աստ վերստին և երկիւղախառն զար-
մանք զմեզ կալաւ,
այն ինչ զքուրձ մեր բացաք, և գտաք
զարծաթոյ ծրար.
Մտակէ յաչաց մերոց՝ արտասուաց
գետ յորդնածաւալ,
տա՛ մեզ՝ հայրիկ, զի՞նչ իցէ այս նենգ-
դարան մտաստահար.
այս զի՞նչ մեզ երկնէին վրէժ քինախնդ-
դիր ՚ի հայր բազմադաւ,
միթէ՞ անթողլի մեղուցեալ իցեմք յան-
ցութիւն անքաւ. ||
Յորդ լալիկ և մնջիկ տխրագին ՚ի դէմն՝
անսայր պատմութեան,
զոր որդիքըն իւր ձառէին նմա յանձ-
կայրեաց կական,

ամբոխեալ ահա յալէսաստ 'ի ծուփս
որպէս ծով Ովկիան ,
սկսաւ կոծել հանեալ սրտակէզ թա-
ռաչ հեծութեան ։
* Աւա՜ղ , բազմաղէտ քանիցըս անգամ
սրտակէզ տոկած՝
զիս յերկրաժանին սլաք սայրասուր կա-
րեվէր խոցեաց ·
չև՛ բազմախըրխայթ բուժեալ քաջողջին
առաջին խոցուած ,
եհաս վէրսային անդարմանելի ինձ ան-
բուժ հարուած ։
Ո՜վ զարևուն լոյս ձանձանչադեղ տե-
սանել աչաց ,
մինչդեռ 'ի յանձին իմ թագաւորէ մութ
խաւարամած ·
զի՞ է ինձ պիտոյ կեանքըս վշտատանջ
յաւերժ հանապազ ,
լաւ է 'ի մահուն ժանիս ինձ մտանել և
փոխել յաստեաց ։
Այս գերերջանիկ ոչ իմ ընդ գրկի ա-
ղերս մշտահայց ,
մընայ ինձ երկար միշտ դժոխատանջ
ըսկիլ խաչադդեաց ·
Երկինք , և երկիր՝ լացէ՛ք ողբացէ՛ք ընդ-
իս անձկայրեաց ,
զի ինձ անորդւոյս զձեզ վշտակից գոլց
'ի սպառման ։

Ս՚ի քոյդ լուսափիւռ ճաճանչ ծա-
գեցի վերին եթերաց ,
քանզի աւուրք իմ՝ դարձան 'ի գիշեր
մռայլ ուղղամած .
Նաև մի՛ լուսնոյն աղօտաճաճանչ նշոյլ
գեղապանծ՝
աստեղք սփռեսցի 'ի նսեմաստուեր եր-
կիր տխրագդեաց ։
Այն զի՝ ըքայոյղ ոգորին զինև մրրիկք
թանձրամած ,
ծփեն ալէտանջ զիս մրրկաբաղխ փոթո-
րիկք վշտաց .
գեղեցիկ վարսա՛ն՝ որ 'ի քեզ ճեմէ ար-
փիադընաց ,
զմաՀ իմ որդւոց գուժէ աղէխարշ ինձ
յողբ և 'ի լաց ։
Թւեպէտ քոյդ ժպտին 'ի քաղցրիկ ծի-
ծաղ կերպարանք դիմաց ,
ոչ ամպք թանձրախիտ 'ի քեզ թափա-
ւին յուզեալ սրընթաց .
սակայն ինձ կայծակք շանթաՀար ամ-
պոց ճայթեն յեղակարծ ,
կարկուտ մեծամեծ , և Հուր թօթափեն
ոյերք Հրայրեաց ։
Որպէս մոմ Հալիմ յերեսաց Հրոյս՝ յայս
դառըն արկած ,
կաթիլ մի ջրոյ պապակեալ ցանկամ յայս
տապ Հրայրեաց ,

ինձ գետ բխուրակնեայ՝ վտակ յորդա-
հոս՝ վիժակք արտասուաց ,
ա՜հ , զինչ արարից , չգիտեմ բնաւ . . .
կամ ես ու՞ր երթայց .
Ո՜ն ջուրց լուեսցի կարկաչիւն քաղց-
րիկ՝ 'ի ծործորս լերանց ,
և մրմունջ անոյշ՝ 'ի ծառս ոստալից՝
թռչնոց նուագաց .
դու անագորուն՝ սով մարդախոշոշ՝ գա-
զան մարդախանձ
զմահահամբոյր սրեալ քո ժանիս , բա՛րձ
յինէն զայս կեանս ։
Մինչ փոթորկայոյզ զծովծփէին դեռ
սաստք մրրկաց ,
նովաւ ընդ վօռէ կռուէին յաղմուկ
շմոր այերաց .
ո՜չ , ես ծովակուր նաւու սուզէի յան-
դունդս մեգամած ,
իմ համայնաջինջ բառնալ յիշատակ
յերկրէ տխրադդեաց ։
Եւ կամ քանասար զիս դէշ արկանէր
վիհք մեծաբերան ,
զիմ պատառոտեալ արիւնաթաթախ ա-
ծել պատմուճան .
այլ աւա՜ղ , զի ես . . . զորդւոյս եմ
ածեալ թաթաւուչ յարեան ,
ա՜հ , բխեք իմ աչաց՝ մինչ ցե՞րբ թար-
թափիք տակաւին կենդան ։

Սգերդարկ կանայք խմբեցէք լացէք
ընդ իս միաբան ,
զի ահա զիմ մանկիկն իմ մաշէ սուր քա-
ռաբերան .
ոչ այսչափ միայն , այլ և զկրտսեր որ-
դիս սիրական ,
շողշողեալ սրովն 'ի հեռուստ նման նշդրըն
դաժան ,
Եղէ՞, դուք հանէք զձեզ արդ կարդամ՝
առ իս 'ի յօձան ,
Լե՛րինք երկնածայրք , դաշտորայք և ձեր
լայնասփիւռ սահման .
զի ես ոչ կարեմ ժուժել այսքանեաց
վշտաց դառնութեան ,
օրհաս մօտալուտ առ իս հասանի դառ-
նագին մահուան : ||
Օ՜, այս ասաց , անկաւ անդ դեռնատա-
րած յոգի ապաստան ,
պարեալ զնովաւ կոծէին կանայք որ-
դիքն իւր համայն .
շատ ինչ կոծ եղեալ լացին սգազգեաց
նորա միաբան ,
էր անդ տեսարան գերարտօսրալից ընդ-
ողբ և կական ,
Եւ մինչ որքան զօր զայրանայր սո-
վուն հարուածըն տաժան ,
որքան զօր սոցին սփոփէր տխուր լալ-
եաց տեսարան ,

յայնժամ տասնեքին խորհուրդ արար-
եալ որդւոց Յակոբայն ,
գայ մատչի Ռուբէն՝ ասել հօր լուրում
զայս ինչ ողբաձայն .
* Հա՛յր , հա՛յր , լո՛ւր իմոց երկարապա-
տում բանից զրուցաց ,
մի՛ յանդգնութիւն առ քեզ թուեսցի ,
այլ աղերս և հայց .
այս քեզ լա՞ւ իցէ տեսանել աչօք զմեզ
մահաղգեաց ,
զի՞նչ ժուժեսցէ քո սիրտ հայրախնամ
և սխրասարաս ;
Ո՛չ ահ՝ աւանիկ տեսանես զսով գաղան
գիշախանձ ,
զի՞նչ անխնայ զիւր ժանիս սրեալ՝ ձոխ
է 'ի գնացս .
սաս անդ դանդաչեմք նքողեալք նօթիս
յանցս ճանապարհաց ,
զի սպառեցաւ ցորեանն՝ զոր ածաք , չի՛ք
մեզ յոյս կենաց .
Այս քեզ ո՛չ իցէ ցաւ սաստկականին՝
ո՞ հայր իմ գթած ,
մինչ մեզ իշխեսցէ երագաթռուիչ մա-
հըն վաղահաս .
գիտեմ , աղէբեկ քան զայս վշտագին
քեզ դաժան արկած ,
սակայն անպիտան յայնժամ սրտակեզ՝
գցին ողբ և լաց .

Որպէս խոցիցի կարեվէր ՚ի կեղ ումն
նետահար ,
և անփոյթ լիցի բուժել զխոցուածն
այն լայնապատառ .
անդ թարախածոր շարաւ իւր վերաց
հոսեալ զառ ՚ի վայր ,
տագնապէ , լլկէ զնա մշտատանջ մինչև
ոգեսպառ ։
Ո՛չ օգնեն յայնժամ ոչ փոյթք բժըշ-
կաց , ոչ դեղ օգտակար ,
իւր ողբք բարձրագանչ յերկինս ամ-
բառնան հեծութեանց բարբառ .
զնոյն օրինակ՝ և տուն հրդեհի ՚ի բոց
հրավառ ,
մինչ անփոյթ զկայծն անխիցեմք , յերկ-
րի դեռադիւ անկեալ .
Եւ կամ նաւավար որք ՚ի խելս նաւու
ճչիցէ ՚ի լաց ,
յորժամ ամպայոյզ փոթորիկք ՚ի ծով
մրրկին երրադարձ .
նախ քան զնաւարկելն երևոյթք գոյին
այսմիկ նշանաց ,
յայերըս ծփէր ՚ի հեռուստ շիկնեալ
ամպըք սևադեղեաց .
Ի.ԺԼ նա անզգոյշ վարէ ճանապարհ ա-
մեհի ալեաց ,
հեծեծէ , այն ինչ ոգորին ահեղ մրրիկ
փոթորկաց ,

ապաշաւէ նմ՛ , սակայն վայրապար , զի
անձն արկած՝
ծովամոյն առնէ զնա ընդ անդունդս ա-
հեղ փապարաց :

Այսպէս քեզ անձն լցի սրտառուչ
թառանչ հեծութեանց ,
մինչ տեսանիցես զմեզ 'ի մահուն նիզա-
կին հարուած .
մինչև վշտամբեր լցէ ժամանեալ քեզ
սոյն այս արկած ,
զուարճըս առնուլ փութա՛ արդ փու-
թա՛ , ժիր կալեալ սրտանց :

Արժան է ընտրել քեզ զփոքրագոյն
մեծագոյն չարեաց ,
զայս քաջիկ քննէ խոհական խորհուրդ-
քոյինըդ մտաց :
Թէպէտ և այս քեզ՝ գիտեմ, դառըն է
և կիրք ինչ վշտաց ,
սակայն վշտատանջ քան զայս քեզ կրել
կայ մնայ արկած :

Այլ որովհետև երդուաւ գերափառ
մեզ վեհն իշխանաց ,
հազար քոռ ցորեան ձօնել պարգևել
յիւրոց համբարաց .
արժան մեզ լինել՝ ոչ դաւադըրուժ , և
մի՛ դաշնազանց ,
զբենիամին մնայ մեզ տանել ընդ մերոց
խոստմանց : ||

Մ՚տայայդ բանիցն ուշ ՚ի կուրծս ա-
նէր՝ այրըն խոհական ,
և զուարթադէմ առ որդեակն իւր՝ զայս
տայր պատասխան .
* Ոսկէն սիրատենչ՝ որդեակն իմ քա-
ջուս զգօն գիտնական ,
լուր , զոր քեզ ասէ՝ իմ սիրապատար
հայրագութ խնամ.
Թէպէտ ինձ յղել զիմ բենիամին , է
տագնապ դաժան ,
զի գուցէ՞ հասցէ փափկիկն իմ մանկան՝
մահ ապաժաման .
սակայն զանց առնել դարձեալ ոչ կա-
րեմ՝ որդեակ սիրական ,
առաքել զնա ընդ ձեզ յեգիպտոս՝ թուի
ինձ արժան :
Պ՚անզի Շմաւոնն առ ձեզ սպասէ յա-
նարև զընդան ,
և անդ համբարեալ՝ վաճառի ահա
բազմաւատ ցորեան .
առաքեմ զձեզ ակամայ կամօք ՚ի գաւա-
ռըն այն ,
սակայն ձեպեցէք գալ աստ փութա-
պէս , և ոչ անագան :
Օրհնի և կնդրուկ , ռետին և զմեղր ,
կոգի պատուական ,
զոր ունիմք պահեստ յառաջ քան զսոյն՝
եղեալ ՚ի մարան .

*տարէ՛ք պատարագս ինծս ողջունիւ՝ առ-*
*այն վէհ իշխան ,*
*զի քաղցրիկ աչաց իւր Թարթեցին ձեզ՝*
*բիւրք հեզ աղուական ։*
*Աստուած՝ զոր պաշտեմս , որ 'ի յՈղիմ-*
*պոս յաստղափայլ խորան ,*
*հորդեսցէ՛ զձեր ճանապարհ 'ի չու ան-*
*փորձ անսասան .*
*զի ողջամբ հասջի՛ք , և ողջամբ դարձ-*
*ջի՛ք՝ դուք աստ ողջանդամ ,*
*ես բազկատարած պաղատիմ զնա՝ եր-*
*գովք օրհնաձայն ։*
*Զի այն ինչ արկածք ձեզ պատահիցեն*
*դժնդակ մահուան ,*
*կենդանւոյն իջցէ՛ անձն իմ 'ի դըժոխս՝*
*յալիս ծերութեան .* ||
*ասաց , և համբոյր ետ ուրոյն ուրոյն առ-*
*ամենեսեան ,*
*զծնօտ նոցին անդ Թրմեալ Թանայր՝*
*արտօսր և կական ,*

# ՆԱԽԱԴՐՈԹԻՒՆ

Գնան Յակոբեանքն վերստին առ Յովսէփ, ՚ի սեղան բազմի ընդ նոսա. և զսկիհն ՚ի պարկ կրտսերոյն դնել տայ։

Արձակէ, և դարձեալ յետս դարձուցանէ իբրև զգողս։

Աղերսանք Ռուբենի առ նա։

Յայտնել զանձն իւր առ նոսա։

Լսելի լինի ՚ի տան արքային՝ եթէ եղբարք նորա են, առաքեալ Տականայեան դայ յարքայէ առ նոսա, ՚ի հարցանել զանցսն Յովսեփայ։

Յուդայ սկսանի պատմել կարգաւ մի առ մի. զսերունդ իւրեանց յԱբրահամէ սկսեալ. թէ զիարդ եթող նա զբնիկ երկիր իւր, և պանդըխտեցաւ ՚ի Քանան։

Զանցսն Իսահակայ։ Զեսաւայ քէն ընդ Յակոբայ հօր իւրեանց։ Գնալ Յակոբայ առ Լաբան՝ և որ ինչ եղեն անդ։

Դարձ նորա ՚ի տուն հօրն։ Զծնունդ որդւոյն։ Զմահ Ռաքելի մօր Յովսեփայ։

Զերազ նորա, և զգերելն յԵգիպտոս յախակալութենէ իւրեանց։

# ՎԱՃԱՌՈՒՄՆ
# ՅՈՎՍԷՓԱՅ

## ԵՐԳ · Գ

—

Համբոյր գրկախառն՝ ողջ արտասուա-
լից սիրատարփ սրտի՝
խանդակաթ արար զիրտ պատանւոյն՝
որ կայր մեկուսի.
Յորժամ իւր եղբարք դառնապէս լային
յողջ կսկծելի,
սկսաւ և ինքն արտասուաց հեղուլ հո-
սանս ուղխալի.
Յայնժամ Յակոբայ սիրտ բաղմատխուր
դարձեալ ամբոխի,
զպարանոցաւն անկեալ յողջ շարժի
Բենիամենի.
Այսպէս գիրկ ընդ խառն սոքա մնային
մինչև ցըժամ մի
յանմռունչ բարբառ՝ յառու արտասա-
ուաց աղեկէզ սրտի.

Հազիւ հազ ապա մեկնեալ 'ի միմեանց՝
անկանին յուղի ,
գան , իջավանեն 'ի գիւղ մօտակայ դաշ-
տին Քեբրոնի .
անդ ասպնջական եղեն յօթեւանս տանն
Իսմայէլի ,
որ էր ազգակից , և արենակից ձեռ իւր-
եանց սեռի .
Ընդ արշալուսոյն՝ 'ի բանալ դրանց ըն
ոսկեծղի ,
միազոյգ խաղան՝ 'ի գրաստ իւրեանց
հեծնլով անտի .
առքա՝ շրջեցին իբրև աւուրս չորս յա-
նապատ տեղի ,
'ի հնգերորդումն հասին յԵգիպտոս քա-
ղաք պանծալի .
Ուղղէն զգնացս իւրեանց՝ 'ի պալատ
չքնաղ նորատի ,
յոր վէհն իշխանաց՝ Յովսէփ քաջազուն
նստէր գեր յարգի .
և էր նա յայնժամ՝ յիւր ոսկենկար
բազմեալ սենեկի ,
դէտակըն կալեալ՝ հայէր զուղևորս
առ ճանապարհի .
Տեսանէ գրաստս , և նոցին յուսոց վէ-
րայ մանկտի ,
կերպարանք նոցա՝ ըստ դիմաց իւրոց
նշմարց սիրելի .

մինչ յուշիկ յուշիկ մատչէին նորա հուպ
իւր պալատի ,
զԲենիամին ծանեաւ զիւր եղբայր ման-
կիկ նազելի .
Ընդ արտասուքն իւր թորէին յաչաց՝
որպէս գետ վտակի ,
հառաչէր , հեծէր , և հեղձամղձուկ կայր
՚ի տագնապի .
և նոցա եկեալ՝ մտեալ ընդ այս մեծ ա-
պարանս վեհի ,
կացին Յովսեփայ՝ ահեղ իշխանին խըն-
դիւ առաջի :
Ո՛ւր իւր ոսկեկուռ էր աթոռ արկեալ
՚ի բարձու բեմի ,
յորում նա իշխէր յոսկի գաւազան՝
ամենայն երկրի .
մինչ եկին սոքա՝ ՚ի գուճըս անկեալ կա-
ցին առաջի ,
հրամայէ ածել զՇմաւոնն և անդ , կա-
պանաց բանտի .
Զոր երիցս անգամ խոնարհեալ Ռու-
բէն՝ զայս ինչ բարբառի ,
այն ինչ անդ ՚ի հարց զաւիթ յապաղ-
մանցն իւրոց՝ նա մատչի .
* ո՞ տէր վեհափառ իշխան քաջազուն՝
երկրորդդ արքայի ,
տացէ քեզ Աստուած կեանս երկայնա-
ւուրս ՚ի մէջ աշխարհի :

Նա՛ քաջաբաստիկ և յերջանկաւէտ յա-
ջողուածս բարի
անփորձ անսասան պահեսցէ՛ զքեզ՝ ա-
րարիչն երկնի .
մի՛ մրրկայոյզ զքեզ խռովեսցէ՝ ծուփք
դժխեմ բաղդի ,
միշտ խաղաղութիւն զաթոռով քոյին
գերագահ նըստցի ։
Բաղցրագութ խնամ՝ ՚ի քոյդ փայլե-
սցի սիրտ հեզահոգի ,
զի մեր ներեսցես յապաղման՝ ո՞ տէր
իշխանդ անուանի .
որպէս դաշնադիր պայման պահանջէր
մերս անսըտելի ,
ածաք զփոքրիկ եղբայր մեր՝ ահա՛ վե-
հիդ առաջի ։
Յուսամք չերևիլ քեզ դաշնադրժող՝
մեր աննենգ սրտի ,
իսկ մեր ամսօրեայ յապաղման ՚ի պէտս՝
աստէն պատմեսցի .
Թէ զինչ դէպք դիպան մեզ աղի-
ողորմ՝ ՚ի մերում երկրի ,
և զիա՞րդ զնա ածաք վեհութեանդ զար-
դիս առաջի ։
Օ՜ այսոսիկ ահա՛ թէ ներեն քո մտաք ,
և գթոտ հոգի ,
պատմեմք քեզ կարգաւ անդանդաղ,
անխոնջ , և մի ըստ առ մի .

ներքեւ, և որչափ երկայնապատում կարգ-
ծաւալս ձգի ,
գիտեմ, զի ներքեւ, երեւի և քեզ ծառս
այս հաճելի ։
Մինչ դաշտս կրեալ հրամանաւդ ա-
հեղ՝ չոքոյ ՚ի Քանան ,
ըղձամէտ զբօսանուցս ՚ի վայր իջուցաք ,
և զբեռն ամենայն .
երթամք ՚ի փոքրիկ տաղաւար և հիւղ՝
մերոյ բնակարան ,
ծածահար բերկրին եղբարք մեր , և
քորք , և մանկտեայք համայն ։
Բանամք մեք յայնժամ զամէն քուրձս
մեր , և նոքա խայտան ,
սակայն տրտմալից վերստին յուղիլ մեզ
կրիւք՝ գիտան .
այն ինչ ծըրարեալ գտանեմք ՚ի քուրձս
ըղմեր դահեկան ,
զոր վեհիդ՝ մինչդեռ , հատուցաք , առաք
զոգեպահ ցորեան .
Իսկ հայր մեր՝ խրձիթ յիւր հիւղոյն
նընջէր զքուն թանձրութեան ,
յերգոց մանկըտւոյ զարթնու , և առ
մեզ ճեպէ բերկրական .
այլ իւր խնդութիւնն ՚ի սուգ յեղյե-
ղու , և ՚ի կոծ կական ,
մինչ զմեզ այսպէս տեսանէ ՚ի լաց , և
յողը թախծական ։

Նուազս խուր շըրջեալ՝ աստ և անդ հայի
յոգլի տրտմութեան ,
հարցանէ զմեզ խստիւ զՇմաւոնն որ-
դլին սիրական ․
կրկին երեքկին հարցանէ զմեզ՝ այլ մեք
լռեալ միայն ,
և Յուդաս նմա՝ ըսկըսաւ ապա պատմել
զամենայն ։
Օ՜ կարծիս մեհիդ զմէնջ ըստեսել ,
դընել 'ի զընտան ,
և վըշտաչարչար զտագնապ մեր անդ , և
ըղլոց կական ․
զմանրաքննին զհարց , և զփորձ մեհա-
փառութեան ,
և մեր զըղըրդց ընդարձակաձառ զանցըն
ամենայն ։
Օ՜ ընդդիմաքննին անաւօտ զձեր զառ-
մեզ պատասխան ,
և զերդմընակուռ զայս մեր ընդ միմեանս
ուխտապահ պայման ․
զԲենիամին ածել , և ողջամբ դարձ մեր
'ի Քանան ,
զՇըմաւոնին պատանդել 'ի մեր դաշանց
ակատան ։
Օ՜ չու սրարշաւ , զդարձուստ յերիս ա-
ւուրս 'ի Քանան ,
զգիւտ մեր 'ի քուրձ արծաթոյ ծըրար
խառնեալ 'ի ցորեան ,

ասացեալ Յուդաս՝ մնայ անդ առ իս
յանկարծ լռելեայն ,
և ես զայս ուղերձ առ նա վերըստին
կրկնեմ պատասխան .
* Ո՛հ ծուփք խորհրդոց՝ զքոյդ յու-
զեցեն միտս 'ի յերկուան ,
ուշադիր լինել պաղատիմ առ քեզ ,
հայր ազնուական .
որդ՝ զոր քեզ Յուդաս զարկած մեր
անցից եղև պատմութեան ,
մի՛ կեղծուպատիր Թուեսցի սուտակ ,
անաւօտ և բան ։
Ո՛րդ արև հայր իմ՝ մինչդեռ յեգիպ-
տոս չոգաք միաբան ,
որպէս զլրտես բանադրեաց զմեզ
քաղաքին իշխան .
և 'ի հարց մատչել նորա՝ զսերունդ ազ-
գիս քաջազնեայն ,
յիմ երկարավէպ ճառել , նա կրրէ դա-
շինս և պայման ։
Նուզղ ըմաւուծն անդէն պատանւէ՝ ար-
կեալ 'ի զընդան ,
զԲենիամին շուտ ընդ փոյթ տանել՝ առ-
նէ մեզ հրաման .
իմ երկարավէպ ճառ աղեկտուր մինչ
եհաս յայս բան ,
Նորա ողբ և լաց բարձրացաւ՝ մինչև
յաստղազարդ խորան ։

Խզէր զմօրուացն, և ըղձէր գլխոյն սպի-
տակափառ ,
և զոսկեձամուկ քնքչէր զձորձս իւր
պատառ պատառ .
կոծէր աղէխարշ , իւրոց արտասուաց
գետ դըրդեալ գնայր ,
մինչև կիսամեռ անկանիլ նմա՝ անդ դի-
աթաւալ։
Սղև տեսարան տխրիլ լօղաց՝ 'ի լաց
մանկաբար ,
մրմռքիլ 'ի սիրտ՝ և որոց իցէն բացատ
տարաշխարհ .
զի ամենեքեանս անդ մեք կոծեաք մեծ
ինչ ձիչ բարձեալ,
արտասուքըն մեր՝ էին կերակուր մեզ՝
հաց սննդարար,
Երախայք մատաղ դիեցիկք 'ի դիրկ՝
զլստեամբք մօրցն անկեալ,
և անդ դեռախօս զուարթածաղիկ ման-
կիկըք կայտառ ,
այն ինչ սրտառուչ լային , ո՞վ կարէր
ողբոցըն տոկալ,
և հող 'ի գըլուխ քրձազգեաց եղեալ՝ ոչ
ուժգին ողբալ։
Ընդ քաղցրաժպիտ այտք դըստերց որի-
րին՝ Թօշնեալ Թարշամեալ,
ոսկեվարս իւրեանց հոպոպէք հերաց՝
ցիր և ցան սփռեալ.

առ տակաւ տակաւ մինչ այս ըսփոփէր
տեսարան թշուառ ,
Ես կրկին մատչել առ հայրն իմ խնդ-
րեմ, այլ չէր ինչ հնար ։
՚Ի՛ յաւուր միում՝ մինչդեռ վերծա-
նէր սոփէր ոսկետառ ,
երթամ և նըստիմ առ ընթեր նորա ՚ի
դէմըս խոնարհ ․
* սակաւիկ ինչ՝ հայր , ասեմ ես ցնա ,
( սակաւ ինչ նըստեալ ) ,
պատմեա՛ ինձ մաղթեմ, զի՞նչ ճառէ մա-
տեանս այս ոսկենըկար ։ ||
Նորա ժպտագին զիւր բացեալ բերան՝
ետ այսպէս բարբառ ․
* որդեակ՝ մատենիս՝ զոր ճառէ զըրոյցն
է մեզ լաւ ողբալ ․
և մի՛ զծաղու գալ գեղածպիտ ընաւ ՚ի
յաշխարհ ,
և մի՛ զարևուն տեսանել զլոյս զճաճան-
չաւոր ։
Այս օրինակաւ խելահաս լիցի քոյին
միտ ակար ,
եթէ զի՞ առ մեզ՝ մընայ յաշխարհիս մըշ-
տասուգ ողբալ ․
ընդէ՞ր և զարև՝ յատեաց հրաժարեալ ,
անվայել երթալ ,
կամ յարխնորոգ յարգանդէ վիժել՝
զի՞ լցէ մեզ լաւ ։

Թէ դու լինէիր՝ տիեզերասաստ արքայ
մեծագանձ ,
Թագաւորուն որդւք խայտային քըյին՝ յա-
հեղ շուք փառաց .
Ջոկիր բազմազօր մարտկաց անվըկանդ-
անյաղթ զինազգեաց՝
սիգաձեմ 'ի քոյդ խրոխտային ահեղ՝
սահման քաղաքաց ,
Ընդդիմամարտիկ տիտանեան հըսկայք
պատերազմողաց՝
անկեալ 'նդ առաթուր պարտէին սոցին
'ի հզօր բազկաց .
դու սեգ իշխէիր՝ և քաջախըրոխտ ար-
քայից բազմաց ,
դողային 'ի քէն սարսուռ դիւացին
բռնաւորք զօրաց ,
Օ, քեզ մի միայն ոխերիմ սատան դա-
ւիչ մարդախանձ՝
Թակարթապատիր վարանեալ այսօր գե-
րեր յեղակարծ .
զիա՞րդ սրտակեզ հանէիր թառանչ ո-
ղորմ հեծութեանց ,
ո՞րպէս հող 'ի գլուխ ձըչէիր 'ի լաց , և
յողբ սգազգաց ,
Այս անպարտելի քոյդ արքայութիւն
յաղթ յաղթ մեծապանծ
մատնեալ յանաւագ ձեռըն ապիկար
դաժան թշնամեաց ,

և մայրաքաղաքք , և աւանք , և գիւղք
քոյին մեծապանծ
ողոպտեալ անշէն՝ ամայի որպէս աւե-
րակք հին տանց ։
Ո՛րդ դու՝ որ չորից իշխէիր համբաւուն
աշխարհիս ծագաց ,
միթէ՞ զխուրամն ոչինչ երթայիր՝ սու-
սերբ քով սրած .
մինչ զայս դիտէին քոյդ քընքուշ աչք-
կունք թաւահեր բբաց ,
ընդ ոտիւք անկեալ յերաշխեպ զքեզ՝ ՚ի
կըսկծագին լաց ։
Ո՛չինչ և նուազ քան զօրինակս եղև
մեզ՝ դառն դըժանաց ,
բազմագունդ գերիլ՝ յաջոյ թըշնամ-
ւոյն ապիկար ձեռաց .
արդ անմահ ստեղծ զմեզ ՚ի սկզբան՝ ա-
րարիչն Աստուած ,
յետոյ զմահու՝ արբաք դառնակուռ
բաժակ դեղամահ ։
Օ՛ մարդն առաջին՝ յանէից ՚ի գոյ մինչ-
դեռ նա՛ էած ,
եդ ՚ի մի դարաստա՛ն ընտ՝ անկախիտ պըճ-
նեալ ծաղկազգեաց .
անդ ոչինչ երբէք կըրելոց էաք տագնապ
խաչազգեաց ,
ոչ մահաղեկոյց այսչափ ոգետանջ զախտ
հիւանդութեանց ,

Ո՛չ յաղթել զմեզ կարէր ինչ արդեօք՝
աշխարհիս արկած ,
ոչ գայր մեզ լինել ծովամոյն , և կամ
կիզուլ հրոյրեաց ·
այլ մե՛զ էր անշուշտ լինել անկասկած՝
հանդոյն հրեշտակաց ,
մանուկ գեղեցկայտ յարաժամ մնալ՝ 'ի
տիս դեռահաս ։
Եկեալ յայն դարաստա՝ ապիկար նէսար
մերոյ թշնամեաց ,
օձակերպ՝ մարդոյն մաշի երկրաքարշ
սողոսկադընաց ·
խարդախեալ զնա՝ իւր ամենախաբ բան-
իւք պատրանաց ,
գերեաց գունդագունդ , և զրկեաց զմեզ
յայսչափ պարգևաց ։
Տե՛ս , այնուհետև որչափ մեզ աղէտ ե-
հաս խուռնընթաց ,
և դիւասարսուռ ախտիւ ջերմնել մահ
յանկարծահաս ·
մեզ ախողորմ՝ զայս եղերերգէ մատե-
նիս գրուած ,
ողբայ գերարտօսր զկորուստ անմահ մե-
րոց վիճակաց ։ ||
Լացեալ նորա՝ թառանչ թախծալից
հանեալ հառաչէր ,
և ես ընդ նմա՝ յայնժամ սկսայ այս-
պէս ասասել ·

* Չէ՛ ինչ քեզ արժան՝ գեր արտօսրալից
  ապաքէն կոծել,
զոր հասոյց արդէն քեզ տագնապ սգոյս՝
  արկած վշտամբեր։
Բանզի ոչ ողբայ այր մի ընչաշատ և
  ըստուարաձեռն,
մինչ սակաւաղէտ արկած ինչ վշտաց՝
  զնա տագնապէր.
այն՝ որ քաջամոյժ համբերեալ իցէ կրից
  դըժոխըմբեր,
համարի զարկած՝ որպէս գիշերային մի-
  գապատ ստուեր։
Եւ այս ոչ այնչափ քեզ աղէտալի՝ կիրք
  ինչ վշտամբեր,
որչափ բազմաղէտ Ճաւիդ ինձ ազդեն՝
  ոգեշարժ տառեր.
ընդէ՞ր լաս ապա յողբ կըսկըծագին, մի՛
  ինչ մորմոքեր,
զի ոչ և մահու էարբ զըրաժանելն որդիդ
  բազմասէր։
Դեռ կենդանի է, կենդանւոյն զնա
  ունիս տեսանել,
Թէ պարգևեսցես զբնախամին առ այլն
  այն տանել. ||
մինչ ես զայս ասեմ, և նա վերստին
  ըսկըսաւ կոծել,
և բազմահառաչ՝ այսպէս զծնունդն իւր
  անիծանէր։

* Կորիցե՛ն փայրկեանք՝ թշուառացելոյս
ծննդեան 'ի յաշխարհ ,
որ 'ի խաւարչտին ընկլաւ հոսէն գիշե-
րային մռայլ .
Մի՛ ինչ ծագեսցի աստղն 'ի յերկինս՝ այն
ճաճանչափայլ ,
որոյ ոսկետուտ փայլիւն նշողէր լուսով
վառ 'ի վառ .
Մի՛ Արուսեկին ընդ այերս երկնից ժը-
պիտ գեղափայլ
ընդ մութ ծածկելոյս ածցի՛ յերեւան
յամպըս լուսափառ .
Եւ մի՛ քրքմանոյշ ծաղկանց փունջ առ
փունջ՝ ցիր եւ ցան սփռեալ ,
մորմանդ գեղեցիկ ինձ ծաղկապըսակ
թուեսցի աշխարհ .
Ո՜ յինէ բարդեցան մահաբեր ահա՝ ար-
կածք չարաչար ,
յայլս ծերութեան՝ ինձ դըժոխատանջ
խոշտանգնիլ խայթու .
ոչ կարեմ ես ոչ՝ այսչափ դառնագին
վըշտացըս տոկալ ,
ինձ ըսպառնագին 'ի զայրուց ցասնու՝
մահ դաժանափառ .
Ո՜ գեղածիծաղ զորդեակն իմ Յովսէփ՝
եմ եմ կորուսեալ ,
եւ զըմուոյն աչաց տեսանեմ զմահուամ-
հարեալ .

զԲենիամին յայս արկած ձօնել կամիք
դուք յօժար ,
ա՛յ անագորուն անխիղճ որդիքդ իմ ան-
գութ եւ թշուառ ։ ||
Ո՛չէր , եւ աչա՛ հեղցր զարտասուաց գետ
յոգնածորան ,
մինչեւ մատենին քարտեզաց թըրմիլ՝ ու-
կետառ նորայն ·
այլեւ իւր ուրիցն անկեալ արտասուօք՝
պաղատիմ յայնժամ ,
եւ կրկին աչա՛ շրթունք իմ նըման՝ զայս
բարբառ եհան ։
* Մ՛ի կոծեր հա՛յր իմ՝ դու աղեկտուր ,
եւ բառնար կական ,
զի չէ՛ Շմաւոն՝ ՚ի մահուն մատնեալ
տէգ սըրաբերան ·
զԲենիամին արդ տո՛ւր մեզ տանել՝ առ
ոգոստ իշխան ,
բառնալ քոու հաղար՝ ըստ խոստման իւ-
րում , ոգեպահ ցորեան ։
Ո՛ղէ՞ , զայս արկած խոկա՛ խորախոհ՝
զսովըյն դաժան ,
որ մեզ ՚ի զայլուց ցասնու օր քան զօր՝
յայս սաերջ սահման ·
քեզ լաւ ինչ իցէ՞՝ սուգ ողորմագին
մանկըրուցդ կական ,
կամ զամենեսին տեսանել զմեզ՝ ՚ի ժանտ
աշ մահուան ։ ||

Մ՛ինչ մեք անդ այսպէս խօսէաք միմ-
եանց միայն ընդ միայն ,
զան հրաւիրեն զմեզ՝ չորաբեկ հացին
՚ի սեղան .
քանզի երեկոյն մթանայր յաղօտ գի-
շեր տխրական ,
սատեղաց նշոյլ շողշողէր յերկնից կա-
պուտակ խորան ։
Մ՛ինչդեռ Արաւօտ եբաց զդրունս
անդ Արեգական ,
կոչէ զիս հայրն իմ՝ և ես վաղվաղակ
փութամ և երթամ .
տեսանեմ զնա՝ յիւրում փետրալից նըս-
տեալ անկողին ,
այսպէս սկսաւ ասել ինձ՝ մինչդեռ յիւր
ընձայրս գնամ.
* Որդեակն իմ Ռուբէն՝ Աստուծոյն
իմոյ աջ անյաղթ անվան
զքեզ պարգեւեցի ՚ի պաշտպան քոյին յար-
կածից դաժան .
արդ զիմ քեզ յանձնեմ՝ զԲենիամին
մանկիկ սիրական ,
ահա՛ միաբան դընալ յԵգիպտոս՝ տամ
ձեզ հրաման ։
Եւ զպատարագս ձօնեսջիք վեհին՝ ուղ-
ջոյն սիրական ,
և զմին գործեսջիք դառնալ ինձ անտի
անդրէն միւսանգամ.

փութասջի՛ք կրկնեմ՝ փութասջի՛ք գտու
ինձ , և մի՛ անագան ,
զի մի՛ զմահու բաժակ ես արբից յայս
խոր ծերութեան ։ ||
Բայց , գերարտօսր 'ի գըրկաս հեծնեալ
մեք ամենեքեան
եկաք աւադիկ առաջի վեհիդ՝ ո՞ գթած
իշխան .
արդ աղերսարկու պաղատիմք առ քեզ
մեք աստ միաբան ,
ներո՛ղ գըթալիր , ներեա՛ ընդ երկար մե-
րըս յամեցման ։ ||
Զայս ասաց Ռուբէն , մըտանէ Յովսէփ
յիւր սենեակ ներքին ,
անդ լռելի լացեալ՝ գետըս արտասուաց
հեղու դառնագին .
հրամայէ ապա կոչել հացալից՝ սեղան
մեծագին ,
հրաւիրէ զեղբարսն՝ ուտել զընթըրիսն՝
անդ 'ի միասին ։
Մ՝ինչդեռ երեկոյն աղօտանուաղ իշ-
խէր տխրագին ,
լապտերց և ջահուց ճաճանչ ոսկեթոյր՝
երփներանգ գունին .
բազմի 'ի սեղան ընդ եղբարսըն իւր՝ սա՛
անդ զուարթագին ,
քաղցրաղի հնչէն կիթառք և քընարք՝
ընդ ակնարկ սորին ,

Ընդ ընկլմանն զայս երկնափայլէջ ծաւալ
խնդագին ,
զոր սահմանահոս հասոյց ջրհեղեղն ըն-
վիշտ դառնագին .
զհամայնաջինջ սաստիկ կենդանեաց 'ի
վերայ երկրին ,
զ'ի վերայ ջուրց զլաստ ապրացու Նոյ-
եան տապանին :
Եւ զորս 'ի նորա՝ զոյգ զոյգ կենդանիք
ամենայն սեռին ,
և դարձեալ նոցին զաճումն 'ի յերկրի՝
յետ ջրհեղեղին .
և ըզխառնակումն լեզուացն՝ և սփիւ-
ազգի մարդկային ,
զծըծըմբեալ հրձիգ Սոդոմայ Գոմո-
րայ երկրին .
Եւ ընդ զայս Ռուբէն՝ 'ի լրուէլ նորա՝
պատմէ բերկրագին ,
զոր նախաստեղծիցն Աստուած պար-
գևեաց յանմահ վիճակին .
և զոր 'ի դրախտին այն ծաղկազուարճ
կեանըս ունէին ,
ըզնենգաւոր զվիշտ և զդժոխատանջ զկի-
րըս նոցին .
Զմահ Աբելի յանօրէն ձեռաց իւր
հարազատին ,
զկոծ Ադամայ 'ի նոյն դաշտավայր՝ ընդ-
իւր ամուսնին ,

և զերկնաթռուիչ զելըս Ենովքայ՝ թալ-
ձուն եթերին ,
ընդ անմահ պարու խառնիլ իւր մարմ-
նով՝ հրեշտակաց երկնին .
Օ սոցին նմանս՝ երգք փափկին շըր-
թանց սոցին երգէին ,
ուտէն և ըմպէն՝ այսպէս խօսելով միմ-
եանց սէրափին .
դարձեալ՝ յակնարկել վէհին Յովսեփայ
մեծի իշխանին ,
երգէն նուագերգք եօթնաղի կիթառ-
անդ 'ի միասին .
Ապա ոսկեթել իւրաքանչիւրոց եպեակք
արկանին ,
մըտանէն սոքա յանուշիկ 'ի քուն թան-
ձըր խորխորին .
քանզի քընաբեր զըրօք նոցա նինջ
արկանէին
օշարակք քաղցրին՝ զոր գոհարավառ-
ըսկեաւ ըմպէին .
Իսկ Յովսէփ յիւրում սենեկի նըստեալ
միայն առանձին ,
անդ գաղտ ընդ գաղտի կոչէ զծառայն
իւր հաւատարիմ .
պատուիրէ նմա ցորենիւ լընուլ զքուր-
ձըս նոցին ,
ծըրարեալ ծածկել զարծաթսըն իւր-
եանց՝ զորըս հատուցին .

Նո՛ւ կկասերայն դնել զխուր ըսկիւ՞ քուրձ
'ի ցորենին ,
մինչև ցառաւօտ հանդերձել , աւէ ,
զայս ամենեսին .
զայս պատուէր տուեալ՝ նիրհէ զանու-
շիկ քուն 'ի յանկողին ,
և ծառայն արար , որպէս հրամայեաց ,
'ի մութ գիշերին .
Մ՚ինչ քրքմահանդերձ փեթոս վարդա-
մատն յատաղափայլ երկին
ոսկեղօծ կառօք արշաւեալ փայլէր յուր
հորիզոնին ,
յառնէն յանկողնոյ , գան յաթուանխատ
սենեակ իշխանին ,
կեա սկրապատար ողջունի զնա՝ երթալ
պալատին ,
Նու Յովսէփ աջան հրամանն ծառայիցն
առնէ խնդալին ,
որպէս զնըժոյգ՝ գրաստուց սղաղշու-
հանդերձել սոցին .
'ի նախաճաշիկ հրաւիրէ դարձեալ զայս
հիւր շորէսին ,
կեա սակաւ պահու եկեալ ծառայիցն՝
տինարկել լինին ,
Թ՚պխո գեղեցիկ 'ի գեմըս սոցա , ան-
տխաւոր բերկրին ,
և շըրթանց խուռեանց մրմունջ օրհնաւաք
ամէաւնոյ յերկին .

անդրէն Յովսեփայ՝ երկիր պագելով կըր-
կին և կրկին ,
՚ի յԵգիպտոսէ անջատելին , գնան ՚ի սիրտ
բերկրագին ։
՚Նման նաւաղի պրծելոյն յալեաց սաս-
տիկ մըրըկին ,
խայտան ցնծագեաց ըղձանապարհայն ՚ի
մէջ անտառին ․
յանկարծ մեծագանչ ձայն լուան ա-
հեղ , դողան , սարսափին ,
տեսանեն շողալ սուսերաց , փայլուն և
ըզնիզակին ։
Հսկայք յաղթանդամք էին՝ որ խուրեանց
ըղկընի գայլին ,
ահաբեկ ՚ի սիրտ կասեցան յընթացս՝ ՚ի
գրաստուց իջին ․
Իսկ Նոյա հասեալ , ըզնիզակ խուրեանց
յերկիր մխեցին ,
շաչիւնք , շառաչիւնք դըղրդեն ըզան-
տառն , բոմբիւնք արձակին ։
Ռընգունքըն Նոյա՝ հանգոյն հընոցի հուր
զգայուէին ,
կերպարանք դիմաց՝ ահեղահըրաշ հրա-
շէկ շիկնէին ․
աչք ժանտահայեաց՝ որպէս Թունա-
Թափ իժից՝ Թուէին ,
այսպէս որոտան՝ որպէս ամպք յեթեր
շանթաձիգ լինին ։

ժդ

* Զի՞մ ձեպէք փութայք՝ ով չարաշշուկ
լրտեսք խաւարարք ,
Ձեպէ՞ք զԵգիպտոս մատնել արքային՝
քան զձեզ վատթար ·
ով երախտամոռ և չարախնամ մարդիկ
արհամարհ ,
զիա՞րդ ժպրհեցայք դրժել երախտեաց
մեծին վեհափառ :
Տե՛ս նա՝ յաշխարհս սովատանջ ընկի շատ
ազգաց գումար ,
բազումք անսուաղ ՚ի կենաց իւրեանց
զրաւելին ոգեսպառ ·
զնոյն մահաբեր անշուշտ զբաժակն և
ձեր էր արբեալ ,
եթէ իշխան մեր ձեզ հայրախնամ գութ
ոչ էր արկեալ :
Մ.ալ նա՛ մեծապարգ յիւր սեղանն զձեզ
իբր արժանաւորս ,
և յորեան բաղում խոստացաւ տալ ձեզ
իբրև քոյ հաղար ·
քանզի հաւատաց զձեզ պայազատ սե-
րունդ քաջափառ ,
այլ դուք ապիրատ աւաղակ և գող ,
ձեռ վատահամբաւ :
Աներկապարանոց ահա՛ գործքըն ձեր
զձեզ յայտնեցին ,
և ընդդէմ բարուց ժանտախոհ մտաց ՚ի
ձեզ լինքնածին ·

ա՞յս էր ձեզ փոխան բազմաց երախտեաց
մեծի իշխանին ,
գողունի առեալ՝ խուսել գաղթական ,
զըսկիհըն նորին :

Օ՜ ինչ ինչ ձեզ առնել արդ ահեղա-
սաստ արժան վրէժխնդրին ,
տագնապ յանըմբեր խոշտանգել զձեզ
՚ի զընդան բանդին .
զո՞ր կարծեցիք զիշխան բարեփառ
մեր դիւցազնածին ,
որոյ յամենայն երկիր հռչակլի անուանն
ահագին :

Երկիւղէ նորին ահա ամենայն քա-
ղաքք սասանին ,
վեհագոյնք արանց՝ և փոքունք նմա ա-
հիւ խոնարհին .
զինչ այդ ձեր յանդուգն ապերախտու-
թիւնք կռիւք զայրագին ,
զինչ այդ ձեր ոճիր , և աններելի յան-
ցանք մոլեգին :

Արդ կարո՞ղ իցէ սփոփել զսիրտ զձեր
վշտագին
այն ինչ ՚ի տանջանս զմահուն արբջիք
բաժակ թիւնալին
բաժակն ոսկեձոյլ՝ զոր գողացայք դուք
զմեր իշխանին ,
որով ըմպեր նա զանոյշ զնեկտարն՝ ՚ի
դեմս խնդագին : ||

Ասացին , և ընդ տղարծի մանկունքս
դողալ սկսան ,
ահ ընդ ահ եռուն 'ի խիրտըս մնաց՝
զայս ինչ պատասխան .
* քաւ , և մի՛ լիցի քոյոց ծառայիցդ՝
առնել մեզ զայդ բան ,
զի չեմք մոռացօղ և երախտամոռ իբրև
այդ խուժան ։
Արդ ոտնեցէք մանրախոյզ՝ զմեր ըղ-
քուրձս ամենայն ,
թէ գտանիցի առ մեզ , եմք գժնեայ մա-
հու պարտական . ||
և ահա՛ նոքա զիւրաքանչիւրոց ըղքուր-
ձըս բացան ,
զսկիհըն ոսկի՝ 'ի պարկի կրտսերոյն ծրար
եալ գտան ։
Նոյնպէս ընդ նմա գտին և զարծաթն ,
և զդահեկանս ,
յիւրաքանչիւրում թաղեալ գաղտա-
մեսս քրձի 'ի ցորեան .
ընդ լալ աղեբեկ սկսան նոքա՝ յարտօսր
և կական ,
մինչ յանզերծ շղթայս կաշկանդին ո-
տիւք անդըր միաբան ։
Այսպէս սրտառուչ կական բառնալով
յողը՝ վերադառնան ,
վերստին վեհի և կան առաջի մեծի Յով-
սեփայն .

նա՛ հուր բոցավառ բորբոքեալ յայն-
ժամ 'ի զայրուց ցասմանն ,
գոչէ զայրագին՝ այսպէս խուր հագագն ,
ծառայքն դողան •
* Ո՛վ երախտամոռ արք և ապերախտք
հէնք աւազակաց ,
ա՞յս շնորհակալու ինձ ձեր մեծարանս
ընդ իմ երախտեաց •
եթէ և ընդ այն ոչ գտայք յինէն՝ անպատ-
կառք դիմաց ,
ոչ երկեայք զայդ գործ՝ ժպրհել ընդ-
առնել վէհիս իշխանաց •
Բարւոք 'ի մտի զայս եդեալ էր իմ , այն
ինչ զիս կասկած
ծփէր ալէկոծ 'ի լռես կարծիս 'ի մտաց
վարանս •
զձեզ 'ի զնդան կոչկոճել իբրև քա-
ռասնից ամաց ,
և անտի յաքսորս վտարանդ ապա առնել
արտալած •
Ո՛ ընդդէմ ապաքէն՝ ո՞չ ձեզ գործե-
ցի սրտիւ իմ գթած ,
պատուեալ քան զարժանն զձեզ կրկ-
նապարգ մեծաշուք փառաց •
իսկ դուք զիմ սկիհ միաբանեցայք գո-
ղանալ յանկարծ ,
ահա՛ շտապաւ աճապարեցայք յարշաւ
փութընթաց ։

Տուք ձեզէն զիրաւն՝ ինձ զինչ է որ-
ժամ 'ստ արդար իրաւանց ,
առնել ձեզ չարիս ձեր գործոց փոխան
երախտամոռաց . ||
ասաց , եւ հրաման ծառայից իւրոց՝
կազմել մեքենայս ,
կտտամանց առնել զնոսա՝ իւրոց առաջի
աչաց .
Նա Ռուբէն առ նա ընդ ոտք անկաւ՝
անդ բազկատարած ,
արտասուքըն իւր հոսէին՝ որպէս գետ
յորդախաղաց .
աչք կողկողագին՝ և ձեռն 'ի բարձունս՝
մնայր նա 'ի հայց ,
հառկլեալ այնպէս ձայնելով առ վեհ
Յովսէփ քաջապանծ .
* Ո՜ գըթած տէր իմ՝ քեզ պարգևես-
ցէ՛ կեանս երկար ԱԾ ,
Ներեա՛ սակաւիկ , Ներեա՛ ծառայիդ խօ
սել արդէն զայս .
'ի սէր անդրանիկ քո դեռափըթիթ ման-
կան դեռահաս ,
զիմ ընկա՛լ աղերս , արա՝ զոր 'ի քէն իմ
է խնդրուած .
Սուր քո խնայեսցէ՛ զԲենիամին՝ կոր-
ծել 'ի կենաց ,
Ծերունւոյն ողջին գութ խնամոցդ
զնա՝ ձօնեսցէ ընծայս ,

մի՛ յանէծս զմեզ, և ըղձքեղ՝ իշխանդ-
արժանիդ փառաց,
յորս աղէկտուր՝ փոխանակեսցէ զմահ
ընդ կենաց։
Խընդութեան տէր իմ՝ խընդութեան 'ի քոց յա-
նուն սիրելեաց,
քում երկարաձիգ արևշատութեան և'ի
յաջողուած։
այլ զմեզ՝ որպէս քոյդ հաճոյ իցեն գը-
թալիր կամաց,
աջ քո զօրագին ածցէ՛ յերաշխեալ դա-
ռըն կտտանաց։
Բայց և մեզ խնդութեան, զի չեմք մեղու-
ցեալ մասամբք յանցանաց,
քումըդ գթութեան մնամք ապաստան
այժըմ և յապայս։
չեմք յուսահատուր չնչել տակաւին զօ-
դըն կենդանեաց,
քանզի սիրտ գթած մեծի իշխանիդ՝
մեզ ներէ դեռ զայս։ ||
Նայց, մխաբան լալ աղէխորով և ար-
տասուախառն,
անդ բենիամին անկաւ կխամեռ՝ զեր-
կիւղ ախտացեալ։
արդ աղխողոմ այն տեսարանիս՝ ոչ
կարէր տոկալ,
մինչ լերդակտուր անդ գալարէին աղէք
խայթահար։

Ո՛չ ժուժեալ յայնժամ սկսաւ Յով-
սէփ՝ կական անդ բառնալ,
զԲենիամին ՚ի գիրկս իւր առեալ՝ համ-
բուրէր և լայր ·
Նա՛ արտասուաթոր գէտըս ՚ի յաչացն
խաղացոյց իսպառ,
և իւրոց եղբարց թառանչ թախծագին
արձակէ բարբառ։
* Սիրով ձեպեցէք, փութացէք առ իմ
համբոյր գրկախառն,
Եմ եմ ես Յովսէփ ձեր կրտսերագոյն՝
խանդակաթ եղբայր ·
ձեր սակաւագին զմըտաւ ածեալ գործ
շահավաճառ,
մի՛ յերկիւղ զոփայք՝ չեմ ես վրէժխնդ-
դիր՝ ՚ի սիրտ ոխակալ։
Մ՚ինչ յուշ ածէի զձեր յիշատակ ըղ-
ձիւ փափաքեալ,
զիս՝ տագնապ սրտի արտօսրահառաչ
տագնապէր եռայր ·
զտիւ և զգիշեր քունըն անուշակ յաչացս
էր հատեալ,
քանզի ՚ի սիրոյ ձեր կարօտակէզ՝ էի
տոչորեալ։
Իսկ արդ՝ ասիցէք, զի՞ էր, զի՞ այդչափ
զմեզ բանտարկեալ,
յանըմբեր տագնապ ածեր յերաշխեպ
կրից վշտաչարչար ·

այլ գիտէք, քանիցս ես աղէկտուր ար-
տօսրը հեղեալ,
լացի ողբացի՝ մինչև տեսողաց անգամ
զարմանալ։
Նաև փարատիմ արքայն քաջ արանց՝
զիմ աղէտ լուեալ,
հարցանէ զառիթն, պատճառեմ նմա՝
ունել լերդացաւ ։
քանի՞ և քանի՞ բժիշկս ինձ յղէր ար-
քայն վեհափառ,
քանի՞ և նոքա ինձ մատուցանէին զդեղ
օգտակար։
Այլ ես որ քան զոր լլկիմ վշտատանջ
դեղնիմ դալկահար,
քանզի 'ի սէր ձեր՝ սիրտն իմ հանապազ
մաշէր փղձկայր ։
ոչ ոք զայս գիտէր, բայց 'ի կընոջէ իմոյս
սիրահար,
դերարտօսրալից պաղատանք նորա զիս
շարժէր 'ի վառ։
զԲենիամին խնդրեմ տեսանել՝ գտեալ
զայս հնար,
'ի գալ ձեր՝ բաղձիմ ընդ ձեզ 'ի սեղան՝
ես խնդապատար ։
որդ զինչ և իցէ, մօտ եկայք առ իս,
ես եմ ձեր եղբայր,
'ի սէր խանդակաթ ձեր սխրատարփս այ-
րիմ հրավառ։ ||

Բայց, և գրկեալ նա զամենեսին՝ եպատ-
կաթողին ,
իւր գետք արտասուաց՝ ուղխօրէն հա-
մամբ յաչաց ծորէին .
այնչափ և այլ՝ 'ի յողբ շարժեցան յե-
ղեր լալագին ,
այն ինչ սկսան անդ ձայնել միմեանց՝
որ ինչ անցք անցին ,
Սկսաւ Ռուբէն պատմել՝ Քանանու-
զանցսն աղէտագին ,
որ յընթացս ամաց տասանց և երից՝ ան-
դըր գործեցին ,
զմահ Գադայի գեղադէմ դստերն՝ և
զողբ Լիային ,
զմարդախողող սովոյն աղէխարշ հարուած-
վշտագին ,
Սկսաւ Յովսէփ՝ զիւր պատմել նոցա
ճառ աղէտագին ,
զոր 'ի յեգիպտոս՝ մինչ վաճառեցաւ ,
կրեաց 'ի յանձին .
զըրպարտութիւն իւր աւագուհւոյն ,
զզանդատ նորին ,
զխոշտանգանս իւր ամս երիս ամբողջ՝ 'ի
զընդան բանդին ,
Եւ զերազայոյզ փարաոնս աղէտանջ մա-
տակարարին ,
'ի նմին գիշեր ընդ նմա տեսիլ տակա-
ռապետին .

զմեկնութիւն իւր , և զլոյս մեկնութեան
կատարել նորին ,
և զիւր ընդ երկար կիրսըն վշտամբեր 'ի
նմին բանդին .
Զաշխանօք տեսիլ մտատանջ երազ
վեհի արքային ,
մեկնութեամբ զնա՝ յաթոռ ամբառնալ
դահոյն թագային .
այսպէս ընդ միմեանս զարկածից իւր-
եանց՝ այն ինչ խօսէին ,
և ձայն բարձեալ անդ արտօսրահա-
ռաչ լային ողբային .
Զայս փարաւոնի լուեալ , հրամայէ
տակառապետին ,
գնալ հարցանել զսերունդ նոցա , և
ըղձեա ազգին .
Նորա փոյթ ընդ փոյթ եկեալ յասկեփայլ
տանէ արքային ,
զայ ածապարէ 'ի հարց զլուսա՝ այսպէս
խնդագին .
* Ո՜վ վսեմափառ գերընտիր իշխանդ-
վեհից դիւցազանց ,
երգեսցեն քնքուշ 'ի ձայն քաղցրաւոր՝
երգըք իմ շըթանց .
զոր 'ի քեզ այժմիկ կըրից բերկրալիր
բերմունք ցնծաղեաց ,
և զոր անտխուր 'ի քեզ երևոյթ կայ-
տառ խնծղանաց ,

Ու Թէպէտ էր ինձ զայս երգել եր-
կար՝ արժանւոյդ փառաց ,
սակայն բաւեացի այսչափ գերագահ
տեառնըդ վեհապանծ .
որդ զիս առ իշխանդ առաքեաց 'ի հարց՝
որքայն մեր գթած ,
գիտել, զինչ ազգ ձեր, և յո՞րում քա-
ղաք սնունդ փափկակեաց ։ ||
Բայց , Յուդայի պատմել զնոսա՝ Յով-
սէփ ակնարկէր ,
զի նա հմտագոյն նախնի պատմութեց
կարի տեղեակ էր .
յայնժամ անդ Յուդաս բացեալ զիւր
բերան՝ ըսկըսաւ պատմել,
տակառապետին՝ զոր հարց , մի առ
մի հաւեցաւ ասել.
* Արքային ընտիր դու վսեմափառ իշ-
խան բազմաւէր ,
պատմեցից կարգաւ քեզ զայն ամենայն՝
որքային հաճել .
այլ կարճ 'ի կարճոյ իրազգաց առնել, ո՛չ
կարեմ խօսել ,
զի երկայնաձիգ յոյժ է պատմութիւնս ,
զոր ունիմ ճառել.
Աղթեմ դուղնաքեայ ներել ժամա-
նակ՝ զայն առ քեզ պատմել,
զի համանգամայն զազգ մեր և սերունդ՝
լիցիս ճանաչել .

ուրդ ազգ և սերունդ մեր 'ի սկզբանէ՝
որպէս լոյս փայլէր ,
և մեծահռչակ 'ի մէջ աշխարհի՝ յազ-
գաց յազգ պատմէր ·
Ահա՛ նախահայր մերըս Աբրահամ՝ զոր
աշխարհ սիրէր ,
ո՞չ , զիա՞րդ 'ի մէջ այլոց դիւցազանց
գեղեցկափայլէր ·
զիա՞րդ մեծատուն և առատ 'ի գանձս՝
հարուստ և ճոխ էր ,
անթիւ աղախնեայք և ծառայք նորին ,
ո՞չ կարէր թուել ։
Անթիւ երամակք ուղտուց և խաշանց
իւրըն արածէր ,
յաշխարհի համբաւն իւր մեծահռչակ՝
որպէս փող հնչէր ·
մեր հայրըն սորա թոռըն նախածին ,
մեք նորին թոռներ ·
լո՛ւր , զիա՞րդ եղև նմա 'ի խառան կեն-
ցաղավարել ·
Եւ զիա՞րդ ապա եկըն 'ի Քանան՝ սա՛ 'ի
բընակել ,
զիա՞րդ և պարգև եղեն անդ նմա՝ որդի
ծնանել ·
և զիա՞րդ որդին՝ ամուլ իւր կնաւ ծնաւ
զհայր մեր ,
և մեզ արդ՝ ո՞րպէս եղև յաշխարհի սե-
րիլ և աճել ։

Այն սա՛ բաղմոլէպ ձառեւացն կարդա-
քեզ՝ գլթած իմ սէր ,
զի քաջ ծանիցես , յո՛ր վայր յո՛ր սահ-
մանն մեր ընաշխարհն էր .
արդ մեր նախահաւն՝ յայն մեծահամ-
բաւ Խառան ծնեալն էր ,
յոր հայրն իւր Թարա՝ քաջափառ ար-
քայն՝ մեծատաստ իշխէր :
Ր. ՄԼ այն ինչ Թարա յիւր աշխառա-
նիստն՝ զմահ ճաշակէր ,
Թագազուն որդւոյն՝ իւր գահ ոսկե-
փայլ ժառանգ հասանէր .
անդ յայնժամ յերկնից՝ ահեղերասաստ
Աբրայն մարդասէր՝
'ի լոյս արփենւոյն 'ի ձայն քաղցրալուր՝
նմա զայս ասէր ։
* Դու արքայորդի Աբրահամ՝ զայս
քեզ բարբառիմ 'ի սէր ,
քանզի ինձ ախորժ՝ գիտեմ , զի լսես ,
և կամիս լսել .
տեսանեմ աչա՛ , զի մշտավառեալ սիրտ
քո 'ի յերկեր ,
զայդ և զցերեկ զիմ հաճոյս՝ յանձին
կամիս ցուցանել ։
Ո՛չ զոք քեզ նման՝ ընդ երկնաւ գտի
յերկիր մշտամբեր ,
զի արդշահի առ իս՝ 'ի սիրտ վառեցի
խանդակաթ 'ի սէր .

ո՛վ որ քեզ վարժան՝ թէ իմ է զամէնն
տարաչագործել,
յանէից՝ 'ի գոյ, զամենայն գոյակս միայ-
նիկ ածել։
Օ՜ լայնատարածման, և կամարաձև զվե-
րինն եթեր,
և զոր 'ի նըմա՝ շողալ աստեղաց 'ի ցոլս
անսատուեր.
որպէս այն երկնի՝ գեղեցկաճաճանչ զա-
րեւուն լապտեր,
զամպոց թանձրախիտ թափառումն յայ-
երս, և անձրևաբեր.
Օ՜ երկրիս պա՛ճնազարդ ըզվայելչութիւն
ծաղկալից դաշտեր,
բերրի ոստախիտ ծառոց գեղուշէշ՝ յամ-
պըս ծածանել.
վարդենեաց բուրումն յանդաշ հոտա-
ւէտ՝ յոսկեփունջ մուրչեր,
և ըզծածանումն ալեօք վէտ առ վէտ՝ ըզ-
ծովու ծըփել։
Օ՜ պայծառիկ տեսեալ՝ զայլ ըզքանչելի
մատանցըս գործեր,
'ի քումըդ սրտի՝ կաթոգին սիրով զիս
որոնեցեր.
ո՛չ հանդոյն հօր քում՝ զոսկեձոյլ պատ-
կերս սիրով պաշտեցեր,
ո՛չ ձեռագործաց՝ որպէս Աստուծոյ
պաշտօն մատուցեր.

Ուստի խնկաքանչ երգնում աւագին՝
այսպէս քեզ ուխտել,
ազգ մեծ և ազգ շատ զքեզ 'ի յերկրի
լայնասփիւռ՝ առնել․
Իսկ արդ՝ ել աստի, եկ յերկիր՝ զոր
քեզ ունիմ ցուցանել,
մի՛ այսուհետեւ թագաւորեսցեն քեզ՝
կիրք տրտմաբեր։ ||
Բայց․ Աբրահամ ժողովեաց՝ զոր ինչ
առ ընթեր ունէր,
զերամակ խաշանց, զամէն կարասիս, և
զամէն կահեր․
եկըն 'ի Քանան, յորում՝ ասացաւ, նը-
մա բնակել,
մինչ ընդ ստախիտ կաղնեաց Մամբ-
րէի՝ դնայր և ձեպէր․
Ընդ և վերստին՝ ուխտ Տեառն Աստու-
ծոյ զայս ինչ հաստատէր,
զոր երդմամբ նմա՝ յերկիր Խառանու
ուխտէր և տայր․
ըղձաւանկըս իւր անթիւ բազմութեամբ
մեծացուցանել,
աստեղաց երկնից համգոյն զնոսա՝ ան-
համար առնել։
Այլ Աբրահամու կինըն էր ամուլ, և
ոչ ծընանէր,
և անուն նորա յոյժ հանգունատեղ
Սառրա մակձայնէր․

մինչ կայս 'ի վարանս խորում ծըփէին
միտքն ալէկոծել,
քանզի ցաւ սաստիկ ամլութիւն Նորա
վիշտ մեծ ընծայէր ·
Պատանեակք երեք եկին յարեւուն 'ի
մուտս ընդ գիշեր ,
որոց վարսագեղ անդ ծածանէին գը-
լուխք ոսկեհեր ·
էին 'ի հասակս երկայն և անձնեայ` 'ի
կարմիր այտեր ,
և քաղցրահայեաց աչքըն փայլէին նո-
ցին և բըբեր·
Յառաջ ընթացեալ անդ Աբրահամու`
երկիր պագանել ,
և 'ի խորանն իւր` ըղձոսա մաղթէ գալ
և իջանել ·
Նոքա 'ի ծիծաղ 'ի ժըպիտ դիմաց` ըս-
կսան քայլել,
եկին առ խորանն ընդ Աբրահամու` յո-
րում Սարրայն էր·
Վաղվաղէ Սարայն` սեղան հացաշատ
յընթրիս պատրաստել,
Նոքա անդանօր այսպէս յԱբրահամ ըս-
կսան ասել ·
* Խայտա բերկրամիտ` զի քեզ տամք
պարէտ աւետապարգև ,
որում ցանկայիր անդուստ 'ի վէրուստ`
'ի սիրտ տրտմաբեր·

Բայց գեղադիմակ կընոջ և հայցուած՝
զայն աղերսեր ,
յարգանդ իւր ամուլ՝ մանկիկ փարսա-
գեղ յոգի նըկարել .
խնկեցաւ արդէն՝ ձեր պաղատախառն
հայցուած աղօթկեր ,
եհաս բարձրեալն՝ յՈղիմպեան կատար
բոցափիւռ յեթեր .
Արդ՝ այսուհետև անտրտում դիմօք՝
ձեզ արժան բերկրել ,
ըղողխուր թախիծ , լաց արտասուաթոր ,
յաչաց ձեր սրբել .
Մեծաց աւետեաց եկեալ եմք ահա՝ ձեզ
պատգամաբեր ,
մանուկ շնորհագեղ՝ առ ձեզ շնորհեա-
ցի , չքնաղ ոսկեհեր .
Անհամար թուով գեղեցկաձաձանչ աս-
տեղց 'ի յեթեր ,
աւազոյն անթիւ հանգոյն անհամար՝
ծովուն 'ի յեզեր ,
'ի վերայ երկրի բազմասցին ահա՝ քոյին
զաւակներ ,
մի՛ երկմըտեսջիք , չի՞ք ինչ անհընար Էլին
ինքնատէր .
Արդ նա՛ զաղջամուղջն՝ 'ի լոյս փոփո-
խէ , ըզլոյսն՝ 'ի գիշեր ,
զի կարօղ է նա՝ զաւազքատակ քարն
անձնաւորել .

քաջ գիտես, այն ինչ ընդ դէմ հրամա-
նի՝ դարձաւ յետս հայել
կինն եղբօրորդւոյդ՝ ՚ի ժանտ Գոմորայն
յիւրում ելանել։
Ո՞չ իմ՞րդ վաղվաղակի ՚ի յարձան աղի՝
անդ նա փոխարկեր,
միթէ՞ և զարձան չիցէ նա կարօղ՝ յոգի
ինչ շարժել։
մի՛ երկմըտեսջիք, բանայ նա ահա զար-
դանդըն ըղձեր,
և ձեզ ըղզաւակ ՚ի ձեր ծերութեան՝
ձօնէ ՚ի պարգև։ ||
Հայեցին, ահա Սարայն ըղսեղանին՝ անդա
նօր կահեր,
Նըստին անմահ հիւրքս ընդ Աբրահա-
մու՝ ուտել և ըմպել։
Նոքա անդանօր՝ զորըս խօսէին զանհա-
սըն մըտաց,
որ մահկանացուաց ակընջաց էին բա-
ւական լսել։
Հափշեալ Աբրամու՝ ակնապիշ նոցա
հիացքանչ լինէր,
և ըղքաղցրաւաչ ՚ի յերկնից բարձանց
գեղգեղմունս լսէր։
գումարք անմահից՝ նոցին առաջի ահիւ-
անկանէր,
Երկինք և երկիր սասանեալ դողայր՝ յօ-
նիցն ՚ի շարժել։

Ծնանեաւ 'ի մտի, զի են արարիչ հիւր-
քըս մարդանձև ,
այլ երկեաւ 'ի հարց իւր կարօտակեղ
սրտի՝ անդ մտաչել .
Նիրհեն մանկըտիս ըղձքուննն անուշակ՝ 'ի
Նըմին գիշեր ,
զարթնուն , գեղոլոյս փեբոսի յաշխարհ
նոր 'ի նոր ծագել .
Ո՛ հրաժարականն ողջոյն տան , հրա-
ժեշտ անունն առ ժամայն ,
տեսանէ յերկինս ըղթըլուիչ նոցա՝ և քան
զերկթևեան .
եցոյց անուանոյն՝ քան զծածանչեղ լոյսն
արեգական
ըղհամայնատիւքիւռ ցոլանալ արփւոյն
բարձունս յեթերեան .
Նորա ըղցփձակն ըղըըլեաց սրբեալ ըղ-
բիժալըն շրամնն ,
կորովի աչօք յաւի անքըլթիթ՝ 'ի լոյսն
արփիական .
հիապքանչ մնայ ընդ նորահըրաշ ընդ այն
տեսարան ,
յորում բանայրն եթերին կամարք փայ-
լացայտ ուղփեան ,
Ո՛ աւետաաղարդեն ընծայէ յայնժամ
Նըմա Աբրահամ ,
'ի հիւրոցն անմահ՝ ձօնեալ խնդագին
պարէտ բերկրական .

մինչ ամաց ընթից հոլովէր , և գայր ժա-
մադիր պայման ,
Ծընանի Սարրա՝ մանուկ շնորհագեղ՝
յիւր խոր ծերութեան ։
Ո՞ կարէ պատմել զանտխուր նոցին
խնդութիւն յայնժամ ,
որք փարեալ բազկաւ ըզմանկամբն 'ի
սէր՝ երգէին և խայտան .
Թլփատեալ ըզսա՝ Իսահակ անուն նըմա
անդ կարդան ,
'ի գիրկըս իւրեանց ածի , և սնանի փափ-
կիկ գողտրական .
'Ի չափ հասակի իւր դեռափըթիթ զար-
գանալ մանկան ,
Աստուծոյն ըզնա յողջակէզ հանել ե-
հաս այս պատգամ .
սիրելի որդւոյն՝ մինչ խընայէ ձեռն
Աբրահամեան ,
հանէ վաղվաղակ ճենճերել ըզնա՝ լե-
րինն յարտեան ։
Մ՝ինչդեռ ըզսուր իւր երկսայրի սը-
րէր՝ արկեալ ընդ յեսան ,
յամպոց 'ի վերուստ լոյս փայլատակէր՝
'ի շանթ կայծական .
անդ երկիր համակ դողայր 'ի սարսուռ՝
յերեր և տատան ,
երկեաւ Աբրահամ՝ անկաւ 'ի յերկիր
'ի սօսկումն շրթման ։

’Ի յերկնից լուսաւ անդ որոտ ընդոստ՝
զայս ահեղ պատգամ,
* մի՛ մտեր ըզձեռսդ՝ սիրելի որդւոյդ,
դարձի՛ր ողջանդամ. ||
ասաց, և ետես կախեալ ըզծառոյն՝ խոյ
մի գողորական,
զենու յողջակէզ ըղնա առ Աստուած՝
որդւոյ իւր փոխան:
Մինչ այս և մինչ այն՝ մայրըն իւր
Սարրա մահու մեռանի,
մանկիկն Իսահակ ’ի լաց բարձրագանչ
շարժի ոգորի.
չե՛ զայս սուգ բուժեալ նորա տակա-
ւին ’ի տըխուր սըրտի,
եհաս վերստին նմա՝ գերարտօսր ողբ
կըսկըծելի:
Զի՛ հայր իւր յառաջ հրաժեշտ և
տուեալ՝ կենաց պակասի,
Թողեալ միայնիկ զինքըն՝ ’ի տըխուր լաց
ողբ տալի.
կարէր և ոչ ոք ըսփոփել սըրտին Թախիծ-
տրտմալի,
լայր, և հառաչէր, արտասուքըն իւր
հոսէր ուղխալի:
Մօրուն իւր յայնժամ ծառայից ա-
րար այսպէս պատուիրան,
երթալ, և ածել ըզԲաթուէլի դուստըն՝
’ի Խառան,

որպէս ամուսինն յառաջ քան զմահ՝ եւ
իւր հրաման ,
զգեղադիմակ ռեբեկայն առնուլ նըմա
կընութեան .
Գ.ընայ Մըլինդեն՝ ողջամիտ պաշտակ՝
յանուանին Լաւան ,
առ ափամբ աղբերն՝ եդիտ շնորհագեղ
չքնաղ Ռեբեկայն .
սափոր 'ի փափուկ 'ի յուսն իւր եդեալ՝
մինչ գնայր , ճեպէր ,
հասեալ՝ սա հայցէ ջուր 'ի սափորոյն ըզ
ճանապարհայն .
Իսկ նորա ճապուկ 'ի վերայ բազկացն՝
եդեալ զստոմն ,
վաղվաղակի նըմա անդ արբուցանէ՝ ջուր
ցուրտ քաղցրահամ.
հըպէր , մօտենայր ընդ մեայն ահեղ՝
գիշեր տխրական ,
հալածել յերկրէ լուսն ոսկեճաճանչ երկ-
նից մետաղփեան ,
Ոչ դեռ ներկանէր 'ի լոյս՝ բարձրա-
բերձ լերանց արտեւան ,
և ամբարտակաց երկնածայր կատար շը-
քեղ գագաթան .
դարձ առեալ գայլն դասադաս գըն-
դովլ՝ պախրէից հօրան ,
և 'ընդ այերս երկնից թռչէր , խոյանայր
մըթար ջըղջիկան .

Ըղձամ օրհորդն 'ի տուն հրաւիրէ իւր
տապնջական ,
ո՞վ, ո՞րչափ արդեօք՝ որք 'ի տանն էին՝
ժպտագին խայտան .
այն ինչ բաղթուել՝ հայր շնորհաշուք
չքնաղ աղջկան՝
ընկալաւ զողջոյն իւրում հօրեղբօրն
որդւոյն սիրականն .
Յայնժամ Մըլինդեն՝ ըղձլինդսըն ոս-
կիս եցոյց Ռեբեկային ,
և զոսկեձամուկ՝ զոր եբեր նմա՝ զամէն
պատմուճան .
եւ բաղթուելի՝ և զընծայսն ամէն ձօն-
եալ 'ի նըշան ,
յարուցեալ այգուն՝ համդերձ Ռեբե-
կաւ եկըն 'ի Քանան .
Չքնաղ օրիորդս 'ի գեղն անքատակ
ընդ ոլորտս երկրի՝
ըղձուց Սահակայ փարատէ ըսփիւռ ,
ցընծայ նա յոդի .
այլ ամուսնութիւնն իւր՝ սուգ տրտմաթա-
խիծ արկ նորին սրտի ,
որ մշտամռունչ զարարիչն Աստուած՝
ընդ հայց անկանի .
Խնկեցաւ նմա՝ իւր բազմահառաչ հայց
խնդրոց սրտի
երկնապիշ աչօք մատուցեալ յերկինս
բարձունս եթերի .

յըղանայ ամուլ իւր չըքնաղագեղ կի-
նըն տարփալի ,
և այն երկեակ մանկիկ վարսագեղ՝ նը-
մա ծընանի .
Ո՛չ կարեմ պատմել՝ ըզխնդիւ նոցին
կայտիւ բերկրալի ,
'ի հրեշտակատես ծննդեան մանկութեան
աւուրց գեղանի .
անդ բերանք նոցա կիթառ և քընար
էին քաղցրաղի ,
մըմունջ օրհնաւաք՝ յերկթերթի շըր-
թունս յերկինս ընծայի .
Զքնաղ մանկըտւոյս՝ Եսաւ և Յակոբ
անուն մակձայնի ,
համանեն սոքա՝ յիւրեանց կատարեալ 'ի
չափ հասակի .
Եսաւն՝ աղեղամբ վայրի երէոց որսօն
քաջ լինի ,
և Յակոբ՝ փափկիկ գեղմնազգեստ գա-
ռանց խաշնարօտ դասի .
Սոքա ըզմիմեանս կաթոգին սիրեն ան-
կեղծ 'ի սըրտի ,
իսկ զիա՞րդ , լո՛ւր ինձ , ատեն զմիմեանս ,
ապա քըստմնելի .
մինչ յաւուր միում եկն Եսաւ յորսոյ
քաղցեալ , և նըքթի ,
խնդրէ Յակոբայ՝ զոր ուտէր յայնժամ
ըզթանըն ոսպի .

Իսկ նա՝ խեղախեռ 'ի խըրժդան կաց-
եալ խըստասիրտ յոգի ,
յանուշակ նորեփ յիւր համեմ թանէ-
ետ ոչ դըրդալ մի .
զի յանձուկ տագնապ՝ 'ի պընդման ար-
կեալ ըղձա անդ նօթի ,
ըղձորին գնեսցէ անդ զանդրանկութիւն
անդրին նազելի .
Նորա արդարև հարկաւ յանձկութի
նեղեալ 'ի մարմնի ,
վշտատես անձամբ վաճառէ զանդրինն՝
որ անդրը ժըտի .
Նմա ապաշաւ զիղջ 'ի սիրտ անկեալ՝ ա-
ղէսաստ ծըփի ,
ըղձորէժս առնուլ ձեպէ , ընթանայ
դժոխախեռ անտի .
Բայց ես առաւել նըմա՝ 'ի զայրոյթ
ցասեալ 'ի հոգի ,
այն ինչ խաբուսակ ներգաւ՝ զիւր դո-
դէ ըղհայր ծերունի .
իբր անդրանկածին դըրժելով նմա՝
քաղցրերգակ օրհնի ,
և զանդրանկութեանն առնու ըղդըր-
ուատ՝ քան զինքն 'ի յերկրի .
Որմա իսահակ հայրըն իւր՝ մինչդեռ
պատուէրըս լինի ,
երթալ , և որսալ ըղփափուկ էրէս մա-
տաղիկ վայրի .

և յառնուլ նորա՝ զաղեղն, ըզկապարճս ,
և յերթալ անտի ,
զայս ուսուցանէ , նմա անդ տանել՝ իւր
մայր սիրելի .
փութալ և ածել մատղածին ուլուց
բուծըս դեղանի ,
զորըս արածէրն 'ի մարգ ծաղկաւէտ
դաշտին քեբրոնի .
նա՝ խանդակաթեալ ընդ այս գեղեցիկ
խորհուրդ նազելի ,
ճեպէր, ընթանայր սըրարշաւ յաւէտ ,
գընայր բոկոտնի ,
Ըզփափուկ ուլուցն 'ի յուս իւր բար-
ձեալ՝ բուծս երկուս անտի ,
դառնայ շըտապաւ՝ սըրացեալ որպէս
երկնաչու արծուի .
զենեալ Ռեբեկայ՝ զուլսըն մատղածին
անդ վաղվաղակի ,
համադամ խորտիկ պատրաստէ տանել
իւր հօրն առաջի .
Այլ 'ի տես կորովի՝ բիբըն Իսահակայն
անժոյժ էր աչաց ,
զի հարիւրամեան յընթացս էր հասեալ
ալևոր կենաց .
սակայն զսոսա կարէր ճանաչել 'ի դաստ
իւր ձեռաց ,
զի էր Յակոբայն մարմին լերկ անհեր՝ և
ճապուկ բաղկաց ,

Օ՜սա կաթոգին սիրէր Ռուբեկա՝ 'ի
սիրտ սիրածարծ ,
կամէր՝ զի առցէ սա՝ իւր անդրանիկ
զիւր հօրն ըղձացուած .
ուստի հընարեաց զայս հնար նենգա-
ժէտ , չքնաղ պատրանաց ,
ագոյց զԵսաւայ սըմա ըզմաշկեակն ձաղ-
կահեր հիւսած .
Ա՜գոյց և ձեռացն՝ և 'ի պարանոցն՝ ու-
լէնի փորսամ ,
եւ 'ի ծըղուկ նորա ըղխորտիկան , եմոյծ
ըզնա 'ի խորան .
մատոյց Յակոբայ՝ և նա ըղխորտիկն
իւրըն համադամ ,
և սըտեաց նըմա , և առ զօրհնութիւնն
անդրանիկ մանկան .
Մ՜ինչ արփւոյն նշոյլ ամբառնայր յերկ-
րէ անդըր գաղթական ,
եկն ահա՛ Եսաւ՝ որսացեալ մի եղն մա-
տաղ գողտրական .
եհար 'ի շամփուր ըզնա ծայրասուր շէշտ
և ընդերկայն ,
խորովեալ եած՝ առաջի դիւցազն իւր
հօր սիրական .
Ա՜սա յողբ լալագին՝ 'ի սուգ հեծեծէ
սա՛ մեծակական ,
մինչդեռ հիասքանչ ափշեալ կայր իւր
հայրն՝ յայս խաբս դաւաճան .

'ի զպյրուց ջերեալ բարկացայտ կըրից
քինախընդրութեան ,
լարէ բընաձիգ զաղեղն 'ի ձգտել նետ
երեքթևեան ·
Տեսեալ Ռուբէնկայ զդըժոխերես սորա
կերպարան ,
և յաջում ձեռին՝ ըռնեալ մահաբեր
լարեալ աղեղան ·
երկեաւ ահաբեկ՝ փութայ ազդ առնել
որդւոյն սիրական՝
զոր Եսաւ նըման պատրաստ է ձօնել մահ
տապաժամման ·
Օ՜այս լուեալ Յակոբ՝ լըռիկ և մընջիկ
խուսէ գաղթական ,
այն ինչ գիշերոյն իշխէր մառնամուտ
մըռայլ տխրական ·
աղօտ ընդ աղօտ ծագէր գեղափայլ լու-
սինն աննման ,
ըզըրըրինգոըն իւր երգելով գընայր՝ քըն-
քուշ մանկիկն այն ·
Դիպեալ յերկնուղէշ և սաղարթագեղ
ծառ մի բազմոստեան ,
'ի քուն մըտանէ 'ի վերայ սիզոյն՝ 'ի նոյն
ծառաստան ·
անդ զարմանահրաշ երազ տեսանէ ըզ-
նոյն գիշերայն ,
Հառել 'ի լեզուս ըղհրաշապատուամ՝ յաղ-
գաց յաղգ արժան ·

Ոսկեձոյլ դրունք եթերին վերին՝ աստ-
ղափայլ բանան ,
լոյս բոցաճաճանչ ցայտէ յաշխարհի՝
Արփին մետաւղփեան .
աղօտ ընդ աղօտ անդըր նըշմարի լոյսն
Արեգական ,
զանգեալ և Լուսին 'ի մռայլ 'նդ այերս՝
'ի մութ տխրական .
Ընդ գեղեցկափայլ աստեղացըն բոյլք
նըշողեն յայնժամ ,
և անդ ճաճանչեղ ծագեաց 'ի յերկնից՝
լոյս ինչ աննըման .
աչք ոչ կարէին հանդարտիլ սըմա՝ հո-
ղածին մարդկան ,
քանզի Աստուծոյն փառացն էր այն լոյս՝
ճաճանչ գեղաղան .
Նա ահա՝ սանդուղ մի ոսկեաձոյլ և ար-
փիադնաց
կախի 'ի յերկնից 'ի յերկիր՝ ահեղ լու-
սով մեծապանծ .
երթ և եկս առնեն անտի՝ բոյլք դասուց
անմահ հրեշտակաց ,
գան , արօրանան որպէս աղաւնիս՝ 'ի
սեզ այն դաշտաց .
Նարօտ և Նարօտ փետրօք սաճնազարդ-
են թևքըն իւրեանց ,
և հանդերձ զանձամբ գեղամըյն ար-
կեալ՝ բաղխատակ ըստ ձեանց .

կապարճ և աղեղն 'ի յուսըն նոցա՝ և
ձող նիզակաց ,
և սուսեր ընդ մէջ երկսայրի սըրեալ՝ 'ի
պաղպաջ փայլմանց .
Ընդ հրաշագնդին չքնաղ կերպարանս
սխրալի դիմաց
և ընդ ոսկեփայլ փաղփուն զգեստուց
սոցին գեղապանծ՝
ակնապիշ յառեալ մնայր հիասքանչ
յաչըս անթարթափ ,
եւես , և ահա խմբէր այլ ոգիք զազիր
հրեշտակաց .
Կերպարանք սոցա՝ ոչ սպիտակերանգ
և ոչ սպիտակազդեաց ,
այլ սևաթորմի արջնաթոյր մըթին՝ իբր
ունձ թանձրամած .
և հրէշք երկմորմին երևին՝ հանդոյն
ձիւաղ գազանաց ,
այլակերպ ոմանք , և զազրաթորմնք՝ ըստ
զազիր հարպեայց .
Իբրև տիտանեանքըն սոսկավիթխար , 'ի
յերկուց կողմանց
յարխնդըսուշտ մարտ ճակատին 'ի վէգ՝
անդ զինուք լերանց .
ուր թոմբիւնք զինուցն ըզյատակ սար-
սեն 'ի ներքին հիմանց ,
և Թաւագըլոր անկանին՝ ահեղ պարեխք
'ի բարձանց :

Ընդ շըռընթաձայն ուռմբքըն հրացա-
նից՝ շարժեն զափափայս ,
երկինք և երկիր տատանին յերեր՝ նե-
տից 'ի հարուած .
փախուստ խուճապեն այրք ըն ընդ այերս
անդ ամօթալցեաց ,
զի սըրբասընունդ յաղթեցին նոցա՝
պարք ըն հրեշտակաց .
Ամենք 'ի սանդարս ձեպեն անդընդոց 'ի
բոց հրայրեաց ,
ոմանք ծառախիտ ընդ անտառ ղօղին ա-
նարև լերանց .
անդ զինուորութիւնք արագաթևեան
անմահ հրեշտակաց՝
գունդագունդ խմբեալ թըռչին , սըլա-
նան երկնից եթերաց .
Եւ երգեն երգ նոր Արարչին էիցս անդ-
միաբերան ,
որ յաթոռ նըստէր 'ի վեր 'ի յերկինս 'ի
ներքին խորան .
ձեր ականապարար ճաճանչ նշուլագեղ
ծաւալէր յորձան ,
անդադար չիչխելի անմահից վերնոց՝ սըրբա-
վայր սահման .
Խորայց շըրացեալ յահեղ տեսլենէս՝
զարթնու նա յայնժամ,
առակայ , զի էր մութ ոլորուր՝ և երկիր՝
'ի խոր լռութեան .

ոչ այլ ինչ լսէր , բայց միայն խըշխուն՝
և եթ երգ ձայուան ,
որ 'ի խոր խորշս պարեխաց երգէր անդ-
կերկերաձայն .
'Ի գխտակս եղեալ ծառոյն վարսադեղ՝
կայր 'ի սօսափման ,
այն ինչ և ղուռնալն ըղձայլոց լսէր ան-
ղուսպ վխտական .
մինչ ծայրակարմէր գունէր երփներանգ-
ամպք արևելեան ,
և մինչ Արուսեակն փաղփուն փայլէր ,
ցնծայր նա յայնժամ .
Ընդ մռայլն աչեղ՝ ծակորայն ընդ խոր
քիւր ապաստարան
ջանայր , և փութայր թագչիլ 'ի սաք ըոն՝
անդէն նշնչեայն .
և աչս նուաղք ըսկըսան լսել թըռչնոց
քաղցրաձայն ,
երամ և երամ անդ սուառնաթև թըռ-
չին , խոյանան .
Իջ 'ի կատարոյ բարձուն 'ի ծառոյ բաղ-
մնոտ գեղազան ,
ընդ մարգարտայեռ տարափ գիշերոյն
ձեմեն ոտք նորայն .
հաս 'ի ծաղկապերճ ընդարձակածիր խա-
ռանու սահման ,
յորում գեղմնաբար ուլուց և այծից
խայտայլն հօրան ,

Պաստառս գընդով դարձ առեալ
զայլն անդըր խուռներամ,
քանզի ընդ աղօտ նըշողէր պաղպաջ
լոյսն երեկոյեան ·
առեանէ խըմբեալ դիւցազն անդ Յա-
կոբ՝ ըղձովուացն երամ,
և ըզգունդագունդ գողտրիկ ոչխարաց
զանհամար հօրան ·
Եւ անդ օրիորդ մի ոսկեգիսակ 'ի գեղ
անհըման՝
ըղխաշինան ածեալ՝ երկրապիշ յեցեալ
կայր յիւր գաւազան ·
գընայ, մերձենայ միում 'ի հովուացն
երջանկապարմեան,
հեզիկ և մընջիկ հարցանէ ըզնա՝ այսչափ
ինչ միայն ·
* Ո՜ւ ինչ ըսպասէք՝ հովիւք երջանիկք
աստ դուք միաբան,
ո՞ կցէ աղջիկս՝ գեղեցկադիմակ հրեշտա
կանըման ·
աղաչեմ ըզքեզ՝ ասա՛ և ասա՛ ինձ զայս
ամենայն · ||
անդ հովիւն 'ի ցուփ իւր յեցեալ՝ այս-
պէս առնէ պատասխան ·
* Պանդուխտ ուշիմ՝ հանապազ այս
մեզ՝ տագնապ անըմբեր,
զոր պատմեմ առ քեզ՝ հանապազ այս
մեզ՝ վիշտ դըժոխըմբեր ·

Թէպէտ գաւառիս դաշտօրայքն ամէն՝
'ի սէգ ծաղկաբեր ,
բերրի մրգաշատ արգաւանդահող ան-
գաստանքըն մեր ։
Սակայն յաղբերաց՝ առատածորան ոչ
սուրան ջուրեր ,
ոչ աղբերակունք՝ որպէս յայլ քաղաքս
գըտանին առ մեր ·
տեղերս անջրդի՝ և ծարաւատանջ , ըղը-
կիլ և պապակել ,
յամէն երեկոյս մեզ վիշտ մեծատանջ՝
և կագ բազմալէր ·
Քանզի ջրհոր մի է՛ աստ խորխորին և
նըսեմաստուեր ,
'ի բերան նորա կայ՝ լեռնաքարակ վէմ
մի մեծաբեռն ·
ոչ կարեմք ըզնա՝ միայն ընդ միայն 'ի բաց
թաւալել ,
ըսպասեմք մինեանց՝ դժուարաւ ըզնա
շարժեմք 'ի յերեր ·
Նուարդ հովուհիս չքնաղ օրիորդս՝ զոր
ինձ հարցանես ,
է ազատազնեայ Լաբանայն՝ կրտսեր աղ-
ջիկ դեղերես ·
այլ գեղածիծաղ սա՛մ պատանիդ՝ և
դու ո՞վ լիցես ,
քանզի երևիս օտարաշխարհեայ՝ անձա-
նաչ առ մեզ . ||

Իսկ նորա մշէնջ պատարագաւն տուեալ
խաղաղ, և գընայ ։

Ի մէջ խուռներամ դասանց և խմբանց
ձեռնէ ընթանայ ։

գայ հուպ ջըրհորոյն՝ յորում էր մեծ
մեծ՝ ի բերան նորա ,

զօրադէն բաղխաւ միանգամայն շարժմամբ՝
թաւալէ զնա ։

Ընդ հովուացն երամ անհնարին յամա-
եալ՝ հայեցին ըղձիւ ,

յանմահից վերինց որք յաղթանակաւ՝
կարծէին ըզնա ։

նոյնպէս ընդ միմեանս խօսէին և մընջիկ
շըշընջիւն նոցա ,

սա է կորովին յաղթանդամ զուարթ
մեծին Տիրանայ ։ ||

Ընդ նորա տեսեալ ըզդայն ի ձեռին՝
ընդ դաւազան ,

և արբուցանէ միոյ և միոյ խաշանցն ա-
մենայն ։

մինչդեռ հովուհւոյն ընկերին խաշանց
երամք դադարական ,

այնպէս արձակէ բարբառ խընդագին՝
չքնաղ աղջըկան ։

Դուստր Լաբանայ եմ քո հօրաքեռ
որդի սիրական ,

հայր քո իմ քեռ ի , նըման քեռորդի՝
ծնունդս Ռեբեկայն ։ ||

զայս ասաց՝ համբոյր և մատոյց նմա յար-
տասուաց կական ,
գնայ օրիորդն՝ իւր հօր Ղաբանայ
պատմէ զամենայն .
Եւ նա իսկ և իսկ ՚ի լսելն զայս՝ գայ
՚ի ջրհորն այն ,
յոր նըստեալ երգէր զիւր եղեգնափող
սրինգ քաղցրաձայն .
ուրանօր խմբեալ ՚ի զընդեն կային գե-
ղեցիկ մանկան ,
քաղցրալուր երգոցն ՚ի լսել գային
մարդիկ խուռներամ .
Ա՝տտուցեալ Ղաբան համբուրէ ըզնա
անդ մեծակական ,
հրաւիրէ ՚ի տուն ՚ի սէր ըղձակաթ իւր
սայնջական .
ո՜վ , ո՜րչափ ՚ի տանն էր խնդապատար
կայտառ բերկրական ,
ուտեն և ըմպեն , յանտրխուր նուագս
շարժեալ քաջ ցընծան .
Յանցանել աւուրց անդ ծանոյց Յա-
կոբ՝ զիւր միտսն առ Ղաբան ,
խնդրէ ըղկրտսեր դուստրըն գեղանի
իւր շատ սիրական .
այլ Ղաբան առ նա դաշնադիր լինի՝ իւր
բանիւ երդման ,
ձըրի ծառայել խաշնարած նըմա՝ մինչև
ցեօթըն ամ .

Այս անդ Յակոբայ միտք՝ ընդ պայմա-
նիս ախորժ հաճեցան ,
առեալ արածէ ըզնորին 'ի մարգս զխա-
շանց երամ ․
մինչ 'ի լրումն ածաւ՝ այն եօթնից ամաց
դաշնաւոր պայման ,
հարսանեաց հանդէս տօն բերկրապա-
տար ածաւ յերևան ,
Իսկ 'ի լրանալ աւուրց հանդիսի հար-
սանեաց նորայն ,
տե՛ս զԼաբանայ դու զամենախաբ պատ-
րանս նենգութեան ․
Մուծանէ զմեծն յառագաստ սիրին՝ ըզ-
նոյն գիշերոյն ,
որ կրտսեր դստերն եդ ընդ խոր դա-
շինս՝ երդմնակուռ պայման ։
Որդ մինչդեռ գիշերն ըղձաւ մերկա-
ցաւ խաւարըն տխրական ,
զուխտադրուժ նենգ Լաբանայ գիտաց
Յակոբ , բայց ունայն ․
դաշինս կրեալ՝ դարձեալ ծառայէ այլ
ևս եօթըն ամ ,
առնուլ զոր սիրեացն 'ի սիրտ խանդա-
կաթ՝ նախ քան զամենայն ։
Ընդ 'ի լրանալ և եօթնից ամացն՝ առ-
նու և զնոյն ,
այլ ամուլ էր սա ստերջ և անծին՝ հան-
գոյն Ռեբեկայն ․

էր անուն մեծին՝ Լիայ , և փոքուն՝
Ռաքէլ գեղաչեայն ,
որ են մեր՝ տէր իմ, բուն ծընօղ և մայր՝
նոքա խնկական ։
Լիայն ծընանի , 'ի լոյս ընծայէ զմեզ
զամենեսեան ,
Ռաքելայ ծնունդ է Բենիամին , և
Յովսէփ միայն ։
բազմավէպ զրոյցս երկայնապատում ձա-
ռիս ամենայն ,
է ինձ աւանդեալ 'ի հօրէն իմմէ յա-
ւուրց մանկութեան ։
Բայց զոր յայսմ հետէ 'ի ճառ արկա-
նեմ՝ Տէր իմ պատուարժան ,
եմ ականատես զրոյցն է առ քեզ ան-
սուտ պատմութեան ։
Էի խաշնարած ընդ նա՝ Լաբանու խա-
շանց գողտրական ,
շրջէի յաւերժ ըղձիւ ըղձիշէր ընդ
նա միաբան ։
Մինչ յաւուր միում հանդուցեալ
խաշանց զգողտրիկ հօրան ,
սըրինք սուլէաք յայն մարգագետին՝
ընդ ծառովք վարսամ ։
Լաբանայ 'ի ձի գայր աշտանակեալ՝ մի-
այն ընդ միայն ,
հայրն իմ ընդ առաջ ընթանայր նմա՝ և
գան միաբան ։

Նըստեալ ընդ ծառով խօսակցին ՚նդ-
իրեարս զիրաց զանազան ,
ունկըն դնէի և ես անդ նոցա՝ ՚ի մունչ
լռութեան .
անդ հայրն իմ այսպէս երկրապիշ ՚ի
դէմս՝ ասէր առ Ղուկան ,
* դու գորովագութ ինձ հայր , և ես
քեզ՝ որդի սիրական .
Իրաւունս ՚ի քէն ժըտեմ՝ և հայցեմ ըստ
վարձս իմ սակայն ,
զի քանի՞ ամք են՝ առ քեզ ծառայեմ
ես ձըրի ունայն .
ոչ քեզ ինչ պարտ էր զիմ վարձըս ինձ
տալ ըստ իմում արժան ,
համբուն ոչ կամիմ՝ զի ինձ քոյդ տա-
ցես զգանձ ճոխութեան .
Ո ծառայութեանս պահանջեմ ՚ի քէն
տըրիտուր փոխան ,
զի քաջ իսկ գիտես՝ արժան իւր վար-
ձուց՝ մըշակ քաջաջան .
ես քան ըզմըշակ քեզ ծառայեցի ան-
խոնջ՝ մինչ ցայս ժամ ,
ոչ յիս խնայեցի վաստկատուն մանկանս՝
ով հայր իմ Ղուկան .
Ո ցերեկ տանջեալ տապախառն ՚ի տօթ
ջերմ արեգական ,
և ըզցայգ նոյնպէս՝ ՚ի հողմ ցըրտաշունչ
՚ի բուք եղեման .

յանըմբեր տագնապ՝ յանձին հեծէի
յարտօսր և կական,
ոչ յիս խնայեցի փափուկ դարմանել
զանձն իմ գողտրիկան ։
Խնոց բաղմաշխատ քրտանց յոգնածոր
տըրիտուր փոխան
ընդ աւաղախիր ափնածիր եղերուս տա-
տանդիւն ունայն ․
այս ինձ ոչ է փոյթ, որքնիմ ես անխոնջ
դարձեալ միւսանգամ,
այլ իմ ընտանեաց պարտ է ըստանալ
աւան սեպհական ։
Օ՜ի որմնատախիլ բարձցի բաղմալեր
վէգ կադաղարթոյց ,
Նաև մի՛ այդպէս մանկունքն իմ կացցեն
'ի տան՝ պորտաբոյծ ․
որք ընդ արտորայս ձեմեսցեն նոցին
ընդ կանաչաբոյս ,
հնձեսցեն , և կամ հովուեսցեն դա-
ռանց մատղածին ըղըուծ ։ ||
Ըսաց , անդ Լոբան՝ հանդոյն մըրկա-
ծուփ ալեօք փրփրադէղ
գետոց յուղելոց հողմոց սատակաշունչ՝
անդ դըժոխերես
'ի զայրուց այն ինչ մահաբեր ցասման
փրփրէր սրտակեղ ,
վերստին հայր իմ կրկնէ անդ նըման՝ և
դարձեալ այսպէս ։

* Ո՜ գորովագութ իմ հայրախնամ՝ տէր
վըսեմափառ ,
յորև քո կենաց՝ արդ բազմապաղատ
զիմ աղերս ընկա՛լ .
մի՛ անզուսպ կրից զայրագին 'ի քեզ
բարկացայտ վառեալ՝
ինձ խեթիւ հայել , կամ ակդօք աչաց՝
անարգել խաղալ :
Ոչ այլ ինչ ես վարձս ժըտեմ և հայ-
ցեմ 'ի քէն՝ բարերար ,
ոչ մեկնիմ, և ոչ երթամ այլ ուրեք արդ
'ի տար աշխարհ .
ըզխայտածանուկ կապուտակատիպ ըզ-
խաշն և զոչխար
դու ինձ պատեսցես 'ի վարձ տըրիտուր՝
ձիր յարգամեծար . ||
Ըստ , և Նաւեան ինձ՝ յոր հուպ կայր ,
զայս հրաման տայր ,
խըմբել համախումբ անդըր զոչխա-
րակսն՝ յերկաւուրց խոնարհ .
և ես նոյնժամայն ելանեմ բըլրակն 'ի նոյն
դաշտավայր ,
ուրանօր էին գունդագունդ գառունք՝
ցիր և ցան սփռեալ :
Աուլեմ ըզոչխարինգն , թընդայ և հընչէ
դաշտ մշտադալար ,
անդ մայքըն գառանց հընչեցուցանեն
զահագին անտառ ,

խաղան միագունդ , գան լայն ծառա-
խիտ հովասուն 'ի վայր ,
ուր սաղարթ ծառոց հանապազ հողմոց
մշտաշարժ մրմնայր ·
Կապոյտ և ըղխայտ ոչխարակս ամէն լու-
կըսան զատել ,
զանխըշանն 'ի մի համախումբ 'ի բոյլ
'անդըրր գումարել ·
անհամար էին անմիշ բոյլք խաշանց սպի-
տակահեր ,
և անթիւ նոյնպէս արջնաթոյր և այծք՝
սևանեկ քաղեր ·
Ո՛րինչ երեկոյեան տիրեր յաշխարհն
մութ նըսեմաստուեր ,
ածեմք 'ի փարախ ուրոյն և ուրոյն 'ի
նըմին գիշեր ·
այն ինչ լուսանայր 'ի նըշոյլ պայծառ՝
ոսկեփայլ եթեր ,
ինձ հեզահամբոյր հայրն իմ անդանօր
զայս այսպէս ասէր ;
* Յուդայ սիրատենչ որդեակն իմ ահա՛
ժա՛մ է ձեզ մեկնել ,
զի որպէս արփին լուսացայտ փայլէ 'ի
վերինն եթեր ·
ոչ ամպոց 'ի նա երևին 'ի վայր 'ի վեր
թափառել ,
և ոչ տապախառն օթ կիզէն , փըչեն
հեղասիգ հողմեր ;

Ուղէ՞ զամենայն կահ և կարասիս վու-
թա՛ ժողովել ,
ընտանութիւ պիտակոտ ոչխարան , և
զկապուտ այծեր .
գնացէ՛ք ծաղկածին լերին Գաղաթու-
դաշտ դալարաւեր ,
ընդ կարկաջաստ և բազմակոհակ գե-
տոց անցանել.
Ընդ այն ափնածիր լուրան կանգնեցէ՛ք
սիղալեա եղեր ,
միաբան խաշանց դուք լընամ տարէ՛ք՝
կաթոգին 'ի սէր .
միմեանց՝ սիրալիր դուք հնազանդեսջի՛ք՝
զայս տամ ձեզ պատուէր
յունկն իմ ոչ հասցէ ձեր ատելութեան
լուր աղէտաւեր .
Դ՝ գանձ ձեր սրտի կրից վառեացի սի-
րոյն մշտաբորբ ,
և մի՛ շիջեսցի ջուրց վատակահոս բազմա-
բաղխ յալեաց .
զի հնազանդութիւնն և սէրն՝ որդեակք
իմ , է մայրն բարեաց ,
Նորքիմք յաշխարհի՝ երջանիկ կենօք
պարծիք մեծապանծ ,
Ո՛ն արէ՛ք որդեակք՝ առէ՛ք զմանկունս ,
և զդձեր կանայս ,
որպէս տասցի ձեզ՝ հնազանդեցէ՛ք դուք
սիրով միմեանց .

աչա՛ ես երթամ արածել հօրանս Լա-
բանայ խաշանց ,
անանջատ ընդ ձեզ եղիցի՝ մաղթեմ ,
մարդասէր Աստուած . ||
Ցայնժամ մեք առեալ զամէն կարա-
սիս , և զամէն կաթսայս ,
զկարպուտաներն և զխայտախարխն բա-
ժանեալս ոչխարց .
չուեմք և փախեամք 'ի լեռինըս կոյս , զոր
ինչ մեզ տայց ,
յետ երկուց աւուրց դառնամ ես ան-
տի՝ ըստ իւր հրամանաց .
Պատանեմ ըզնա 'ի մացառախիտ մէում
'ի յանտառ ,
յոր հատեալ դիղէր ըզմորչըս ծառոց՝
յայն սլացեալ վայր .
այլ ոչ ղնոձեայն՝ կամ կաղամախեաց՝
կամ կաղնեայն աճեալ՝
հատանէր , կուտէր զոստըն բազմաց եղ
շեղջաշեղջ դալար .
Իզտաւաւոց միայն զմորչ ընդուղէ՝ դի-
զանէր հատեալ ,
և այս սկսաւ քերծուլ զնոսա անդ-
բազմանըկար .
որք խայտաճամուկ քարլէից գոյն զգոյն
և բազմագալար
Նըկարէն հանգոյն՝ մէն մի երևէր օձա-
ձև խայտառ ;

Մինչդեռ զիս եսես՝ 'ի սիրտ իւր բաղ-
խէ ըղձուն քաղցրալար ,
Ժպտագին 'ի դէմս առ իս հրամայէ ե-
լանել 'ի ծառ .
որոյ ստեղանց իւր սաղարթախիտ ճօ-
ճան երկնածայր ,
Ծաղիկք բուրաղդիք եւ դեռաբացիկ 'ի
նոսա լցեալ ։
Նստանեմ 'ի ծառն՝ 'ի ձեռին իմում սայ-
րասուր տապար ,
ընդ ոտիւք իմովք դողան 'ի սարսուռ՝
ոստք մշտադալար ·
աճառուստ բազկաւս 'ի նոյն հարկանեմ
ուժգին ըզտապար ,
սասուցեալ թռչչին մամռապատ բեկորք
յեթեր տատղափայլ ։
Եւ խայտաճամուկ օձակերպ քերծնում
ըզնոսա եւ ես ,
պատրաստ հրամանին կամ , մնամ ահա՝
շեղջեալ դեղադէղ ·
'ի յուսն իմ եւ իւր ածեալ զնոսա նորա
փութապէս ,
ընթանամք խուն ինչ , լսեմ ըղմայել
դաւանց մշտահեղ .
Տեսանեմ նաեւ ջըրաբըխից ջըրոց մեծ
ինչ աւազան ,
յամէն երեկոյս գային , խունէին անդ-
խաշանց հօրան .

ելից 'ի նըմա՝ զնկարանքրն մորչըս ամե-
նայն ,
զի խայտախարխ գորշախայտ ծընցին՝
ըղկըծեալ համայն .
Բ՛ղկըծեալ նոցա՝ ծընունդ բեւեկին ըն-
պխտակափառ ,
յաւելուր պխտակք և խայտք գորշա-
ներկք՝ անդ ուլուց հազար .
զատանէր ուրոյն ուրոյն զնոսա՝ իմ քաջ
ուշիմ հայր ,
որ քան զօր հարուստ Ճոխանայր այս-
պէս՝ յոչխար և յարջառ :
Տեսեալ Լաբանայ զաակաւաթիւ իւր
խաշանց գումար ,
և ըղգորշախայտ ոչխարակս իմ հօր դա-
սադաս խրկեալ .
'ի սրտի իւրում չիջանի սիրոյն արծարծ-
մշտավառ ,
և ատելութե՛ն բորբոքի լուցկիք քասմնել-
ւոյն ընաւ .
Մ՛ինչ զնա այսպէս տեսանէ 'ի դէմս
յամբուռ կընճռեալ ,
ընդ ինև խորհի և երկարախոհ գնալ ,
և չուել .
մինչ մեք յայս խորհուրդ՝ գայ նա 'ի
սենեակն , ես դողամ յերեր ,
հայրն իմ ըսկըսաւ զայս պաղատախառն՝
նմա անդ ասել :

* Լուան հայրագութ անսամ ինձ սա-
կաւ՝ իմ բազմերախտ տէր ,
զոլէտանջ մնաց խորհուրդ քեզ ասեմ՝
իմ երկարատև .
այլ ես քաջ գիտեմ , զի դու կաթոգին
զանձն իմ սիրեցեր ,
և որպէս որդեակ քոյդ սիրատարաս՝
զիս յոյժ գգուեցեր :
Բւսարի աւանիկ ՚ի նոյն հայրագութ ա-
պաստանեալ սէր ,
զայս պաղատախառն ըղխնդիր սրտիս
յանդգնիմ ձօնել .
Չնորհ մեծ ըղձքէն , զի ոչ զիմ քըր-
տունս ապախտ արարեր ,
մեծագանձ յաշխարհ և ձոխ զիս առն՝
հարըստացուցեր :
Ո՛չ կարեմ և ոչ՝ այսչափ երախտեաց քոց
մեծապարգև
զամենայն աւուրս խնդրս կենաց ընդ-
ուրաստ լինել .
այլ մի՛ թուեսցի յաչըս քո այս ծանր՝
ով գթած իմ տէր
ըստ բազմատագնապ դատերացդ՝ և իմ
տարանջատ մեկնել :
Զի իմ անտերունչ աստանդեն ման-
կունքս՝ ՚ի կատար լերանց ,
երկընչիմ գուցէ՝ յօշէ փնտառ՝ գայլըն
գիշախանձ .

Ժղ

կամ մարգախոշոյ հինից տապատակք՝
յանբեր ափափայ
ըսպառնան նոցա մանհաղէն, և կամ գե-
րեն վշտաղգած ։ ||
Նաց, և չորան ’ի նըսեմաստուեր ’ի փա-
րախ դաւթաց,
ուր ըսողմագումար ըղյլք գեղմնաղցե-
ցին եր անբաւ խաշանց ·
և ես երիկրամլիշ ըղկընի նոցա՝ ուղղեմ
զիմ ընթացս,
նոքա ղոչխարական յարտաքին փարախ
հանեն լուսապանծ ։
Եւ անդ Լաբանայ տայ հաշիւ հայրն
իմ մէն մի ոչխարաց,
ընդ կրունկն առեալ և դարձ վերըստին՝
գան ’ի հիւղս իւրեանց ·
Ուաքելայ Լիայ աչքկունք ծորեին ըղ-
շիթս արտասուաց,
ըղպարանոցաւն անկեալ Լաբանայ համ-
բոյր սիրարծարծ ։
Մեկնիմք արտասուեղ մեք արշաւասոյր
այսպէս ’ի միմեանց,
և զամք Գաղադու լերինն ամպամերձ
համբուն ծաղկազգեաց ·
ուր խարաեշագեղ եղբայրքն իմ ամէն և
սըխրասարաս
ընդ կապուտակեայ խորանն երդեին
գեղջկական սընգաց ։

Ը՛նդ դաշտ լայնարձակ ծաղկազարդեաց
համակ և դալարազգեաց ,
խաշինք գողտրականքըն մակաղէին ցիր
և ցան սփռեալ ·
տեսանեն զմեզ , և երգեն կրկին պար-
եալ ցնծազգեաց ,
քաղցրիկ հնչէին լերինն ահագին երգք
արձագանաց :
Ա՛խաբեան այն ինչ չուեմք և անոր այ-
գուն լուսապանծ ,
տեսանեմք ահա ըղմրրիկ փոշւոյ՝ զառ 'ի
վայր լերանց ·
մխախուռն ամբոխ գային ըղկըմի զմե-
րոց շաւղաց ,
երիվարք նոցա՝ մեզ երևէին թըռչուն
երկնասլաց :
Պակնումք ահռանօք և'ի դող սարսուռ ,
և կամք 'ի յերեր ,
իսկ հասեալ նոցա՝ մեզ գոյթ տան ան-
սանձ՝ ձերբակալ առնել ·
աղաղակ յերկինս մեր ողէկտուր ելեալ
դիզանէր ,
և ահա Լաբան զայրագին 'ի դէմ՝ այս-
պէս մեզ ասէր :
* Օ՛ խա՛րդ 'ի փախուստ՝ և քան զեղջեր-
ուին՝ ոտք արշաւեն ձեր ,
ի՞բր իմ երախտեաց՝ ձեր յանդգնութի՛
անամաչ դրժել ·

ոչ անխայեցի ձեզ զամենայն՝ զոր յինէն
ժտեցեր ,
ընդէ՞ր գողունի առեալ խուսափէք զոս-
կեձոյլ իմ տէր ։ ||
Բայց , հրամայեաց բանալ փաղփաղուկ
զամէն քուրձըս մեր ,
այլ մինչ ոչ եգիտ ցասմամբ ընդ կրունկն
’ի դարձ իւր ճեպէր ·
քանզի Ռաքելայ՝ ’ի համետ իշոյն՝ ըզնա
եդեալ էր ,
յոր թագոյց նենգաւ նստեալ ’ի վերայ՝
’ի նորին յուզել ։
Մինչ ’ի ծաղկածին Սեիրի սահմանսն՝
եղև հասանել ,
հայրն իմ բազմածուփ ’ի խիրտըս մտաց՝
յուզեալ ոգորէր ·
քանզի իւր եղբայրն Եսաւ ոխապահ
անդըր բընակէր ,
ուստի ’ի քաղաքն առնել մուտ՝ սակայն
ահիւ երկընչէր ։
Մինչ հայրն իմ ’ի ծուփս այսմ խոր-
հրդոց՝ նըստեալ մտաբերէր ,
’ի հեռուստ ամբոխ յաղթանդամ զօրաց
գունդագունդ ճեպէր ·
պակնումք մեք դարձեալ, ահիւ և սառ-
սուամբ ’ի դող և յերեր ,
հասանէն նոքա յահիպարանոց ձի՝ առ-
ընթեր մեր ։

Նուաճեա՛ Եսաւ՝ ՚ի գըլուխ խըրոխտութեան
մոլորդարութեան ,
և յոսկեճամուկ հանդերձ փայլփայլեալ
ընդ շըղաշըղաւ ,
զպարանոցաւ հօր իմ՝՝ արտասուեալ աչօք
անկանէր ,
յորդ աղէկաւոր կաթոգին գնա՝ անյագ
համբուրէր .
Ընդ աշտանակեալ՝ երթայք ՚ի Սէիր ,
յոսկեսանձ ձիեր ,
երեկօթս առնէաք ՚ի պալատ նորա՝ ՚ի
նորին գիշեր .
Ծափահար երգոց մերոց գեղգեղմունք
անդըր յաճախէր ,
և այգուն ՚ի չու անկանիմք դարձեալ՝
դէպ ՚ի յերկիր մեր .
՚Ի կոխել ոտից մերոց յԵփրաթա՝ ծը-
նանի Ռաքէլ ,
այլ դժուարածին յուր ծնունդ՝ նըմա
եհաս մեռանել .
մինչ այս և մինչ այն՝ երթամք ՚ի Քանան
ընտիր երկիր մեր ,
ախտատարաւ զարտօրայն ամէն՝ լուկը-
սոյ հերկել .
Սըրբոյն Յովսէփայ արածեմք զարօրեկ
ղըպըր ոչխարաց ,
Ծաղկաւէտ փայլերն ընձեռեն փողցես
մեզ շատ մեծագանձ .

Ջուրք թերթերէին զառ 'ի վայր հոս-
մամբ՝ 'ի բարձանց լերանց ,
յամենայն տեղիս ուր մշտադալար՝ ծառք
սաղարթագեաց ,
Սերմանեմք , աճին անդ քիստ երկնա-
գոյն ոսկեթոյր հասկաց ,
և միոյն հազար շահիմք 'ի նոցունց , հրճ-
ուիմք ցնծագեաց .
դառնան յարօտոյ յամէն երեկոյս՝ փափ-
կիկ բզուք խաշանց ,
ծանրակիր ստեամբք ուռուցեալ լցեալ
'ի քաղցրիկ կաթանց ,
Անկած էր 'ի մեզ սէրըն յօդակապ՝ 'ի
սիրտ սիրարծարծ ,
զխռովդ զՅովսէփ ամէնքըս տեսեմք , լուր
վե՛հդ իշխանաց .
մինչ յաւուր միում այգուն միագունդ
էաք մեք նստած ,
երազ ինչ այսպէս պատմէ նա առ մեզ՝
մշտայոյզ նախանձ ,
* Հայր՝ և եղբարքդ իմ՝ թէ ինձ նե-
րեսջիք պատմել զիմ երազ ,
կեանս ինձ շնորհէք՝ անշուշտ գխոստա-
ջիք , յաշխարհիս 'ի կայս .
որպէս թէ էաք մեք 'ի գիշերիս այս
խաւարամած՝
երկրագործ մշակք յանդաստան միում՝
այլ ոչ ծաղկագեաց .

Ը՛նդ երկասիրեալ անխոնջ 'ի քըրտունս
մերոց երեսաց ,
կաղկղեմք կարծրատարր ըղձողն ամրա-
պինդ՝ հանգոյն գողակաց .
արկանեմք զսերմն 'ի նոյն վայր ընդ փոյթ՝
ըստ հարիւր քուաց ,
և ածեն երկինք ամպապատ անդէն սա-
հանս անձրևաց .
'Ի պարզել երկնից՝ և յելս արևուն 'ի
ծիծաղ դիմաց ,
դաշտագեղ աճին և աճունաճիւղ՝ ամէն
հատք սերմանց .
Մարախք խուռներամ գընդլին , կուտա-
կին ըստ այերս բարձանց ,
ապաշղթայազերծ հողմունք՝ ընդոստ վա-
նէ արտալած .
Բխաքըն մէտ 'ի մէտ ծածանեն 'ի
յարտս՝ ոսկեթոյր հասկաց ,
անդ բոկլիկ ոտամբ աստ անդ արշաւեմք ,
խնդամք ցնծազգեաց .
Եւ 'ի ձեռն տուեալ զմանգաղն ապա՝ հըն-
ձեմք ոստաքանց ,
'Ի դէզ և 'ի դէզ ըղհնձեալսն՝ 'ի մի կու-
տեմք յարտորայս ;
Զարմանք հիասքանչ անդ զմեզ կալ-
նուն , մընամք մեք ափշած ,
զի հունձք ձեր՝ հընձոց իմ երկըրպա-
գու լինին գետնամած .

զարթնում յայս տեսիլ, և խոյս տայ յինէն քունըն 'ի յաչաց,
այլ չէ՛ լուսափիւռ ծագեալ էր յերկինս արև գեղապանծ.
Յանկողին իմում ծըփիմ ալէկոծ 'ի մեծի վարանս,
Նիրհեմ վերստին 'ի քուն խորխորին՝ իբրև այր խոնջած.
ահա՛ իմ երկինք տեսանին աչաց՝ 'ի վառլուսապանծ,
խիտ առ խիտ շողան կանթեղաբոլորք անդ բիւրք աստեղաց.
Զաչըս իմ 'ի վեր և 'ի վայր շըջեալ՝ տեսի երկնասան,
աստղ լոյծ փայլուն, և գեղանըշոյլ ծագեալ արփական.
և անդ Արեգակն, և Լուսին աՀա՛, ափշիմ հիանամ,
աչքն իմ 'ի յերկինս՝ այսպէս ակնապիշ ընդ երկար մընան.
Մ՝ինչ գեղեցկափայլ այն աստեղց յառեալ՝ ես ըսքանչանամ,
յանկարծ լուսաբուղխ դրունք եթերին՝ Ճայթմամբ մեծ բացան.
անհամար գումարք Ճեպեն հրեշտակաց բուլից վեցթևեան,
ըզարըրինդ սուլեն և եղեգնափող, երգեն քաղցրաձայն.

Ճշորոց և մին ինձ անդ առաւօտաթև
թռչնոց քաղց նուագն.
խոյանայր և գայր, եկեալ առ ինև 'ի նը-
շոյլ փայլման ․
Եր նոքա համդերձն ընդխառնկերանգ՝
ընդ երգան և ձեան ,
'ի մարմնն չքնաղ և քան զոյնորդ , ու 'ի
համակ երկայն ․
Հարցանեմ զնա վասն եթերին գեղա-
լոյս փայլման ,
բացեալ ընդերանն՝ ինձ հեղահամբոյր
զայս տայր պատասխանն ․
* Յուցանեն՝ Ցմլէփ , գեղափայլ ա-
տեղքս՝ որք երկնասանն ,
երկնասան եղբարցդ ընդ դոյլ սիրախումբ
սիրած Ցանկուլոյն ․
Ա.րեգ և Լուսին՝ ընդհայր և ընդմայր ձեր
երջանկաղային ,
և եթերս անամբ՝ զօրն այն անաղօտ
խընծղանաց արժան ․
ժողում բարձրագահ 'ի յաթոռ չքեղ
կացուցեր իշխան՝
տեսչութիւնն անեղ բոլորից իշխօղ ա-
մենախընամ ․ ||
Մ'ինչ նա զայս ասէր , Արեգ և Լու-
սին , և աստեղք երկնասան
երկրպագեն անդ աստեղս խմբամ՝ և
երեցս անդամ ․

զարթչիմ ես դարձեալ՝ զիմ ըէր սեա-
հեր 'ի վեր ամբառնամ ,
տեսանեմ , ցայտեր ափիւն յաշխարհի
շող արեգական.
Իսկ արդ՝ զի՞նչ իցէ , պաղատիմ առ-
ձեզ , մեկնեցէք ինձ զայն ,
քանզի տագնապիմ 'ի միտս ալէծուփ
վշտաց վարանման . ||
տաց , մեք հայիմք յերեսս միմեանց 'ի
զայրայթ ցասման ,
մշտախոհ երթամք յարտորայսն մեր՝
խոկ և խոկ յայնժամ.
Նկօսապատառ այն ինչ ընկլուք հեր-
կել զանդաստան ,
զայր առ մեզ յուշիկ և նա սիգաքայլ
միայն ընդ միայն .
ըղձեաւքն և զօտին՝ երթամք համա-
խումբ , պրկեմք յատաստան ,
խմբիմք 'ի ծընօքս 'ի մի թանձրախիտ
մեք յուսենաստան .
Խորհիմք զանմեղին կենաց ընդ երկար ,
անդ միաք մեր ծփան ,
է՝ զի , դուլթ ածել , է՝ զի , անխընայ
ըղձուր երկրէրան .
դեռն Արուսեակն՝ որպէս փափախի ,
յընթացն անդադար ,
մերթ 'ի դաշտորայս , մերթ 'ի լեռնա-
մէջս , տալոր է տուրալ.

Նու կամ ձմեռան հանդոյն ցրտաշունչ
օդոց ձիւնասառն ,
Յորում մերթ երկինք պարզին գեղե-
ցիկ յորև լուսափայլ ·
մերթ ամպրոպայոյզ յորդեալ ոգորի 'ի
ձիւն ցրտահար ,
մերթ մութ բալաձիգ քօղարկի 'ի նա՝
յաղջամուղջ խաւար ։
Ո՛չինչ և նուազ մեզ քան զօրինակս՝
անդ փոփոխ ծըփալ ,
մերթ զայս՝ և մերթ զայն՝ խորհիմք և
ոչ մի ածեմք 'ի կատար ·
մինչ յայս անկայուն խորհուրդըս մը-
տաց՝ կայաք վշտահար ,
Յովսէփ 'ի հեռուստ զայս պաղատա-
խառն արձակէ բարբառ ։
• Ո՛րդ յիս խնայեցէ՛ք , պաղատիմ առ
ձեզ կական ես բարձեալ ,
Է՛մ ես հարազատ ձեր կրտսերագոյն սի-
րատարփ եղբայր ·
Է՛հ , է՛հ , ո՞րպիսի խորհուրդ քըրթմընջէք
զինէն ընդ երկար ,
բա՛բէ , հասեա՛լ են ինձ մահուն արկածք
յաղէտ չարաչար ։
Ո՛հ , իմ քստմնափուշ դիզանան գլխոյս
հերք մարգարտափայլ ,
և մառախլապատ անկանին աչացս՝ աղ-
ջամուղջ խաւար ·

ամղէ , գըթացէ՛ք գեղեցկափթիթ ինձ
մանկան կայտառ ,
և իմ խնայեցէ՛ք չքնաղ հասակիս արդ-
շուշանափայլ ։
Դու զիս ազատեա՛ գոնէ՛ , աղաչեմ ,
Ոսկեղէն իմ եղբայր ,
դու զիս ազատեա՛ 'ի սէր քոյդ դըստեր
չքնաղին փաթար .
և ամենեցուն ձեզ միոյ միոյ պաղատիմ
դարձեալ ,
'ի լոյս ձեր կենաց՝ ինձ խընայեցէ՛ք հի-
քոյս երկթշուառ ։ ||
Արդարև յայս բան 'ի գութ շարժեցաք՝
և գըտայք հընար ,
յարեան թաթաւեմք զիւրըն պատմու-
ճան՝ գաւինն ասրափայլ .
և ահա՛ յայնժամ անցանեն անտի՝ արք
շահավաճառ ,
երթամք առ նոսա՝ ընդ մեզ և ըզնա
յոտնակապս ածեալ ։
Ընդ սիկղ քըսան՝ դառնամք ընդ-
կրունկն , զնա վաճառեալ ,
և զարիւնաներկ պատմուճան նորին
գամք ընդ մեզ առեալ .
'ի սենեակ իւրում դիւցազն աստանդէր
հայր մեր սիգաքայլ ,
միաբան նմա՝ գուժեմք լալագին զայս
միաբարբառ ։

Հայր հայր՝ մի՛ երբէք զաչսդ 'ի բար-
ձունս 'ի վեր ամբառնար ,
արտասուաց վտակ եհաս ուղխօրէն՝ յա-
չաց մեր առուրալ .
երկլինք ձօնեցին աղէտ վշտատանջ դը-
ժոխաչարչար ,
յարկած անըմբեր լըկիլ մեղ մատոիկ
դառնադըլին խայտառ ,
Ո՛հ պատմուճանս արիւնաթաթախ և
պատառոտեալ ,
կիսամահս ըզմեզ թողին 'ի լերին բարձ-
րաբերձ կատար ,
քանզի գիտացաք՝ թէ գայլ վէս եկեր
զՅովսէփ մեր եղբայր ,
լամք աղէկըտուր , ողբք մեր չարժեցին
զահագին անտառ ,
Եւ յանկարծ անսաք ըզմարմին նորա
ըզփափուկ կայտառ ,
մասն ինչ 'ի մատանց , և մասն ինչ յո-
տից՝ ցիր և ցան սփռեալ .
որովայն նորա յերկուս բաժանեալ ա-
րիւնաթաթաւ ,
և ոսկորոտիքն արկեալ դէզ համբուն՝
'ի միմեանց քակտեալ .
Ո՛չ այլ հանդուրժեմք հանդարտել
հայել , տեսարան թշուառ . . .
դառնամք ընդ կրունկն՝ արտօսրահառաչ
զկառկան բարձեալ .

տուածըդ, զի՞նչ առ մեզ․ ․ ․ դիպաւ անըմ-
բեր տագնապ ողբալւոյ,
զիա՞րդ կարիցեմք ժուժել հանդարտիլ
արկածիս թշուառ։
Ո՜չ թէ՝ մեք համբուն անդ գազանա-
կուր լքեալք զաշխարհ,
զի՞նչ պատուհասն տարփալի իցեն մեզ՝
այս կեանք չուառ։ ||
Մինչ զայս ինչ լուաւ, ետես զպատմու-
ճանն ընդ արեան թաթաւ,
ըսկըսաւ կոծել աղեխարշ մորմոք անդ-
դխաթուալ։
* Ո՛րդեակն իմ Յովսէփ՝ գայլոց երկ-
սայրի ժանիք մարդակեր
զիս յօշոտեցին, կամ զիմ բեկոտեցին ա-
մենայն ոսկեր․
զոչխարան իմ ամէն՝ որժան գառնի՝
առ քեզ վեռեկոտել,
զիա՞րդ զփափուկ մանկիկն իմ կերե՞ր՝
ով գայլ գիշակեր։
Զի՞մ արեգակնդ արդ գեղանըշոյլ՝ ընդ
երկին փայլել,
զի իմ արեգակնս ընդ մըռայլ ծածկեալ
կայս մըշտագիշեր․
Իցէ՜, փոյթ ընդ փոյթ ՚ի կայս տըխրա-
գին եւ ինձ հասանել,
ընդ քեզ՝ որդեակ իմ, ՚ի շիրիմ մահու
յաւտեայց հրաժել։ ||

Մեք նըմանավիշտ ողբամք ընդ նըմա
ըղձիւ ըղձիչէր ,
երթալ միաբան խորհիմք ՚ի սփոփանս
տրտմաղցելոց հօր մեր ․
այլ ահա՛ սաստիկ սով մարդակոտոր և
ժանիս սրէր ,
հայց ոգեպահիկ յամէն շտեմարանս ոչ
ինչ գըտանէր ․
Նա՛ յայնժամ զմեզ լալագին աչօք առ
ընթեր կոչէր ,
յայս մայրաքաղաք Եգիպտոս գընալ՝
առ մեզ հրամայէր ․
արդ՝ զոր աստ Յովսէփ քաջալանջ իշ-
խան արքայինըն մեր ,
յետ իւր վաճառման ճառեցէ ինքնին ,
և ըղկիրսըն մեր ․
Ո՞վ տակաւապետ ահեղ արքային վե-
հի բազմասէր
Ներեա՛ զիմ աստէն բաւական այսչափ
՚ի ճառ արկանել ․
բաւեսցի այս քեզ՝ բաւեսցի հըզօր վեհ
ինքնակալըն ,
որ ըղքաջափառ ըղսերունդ ազգիս
յուզեաց ճանաչել ․

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Լուեալ Փարաւոնի զպատմութիւն զայս , հրամայէ մեծաւ պատրաստութեամբ ածել զտուն Յակոբայ յԵգիպտոս ։

Գան որդիքն առ Յակոբ , և պատմեն նմա , անհաւատալի թուին բանք նոցա Յակոբայ , և ՚ի տարակուսելն երևի ՚ի տեսլեան Յակոբայ հրեշտակ տեառն փարատել զվարանս նորա ։

Սկսանի նմա ծանուցանել զխորհուրդ իրացն՝ յարարչագործութէ առեալ համառօտէ զգործն Աստուծոյ , և հրամայէ գնալ յԵգիպտոս ։

Գայ Յակոբ , և յընդառաջ ելանելն Յովսէփայ՝ աղէկէզ և արտօսրածին բանս խօսի անկեալ զպարանոցաւ նորա , և օրհնէ զորդիս իւր համայն ։

Գնայ առ Փարաւոն՝ և օրհնութիւնս տայ նմա , և հրամանաւ նորա բնակէ ՚ի Գեսեմ ։

# ՎԱՃԱՌՈՒՄՆ

# ՅՈՎՍԷՓԱՅ

## ԵՐԳ. Դ

—

Արդ՝ տակառապետն ակճիւ ական-
ջեալ բազմավէպ ճառի ,
զոր Յուդաս պատմեաց 'ի տան Յովսէ-
փայ վեհի իշխանի .
իբր ընտէքերումն անթափ 'ի յուշս՝ առ-
եալ 'ի մըտի ,
գայ առ փարաւոն՝ պատմել և նմին՝
զամէնն ըստ կարգի.
Թէ Աբրահամու որդւոյ Թարայի ար-
քային մեծի
Ճեմ է Յովսէփայ՝ ծընունդն 'ի Խառան
քաղաքն անուանի .
գալուստն 'ի Քանան , երազատեսութիւն
'ի մութ գիշերի ,
առ 'ի նախանձու է , և յիւրոց եղբարց՝
վաճառումն անտի ,

Գըտանէ ըզնա 'ի քուն անուշիկ յիւ-
րում սենեկի ,
յետ ըզթանձրամած թափելոյ նորա ըզ-
քունն՝ անդ մտաչի ·
ըսկըսեալ անտուստ՝ պատմէ բազմակէպ
ըզսերունդն ազգի ,
և զիա՞րդ Յովսէփ գայ առ Եգիպտոս՝
հայրենուցն անտի ։
Արքային լուեալ վէպս երկայնաձիգ՝
հիտաքանչ լինի ,
իբրև երկնածին սերունդ անմահից ըզ-
սոսա կարծի ·
բոցաբորբ արծ վառի և հըրդեհակեղ ե-
ռանդ խոր սրտի ,
կոչէ զՅովսէփ , և տանէ նըմա զայս
պատասխանի ։
*Իմ արտամաթախիծ կըրից համաջուռնջ՝
գինի բախալար ,
գահոյս ոսկեշող և ձաձանչազեղ՝ լոյս
ակնապարար ·
դու ինձ հարապատ ուղղեակ ես՝ Յով-
սէփ իշխան գերափառ ,
դու ինձ հարապատ եղբայր խանդա-
կաթ՝ և սէր սխրափայլ ։
Ո՜ քաջատոհմիկ ըզբոյծ սեռ և ձեռ
այսօր իմ լուեալ ,
կարի բերկրեցայ 'ի սիրտ անախուր ես
խնդապատար ·

ոսկեպատ կառաց , ուղտուց և ձիոց
բիւրք բազմագումար ,
ամէն ընծընօղաց , և զեղբարըս քո փոխ-
եաց յայս գաւառ ։ ‖
Մտաց , հրամայեաց պատրաստել ըն-
կառս , ընձիս բազմարշաւ ,
երկերիւր և զօրս ըսպառազինաց զըա-
հազգեստ վառեալ ․
պատրաստին անդ կառք ըստ իւր հրա-
մանի և ոսկենըկար ,
պատուհանք նոցա՝ իբր ապարանից ա-
պակեայ խապառ ։
Պատրաստին նաև ձիք ոսկեգիսակ ըն-
ժոյգ քաջարշաւ ,
որոց սըմբատակ իբրև եղջերուին նուըբ
և սըրածայր ․
արշաւանք նոցին թուին ոչ յերկրի ըս-
րաթև գընալ ,
այլ յամբըս ձախրել՝ և քան զթըռչնոց
երկնաչու գումար ։
Պատրաստին և զօրք յահիպարանոց յոս-
կեսանձ 'ի ձին ,
որք ամենեքեան ընտիր զօրականք ար-
քային էին ․
'ի հասակս երկայն յաղթանդամ հըս-
կայք սոքա քաջածին ,
պատանիք առոյգ մշտայաղթ զինուորք և
գեղեցկագին ։

'Ի գլուխս իւրեանց սաղաւարտ եդեալ՝
'ի լոյս փայլէին ,
այն ինչ արեւուն ճաճանչ իջանէր 'ի
վերայ նոցին ․
և հանդերձք իւրեանց՝ ընդ ոսկեճամուկ
փաղփիւն երեւին ,
երկսայրի սըրեալ և սուսերք ընդ մէջ
փայլփայլ շողային ։
Ընդ երկրպագեալ քաջուշիմ Յովսէփ
վեհի արքային՝
գայ 'ի պալատն իւր , և պատմէ եղբարցն
զգութ Փարաւոնին ․
Նոքա խայտային ժպտադէին 'ի դէմն՝
անդ կայթ 'ի կայթին ,
պատրաստին 'ի չու ընդ նոսա երթալ
յիւրեանց հայրենին ։
Խանդակաթ համբոյր միմեանց մատու-
ցեալ 'ի սիրտ սերտարփին ,
ընդ այն պըճնազգեստ գունդըս զինուո
րաց գընան անջատին ․
յերկրէ 'ի յերկինս անդըր թանձրամած
ամբառնայ փոշին ,
զի կառք քառաձիք արշաւեն ճախրեն
ընդ երկայն ուղին ։
Սըմբակըք ձիոց յերկրի Քանանու սահ-
ման կոխեցին ,
որք 'ի գիւղօրէս փախեան 'ի Քանան՝
ազգըք բնակէին ․

մինչ տեսին խորանան արկեալ խիտ առ
խիտ ըսփիւռ 'ի դաշտին ,
երկեան երկիւղ մեծ և Քանանացւքն
յահ զարհուրագին ,
Ելեալ յամբարտակս , և 'ի դիտակ
տանց՝ անցնիւր առանձին ,
կորովի աչօք զընննեն մանրախոյզ ըզխո-
րանս նոցին .
որդիք Յակոբայ Ռուբէն և Յուդայ 'ի
մէջ բանակին
Ձեռ առեալ գոգցես 'ի սըրահ մեծի
պալատոյ շըրջին .
Եւ աշտանակեալ գան 'ի ձի նոքա որ-
պէս թէ հպագին ,
Ծափահար բերկրին , խայտան 'ի կաքաւ ,
ցընծան խընդագին .
զայս այսպէս տեսեալ՝ 'ի տունս Յակո-
բայ խըռնէին նոքին ,
աւետարանել զայս նմա խնդիւ յեր-
գըս քընարին ,
Եւ գըտան անտի՝ Ձեպեն 'ի դըրունս
անցից քաղաքին ,
յորում հաստատուն կամուրջ էր կանգ-
նեալ անձաւ 'ի լեզուին .
տեսանեն՝ ահա Ռուբէն և Յուդայ միա-
զոյգ գային ,
ընդ առաջ ելեալ անդ միահամուռ յող-
ջոյն սէրարփին .

Ծափեն և Երգեն երգ խնդապատար 'ի
սիրտ բերկրագին ,
զխաղաղութեանն աւետիս քաղել՝ և 'ի
հարց մատչին .
Նոքա մի առ մի այսպէս անդ հաւէն՝
Ճառել խնդագին
զգալուստ զօրացն արքային մեծի վե՛հ
փառաւորին .
* Ալեծուփ վարանք զձեզ զի՞ արդեօք
յուզէ վշտագին ,
զի՞նչ ձեր բազմագունդ ժողովք խառ-
նամբոխ յելս Ճանապարհին .
Երկեա՞յք ինչ արդեօք 'ի բազմագումար
մարտկաց զօրագին ,
և կամ 'ի մըտի կարծի՞ս ինչ կալայք
Թըշնամի ազգին .
Ո՛չ ահ սըրտաթափ ըզձեզ ծըփեսցէ
ալէյոյզ ատէն ,
մի՛ տրտմաբեր կիրք իբր զլեառն Նոնայ
ըզձեզ այրեսցէն .
Որքա՜ն յԵգիպտոս տիեզերասաստ արքայ-
ին զօրք են ,
որքա՜ն քաջայաղթ պատերազմասէր և գու-
սպառազէն .
Արդ վասն այսորիկ՝ ո՛րք Քանանացիք ,
ընդ մեզ եկեալ էն ,
ահեղ հրամանաւ վեհ փառաւորին առ
մեզ սպասեն ,

քանզի յեգիպտոս՝ ուր քաջախորհուրդ
որդին իւր իշխէն ,
ըղձեր վեհագունն՝ և ըղձեց զամէնն՝
մնան , զի տարցեն ։ ||
Յառաջ խաղացեալ գնան միազոյգ ձի-
ով ոսկեսանձ ,
և գան , մտանեն ժողովրդին ՚ի դէմս ՚ի
տունըս իւրեանց ·
Կրկին երեքկին խոնարհեալ յերկիր
անդըր գետնամած ,
վեհազն Յակոբայ այսպէս սկսանին ա-
սել ըղձոյն զայս ։
* Ոսփս հայր հրճուանօք՝ խնդամ ,
հայր , խնդամ ՚ի սիրտ ցնծացեալ ,
փոխեալ զհանդերձս որդւոյ , և հագիր ըզ
քոյդ պատմուճանս ·
հասին քեզ աւուրք՝ այլ ոչ վշտամբեր
յարտօսր և ՚ի լաց ,
այլ խնդապատար խայտալ և պարել
յանախուր խնծղանս ,
Ոչ այսուհետև ողբ արտասուաթոր՝ և
յանձին հեծել ,
կամ որդեկորոյս քեզ սգալ , և կամ
հող ՚ի գլուխ լինել ·
Ուր խաւարասոյզ այն մթնատեսիլ
քառամեայն գիշեր ,
ծագէ ՚ի յերկնից լոյս ճաճանչագեղ
արև անըստուեր ։

Ո՛չ խաշխաշ բուրէ զհոտ իւր՝ երբեմն
որպէս ծաւալէր ,
նունուփար քաղցրիկ յամ պարտէզս
ընկլեան ծաղկել .
ոչ հընչէ Քարոն տխրագին 'ի դեմս քը-
նար տրտմաբեր ,
սըրինգ քաղցրալուր սուլեն միաբան՝
Մուսայքն ոսկեհեր .
Ցնծա՛ հայր՝ ցնծա՛ , Արշալոյս ածէ ցօղ
մարգարտայեա ,
ցընծան արտորայք՝ դաշտորայք համ-
բուն 'ի սէզ ծաղկաբեր .
պարքէք խնդիւ ծափահար լինին քեզ
աւետաբեր ,
Մեք ընդ ոյն վեհիդ եկեալ եմք ահա՝ ա-
ւետաւորել .
Սիրելի որդիդ Յովսէփ գեղեցիկ սիրոյ
եղբայր մեր ,
ահա՛ յԵգիպտոս տիեզերասաստ է իշ-
խան և տէր .
յաթոռըն երկրորդ վեհ փառաւորին
դահոյն ոսկեթել
նըստեալ՝ ամ ծագաց աշխարհիս իշխէ
ինքնատէր .
Բաւ թէ ասիցես . . . * զիւր արիւնորդ
տուի պատմուճան ,
և ականատես դուք վըկայեցիք ինձ ընդ
մահ նորայն . ||

քեզ խոստովանիմք ըղձանցանըս մեր
մեղաց քրէական ,
ներել յանցանաց մաղթիմք պաղատիլ
քոյդ գթութեան ·
Գիտասցես քաջիկ զերազըն նորա՝ զոր
նոյն մեզ պատմեաց ,
իբր երկրպագու նմա մեք յերազն ի-
ցեմք գետնամած ·
յայնժամ մեք նըմա ոխերիմ 'ի սիրտ
արծարծիմք նախանձ ,
ըսպասեմք 'ի նոյն խողխողել ըզնա 'ի սայր
նիզակաց ·
Եւ գայ նա առ մեզ յընդարձակածիր
արօտորայս դաշտաց ,
յորում հընձէաք երկսայր մանգաղա-
հասկըս ոստաքանց ·
խորհիմք գեղեցկին դարձեալ միաբան
վտանգել կենաց ,
և կալեալ ըզնա՝ զոտս և ձեռս նորին
պըրկեմք յառասանս ·
Մ՛ինչ զայս խորհէաք, եկին ահա՛ բոյլք
վաճառականաց ,
վաճառեմք ըզնա անդ սակաւագին՝ իբր
երկուց տասանց ·
առեալ թաթաւեալ զեւըրըն պատմու-
ճան ընդ արեւն գառանց ,
գուժեմք վեհիդ զայս՝ յողբ աղեկըտուր
և բարձրագանչ լաց ·

Իսկ նա յԵգիպտոս ուղեգիր եղեալ
միում իշխանաց ,
անմեղ 'ի զընդան արկանի յուրում
տիկնուհւոյն ձեռաց .
այլ փարաւոնին' մեկնելով նորա զոհ-
ուալն զերազ ,
բարձրանայ 'ի գահ յաստիճան երկրորդ-
արքային փառաց ,
Նորա գուշակեալ ըղձոյն եօթնամեայ
անգութ մարդախանձ ,
ցորեան ամբարեալ է յառաջագոյն յա-
մըն շտեմարանս .
մինչ մեք յԵգիպտոս' գնել ըզցորեան'
ըստ քոց հրամանաց ,
նորա ծանուցեալ ըզմեզ արկանէ 'ի
բանդ ուզըրամած ,
Զբենիամին մինչ ետեսըն նա , անդըր
սիրարծարծ
ըզպարանոցաւ անկեալ մեր' եհեղ ըզ
գետս արտասուաց :
Ծանուցեալ մեզ' լամք մեծակական 'ի
սիրտ անձկայրեաց ,
մինչև լսելի տան փարաւոնի լինին
ողբք և լաց ,
Եւ նա շուտ ընդ փոյթ հարցանէ զմեզ'
պատմեալք մեք կարգաւ
ըզսերունդըն մեր և ըզձեր նախնի մե-
հից գերափառ .

Նորա զայս լուեալ՝ յեռանդն բոցար-
ծարծ՝ և 'ի սէր վառեալ
հրամայէ առ մեզ ածել ծերունիդ կա-
ռօք քաջարշաւ ։
Ո՜հ ոսկեզօծ կառք փարաւոնին ար-
քային խոնարհ ,
երիվարք նոյնպէս ահխպարանոց առ քեզ
ընծայեալ ․
իւր հըսկայազօր պաշտանկք երկերիւր
կամ խորանահար ,
ա՜ղէ երթիցուք՝ ուրի յԵգիպտոս մեր
քաղցրագութ հայր ։ ||
Մնացին , այլ իւր ալեասատ վարանք
մնաց ամբոխեալ՝
ծըփելին ըղձս 'ի յոյզ խորհրդոց խոկ-
մանց անդադար ․
'ի ծըփելն այսպէս 'ի վարանս մնաց տը-
խուր սրդացեալ ,
քընաբեր մեկոն անդ յունչըս նորա
բուրէ շղոտապա ։
Տրտմաբեր 'ի կիրս ըղձուն ընդ գրկէ
թանձըր և խորին ,
հրեշտակ վեցթևեան նըմա երևի յան-
կարծ յերազին ․
ողջունեալ ըղձս՝ այսպէս ըսկըսաւ ձա-
նել խնդագին
փարատել վարանս զիւր տրտմաթախիծ
և կըսկըծագին ։

* Ծանեա՞ր զիս արդեօք Յա՛կոբ վե-
հազնեայ, ե՛ս եմ Ուրիէլ,
հրեշտակ Աստուծոյ, որ ընդ քեզ մարտ-
եայ 'ի միում գիշեր ·
դարձեալ վերըստին եկի քեզ՝ բայց ոչ
ըմբըշամարտել,
այլ խօսել ըղձանս 'ի յերկնից իջի զայս
աւետաբեր։
Որդիդ քո աչա՛ Յովսէփ յԵգիպտոս է
իշխան և տէր,
այլ ընդէ՞ր եղև նմա այս, ասես, ինձ
ունկընդիր լեր ·
զի զքեզ ընտրեաց անուամբըս այսու՝
Աստուած մարդասէր,
քոյդ Աստուածատես Թարգմանի ա-
նուանդ՝ ով վեհ Իսրայէլ։
Այն ինչ ըղանդուղն 'ի յերկնից յեր-
կիր դու կախեալ տեսեր,
զանմահ հրեշտակաց ընդ զաղիր Հար-
պեայս և ըղմարտ մըէլ ·
'ի սանդուղ զԱստուած տեսեր աչօք
քոյք պարզ և ակներև,
ունի քեզ Աստուած զիւր անձառ խոր-
հուրդս աչա՛ և յայտնել։
Քանզի կամարար գըտար դու նըմա
յաշխարհ վշտամբեր,
ըզքեզ սիրեաց նա՝ որ 'ի յՈղիմպոս,
կաթողին 'ի սէր ·

առաքեաց զիս քեզ զամենայնն 'ի ձեռն
համբուն արկանել ,
զոր յառաջն եղեն , և զոր լինելոց իցեն
դեռ ընդ դեռ ։
Աստուած է հաստիչ այս ամենայնի՝ թէ
կամիս գիտել ,
սակայն՝ լուր , զիա՞րդ արարչագործեաց
զերկիր և զեթեր .
արդ մինչ ոչ էին երկինք և երկիր , մի-
այն Աստուած էր ,
կամեցաւ զերկինս և զերկիր՝ յանդգ
ոչ էից առնել ։
Ստեղծ ըզտարերսն , և 'ի տարերոց՝
զերկիր և զեթեր ,
սակայն անպատրաստ եթող 'ի սկզբանն ,
ապա յարդարէր .
ոչ Արեգական լոյս գեղածիծաղ անդա-
նօր փայլէր ,
ոչ աստեղըք Լուսին և բոցաճաճանչ ըզ-
նըշոյլ ցայտէր ։
Ոչ ուր զայն ասեմ , նաև ոչ՝ գիշեր
մութ նըսեմաստուէր ,
աղօտանուաղ զցայգ և զցերեկ լոյս ինչ
երևէր .
և ոչ ծառք յերկրի սաղարթափըթիթ
այսպէս պըտղաբեր ,
ոչ ծաղիկք անոյշ երփներանգ գունով
յամենայն արտէր ։

Ո՛չ լերինք բարձունք երկնածայր բը-
լրօք յամպըս ծածանէր ,
ոչ երկին ու երկիր 'ի միմեանց անջատ էր
կամարաձև .
այլ յամէն տեղիս զալեաց մկանունան
ալեօք ջուր մըղէր ,
յորում և Աստուած իւր օդահերձիկ
աղաւնին ձեմէր :
Ապա յարդարեաց սքանչելահրաշ ըզ
վերինն եթեր ,
զայն կամարաձև արկեալ ամրապինդ-
անսիւն ու անբևեռ .
զարդարեաց ըզնա աստեղօք գեղեցիկ
յարև անըստուեր ,
որ լեզու կարօղ զսքանչելահրաշն բա-
ւական ճառել :
Եւ 'ի մէջ նորա անսիւն եդ զերկիր
դառնալ և շըրջել ,
յամէն դարձ նորին տիւ գեղածիծաղ
և գիշեր լինել .
Ժողովեաց ըզջուրսն յՈվկիան ծովուն
անդընդապըտոյտ ,
սերեաց 'ի նմա մեծամեծ ձկունս պէս
պէս և տարբեր ,
Զարդարեաց զերկիր պըճնազարդ-յա-
ւէտ 'ի սեզ ծաղկաբեր ,
բուսոյց և 'ի նա զկանաչազգեստ գեղե-
ցիկ ծառեր .

ելից զերկրինս յամենի գաղան անդրուսայ
քանատար ,
ելից և զերկինս ամպաշու թռչնովքն
սուառնաթև ։
Ո՜վ որ յերկիր խոնարհ զոր յերկին վե-
րին աչօք քո տեսեր ,
ձեռն ամենարուեստ ըստեղծ ըզնմա
նին ինքնատէր ·
զի ինքն է միայն անըստեղծ էակ անեղ
և աներբ ,
են համբուն նորին գործք ձեռաց ամէն
գոյակ 'ի տարբեր ։
Ըստեղծ և ըզմարդ յօդի կենդանի ան-
ման մեղ նըման ,
այլ քէուրում պատկեր , արար և 'ի դէմս
զնա իւր նըման ·
դու մի՛ հիապքանչ զարմանար ընդ իմ
հրաշապատում բան ,
չունի նա ըզդէմս՝ և ոչ ըզմարմին , և ոչ
ըզկերպարան ։
Նա՛ անձառելի Աստուած անքըննին
էակ աննըման ,
էութիւն անհուն անիմանալի , և տէր
ինքնիշխան ·
իւր պատկերն՝ ոգին , որ 'ի ծոց իւ-
րում՝ համապատիւ բանն ,
և Հոգին սուրբ իւր զօրութիւնն և
կեանք յաւիտենական ։

Ի՛նչ հաս է մըտաց՝ և մեր հրեշտակաց
գնդից հրաշերան ,
զոր միտք ըմբռնեն՝ զայն քեզ ձօնեցից
բանիւ պատմութեան ·
որդ տընկեաց Աստուած դրախտ ՚ի
յԱդին անդըր ՚ի սկզբանն ,
յայն ծաղկատարփակ եած ՚ի դարաստան
նախաստեղծն Ադամ.
Ի՛յւ նա ընդակից ոչ եգիտ անդ լուր ,
տրամեր ախրական ,
ըստեղծ յայնժամ տէրն զգեղագան-
գուր Եւայն՝ օգնական ·
զամենայն պտուղս եա հրաման նոցա
ուտել քաղցրահամ ,
սակայն ՚ի ծառոյն արգել ըզնոսա՝ չու-
տել գիտութեան.
Ի՛յւ նոքա ընդ դէմ բանից՝ ճաշակեալ
ծառոյն հայեցան ,
կերան , և արտաքս ՚ի փափկավայել դը-
րախտէ անկան ·
և զանմահութեանց ըզձիր կորուսին ,
եղեն գաղթական ,
՚ի վշտալըրուկ աշխարհիս լըկին , կոչկո-
ձին զընդան.
Ո՛չ այսչափ միայն , ո՛չ , հոգւով նաև
՚ի հրաբոց գեհեան
պատուհասակոծ լինին ՚ի կըտտանս տար
տարոսական .

ժը

անդ ընկըղընաչարն 'ի խընծիղ բերկրի
յերգըս քաղցրաձայն ,
փողաւադափող տօնուա ցնծութեամբ
հընչէ իւր բերան ․
Օ՜ է յորժամ զմարդն արար , և ըս-
տեղծ Աստուած՝ իւր փոխան ,
ո՞րչափ արտմագդեաց՝ ո՞րչափ ալէկոծ
զինք վարանք կալան ․
շրջէր 'ի սանդարան աչօք բարկացայտ
նա՛ աստանդական ,
'ի ձայնէ նորին՝ յորժամ հառաչէր ,
ալքըն այն դողան ,
Նա գայթ 'ի գայթ հանգոյն սըկընդի՝
'ի դրախտ Ադինեան
գայ , ընդ բնով ծառոյն կենաց սա թագ
չի խարդախել զԵւայն ․
այն ինչ նա ճեմէր անդըր սիգաքայլ
միայն ընդ միայն ,
ադևոր առ նա երևի դալար յօձի կեր-
պարան ։
Սպրդեալ 'ի մէջ ծաղկանց քաղցրա-
հոտ՝ կանգնի միւսանգամ ,
անդ նմա բարբառ արձակէ բացեալ
զիւր երկճիղ բերան ․
* Ծառ է սա կենաց՝ գիտիցե՞ս Եւայ
դու կին գեղազուն ,
և պտուղ նորա գերապանծ կարի ձիր
անմահութեան ։

Մեք ճաշակիցես ըղձա՝ տօնկնուհիդ ,
երգնում անկեղծ զայս ,
բարւոյ և չարի խնկաքանչ լիցիս գիտուն
իբր Աստուած ․
զի յորժամ կերի օձըս անբարբառ 'ի
պըտղոյս կենաց ,
խօսիլ ըսկըսայ ես ահա համգոյն մարդ-
կային աղանց ։
Ո՛ն , և դու մայր ճաշակեա զայս , զի
լիցիս Աստուած ,
քեզ բնու հրեշտակաց երկրպագցեն
արդ ընդ երկիւղ դիմաց ․ ‖
եկեր ըզպտուղն այսու խաբուսիկ բա-
նիւ նենգութեանց ,
անկան 'ի դրախտէ , յիւր ըսկըզբնաչարն
եհաս 'ի նախանձ ։
Գիտիցեն արդեօք , ազգըք մարդկային
ըափիւ աշխարհաց
յոգի և մարմին չարաթոյլ տանջին 'ի
վիշտ կտտանաց ․
և Աստուած ընդդէմ այն նախաչարին
փառեալ 'ի նախանձ ,
որդւոյ իւր այսպէս՝ որ 'ի ծոց իւրում,
բարբառ արձակեաց ։
* Ո՛ ծընունդ անեղ իմ Աստուածոր-
դիս պատկեր իմ դիմաց ,
զի՞ այդչափ մարդոյն վիշտ բազմատագ-
նապ գործոց մեր ձեռաց ․

զի՞ թողուք ընդ նենգաւ անկանիլ յան-
մահ խուր փառաց,
կոխան ընդ ոտիւք նեսարին լինել չարին
մահաղդեաց:
Մ՚փառս, և աւա՜ղ . . . զի՞նչ անպարտ
կորեն՝ յայն անգութ դահճաց
աղբերք մարդկային՝ թէ՛ 'ի տիեզերս, և
թէ՛ 'ի սանդարս.
Ո՜հ՝ զխա՞րդ, որդեակ իմ, տոկան նոքա
'ի հրոյն կաթսայս,
Օն, դուն գործեցուք 'ի գիւտ նորանոր
հրաշալի հընարս:
Դու ընդդէմ չարին որդ մնա 'ի հան-
դէս վիգային մրցմանց,
իբր ըղձոռ մարտիկ Ճակատեալ ընդ նա
վառեալ զինազդեաց.
փութա՛ որդեակ իմ՝ 'ի վէգ արիւնոտ
յաշխարհ մահացուաց,
'ի քէն ոչ մեկնիմ, ընդ քեզ եմ ես միշտ՝
որդիդ սիրապանծ.
Ա՜հ 'ի խուճապանս խոյս տուր 'ի շըր-
տունն արհաւրօք բոհմանց,
կուրծեղ քո բաղուկ զօրասցի 'ի քեզ,
և քաջալերեա՛ց.
աներկիւղ կալեալ զնա՝ կորովիդ կապ-
տեա՛ 'ի շըղթայս,
զի մի՛ պանծասցի, և մի՛ ինչ երբէք, զի
նա մեղ յաղթեաց.

Օւսուա և զատուց կողոպտեալ նորին
’ի վատուժ ձեռաց ,
բաշխեա զայն մարդոյս՝ զոր մեք ըստեղ-
ծաք ըստ մերոց դիմաց ,
զի պարերգութեամբ կայթեսցին մար-
դիկ յանըսպառ հրճուանս ,
և ըսպեղանիս լիցի քո ծընունդ նոցայոց
վիրաց . ‖
Նա յեթեր վերին դիտակ ընտրել իւր
ազգ սեպհական ,
ծոցածին ծաղկին յընտրելոց ազգաց ա-
ծիլ յերկան .
աչօք ընտրեաց զայդ ձեր պայծառ
տոհմ Աբրահամեան ,
որում հայրագութ ’ի յերկնից բարձանց
եցոյց զիւր խընամ .
Տես , մինչև ըղձեր բոյլք մատաղածին
հովուէ քաջաջան ,
’ի ջրաւէտ տեղիս հանգուցեալ ըղձեղ
’ի լոյս տուընջեան .
ոչ այնչափ հովիւն ընթանայ ըզհետ իւ-
րոց ոչխարաց ,
և կամ մատաղանջ որոց զանձըն իւր յու-
զէ ’ի ծըփման .
Ի՛նչ բարձրագահ զօրդիդ քո Յովսէփ
զգոյժ սիրական
զոր պատուամեծար յԵգիպտոս արար
քաջալանջ իշխան՝

յաղգ մեծ՝ բարձրեալն ապաքէն առնել
խորհի յամարամ,
և անթիւ որպէս խիտ առ խիտ սաղարթս
ծառոց բազմոստեան։
Որդ ըղձեղ ածել փառաւորն սրբոյ
արար հրաման,
այս Աստուածային՝ գիտասցես անշուշտ,
գործ է տեսչութեան.
Օ՜ն գնասցես և դու, մի՛ յապաղեսջիր՝
ո՞վ իմ սիրական,
և այս Աստուծոյն՝ գիտասջիր, իցէ
քեզ և այս պատգամ։
Զի անդ մնայ քոյդ անթիւ զաւակօք
աճիլ սերընդեան,
զոր Նախահաւըն քում Աբրահամու
խոստացեալ է զայն.
ահա՛ կատարէ 'ի քեզ զիւր խոստմունս
տէր բարեխնամ,
անդ զորդիս որդւոց քոց բազմացու-
ցեալ աստեղաց նման.
Որչափ յԵգիպտոս բազմասջիք անթիւ
ազգօք խուռներամ,
մինչև Թագաւորդ երկընչել 'ի ձէնջ որ-
քոյից համայն.
որք ահեղասաստ անգութ դահիճքն այն
տացեն զայս հրաման,
դետավէժ առնել նորածին մանկունս
ըզմատաղերամ,

Ձեզ տացեն քաւող զամենայն սուրս
կորդալ յարաժամ,
մունետիկք այսպէս անդ մեծակաուաչ
աղաղակ բառնան.
* դուք Իսրայելեան տոհմ անձնախըր-
ըոխտ և ազգ. խուռներամ,
ձեզ աշեղատաստ արքային պատուէր է
այս լինչ միայն,
Ընդարձակատարր եկայք խմբեցէ՛ք 'ի
դաշտ Մեմփիսեան ,
ձեռք ձեր անդադար զաղխս շաղեացէ՛ն
անխոնջ 'ի տուռունջեան .
խըստիւ ետ պատուէր՝ գիտասջի՛ք ո՞
արք, մեծափառ արքայն,
Թոպամոհ առնել և դառնահարուած
զանփոյթմն ապաջան.
Եթէ հրամանին՝ Իսրայելացիք , չան-
սայք դուք յայժամ,
գիտասջի՛ք անշուշտ , ըղձեղ կերիցէ
սուսեր երկբերան .
գընան արքային անդըր աւանիկ քաջ
որիթունք վաշտկան,
արի՛ք, ճեպեցէ՛ք , մի՛ ծուլայք շուշայք
վահրոտ և տարտամ. ||
Լուեալ երկընչլին, գունդագունդ խըմ-
բէին 'ի դաշտ Մեմփիսի,
ըսկըսնուն թըրծել զաղխս թըրեցեալ
և կուտել 'ի մի ,

ո՛րչափ մեծատանջ այս նոցա տագնապ
վիշտ աղէտալի ,
տուայտին չուառքն և յարևուն տօթ
միշտ անտանելի .
Նուըզդեռածին փափկիկ ըզմանկունսն՝
ո՛վ վիշտ սրտալի . . . ,
գետավէժ առնեն երկուցեալ յահէ
խորոխտ ինքնակալի .
աղաղակ յերկինս արանց և կանանց ամ-
բառնայ անտի ,
արտօսրահոսուաչ 'ի տունս ամենայն՝ ողբ
կըսկըծելի .
Ա՛յլ որովհետև ընտրեաց ըզձեզ Տէր
Աստուած երկնի ,
ոչ թողու ըզձեզ՝ արքային խորոխտ
վրէժխնդիր լինի .
պարգևէ կայտառ մի գեղեցկագին մա-
նուկ նորատի ,
և փրկէ ըզնա 'ի գետամըղձուկ մահ-
ուանէ անտի .
Մ՛ինչ ըզսա արկեղբ գետավէժ առնէ
իւր մայր սիրելի ,
շարժէ Տէր Աստուած զսիրտ աղջըկան
վեհ փարաւոնի .
գայ նա իջանէ ընդ եզեր գետոյն շքա
տուագալի ,
յարկեղէ հանեալ ըզմանուկն անբիծ ,
առնէ իւր որդի .

Նու եղեալ ընդնա 'ի ծաղկազարդեան օրոց
սխրալի ,
գըգռուէ սիրատարփ , որ քան զօր ընդ-
նա և խանդակաթի ·
սակայն փարատումն ընդ այս դըժկամակ
տըհաճ յանկըբարի ,
զի սա 'ի կործան վատ գաշուն խուրց
աճեալ սընանի :
Մինչդեռ հասանէ գետավէժ մանկիկս
'ի չափ հասակի ,
ճաճանչ լուսեղէն նըշողէ 'ի միտսն , և
յիւրում սըրտի ·
զմին մըտերիմ յիւր բարեկամաց առեալ
մեկուսի ,
հարցանէ ընդնա , և նա անդ այսպէս
պատմել սկսանի :
* Մի ումեք յայտնել պաղատիմ, Մով-
սէս , զոր ասեմ՛ քեզի ,
ըզսերունդ ազգիդ , և ըզքո ծընունդ-
յազգ Իսրայէլի ·
որդ զաւակ ես դու Ամրամայ միոջ
առըն անուանի ,
և Իսրայէլեան բընիկ դու սերունդ , ոչ
արքայորդի ·
Օ՜ ինչ ազգ քո կըրեն՝ թէս դու աւա-
նիկ , ով իմ սիրելի ,
ցկէ փարատումն ընդոստ յանըստ վիշտ
անտանելի ·

և ըզդեւածին մանկունի գետակէժ առ-
նել սրտառուչ
այս անագորուն արքային պատուէր ձեզ
տուեալ լինի ։ ||
Սորա 'ի լսելն ըզձըժոխըմնէր կիրըս
իւր ազգի ,
անդ մեծացասումն զայրանայ և քան
զառիւծ ամեհի .
առեալ ըզսուսերն՝ գնայ տեսանել
զազգն Իսրայէլի ,
աչքըն հըրացայտ՝ ամբոխեալ 'ի կիրս
գընայ և շարժի ։
Բայց մինչ տեսանէ ըզկոշկոծ իւրում
ազգին վշտալի ,
զաղխուս Թըրբէին , ըմպէին ըզգան յե-
րաշխէպ կարի .
տայր անդ խուձապէ , աչք իւր հըրա-
տապ վառեալ բորբոքի ,
տեսանէ զմի ոք՝ որ չարչարէր զայրն Իս-
րայէլացի ։
Յաղթերէն ձըգեալ զիւր պողովատիկ
սուսեր երկայրի ,
փողոտէ ըզնա , և ընդ աւազով թաղէ
շէշտակի .
որպէս գոռ մարտիկ և յաղթաբազուկ
'ի պայքար մարտի ,
անահ Թըշնամեացն 'ի վերայ դիմէ ան-
քաջընելի ։

Ո՛չ ՚ի շրջահմանց խիտ առ խիտ զինուց
մարտկաց երկընչի,
ոչ յերկրատատան հրացանից նոցին զար-
հուրեալ թնդմբի ·
արձակերասան զիա՞րդ նա դիմէ ձըգ-
մամբ սուսերի,
խառնէ ամբոխէ զահաւոր ճակատ թըշ-
նամւոյն գընդի ·
Այլ անդ Մովսէս ՚ի զայրուց ցասու-
եալ ոչ յառաջ մատչի,
նորա աղաղակ բարձեալ՝ խուռն դիմեն
պալատ յորքայի ·
և ոչ բազմութիւն զինազգեաց զօրացն
՚ի նըմին վայրի
կարացին ըզնա խոչոշել անդէն ՚ի սուր
սուսերի :
Ո՛չ ի գաղտագողի ճեպ նա անդ տուեալ
յանտառ թաւարծի,
ուր ժայռք ապաւէն եղեն և նմա զետ
նապաստակի ·
խոյս տուեալ գընայ նա՛ առ Մադիամ
քաղաքն անուանի,
ուր առնու իւր կին զդուստրըն քըր-
մին Հըռագուէլի ·
Արածեալ տածէ զխաշինն Յոթորայ ՚ի
Սինայ բարձուն,
երևի Աստուած նմա՝ հրաբուղխ ՚ի
սուրբ մորենւոյն ·

չիշխէ նմա հայրն գեղեցկանըշոյլ ընդ-
ձաձանչ լուսոյն ,
որպէս ըղբուղ՝ աչք խոր շըլանան ընդ-
շող արևուն ։
Ո՛ւր որոտ ընդ ոստ խըրև ամպըոպացըն
լուի ձայթիւն ,
շըրջապատ լերինք՝ որք զանտապատաւս ,
երերին թընդիւն ·
անկեալ գետնամած՝ աղաղակ բառնայ
սոսկալի գոչիւն ,
և Աստուած նմա բարբառ արձակէ ՚ի
սուրբ մորենւոյն ։
* Մ՝ովսէս և Մ՝ովսէս հայեաց արդ ՚ի
վեր , և մի՛ զարհուրեր ,
ըղկօշկեար քո լո՛յծ , զի երկիր սուրբ է ,
յորում դուդ կայցեր ·
անմատոյց է սա՛ պիղծ գարշապարաց՝
որպէս զիմ եթեր ,
քանզի փառօքն իմ այսըր հանապազ ի-
ջանեմ ես տէր ։
Ես՛մ Աբրահամու քո նախահաւըն Աստ-
ուած մարդասէր ,
հըզօր իմ բազկաւ զազգն Իսրայելի իջի
ես թափել ·
այլ ըղքեղ առնում՝ Մ՝ովսէս , ՚ի ձեռ-
ուին գործի փրկաւէտ ,
ըղնոսա ՚ի վատ փութամ ՚ի ձեռաց ար-
քային շորթել ։

Սուաքեմ ընդ քեզ՝ ընկալաւ դաշն նորին
տապալել կործան ,
որ շուայտք յորկոր բերկրագին ՚ի դէմս
՚ի կայթ ցընծութեան .
այլ և փութամ յԵգիպտոս աստէն՝ փըր-
կել զազգ համայն ,
և զորս յանըմբեր տագնապ միշտ հեծեն
՚ի լաց և կական.
Եւ մի՛ զարհուրիր ՚ի փարաւոնէ յեր-
կիւղ պակուցման ,
Թէ և զատամունս ՚ի քեզ կրճտեսցէ
անգութ դահճի՛ն այն .
Ես ընդ քեզ եմ արդ կորովի աջով՝
մինչև յաւիտեան ,
քև անբաւ հըրաշս ունիմ ես գործել
առ խըստասիրան այն . ||
Սուէ , և Մովսէս իջեալ ՚ի լեռնէն ՚ի
նոյն աչագին ,
գայ և մըտանէ յԵգիպտոս ՚ի գահ վէհ
փարաւոնին .
առաջի կացեալ սա՛ ազատադէմ անահ
բընաւին ,
խնդրէ զարձակումն՝ որոց իցեն իւր ՚ի
ներքուստ ձեռին ,
Ագի խըստասիրտ ըղնա մինչ շարժէ
յանզուսպ բարկութիւն ,
ընդ Աստուածայնոյ հրաշալեաց գործոց
արուեստք տեսանին .

Ձըգեալ Մոլոքայ ձեռաց իւր փափուկ՝
’ի վեր ’ի յերկինս ,
’ի գոյն և ’ի ձայն և ’ի մուծն զալիր լը-
նուն տունք նոցին .
Յուրում խըստասիրտ ոգի հեղանայ յայս
պատուհասին ,
անջատին , գընան ’ի զոհ Աստուծոյ հրա-
մանաւ նորին .
այս զոհ էր սակայն փըրկութեան վշտաց
խուռներամ ազգին ,
ամպ սիւնատեսիլ և բոցաձաձանչ առա-
ջին նոցին .
Մինչ գընան , շարժին , ընդ եզեր կար-
միր ծովու հասանին ,
Փարաւոնն զհետ զինչ ’ի սիրտ յառեալ՝
գայ պընդի սոցին .
և անդ Մովսէսի շրթամբք աղօթկեր
ձըգմամբ իւր ձեռին
’ի ծովն այն ահեղ բանան ճանապարհք
յուղի աւազին .
Գնիլանան ալիք իբր ամրապատուար՝
կողմանց յերկոսին ,
ահեղ մկանունք ալեաց բարձրանան ’ի
բարձունս վերին .
անցանեն անթաց ոտիւք խուռներամ
ազգք Իսրայելին ,
Փարաւոնն զհետ իւր զօրօքն անթիւ-
մըտանէ սոցին .

Յուզեալ Մոլոքսի՝ զաղտաղային կո-
հակս կարմիր ծովակին ,
հողմունք ամեհի ծփեն ալէտանջ՝ ըղ-
ձոմն ահագին ·
տատ անդ խուճապեն , աղաղակ բառնան
զօրք փարաւոնին
ծովամոյն խապառ իջանեն յանդունդս
ընդ անլոյս մրթին ·
Երգեն քաղցրերգակ Իսրայելացիք քը-
նար խնդագին ,
անկեալ գետնամած՝ օրհնութիւն ձօ-
նեն վերին Եթերին ·
ամբս քառասուն յանապատ տեղի ամայի
շրջին ,
այլ ոչինչ տագնապ , կամ վիշտ անըմբեր
կրեն դառնագին ·
Ո՛չ և թշնամիք սուր բառնալ ընդդէմ
կարեն զայրագին ,
ոչ մերկ , կամ նօթի մնան յանապատ
՚ի նոյն ամային ·
որդ երկարավէպ ոչ կարեմ ճառել
քեզ զամենեսին ,
զոր առնէ Աստուած յերկիր աւետեաց
ածեալ ըզնոսին ·
Պատմեմ փրկաւէտ քեզ ըզկատարումն
խորհրդոց նորին ,
սակաւուք բանիւք զԱստուծոյն անհաս
մտաց անքննին ·

Թէ որպէս փըրկէ 'ի ներքուստ ձեռին
անգութ նէտարին
ըղձըժոխտատանջ խուռներամ գերեալ
զազգըն մարդկային ։
'Ի ծոց իւր որդին ծընանի՝ այն ինչ
դարըք հոլովին ,
յանարըխիղծ կուսէ գեղանի սերեալ
դըստերաց քոյին ․
խընդան անմահից կաճառք հըրաբուն
յՈղիմպոս վերին ,
աստեղք բոցափիւռ նըշողեն անդէն
'ի կամարս երկնին ։
Նու ցօղէն յերկիր շաղ քաղցրածաւալ
'ի սէզ ծաղկածին ,
ծափահար բերկրին տիեզերք համբուն՝
որ 'ի մէջ նորին ․
ցընծան երփնագեղ ծաղկունք յարտա-
րաց ամենայն երկրին ,
երգեն օդաձեմ հաւուցըն երամք նուագ
բերկրագին ։
Բայց նա ոչ ծնանի իբր արքայորդի
քընքուշ յանկողին ,
այլ խանձարրապատ 'ի նըսեմաստուեր
անբանից մըսուրին ․
Ով , որպէս դողայ երկիր 'ի սարսու-
առ ոտըս նորին ,
այն ինչ նա այսպէս 'ի յարդ անշուքեան
դընի 'ի մըսուրին ։

Սու մեք հիմնամբ՝ զիմրդ հանդարտի
նա́ խուկ անեղին ,
որում ոչ բաւեն երկինք աստղազարդ-
մեծածիգ աւղին .
Նա́ ոչ պարագրի՝ ոչ յերկինս 'ի վեր՝
ոչ և յայս երկրին ,
բայց միայն 'ի ծոց ամենահասանից խու-
րում ծընողին .
'Ի չափ հասանէ աւյգ հասակի մինչ
գեղեցկագին
ընտրէ երկոտասան իւր ընկեր ազնիւ-
պատանիս ուշիմ .
զիւրդ փրկաւէտ յայտնէ ըզխորհուրդ՝
նոցա առանձին ,
և նոքօք ապա քարոզէ զԱստուած համ-
բուն աշխարհին ,
Զէնքըն՝ վատափառ զըպիրք դըժպըհի
շամբշեալ մոլեգին
քահանայապետք և իշխանք ամէն 'ի
սուրբըն Սաղիմ
ըրկեն մեծատանջ և խաչաչարչար 'ի
բարձու լերին ,
որոյ ամպապատ ամեառնայ գագաթն 'ի
ժայռ ահագին .
Անմահն ըզմահուն արբեալ ըզբաժակ
փըչէ զիւր ոգին ,
զի մահուամբըն իւր և անմահացին
ազգըք մարդկային .

իջեալ 'ի սանդարս՝ զոգիսըն թափել 'ի
ձեռաց չարին ,
աշեղ ճաճանչէն 'ի սանդարսըն այն՝
լոյսն Աստուածային ·
Որսափի նէսարն , անկանի յերկիր 'ի
հուր հընոցին ,
այն մառախլապատ ալք անդնդական
կործան տապալին ·
հանէ զամենայն՝ որ անդ վըշտատանջ
կըրիւք լըլկէին ,
ածէ ընդոստ 'ի յարկն Ողիմպայ՝ 'ի լոյս
արփենին ·
Օ՜ այսոսիկ երկար քեզ վասն այնորիկ
ասատէն ճառեցի ,
զի Աստուածային խորհրդոց հասու
միտք քոյին լիցի ·
թէ ընդէ՞ր Յովսէփ յԵգիպտոս իշխէ
որդիդ սիրելի ,
և զի յարուցեալ գնասցէ՛ս յԵգիպտոս
փոյթ ընդ փոյթ աստի · ||
Ասաց , և թըռեաւ յամբ ոսկեճաճանչ
'ի բարձունս 'ի վեր
'ի թևըս թեթևս , թողեալ ըզկընի ծիր
ինչ լուսաբեր ·
Թօթափեալ ըզքուն յիւր արտևանաց
բըբաց ոսկեհեր
դիւցազըն Յակոբ , և ըստ հրամանին
ըսկըսաւ առնել ·

Բարձեալ 'ի գըրաստ՝ գընայ և չուէ ,
զոր 'ի տուն իւր էր ,
ձիքըն քաջարշաւ ճախրեն իբր արծուի՝
'ի դաշտ ծաղկաբեր ·
լուեալ Յովսեփայ՝ զօրօքն իւր հանդերձ
գայր ընդառաջէր ,
տեսեալ ըզհայր իւր՝ 'ի սըրտի իւրում
անդ զայս աղօթէր ։
* Երկնի և երկրի՝ մեծ շընորհ ըզքեն ,
մարդասէր Աստուած ,
յայս երջանկութեա հասուցեր 'ի կէտ
աւուր խնծղանաց ·
քաջողջին պահեալ յամէն արկածից
դու զիս վշտաղգեաց ,
զիմ հայր կենդանւոյն իմ պարգևեցեր
տեսանել աչաց ։
Արդարև գիտեմ՝ զի քո՛ է այս ձիր այս
ձիր մեծապանծ ,
քոյդ խընամք զաշխարհըս կառավարեն՝
ո՜վ իմ ողորմած ·
որդ քեւ փողփողէ աստղալից եթեր 'ի
լոյս գերապանծ ,
քեւ և լոյս փեբեան ծաւալի ըսփիւռ
ընդ համբուն ծագաց ։
'Ի խոր լռութեան տըխուր գիշերոյն
և ըստուերամած
քեւ գեղեցկափայլ նըշողէ Լուսին տի-
կինն աստեղաց ·

համբուն տիեզերք քե՛ երկրպագանար
լինին հրճուազգեաց ,
դու ամենայնի Տէր ամենակալ իշխան
մեծապանծ ,
Ո՛չ կարեմ և ո՛չ՝ աչքն իմ կըկոցին 'ի
թաւուտ բըբաց ,
զամենատարածին թուել մեծահրաշ ըզ-
գործըս մատանց ,
և բազմագըրուատ նազարեան լինել քեզ
ըստ արժանեաց ,
ըզքոյդ սխրալի ածեալ ըզմիտաւ հայ-
րագուրթ խնամս ,
Գեղգեղէն քընար կաճառք 'ի յերկինս
անմահ հրեշտակաց ,
գեղգեղէն նուագ յերկրի և թռչնոց
բիւրք գեղեցկապանծ ·
երգեցից և ես՝ որչափ և կեցից , ո՛ Տէր
իմ Աստուած ,
և իմ օրհնեսցէ ըզքեզ անդադար շըր-
թունք յաւիտեանս ։ ||
Ո՛րմունջք աղօթից՝ գընայր , և թըռչէր
յերկինս 'ի շըթանց ,
գերարտօսրալից աչք իւր 'ի բարձունս
յառեալ բազմահայց ·
մատեաւ առ ընթեր ոսկեղօծ պաղպաջ
քառաձի կառաց ,
զիւր հայր վեհազուն տեսանէ յարտօսր
դառնագին 'ի լաց ։

Տեսանէ 'ի նա արտօսրահոսաչ՝ և ինքն
վշտագնեաց ,
ըզպարանոցաւ գիրկ ընդ խառն ահա
անկանին միմեանց .
ոչ այլ ինչ լսէր յայնժամ 'ի նոցին
փափկաձայն շրթանց ,
անշէջ շունչք կային փարեալք ըզմիմեամբք
'ի լիճ արտասուաց .
Հազիւ հազ ապա իւր հայր դիւցա-
զուն զիւր բերանն եբաց ,
ըսկըսաւ այսպէս ձայնել և ասել յոր-
դին իւր սիրած .
* որ յերկինս վերին Աչք ամենատես
էին անսահման՝
վըկայ իմ բանից՝ զոր ձայնեմ առ քեզ ,
ո՜վ իմ սիրական .
Ըզնոյն աւանիկ քեզ վըկայեսցեն աստ
ամենեքեան ,
քանի՞ վշտատանջ մահուն իբր արբի
բաժակ դառնութեան .
չէ՛ և չէ՛ գաղանի վիշտ տառապանաց իմ
դըժոխական ,
զոր կրեցի յանձին յերկրի Քանանու՝
յետ քում կորըստեան .
Արիւնաթաթախ մինչ աչքն իմ տե-
սին ըզքոյդ պատմուճան ,
'ի մութ տխրերանգ իմ փոխարկեցաւ
լոյս կենաց փեքեան .

ամպք ինձ տեղացին որոտ ընդ որոտ զկար-
կուտս յայնժամ,
և մըրրկաբաղխ ծըփեցին զիս անդ ա-
լիք կատաղեան.
Որպէս կաշկանդեալ 'ի շղթայս անզերծ
'ի խաւար զնդան
յօշ յօշ բեկանէին իմ ոսկերոտի 'ի վիշտ
դառնութեան.
զբնութիւնն ամէն տեսանեմ 'ի սուգ
տխուր կերպարան,
տատասկք սըրածայր զանձն իմ խոցո-
տէին՝ որպէս ըզնրան։
Թէպէտ 'ի պարտէզս ընդ դալարաւէտ
բուսոց պատուական
աչքն իմ ձեմէին սիգաքայլ յընթացս՝
միշտ յամենայն ժամ,
յորում վարդենեաց գունագեղ ծա-
ղիկք յանոյշ հոտեան,
և շուշան յասմիկ, մեխակ և քըքում
բուրէր անխափան.
Լուսին գեղափայլ երևէր յերկինս
ծագեալ աննըման,
և անդ լսէին Թռչնոց դայլայլիկք յա-
ւէտ քաղցրաձայն.
'ի ծագել Լուսոյն՝ 'ի վերայ ծաղկանց՝
մեղուք քաջաջան
բըղխէին անոյշ, կարի զուարձալի էր
այն տեսարան,

Սակայն գիշերին 'ի խաւարաւորը մու-
թըս տխրական,
զիս պակուցանեն 'ի հրոյն երկեղուկ բամ-
բիւնք սոսկական.
և տուռւնջենային գեղեցկաձաձանչ 'ի
լոյս մետուղիեան,
աշարկու երկինք 'ի վերուստ առ իմ ա-
կանջ որոտան.
Այսպէս ինձ տագնապ և' 'ի գիշերի և'
'ի տուռւնջեան,
քունըն անուշիկ հատեալ էր յաչաց ի-
մոց յարաժամ.
ըղձահ ինձ խնդրեմ, այլ բա՛րբէ՝ և նա
էր փախստական,
քանի՞՝ որդեակ իմ՝ քանի՞ ես եղէ յո-
գի տապաստան.
Հեծեալ անդադար լալ կողկողագին ինձ
մեծակական,
զախու և զգիշեր այսպէս պարգևէր մըր-
մունջ յիմ բերան.
* Յովսէփ որդեակ իմ՝ գազանաց ժա-
նիք՝ ոչ զքեզ միայն,
նաև զիս ընդ քեզ անկարծ փեռեկ-
տէր, մեծ ինձ պարգև՝ այն.
Ո՞ղէ եթերին գա՛ւ ամենատես Աչք վեր-
նախնամ՝
հայցեա՛ց միանգամ յամենաչուառ ծա-
ռայդ անարժան,

զի՞նչ ես վիշտ կրեմ անըմբերելի երաշ-
խէպ դաժան ,
գըթա՛ Ա՛ստուած իմ՝ գըթա՛ ինձ , մաղ-
թեմ քեզ մեծակական ։ ||
Հանապազ այսպէս լալ արտասուաթոր
ինձ կողկողագին ,
հանապազ այսպէս ինձ անմխիթար վիշտ
կըսկըծագին .
ո՛հ , ո՛հ ծորդեակ իմ՝ այսչափ աղէբեկ
կըրից վշտագին
ո՞ արդեօք կարէ ժուժել , և ժուժէ
ոք տառապագին ։
Ո՜ր գաղանագէշ լացի ողբացի 'ի
մահուան քոյին ,
կերակուր եղէն զցայգ և զցերեկ ինձ
արտասուքն իմ.
ինձ՝ և դու ծորդեակ , ըղդըժոխըմբեր
ըզկիրըս քոյին
պատմեա՛ , զի և ես զքոյդ գիտացից վը-
տանգ ցաւագին . ||
Նա զայս ինչ ասաց , Յովսէփ և Նմա
ընդ ձառեալ երկար ,
զոր յետ վաճառմանն անցին ըզգլխոյն
անցք վշտաչարչար .
դարձեալ գիրկ ընդ խառն ըզպարանո-
ցաւ ըզմիմեանց անկեալ ,
աչքկունքըն հեղուն արտօսր ուղխահոս
և յոդնածաւալ ։

Լան աղիողորմ և կականաւարձ իւր որ-
դիքն իսպառ ,
և որք անդ կային գումարեալք 'ի մի
պաշտակք շար 'ի շար .
ապա անդանօր դիւցազըն Յակոբ 'ի կա-
ռուց իջեալ ,
հրամայէ զօրացն իւրոց՝ լուցանել խա-
րոյկ ըզհրավառ .
Եւ նոքա 'ի նոյն լուցանեն բևկէ 'ի
խուխու չորացեալ ,
որոյ հըրացայտ մինչև 'ի յերկինս բոցըն
ծառանայր .
ձեռամբ իսկ իւրով ըզմատաղածին գա-
ռինս զենեալ ,
յողջակէզ յԱստուած հանէ զնոսա
խնդիւ ծափահար .
'Ի ծունըր իջեալ երկըրպագանէ ըս-
տեղծչին համայնց ,
աղօթկէր այսպէս զայս մատուցանէ ե-
թերին բարձանց .
* ա՛ռ , ընկա՛լ Աստուած , զմեր սերա-
տարփ զաղերս և ըզհայց ,
և ողջակիզիս լիցին ընդունակ քեզ ձեն-
ձերք փառաց .
Ընդ որ խառնեցաք ըզձենձեր սիրոյ զ'ի
մեզ արծարծ ,
որում հատուցիս քաղցրիկ ըղձանօք 'ի
ժըպիտ դիմաց .

դո՛ւ ամենակալ Տէր մեր բարերար՝ քեզ
եմք մշտահայց ,
զայս միայն մաղթեմ արտօսրահառաչ՝
անկեալ գետնամած ,
Ո՜վ ընդ հովանեաւ քում ամենազօր ա-
ջոյն մեծապանծ՝
պահեսցես զմեզ հայրաբար խընամս
քոյին գթութեանց .
օրհներգու շրթունք մեր ընծայեսցեն
քեզ նուագ փառաց ,
որ փառաբանչօք անմահից վերնոց գով-
եալ 'ի սկզբանց .
Որ ածես անձրև յամպայոյզ որոտս
յերկնից 'ի բարձանց ,
զերկիր ծարաւի ռոգես զամէն ծաղ-
կաւորդ անդեայց .
սապէս զպապքեալ մեր կարօտակէզ ըղ-
սիրտ հրայրեաց՝
շիջուցեր ահա՛ շընորհ արարեալ առ-
մեզ քո ծառայս . ||
զայս ինչ աղօթեալ անդ բազմապաղատ
Յակոբ Սահակեան ,
գրգռեն զիւր որդին՝ զՅովսէփ գեղա-
շուք փառազուն իշխան .
և աչք 'ի բարձունս դարձեալ վեր առ-
եալ անդ բազկատարած ,
ըսկըսաւ օրհնել զիւր որդին այսպէս՝
աղօթկեր 'ի բան .

Ո՞ ամենագութ և ամենախնամ Աստ-
ուած մարդասէր
ընկա՛լ զիմ աղէրս՝ զոր առ քեզ ձօնեմ
ընդ զոհիս նուէր ·
քան զայս զոհ հաճոյ է քեզ՝ քա՛ջ գի-
տեմ, շրթունք աղօթկեր
մաքրափայլ սրտիւ ուղերձեալ յերկինս
'ի բարձունս 'ի վեր ·
Դու անտես առնես զառ քեզ ընծայան-
ցանս մեղսակործան մեր,
քանզի գըթած ես անդըր քան ըզմիտս,
և յոյժ մարդասէր ·
Թէպէտ զՍոդոմ հրով ծըծըմբախառ
այրեալ կիզեցեր,
սակայն էր նոցա յանցանքն անթողլի մե-
ղաց մահաբեր։
Ո՛ որ Աբրահամու իմ նախահաւրն
մեկին ասացեր,
մինչ բազմապաղատ՝ 'ի գութ զցասումն
անդ ջանայր շարժել·
ապաւինելով քումըդ գըթութեան՝ ո՛
Աստուած իմ Տէր,
յողորք դեգերիմ արդ աղերսարկու առ
քեզ պաղատել։
Մ՝եղան քեզ որդիք իմ միանգամայն
նախանձ դժոխահեռ,
ներեա՛՝ աղաչեմ, պարգևեա՛ նոցա ճա-
ճանչ անըստուեր ·

զի ակնախըտիղ բիբք աչաց նոցա 'ի լոյս
քո յառել,
և ըզքո հաճոյս հանապազ նոքա յանձին
ցուցանել.
Արծարծեալ ըզսէր 'ի սիրտըս սոցա՝ միմ-
եանց հնազանդել,
և զորդիս սոցա օրհնեա՝ Ա'ստուած
իմ, և զորդւոց Թոռնէր.
իմ սխրատարաս Յովսեփայ որդւոյս՝ զոր
դու սիրեցեր,
զաջ քո կորովի պարզեա ամրապահ յաշ-
խարհ վշտամբեր.
Ո՞ր աղէյարմար քընար քաղցրալար
մեզ արժան հընչել,
բարձրելոյդ 'ի ձօն գովեստից ներբող
ձօնել ընծայել.
զի տրտմաթախիծ ըզմեր մեղկաղէտ ըզ-
սուգ մերժեցեր,
և մեզ միաբան 'ի ծաղկասփիւռ դաշտս
զայս պարգևեցեր.
Եւ որպէս անճառ բախարար գինեաւ
զմեզ բերկրացուցեր,
յայսմիկ գիրկ ընդ խառն ըզպարանո-
ցաւս ըզմիմեանց լինել.
խառնեսցին ընդ երգս քաղցրաձայն
Թռչնոց՝ և գեղգեղմունք մեր,
ընդունակ լիցի և ողջակիզոյս քաղցրա-
հոտ ձենձեր. ||

Աւարտեալ ըղձանան, եւ մից մից համ-
բոյր կաթոգին,
լայնատարր 'ի դաշտ բազմին միաբան 'ի
սէգ ծաղկածին.
յորում անհամար խիտ առ խիտ ահա
ծառատունկք էին,
սաղարթափթիթ զարփւոյն տապ հովէր
չքեղ ոստք նոցին.
Անդըր ծածանէր բարձըր գագաթամբք
երկնածայր սօսին,
և լայնասաղարթ լըսէր թըզենւոյն քաղց
րիկ սօսաւին.
երկնագոյն հագնւոյն՝ սպիտակերանգ-
ուռենւոյն խըշիւն,
և ամբարտաւան նոճւոյն ոստախիտ հա-
մատիպ նըմին։
Ջուրք կարկաչասահ 'ի բարձունէ լե-
րանց անդըր սուրային,
զամենայն տեղիս ծաղիկք երփներանգ-
պէս պէս գունեղին.
յայս վայր գեղեցիկ ուտեն և ըմպեն,
խայտան ժպտագին,
ընդ երգըս թըռչնոց ըղնուագս խուրբանց
խառնեալ բերկրագին.
Ապա հրճուալից անտի յոսկեսանձ աշ-
տանակեալք ձին,
և 'ի յԵգիպտոս քաղաքք մարդաշատ
գան 'ի միասին.

աւտգափողեան անդ Եգիպտացիք քը-
նար հընչէին ,
որք յարահեծ լայն գունդագունդ խըմ-
բեալք կային 'ի ղըննին .
Պ․ան յոսկենըկար պալատ Յովսեփայ
դիւցազն իշխանին ,
հիաքանչ մընան ընդ պըճնապաճյճ
գեղ ապարանին .
զի որմունք նորա ոսկեզօծ ամէն երփ-
ներանգ գունին ,
սենեակք 'ի նըմա են հրաշակառուցք՝ և
մի քան ըզմին .
Շուրջ զապարանաւս էր շաղապա-
տեալք որթք գեղեցկագին ,
տօսախք ոստախիտ և տերևաշատ ամ-
բառնայր յերկին .
պարտէզ գեղեցիկ էր պճնազարդեալ
ընդ ոլորտս նորին ,
յորում գունագեղ երփնովք բազմազ-
գի ծաղիկք փայլէին .
Ընդ աղբերականց ջուրք քաղցրակար-
կաչ յառուս վիժէին ,
մեղմասիւգ Զեփիւռն ըզտերևս ամէն
ծառոց շարժէին .
Ոչ այլ հոտոտել 'ի հոտ անուշից էր ուըն-
դագ նոցին ,
քան ըզմըշկահոտ բուրումն ըզծաղ-
կանց դեռաբացիկ վարդին .

Բուեալ Յովսեփայ գեղեցկին ըղձայրն՝
ածէ արքային ,
և վէ՛հ փառաւորն ընդ նմա խօսակցեալ
ցընծայ խնդագին .
Նորա անդանօր բացեալ ըղձերանն իւր
գեղեցկագին ,
երգէ երգ այսպէս զաչս ՚ի վեր առեալ՝
յաստղափայլ երկին .
* Ո՜ Աստուած իմ Տէր՝ որ գովեալ
յանմահ վերնոց հրեշտակաց ,
արքայդ արքայից բազմիս ՚ի վերայ երկ-
նից եթերաց .
մատո՛՝ աղաչեմ, զունկըն քո՝ իմոցըս բա-
նից ՚ի հայց ,
և լե՛ր կատարել՝ զոր քեզ աղերսէ պա-
պանջք իմ շրթանց .
Օ՜ քո գեղաշուք պարգևեալ ինձ լոյս
անստուեր փայլմանց ,
զի զարքայն օրհնել կարօղ լինչ եղէց
յօձան քոց շնորհաց .
չեմ արդ բաւական՝ ըզդիւցազնափառ
զԱրքայն քաջ արանց
ըստ արժան օրհնել առանց քոց ձրից՝
լուսով իմ մտաց .
Որպէս ոչ ծաղկին ծառք տերևախիտ
և սաղարթազգեաց
առանց անձրևոյ, կամ արեգական լու-
սոյն գեղապանծ .

զինւորդ ապաքէն՝ ես վայրավայելին մամ-
ուռապատ մացառ
Ծաղկապերճ առանց անուշակ ցօղոյն ե-
ղեց եթերաց ։
Աւանի բարեմաղթ ուղերձեմ առ քեզ
աղերս և ըղձայց ,
զի ըղձքս նշոյլ յիմ միտս և հոգի ծա-
գեա՛ 'ի բարձանց ։
և աշա՛ երգեմ՝ 'ի քեզ յուսացեալ ,
զայս երգ օրհնութեանց ,
կատարեա՛ զիմ հայց՝ ո՜ իմ բարեգութ ,
քան զիմ ասացեալս ։
Բազմամեայ կենօք տուր սմա ըզկեալ
հարուստ բերկրանաց ,
և անդորր աւուրց ըղձըն՝ աշխարհիկ վի-
ճակ ցընծաղեաց ։
և վարդապըսակ զարդարեա՛ ըզսա բո-
լորիւք ծաղկանց ,
խայտալ անարխուր Օգոստոպատիւ 'ի
մէջ դիւցազանց ։
Ընասան պահեա՛ զաթոռ ոսկեփայլ
իւրում գեղապանծ ,
մի՛ երբէք նմա ժանիս սըրեսցէ վատա-
բաղդ արկած ։
և քաջալերեա՛ 'ի վէգ 'ի մրցմունս ընդ-
դէմ թշնամեաց
զյաղթաբազուկ կորովի արծուի արքայս
ըղփառաց ։

Իւր առիւծ անյաղթ և քաջասրտոտ 'ի
մէջ աշխարհաց
ըզբաշ իւր ցցեալ՝ ցուցցի սա՛ ահեղ
գնդի թշնամեաց ·
անվեհեր 'ի սիրտ՝ լէգէօնախումբ բուլ-
խք իւր զօրաց
զմարտ մղեսցէ՛ յարիւնոտ կռուի իւր
ընդդիմակաց ·
Եւ հըզօր բազկաւ տիրապետեսցէ՛ սա՛
չորից ծագաց ,
իւր արքայութիւն միշտ բազմահարուստ
կացցէ՛ մեծագանձ ·
մի՛ երբեք գըձուձ և ապաշընորհ դի-
պել վիճակաց ,
բաղդագիրըն իւր բարեվայելուչ ած-
ցէ՛ յաջողուած ,
Քաղաքք իւր համբուն շքեղ փայլես-
ցին 'ի ճաճանչ ցոլմանց ,
որպէս ծառախիտ սաղարթափըթիթ
պարտէզք պճնազգեաց ·
և որք 'ի նոսա՝ բազմախումբ կաճառ ա-
րանց և կանանց ,
'ի սէր սերտ կացցեն յաւերժ անսասան
յոյս թէ յաղթազգեաց ·
Որդ՝ մի՛ դըժընդակ սուսեր երկսայրի
մահուն կանխահաս
իշխեսցէ շողալ փայլմամբ քաջաթուխ
և ըստուերամած ·

Ի

Ջերաջերմ արեան ոգւոյն կենսատապահ մի՛
շիջցի արծարծ ,
յաւէտ քաջողջին տեսցէ՛ զաւուրս իւր՝
յաշխարհիս 'ի կայս :
Խաղաղուն որդւովք պանծասցի վե-
սեմ անկապուտ 'ի փառս ,
իւր արքայազուն ձեռք համանգամայն
կացցեն 'ի պարծանս •
միշտ խաղաղութիւն , միշտ քաջողջու-
թիւն պարգևեա՛՝ Աստուած ,
և ընդ հովանեաւ աջոյդ կորովի պաշտ-
պանեա՛ զարքայս : ||
Դիւցազն Յակոբայ եղերեալ զայս երգ՝
'ի ժըպիտ դիմաց ,
կրկին երեքկին երկրպագանէ անկեալ
գետնամած •
Փառաւո՛ր արքայ՝ ընդ բան ծերունւոյս
և ընդ օրհնութեանց
խնդամիտ բերկրեալ պարգևէ նըմա
զԳեսեմ յընծայս •
Ո՛ւր ոսկեձաձանչ առաջին նըշոյլ փեր-
եան լուսապանծ
ըսփիւռ ծաւալի յելս Արևուն ծագ-
եալ 'ի բարձանց •
ուր մըշտադալար լերինք և բըլուրք ե-
նըն ծաղկազգեաց ,
գան կարկաչասահ գահավէժ հոսեալ
վտակք 'ի լերանց •

իա

Զիւր կարօտակէզ սըրտեալ Յովսեփայ
արտօսր 'ի յաչաց ,
քընար քաղցրալի անտըխուր 'ի սիրտ
երգէ ցընծազգեաց ·
և դիւցազն իւր Հայր մերկացեալ Նըշն-
ալէս զիւր սուգ անձկայրեաց
որդւոյքն 'ի գեսեմ վարէ զերջանիկ և
անդորր ըղկեանս ,

## Վ Ա Խ Ճ Ա Ն

# ՆՈՒԱԳ

'Ի սխրալի ողջախոհութենէ գեղածիծաղ պատանւոյն Յովսեփայ՝ 'ի խրախոյս Հայկազեան մանկտւոյ ։

—

Մաւախլապատ արջնաթոյր ալիք
լըճին հըրավառ
սեւափրփուր կոհակօք վարէն նա-
ւակ անդադար ․
Մարդախոշոշ չարադեքն անդ 'ի
բազմոցս թիավար ,
գոռոզաբար սատանդեն տանել
զոգիս պըղծահար ։
Արշաւասոյր ընդ-ահռիձս յըղէն նո-
քա 'ի յաշխարհ ,
սըտապատիր խարդախել զան-
բիծ հոգիս և արդար ․
Այն ինչ պատրէն , և տանին 'ի
գետ լըճին բոցավառ ,
դառնաժըպիտ ըղծաղու գան , և
խայտան միապար ։
Բարձրածիծաղ տըրոփէն 'ի խա-
ւարչտին քարանձաւ
ոգւոց պըղծոց ժանտաժուտ թա-
փառականք գարշապար ․

Ա՛ստ 'ի կենցաղ ըղձոսա՝ բամբէ,
զազանն ոգեսպառ
բազմահարուստ գանձաշատ լինու
ընչիւք անըսպառ։
Զի մի՛ կրիւք՝ տէյդղ 'ի մետ
բերցեն զայն աշխարհ,
բարեկեցիկ ոչ լինել ըստորըջա-
ցեալ ապաշաւ.
Սմանց գըձուած և վիճակս գուն
նա գործէ քըրտնահար,
բազմահաւաչ հեկեկանս, սուգ
ոգետանջ դալկահար։
Զի տաղտկացեալ գործեսցեն՝
զոր չէ՛ արժան տուն արդար,
յուսախըտուր անկանիլ 'ի հուր
գեհեան մըշտավառ.
Ա՜յլ մի՛ երբէք՝ պատանիդ, հաղը
Թըշնամուոյն բազմադաւ
արծարծ աղօտ 'ի քո սիրտ ցուց-
ցէ նըսեմ 'ի մըռայլ.
Խէ՛ յապարանս պըճնանէրկ բազ-
միս ընդ երգս փողահար,
պճնեալ 'ի զգեստ ծիրանի՝ և 'ի
պատմուճան ոսկեփայլ.
Խէ՛ գեշագէշ ծայրատեալ ընդ
արիւնոտ գալշապար,
տապաստ դընիս գետնաքարշ մարմ-
նոյդ յարեան 'ի ծուալ.

Ո՛վ մեծագանձ ճոխութիւն բազ-
մահարուստ ամբարեալ
խարխալեցէ մըրկածուփ ամպովք
ըզքեզ հողմավար ·
Ո՛վ քամնափուշ աճորեկ մեն-
չիւն մահու փողահար
որոտ ընդ ոստ կայծակամբք ըզ-
քեզ արկցէ հատկըրեալ,
Յանժամ ծաղիկք հոտաւէտ դե-
ռաբացիկ փողփողեալ՝
զքըրքմագոյն բուրեսցեն 'ի քեզ
ըղձիդ հեշտալար ·
Ծաղկափըթիթ Նուաստ քաղց-
րաձայնիչ քեզ ծագեալ՝
ըզսուգ ողխուր դառնագին՝ ըզ-
քոյդ լըքցէ հեկեկալ·
Թէ մըռմըռայ անհանգիստ այն
ոգին պիղծ այսահար՝
դըժոխըմբեր պատուհաս ածել
առ քեզ չարաչար ·
Ո՛վ դու անտի զարհուրիր յու-
սակըտուր երկմըտեալ,
գազանացեալ քում կըրից սուր
շողացո՛ քաջաբար ·
Երին Յովսէփ Ողջախոհ Մա-
նուկն Անբիծ գեղարդար
քեզ յօրինակ պանծացի, զոր
երգեցի ես տըկար ·

Գեղադանդուր տիկնուհւոյն՝ զոր
պիղծ ոգին նախաչար
գրգռեաց թունով մահաթոյն խո-
ցել Մանուկն ըղկայտառ.
Ո՜ իա՞րդ յաղթեաց Պատանիս
ընդդիմամարտ Ճակատեալ ,
Խըրոխտ բանիւք ըսպառնման՝ իբ-
րև զամպրոպ շանթահար .
Ի սպառնալեաց չերկնչի իւր տիկ-
նուհւոյն մեծափառ ,
ոչ և 'ի հայց զիջանի նորին ողոք
և խոնարհ .
Նեղեալ 'ի բանդ անկանի յաղջա-
մըղջին և խաւար ,
սակայն անտի բարձրագահ յա-
թոռ բազմի ոսկեփայլ .
Սապէս ջանա՛ պատանիդ , կա՛լ
զՍիղջախոհն քեզ ախոյար ,
վարուք ամբիծ 'ի յերկրի վարել
ըղկեանս քո անդար .
Դըժոխատանջ պատուհաս՝ դառ-
նահամբոյր մահակաւ
Թէ՛ լլկեսցէ սաստ ըղքեզ անբոյժ
վիրօք խոցոտեալ .
Կամ ընդ քաղցրիկ խընկենեաց
ծառաստանին հովանեաւ
Թէ՛ հանգիցես մեծագանձ՝ որպէս
արքայ Թագակաւ .

Մի՛ յերկոցունց յաղթեսցիս, կա՛ց
անսասան մաքրափայլ,
յոյս քո յեթեր սլասցի՛ յերա-
նաւէտն աստղափայլ.

ՎԵՐՋ

| Երես․ | Տող․ | Սխալ․ | Ուղղեալ․ |
| --- | --- | --- | --- |
| 43 | 13 | մեկոն | մեկոն |
| 46 | 15 | արտօրայքն | արտորայքն |
| 59 | 19 | շնջոյաւ | ջնջոցաւ |
| 72 | 15 | սովաւ | սովու |
| 83 | 7 | կանքըն | կեանքըն |
| 184 | 16 | դեռադիռ | դեռադեռ |
| 247 | 23 | սըրինք | սըրինգ |
| 268 | 23 | ոսկորոտիքն | ոսկերոտին |
| 316 | 27 | քաղաքք | քաղաք |